

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
Հայկական Սփիւոքի  
Ուսումնասիրութեան Կեդրոն

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՕՃԱԽԸ.  
ԳԻՐՔ Ա.,  
ՀԱՄԱՐԿՈՒՄԻՆ ԽԱՉՈՒՂԻՆԵՐԸ  
(1920-2005)

Անդրանիկ Տազէսեան

Haigazian University Press  
Պէյրուք 2015

Original Title:

Լիբանանի Հայօճախը.

Գիրք Ա., Համարկումին Խաչուղիները (1920-2005)

Author

Dr. Antranik Dakessian

First Edition 2015

© 2015 HAIGAZIAN UNIVERSITY PRESS

Beirut, Lebanon

All rights reserved.

No part of this publication may be reproduced, stored in or introduced into a retrieval system, or transmitted, in any form or by any means (electronic, mechanical, photocopying, recording, or otherwise), without the prior permission of the author.

*[www.haigazian.edu.lb](http://www.haigazian.edu.lb)*

ISBN 978-9953-585-17-8

Զօն`  
Կարօ եւ Քնար  
Յարութիւնեաններու  
Յիշատակին



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զօն	
Միջին Արեւելքի Քարտէս	4
Բովանդակութիւն	5
Մուտք	7
Ներածութիւն	13
Գլուխ Ա. Համարկումին Առաջին Քայլերը (1920-1940ականներ)	
Մուտք	21
Ա) Ցեղասպանութենէն Տեղաւորում	
1.- Փոխանցման Հանգրուան	
ա) Օսմանեան Ժառանգութիւնը	21
բ) Ցեղասպանութեան Ժառանգութիւնը	23
2.- Տեղաւորման Հանգրուան	
ա) Համայնքներու Հակազդեցութիւնը	26
բ) Հոգատար Եւ Տեղական	27
Իշխանութեանց Քաղաքականութիւնը	
գ) Թրքական Հակազդեցութիւնը	28
գ.- Քաղաքական Տեղաւորում	29
Բ) Տեղաւորումէն Համարկումի Անցումին Հայկական Երեսակը	
Մուտք	32
1. Հայկական Գործօններ	
ա) Համարկումի Տարակարծութիւններ, Ներկան Եւ Անցեալը,	32
Մասնակի Օգնութիւն Անոքութեան	
բ) Շուկայական Համարկում	36
գ) Արտասահմանեան Օժանդակութիւններ	37
Եզրակացութիւն	39
2. Ներհայկական Համարկում	
Մուտք	40
ա) Լոզանի Պայմանագիրը. Գաղթահայու Հոգեփոխութիւնը	41
բ) Պատշաճեցումի Մարտահրաւերներ	42
գ) Սովետական Հայաստան. Միջկուսակցական Մղումը	43
3. Եկեղեցին Եւ Ներհայկական Կանոնաւորումը	47
4. Ներհայկական Պայքար՝ Հայկական Հանրային Տարածքին Համար	
ա) Միջկուսակցական Պայքար	48
բ) Ընկերային Վերակերտում Եւ	51
Ցանցակալում՝ Սփիւռքի Տարածքին	
Գլուխ Բ. Համարկումին Ընթացքը (1950-1975)	
Մուտք	57
Ա) Քաղաքականութեան Հարցեր. Պաղ Պատերազմի Շրջանը	57
Բ) Մշակութային Հարցեր. Ծաղկում	61
Գ) Ինքնութեան Հարցեր. Հայապահպանում	62

Դ) Սովետական Հայաստանի Վերայայտնությունը	63
Ե) Համարկում Ե՛՛ւ/Կամ/Թէ՛՛ Հայապահպանություն. Հակադրության Շեշտաւորումը	65
Ձ) Եղեռնի Յիսնամեակ. 1965	67
Է) Ազգայնականություն Եւ Լիբանանեան Բաժնեկցություն	69
Ը) Տնտեսական Հարցեր. Առատություն	71
Թ) Հայօճախը Կը Ձգտի Պետական Իր Արդար Բաժնեկցութեան	75
<b>Գլուխ Գ. Հակահամարկում (1975-1990).</b>	
Մուտք	79
Ա) Քաղաքացիական Պատերազմի Հայկական Ուղեգիծ. Դրական Չեզոքություն	80
Բ) Դրական Չեզոքութեան Պահպանման Գինը Եւ Լիբանանահայ Միացեալ Ճակատը (ԼՃՄ)	
1. Պատերազմիկ Կողմերու Հակադրությունը	86
2. ԼՄՃի Քննութեան Փորձերը	91
Գ) Քաղաքացիական Հասարակութեան Դրսելորումներու Վերաձեւումը	94
Դ) Հայոց Ցեղասպանութեան Ճանաչման Համար Բիրտ Պայքար	96
Ե) Ազգայնական Սեղմիրանը	
1. Գաղափարախօսական ամրացումներ եւ զօրաշարժ	98
2. Սեղմիրանին Բաղադրատարրերը	100
3. Երկակի Վերայայտնումը (Սովետական) Հայաստանի	102
4. Հայոց Ցեղասպանությունը	104
5. Թուրքիան. Թշնամիին Մարտահրաւերը	105
Ձ) Հայկական Օգնություն Հայօճախին	107
Եզրակացություն	108
<b>Գլուխ Դ. Բազմուղի Համարկում. Չկանոնակարգուած (1990-2005)</b>	
Մուտք	111
Ներածություն	111
Ա) Փոխուղ Սփիւռքի Քաղաքականությունը Եւ Անոր Ներթափը	115
Բ) Կծկուող Հայօճախին Քաղաքականությունն Ու Ընկերատնտեսական Եւ Ազգայնական Ներթափը	121
Գ) Հայաստան՝ Խնդիրներով Ծանրաբեռն Պետութեան Սը Վերաձեւումը	132
Դ) Համարկում Լիբանանեան Տարածքին Եզրակացություն	140 151
Վերջաբան	153
Աղբիւրներու Ցանկ	160
Կողքի Լուսանկարներու Բացատրություններ	173
Հեղինակը	174

## ՄՈՒՏՔ

Պատմությունը երբեք ալ չունի վերջնական տեսք: Այնքան ատեն որ ժամանակը չէ դադրած տուեալ պատմությունը ստեղծած ու կրող հաւաքականութեան համար, ան միշտ կրնայ ունենալ նորոգուող եւ յաւելեալ շարադրանք:

Սփիւռքի որեւէ հայօճախի ամբողջական կենսապատումը մարտահրաւեր է հայագիտութեան: Նման նախաձեռնութիւն մը առնուազն պիտի բախի զանազան տեսաբանական ու գործնական խնդիրներու:

Գործնական խնդիրները կը վերաբերին մա՛նաւանդ համապատասխան նիւթի (բանաւոր, գրաւոր, արխիւային) համարժէք եւ հաւասարազօր յառաջացումին, մշակումին, օգտագործումի եղանակներուն եւ մեթոտոլոճիի այլեւայլ երեսակներու:

Տեսաբանական խնդիրները (ի միջի այլոց) կը վերաբերին՝ ա) 'Հայօճախ' եւ 'կենսապատում' եզրերուն սահմանումին, ուստի՝ բ) Հայօճախին պատումին առանցքի բաղադրատարրերուն (անհատ, հաւաքականութիւն, կազմակերպութիւններ, հաստատութիւն-հիմնարկներ), գ) Հայօճախին ներքին, անմիջական եւ հեռաւոր միջավայրերուն հետ յարաբերութեանց, եւ հետեւաբար՝ դ) Համարկումին եւ փոխազդեցութեան ծիրին, հուսկ՝ ե) Հայօճախին բազմատեսակ դրսեւորումներուն էութեան (անհատական, մասնակի, հատուածական, կարճատեւ, երկարամեայ, ներագգային, տեղայնական, մշակութային, տնտեսական, քաղաքական եւն.):

Վերոյիշեալ եւ այլ խնդիրներու կողքին, տարբեր տարողութիւն կը զգենու այն, որ - բնականաբար - սփիւռքեան բոլոր հայօճախները յարափոփոխ են: Որովհետեւ զայն գոյացնող ենթախումբերու ինքնութիւնները, անոնց՝ հանդիպակաց դերակատարները, անմիջական եւ անդրսահմանային միջավայրերը անդադրում, բազմուղի եւ տարաբնոյթ փոփոխութեանց մէջ են: Չընդհատող փոփոխութեան մէջ է նաեւ փոխներգործութեան ենթախորքը: Փոխկախեալութեան համաշխարհայնացումի այս տասնամեակներուն, պարզապէս ամէն ինչ մնայուն շարժումի մէջ է: Մեզի կը մնայ այդ յարաշարժութեան տալ պայմանական կշռութաւորութիւն, նման ծովուն բացերը գտնուող, ալիքներէն տատանող նաւուն վրայ գտնուող հաւաքականութեան պայմանական կայունութեան, եւ ըստ այդմ ձեռք բերել պարագայական, յարաբերական յստակատեսութիւն:

Ակնարկ մը՝ Լիբանանի ու ընդհանրապէս Միջին Արեւելքի երկիրներու եւ ժողովուրդներու վերջին հարիւրամեակի պատմութեան՝ պիտի պարզէ օրէնքի քան թէ բացառութեան կարգ անցած անկայունութիւնը շրջանին:

Քաղաքական վերաքաղի համայնապատկերը պիտի ընդգրկէ՝ Առաջին Համաշխարհային Պատերազմը (1914-1918), Սայքս Փիքոյի Համաձայնագիրը (1916) եւ պայմանականօրէն յառաջացուած պետութիւններ (Լիբանան՝ 1920, Սուրիա՝ 1920, Իրաք՝ 1921, Յորդանան՝ 1928, Պաղեստին եւ Իսրայէլ՝ 1948), Տրանս-բրիտանական հոգատարութիւն (1922), Լոզանի Համաձայնագիր (1923), Ալեքսանտրէթի յանձնում (1939), Երկրորդ Համաշխարհային Պատերազմ (1939-1944), Պաղ Պատերազմ եւ Սովետ-Ամերիկեան մրցակցութիւն (1948-), Պաղտատի Ուխտ (1955), Սուէզի Ջրանցքի տագնապ (1956), Արաբ-իսրայէլեան պատերազմներ (1967, 1973), Պաղեստինեան Հարցի լուծման ծուռ եւ շիտակ (միշտ անյաջող) փորձեր, Պաղեստինեան Ազատագրական Պայքար, Իրանի կրօնական յեղափոխութիւն (1979), Իրան-Իրաք պատերազմ (1980-1988), Իրաքի ներխուժում Քուէյթ (1990), Իրաքի վրայ կրկնակի ներխուժում (1990, 2003), Արաբ միջպետական լարուածութիւններ, նաեւ՝ միացումի անյաջող փորձեր եւ նշանակալից այլ իրադարձութիւններ ու անոնցմէ շատերուն շարունակուող հետեւանքներն ու զարգացումները:

Մեծաթիւ են նաեւ օտար միջամտութիւններն ու ներպետական անկայունութեան պարագաները՝ պետական հարուածներ, զինուորական յեղաշրջումներ, ներքին խլրտումներ, ըմբոստութիւններ, քաղաքացիական պատերազմներ, ընկերային, տնտեսական վերիվայրումներ: Միով բանիւ, շրջանը՝ Առաջին Համաշխարհային Պատերազմէն ի վեր մնայուն անկայունութիւն կ'ապրի՝ տնտեսական, գաղափարական-ընկերային, մշակութային եւ ժողովրդագրական նոյնքան ազդու ցնցումներուն կողքին: Միւս կողմէն, 1920էն եւ անկէ առաջ ծայր առած ու տակաւ թափ առնող թեքնոլոճիով, ճաշակով, կենցաղով, կանոնակարգումով, հեղինակացումով եւ ամէն ինչով արեւմտականացումը Միջին Արեւելքին՝ կը շարունակուի: Կը շարունակուի նաեւ այդ գործընթացին ոչ-միանշանակ պատշաճումը, ընդհուպ մինչեւ հակադրութիւնը:

Լիբանանի հայօճախը (ինչպէս Լիբանանը ընդհանրապէս), ըստ պարագաներու, կրցաւ օգտուիլ միջավայրի ապակայունութենէն, յաճախ ալ մեծապէս տուժեց անկէ:

Դժուար է գրել Լիբանանի հայօճախին ամբողջական, համապարփակ կենսապատումը: Ան բազմատարր է ու բազմերես: Եղած փորձերը - այս մէկը եւս - կրնան քիչ մը աւելի հասկնալի դարձնել Լիբանանի հայօճախը: Այս հատորը կենսապատումին կը ջանայ մատչիլ համարկումի պրիսմակէն, ելակէտ առնելով ինքնութիւնը:

Հատորը ջանք մըն է լիբանահայութեան՝ վերջին հարիւրամեակի պատում մը յառաջացնելու, որուն յենքին վրայ կը ներկայացուի հայօճախին համարկումի ընթացքը: Ան կենսապատումն է արմատախլուածութենէ գաղթօճախ, ապա եւ հայօճախ անցումին, ուր համառօտակի կը ներկայացուի 1920-2005 շրջանը: Փորձած եմ հայօճախին մանաւանդ 1990-2005 տասնհինգամեակի պատկերին համառօտ վերարտադրում մը կատարել. զգացումները, ըմբռումներն ու մանաւանդ մտայնութիւնը ներկայացնել առանց ընդգրկելու 2005էն ետք յառաջացած մտայնութիւնը:

Նման պատում մը պիտի օղակէ ժամանակակից լիբանահայ նորահաս սերունդը իր անմիջական երէկին եւ այդ երէկին նուաճումներուն տէր կանգնեցնէ զինք:

Այստեղ յայտնուած տեսակէտերէն ու կարծիքներէն ոմանց կամ անոնց տարբերակներուն հանդիպած եմ պրպտումներուս ընթացքին: Երբ ի ձեռի ունեցած նիւթերուս հիմամբ գոյացուցած տեսակէտիս յարիր եղած են անոնք՝ որդեգրած եմ զանոնք վերաշարադրելով կամ չակերտելով, այլապէս՝ քանաձեւած ուրիշը:

Ջանացած եմ կարելի առաւելագոյն առարկայականութեամբ մօտենալ պարագաներուն եւ տեսակէտ ու կարծիք յայտնել հիմնուելով առկայ նիւթերուս վրայ: Ակամայ, կրնան սպրդած ըլլալ բառեր, որոնք ենթագիտակիցիս կողմէ միջամտուած ըլլան: Այստեղ յայտնուած կարծիքներն ու տեսակէտերը, անտարակոյս, քարացած չեն, այլ ենթակայ՝ բարեփոխութեան, վերամշակման՝ նոր տուեալներու, համոզիչ փաստարկումներու լոյսին տակ:

Այս գիրքը հաշուեյարդարի փորձ մըն է՝ առաւել յստակատեսութեան սատարող, յուսալով որ ան կ'օգնէ Լիբանանի հայօճախին խորքային մարտահրաւերներուն յայտնաբերումին եւ անոնց ռազմավարական դիմագրաւումին:

Համարկում՝ integrationը կը սահմանենք իբրեւ ենթախումբի մը գիտակցեալ, զգօն առնչումը՝ իր ազգային-քաղաքական-լեզուական-մշակութային-ընկերային-տնտեսական-կենցաղային համակարգերու ծիրէն դուրս գտնուող ուրիշ հաւաքականութիւններու

համապատասխան համակարգերու: Այս առնչումով առաջին հաւաքականութիւնը ընտրովի կ'ընդգրկէ այլ հաւաքականութիւններու վերոյիշեալ համակարգերուն կարգ մը երեսակները, միշտ գերակշռութիւն վերապահելով իր սեփական ազգային-մշակութային համակարգին: Համարկումի ընթացքին ազգային-քաղաքական-լեզուական-մշակութային-ընկերային-տնտեսական-կենցաղային համակարգերու բաղադրիչները կրնան գտնուիլ փոխ-շփումի, փոխ-առնչումի, փոխ-ընդգրկումի եւ փոխազդեցութեան տարբեր հանգրուաններու վրայ: Համարկումը առողջ կ'ըլլայ երբ փոխադարձ կ'ըլլայ շփում-առնչումը: Համարկումը քարացած վիճակ չէ, այլ անընդհատ գործընթաց: Համարկումին յառաջացեալ կամ խորացեալ հանգրուանը (երբ ներկրուող տարրերը կը դառնան գերակշիռ ի հեճուկս սեփական տարրերուն) կու տայ նախանշանները հաւաքականութեան տարբեր շերտերու ձուլման ընթացքին: Համարկումին մակերեսային եւ սկզբնական հանգրուանը կ'արտացոլացնէ սեփական պատեանի մէջ կծկուած հաւաքականութիւն մը: Գիրքին մէջ անդրադարձ կը կատարուի համարկումի գործընթացը խթանող եւ/կամ խոչընդոտող գործօններու:

Ինքնութիւն՝ identityն կը սահմանենք իբրեւ անհատին կեանքին տուեալ հանգրուանի կենսափիլիսոփայութիւնը ձեւաւորող եւ դրսեւորող, անոր գիտակցական եւ ենթազգայական արժեհամակարգը կազմաւորող ապրուած-ձեռք բերուած-որդեգրուած-ժառանգուած, ուստի եւ իմաստաւորուած ազդակներու համապարփակ փաթէթը:

Համայնք եզրը գործածած ենք «յարանուանութիւն» ենթիմաստով, իսկ լիբանահայութեան ամբողջութիւնը կոչած ենք հայօճախ, անոր իբրեւ բաղկացուցիչ օգտագործելով ենթախումբ եզրը: «Հայկական տիեզերք», «հայաշխարհ» արտայայտութեամբ նկատի ունեցած ենք աշխարհագրական, մտաւոր, մշակութային, տնտեսական շօշափելի եւ վերացական այն տարածքը ուր կը գործեն հայերը:

Այս ուսումնասիրութիւնը, կամ անկէ մասեր, կարդացած են խումբ մը բարեկամներ, որոնք կատարած են օգտակար մատնանշումներ: Շնորհակալութիւն անոնց:

Գիրքը կը բաղկանայ չորս գլուխներէ, որոնք ունին ժամանակագրական հատումներ:

Ներածութեան մէջ ջանացած եմ ներկայացնել այն ենթահողը, որուն իւրայատկութիւնները խթան հանդիսացան Լիբանանի հայօճախին վերելքին: Այդտեղ ընդգծած եմ նաեւ Լիբանահայ շարք մը իրագործումներ:

Առաջին գլուխը կ'ընդգրկե 1920-1950 շրջանը:

Երկրորդ գլուխը կը տարածուի 1950-1975 շրջանին վրայ:

Երրորդ գլուխը լուսարձակի տակ կ'առնէ Լիբանանի պատերազմական տարիներուն հանգրուանը (1975-1990):

Չորրորդ գլուխը կը վերլուծէ 1990-2005 տասնհինգամեակը:

Վերջաբանը համառոտակի կը բնորոշէ վերջին տասնամեակին հայօճախին իրավիճակին կարգ մը երեսակները:

Լիբանահայ կենսապատումի այս հատորը փորձ մըն է սատարելու լիբանահայ անցեալին ու ներկային կշռադատումին: Անտարակոյս, ան կը կարօտի այլազան յաւելումներու, բարեշտկումներու, փոփոխութիւններու: Յաւակնութիւնը չունինք ամբողջական եւ սպառիչ ուսումնասիրութիւն մը հրամցուցած ըլլալ ընթերցողին: Թերեւս, սրատես եւ նախանձախնդիր աչքը կրնայ լեզուական, ոճական եւ փաստագրական վրիպումներ գտնել, ուշագրաւ բացթողումներ նկատել գիրքին մէջ: Հատորին պատրաստութեան ատեն մենք նպատակ չենք ունեցած որեւէ ուշագրաւ երեւոյթ զանց ընելու: Գիրքին վերջաւորութեան զետեղուած ելեկտրոնային հասցէն կրնայ ծառայել հեղինակին հետ որեւէ ընթերցողի հաղորդակցելու եւ տեսակէտեր արծարծելու՝ յօգուտ ճշմարտութեան աւելի մօտեցող կենսապատումի:

*Հեղինակը*



## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ներհայկական եւ արտահայկական ուղղութիւններով տեղաշարժերը մնայուն երեւոյթ եղած են հայ իրականութեան մէջ, գէթ վերջին հազարամեակին: Բագրատունեաց Թագաւորութեան անկումը 1045ին եւ օտար աննախադէպ բռնակալ ներխուժումները դուռ բացին գաղթի աննախընթաց ալիքներու, որոնցմէ յառաջացաւ հայկական գաղթաշխարհը՝ Հայկական Լեռնաշխարհէն հիւսիս-արեւմուտք, Արեւելեան Եւրոպա, Կիլիկիա եւ Հիւսիսային Միջագետք:

Հայկական գաղթաշխարհի ամենայառաջացեալ իրագործումը Կիլիկեան Հայկական Պետութիւնն էր: Անոր տապալումը յառաջացուց նորատեսակ գաղթօճախներ, որոնք տարերայնօրէն պահպանեցին բնօրրանի սովորոյթներն ու կենցաղը, մինչեւ անոնց մաշումն ու գաղթօճախներուն նօսրացումը, հուսկ՝ ձուլումը:

Հայկական գաղթաշխարհի ուշ միջնադարի գաղթօճախներ (առաւելապէս անոնք որոնք Օսմանեան Կայսրութեան տիրապետութեան տակ չէին), պահպանելով հանդերձ բնօրրանի աւանդը՝ զանոնք վերափոխեցին եւ պատշաճեցուցին ինքնութեան տարրերու: Անոնք որդեգրեցին նաեւ ժամանակի ճարտարարուեստի եւ գաղափարական նորագոյն ձեռքբերումները՝ զանոնք եւս վերածելով հայկական ինքնութեան նորատեսակ երեւոյթներու<sup>1</sup>: Առաջին հայերէն գիրքը, տպարանը, թերթը եւ հայ ինքնութեան արդի այլ արտայայտչամիջոցներ արտաշայաստանի մէջ յառաջացան: Այս գաղթօճախները, սակայն, հակառակ ինքնութեան կառչելու իրենց ճիգին, տակաւ նօսրացան եւ տարրալուծուեցան միջավայրին մէջ, կամ անոնց մնացորդները որթատունկի վազի նման ծլարձակեցին այլուր, երբեմն ալ դարձան կորիզը Մփիւռքի այլեւայլ հայօճախներու:

Հայոց 1915ի Ցեղասպանութիւնը ծնունդ տուաւ ժամանակակից հայ սփիւռքին եւ գաղափարախօսական անկիւնադարձ պարտադրեց հայութեան բոլոր խաւերու միտքին ու գիտակցութեան<sup>2</sup> եւ աննախընթաց սերտաճում մը յառաջացուց տարբեր վայրերու հայերուն միջեւ, որ իր ենթազգայական մեծ ազդեցութիւնը պիտի ունենար արքութրահայութեան մնացորդացին վրայ:

<sup>1</sup> Razmig Panossian, “Between Ambivalence and Intrusion: Politics and Identity in Armenia-Diaspora Relations”, *Diaspora*, Vol. 7, # 2, Fall 1998, էջ 152-153:

<sup>2</sup> William Safran, “Comparing Diasporas: A Review Essay”, *Diaspora*, Vol. 8, # 3, Winter 1999, էջ 284:

Յեղասպանութեան հետեւանքով յառաջացած արմատախլուած խլեակներու վերապրուկները իրենց ներուժին եւ արտաքին ազդակներու ներգործութեամբ, բնօրրանի անցեալ մը նորովի վերարտադրեցին եւ տակաւ փոխակերպուեցան գաղթահայերու, ապա՝ սփիւոքահայերու: Յեղասպանութիւնը նոր տեսահորիզոն, խորք եւ իմաստաւորում տուաւ համարկում եւ/կամ ինքնութեան պահպանում (=հայապահպանում) երկընտրանքին, որ հայկական հին թէ նոր գաղթաշխարհներու մնայուն փորձութիւնը մնաց:

Յեղասպանութեան ծանր փորձառութեամբ եւ գաղափարականութեամբ յատկանշուող լիբանահայ գաղթականներուն որդեգրելիք համարկում/հայապահպանում ուղին անկանխատեսելի չէր: Տակաւ, անոնք պիտի վերածուէին Լիբանանի իւրօրինակ միջավայրին մէկ մասին<sup>3</sup>. գուգահեռաբար յարատեւ պիտի վերակերտէին իրենց իւրօրինակ նոր ինքնութիւնը: Ներկայիս, լիբանահայութիւնը կը ձգտի վերանկախացած Հայաստանի Հանրապետութեան՝ հայրենիքին հետ, նոր տեսակի (որակի եւ խորքի) յարաբերութիւններ յառաջացնել, փայփայելով պապենական հայրենիք **սոււղարձի** երազը: Միաժամանակ, լիբանահայութիւնը նմանատիպ ճիգով կը ջանայ վերածել ու վերամշակել իր յարաբերութիւնները իր ծննդավայր Լիբանանին հետ:

Լիբանան եկող հայերը հաստատուեցան քաղաքական տարածքի մը մէջ, որ բացարձակապէս համայնքացած էր: Հայերը համայնքային հակադիր շահերու եւ կանխատրամադրութիւններու խառնուրդին միանալէ տարբեր ելք չունէին: Անոնք պէտք էր յարմարէին «զերօ հանրագումար» տարագումին, իշխանութեան միջհամայնքային բաժնեկցութեան եւ յառաջացնէին քաղաքական ուղեգիծ մը որ պաշտպանէր իրենց շահերը: Լիբանահայերը հակեցան հայապահպանութեան ուղիին եւ իբրեւ ինքնութեան երաշխաւոր միակ հիմնարկներ ճանչցան հայկական հաստատութիւնները: Անոնք զարգացուցին իրենց հայկական կուսակցութիւնները իբրեւ լիբանահայ իրաւունքներու գերագոյն պաշտպանը՝ այնքան ատեն որ Լիբանանի Պետութեան ինքնութիւնը կը մնար չտարագուած ու իբրեւ համատարած հովանի չէր գործեր: Համալիբանանեան ինքնութենական հովանիին չգոյութիւնը Լիբանանի բնակիչները կը վերածէր համայնքահպատակներու, քան թէ լիբանահպատակներու:

---

<sup>3</sup> Betts, *Christians in the Arab East*, Athens, Lycabettus Press, 1978, էջ 56:

Լիբանանեան համայնքայնութիւնը յարիր էր հայկական շահերուն: Բայց նաեւ՝ հայերը չունէին որեւէ այլընտրանք, քան՝ յարմարիլը եւ ենթարկուիլը Լիբանանի քաղաքական կանոններուն:

Իր համայնքապետական դրութեան պատշաճեցնելով օսմանեան *միլլէթի* համակարգը, Լիբանանի Պետութիւնը լիբանահայութիւնը խմբաւորեց իբրեւ առաքելական եւ կաթոլիկ համայնքներ (*միլլէթներ*), մինչ հայ աւետարանականները տեղաւորեց «բողոքական համայնք» խմբաւորումին մէջ: Եղան ուրիշ փոքրաթիւ հայեր, որոնք տեղադրուեցան քրիստոնէայ այլ փոքրամասնութիւններու մէջ:

Պետական իրաւականութեամբ զօրացած եւ ամրագրուած, լիբանահայ առաքելական եւ կաթոլիկ համայնքները ու հայ աւետարանականները - միւս բոլոր, պաշտօնապէս ճանչցուած համայնքներուն նման - ձեռնարկեցին անջատ եւ ուրոյն քաղաքացիական ընկերակցութիւններ մշակելու: Հայ առաքելական, կաթոլիկ եւ աւետարանական քաղաքացիական ընկերութեանց կառոյցը կերտուեցաւ անոնց ունեցած ընկերա-տնտեսական եւ մշակութային կարողութեան, քան՝ անոնց կարիքներուն չափով: Արդարեւ, համայնքային-ենթախմբային կազմակերպութիւններու կրօնական, ընկերային, մշակութային, կրթական, երիտասարդական, կանանց, մարզական, բարեսիրական, արհեստից, մասնագիտական, առողջական, տնտեսական եւն. ցանցեր աճեցան ծառայելու, զբաղեցնելու-հաճոյացնելու, աջակցելու, կրթելու եւ վարելու լիբանահայերը: Եռանդուն եւ գործուն քաղաքացիական ընկերութեան այս ենթախումբերը փոխ-լրացուցին Լիբանանի տկար պետութեան սպասարկման համակարգը եւ բաւարարեցին ընդհանրական թէ անձնական այլեւայլ պէտքերը լիբանահայուն: Անոնք նաեւ ամրացուցին ներ- եւ միջ-ենթախմբային կապերը, սատարեցին ներհայկական համարկումին, անդամները պահպանեցին հայօճախին սահմաններուն մէջ եւ անտեսանելի պատեր յառաջացնելով նուազեցուցին ներհայկական միջավայրէն դուրս գտնուող տարածքին հետ լիբանահայուն շփումը:

Հակառակ յարանուանական տարբերութեանց եւ հայ կաթոլիկ, հայ առաքելական եւ (նուազ չափով ալ) հայ աւետարանական յարաբերութեանց խորտուբորտ անցեալին, այսօր լիբանահայ երեք յարանուանութիւններու ենթախումբերուն յարաբերութիւնները հայ ներընտանեկան յարաբերութիւններուն կը նմանին: Ոչ-հայ լիբանանցիք լիբանահայ տարբեր յարանուանութիւնները կ'ըմբռնեն իբրեւ մէկ ամբողջութիւն՝ «հայեր», որ հետեւանք է ազգային զգօս

գիտակցութեան, հայ մշակութային գործօններու համատարած հովանիի յարաբերական գերակայութեան: Ի տարբերութիւն ոչ-հայ լիբանանցիներուն, լիբանահայերը օղակուած են պատմական, լեզուական, մշակութային, կուսակցական, հայրենական եւ էթնիք ազդակներով, որոնք շուքի մէջ կը ձգեն համայնքային-յարանուանական եւ ենթախմբային տարբերութիւնները եւ - կրօնական համախոհութեամբ - առաքելական համայնքը կը դնեն յառաջապահի դիրքին վրայ, իբրեւ գլխաւոր արտայայտիչը Լիբանանի հայօճախին: Աւելին, ազդեցիկ ընտանիքներու եւ գերդաստաններու, աւանդական, ժառանգական դեկավարութեան բացակայութիւնը, ինչպէս եւ հայ աշխարհիկ ու կրօնական հաստատութեանց փոխլրացման գործառնութիւնը իւրօրինակ ուժականութիւն եւ կառոյց մը յառաջացուցած է լիբանահայ տարածքին մէջ: Այս գործօնները օգնած են որ լիբանահայ կուսակցութիւնները դառնան բացարձակ մենատէրը լիբանահայ քաղաքական ասպարէզին եւ գրեթէ ամբողջութեամբ հակակշռեն-վերահսկեն լիբանահայ քաղաքացիական հասարակարգը<sup>4</sup>: Հակառակ իրենց փոքրաթիւ անդամաշարքերուն, մինչեւ 1975 (եւ այնուհետեւ տարբեր տարողութիւններով), լիբանահայ կուսակցութիւնները կը սահմանեն լիբանահայ հաւաքական շահերը եւ կ'առաջնորդեն զանոնք:

Լիբանահայ եկեղեցական եւ կուսակցական հաստատութիւնները կը հանդիսանան իրաւական դերակատարները Լիբանանի քաղաքական եւ միջհամայնքային յարաբերութիւններուն եւ շփումներուն: Անոնք կը կատարեն նաեւ իրաւական դերաբաշխումը լիբանահայ անհատի ազգային-քաղաքական գործունէութեան եւ «իրաւական» տարազում կու տան անհատի ազգային նախաձեռնութիւններուն: Անոնք, տարբեր չափերով, կ'անդրանցնին Սփիւռքի գրեթէ բոլոր հայօճախները եւ կը խաղան կրկնակի դերը անոնց միջեւ յարաբերութիւն ամրագրելու եւ «միաժամանակ իւրաքանչիւր համայնքի մէջ պայքար եւ այլութիւն յառաջացնելու»<sup>5</sup>:

---

<sup>4</sup> Michael Hudson, *The Precarious Republic: Modernization in Lebanon*, New York, Random House, 1968, էջ 126, 140. նաեւ՝ Aram Arkun, “Hunchakians”, *AIM*, March 1991, էջ 25. նաեւ՝ Raffy Kourouian, “In the Land of the Pharaohs. The Centuries-old Armenian Community in Egypt”, *AIM*, April 1999, էջ 53. նաեւ՝ *Ալպոմ Յուշամատեան, Նուիրուած Հ.Բ.Ը.Միութեան Լիբանանի Վեթերաններու Եւ Բարերարներու, 1947-1967*, խմբ. Ներսէս Շիրինեան, Յակոբ Ղազարեան, Ասատուր Մակարեան, Զաւէն Մարրլեան, Պէյրութ, Տպ. Ատլաս, 1969, էջ 44:

<sup>5</sup> Susan Pattie, “At Home in Diaspora: Armenians in America”, *Diaspora*, Vol. 3, #2, Fall 1994, էջ 192. նաեւ՝ Nicola Migliorino, “Le (re)-etablissement des Institutions Armeniens au Liban et en

Ստորեւ՝ լայն գիծերու մէջ, միքանի յատկանշական առարկայական եւ ենթակայական պատճառներ ու գործօններ, որոնք նպաստեցին Լիբանանի հայօճախին վերելքին եւ վայրէջքին.-

Ա.- Երկրին քաղաքական համակարգը: Համայնքապետական Լիբանանը սահմանադրական իրաւունքներ տուաւ համայնքներուն՝ թէ՛ իշխանութեան բաժնեկցութեան, թէ՛ համայնքային մշակութային ինքնավարութեան եւ թէ՛ ընտանեկան օրէնքի իրաւասութիւններու առումով: Համայնքային այս իրաւասութիւնները միջոցներ յառաջացուցին բոլոր այն համայնքներուն համար, որոնք ուզեցին եւ կրցան ինքնուրոյն կազմակերպուիլ ու աճիլ, մանաւանդ՝ մշակութային եւ ինքնութենական ծիրերուն մէջ:

Բ.- Լիբանանի տնտեսական եւ քաղաքական ազատականութիւնը մանաւանդ 1940-70ականներուն բացառութիւն էր Միջին Արեւելքի մէջ: Ասիկա առիթ տուաւ որ շրջանի քաղաքականապէս անկայուն եւ ազատ առեւտուրի տնտեսակարգէ գուրկ երկիրներէն տնտեսապէս ձեռնհաս հայեր հաստատուին Պէրութ եւ նպաստեն լիբանահայ տնտեսական տարածքին աճին ու ծաւալումին: Անդին, մշակոյթի դէմքեր հաստատուելով Լիբանան, ի տես մշակութային եւ ազգային անգուզական ազատութիւններուն, նորարար շունչով թափ ու թելեր տուին լիբանահայ մշակոյթին: Այսպէ՛ս կարելի է հասկնալ - միայն միքանի թուելու գնով - Գասպար Իփէքեանի, Պերճ Ֆազլեանի, Սիմոն Սիմոնեանի, Բարսեղ Կանաչեան-Համբարձում Պերպէրեան-Աշոտ Պատմագրեանի, Հերի Սարգիսեանի շնորհիւ լիբանահայ մշակութային պատմութեան մէջ արձանագրուած մեծ նստումները:

Գ.- Նիւթական հսկայ ներհոսքը՝ Եգիպտոսի, արեւմտեան թէ Ծայրագոյն Արեւելքի հայօճախներէն, կարելի դարձուց հիմնումը հայօճախին կրթական, կրօնական, ազգային, բարեսիրական, հայրենակցական շատ հիմնարկ-հաստատութիւններու եւ կառոյցներու:

Դ.- Երկրին աշխարհագրական կեդրոնական դիրքը՝ Կիպրոս-Եգիպտոս-Սուրիա-Իրաք-Յորդանան-Պաղեստին տարածքին վրայ, եւ անոր մերձակայութիւնը Կիլիկիոյ, Արեւմտեան Հայաստանին եւ արդի Հայաստանին:

Ե.- Երկրին տարածութեան փոքրութիւնը լիբանահայութեան թիւի մեծութեան զուգահեռուելով հայօճախը համեմատականօրէն վերածեց Սփիւռքի ամենախիտ հաւաքականութեան:

---

Syrie: les Refugies et l'etat" in Kevorkian, R., L. Nordikian et V. Tachjian (eds.), *Les Armeniens 1917- 1939, La Quete d'un Refuge*, St. Joseph University Press, Beirut, 2006, էջ 98:

Զ.- Հայօճախին ցանցային այլազան համակարգերու գոյութիւնը եւ արդիւնաւետ ու զգօն գործունէութիւնը առաւել խթան հանդիսացաւ որ լիբանահայերու առաւելագոյն տոկոս մը առնչուի կամ յանձնառու դառնայ ազգային հարցերու:

Է.- Լիբանահայ շօշափելի եւ վերացական տարածքը պարփակեց կենցաղային գրեթէ բոլոր երեսակները եւ կարելիութիւն տուաւ որ լիբանահայը, ըստ փափաքի, կարենայ կարելի որեւէ բան իրագործել մի՛այն հայերու հետ շփուելով<sup>6</sup>: Այլ խօսքով, լիբանահայութիւնը եւ լիբանահայ կազմակերպութիւնները տարածուեցան լիբանանեան կեանքի բոլոր կալուածներուն մէջ, որով լիբանահայութիւնը բացառիկ պատեհութիւնն ունեցաւ կենցաղային բոլոր կարիքները հայկականօրէն բաւարարելու: Այլ խօսքով, լիբանահայութեան կեանքին յատկանշական մէկ մասը ուղղակի եւ անուղղակի հայագործութիւն է:

Ը.- Ակնյայտութիւն: Լիբանահայութիւնը տեսանելի է Լիբանանի ընդհանուր համապատկերին վրայ եւ ծանօթ՝ բոլոր լիբանանցիներուն: Այսպիսով, լիբանահայը կը դադրի անապահով ու փոքրամասնական զգալէ եւ ասոր անբարենպաստ տեսանելի եւ ենթազգայական հետեւանքները կրելէ:

Դժուար է առանձնացնել լիբանահայ թագին գոհարը, մատնանշել գլխաւոր նուաճումը, եւ ընդգծել այս յաջողութեան գլխաւոր երաշխիքը, տուն տուող գլխաւոր գործօնը:

Ըստ ժամանակաշրջաններու, տարբեր գործօններ առաւել վճռորոշ դեր խաղացած են հայօճախին վերելքին: Տարբեր ժամանակներու՝ յատկանշական եղած է հայօճախին այս կամ այն նուաճումը:

Որոշ վերապահութեամբ, սակայն, թերեւս կարելի է առանձնացնել հետեւեալները.-

1) Լիբանահայութիւնը ջերմութիւն տուաւ Սփիւռքին ազգային երեսակին, "երեւակայական համայնք"ը վերածեց շօշափելի Սփիւռքի, շեշտաւորեց պայքարի նկարագիրը, ազգայնականութիւնը եւ պահ մը քուրան ու դարբնօցը եղաւ Սփիւռքահայ ինքնութեան կորիզի խաւերուն վերակերտումին:

2) Դպրոցական, երգչախմբային, թատերական ու տպագրական, մշակութային, հաստատութենական (եկեղեցի-կուսակցութիւն-միութիւններ) եւ հաղորդակցական (մամուլ-ձայնասփիւռ-հեռատեսիլ) ենթախումբերը, եւ բանաւոր հաղորդակցութեան ծիրը: Թերեւս

---

<sup>6</sup> Այս երեւոյթը կը վերաբերի Լիբանանի մէջ գործող բոլոր մեծ համայնքներուն:

Սփիւռքի մէջ, ներհայկական տարաբնոյթ եւ ամենաշատ հայերէն հաղորդակցութիւնը տեղի կ'ունենայ Լիբանանի հայօճախին մէջ:

3) Միջին Արեւելքի հայութիւնը եւ լիբանահայ օճախը, հողային թէ քաղաքական յաւակնութիւններ չեն սնուցանած Միջին Արեւելքի պետութիւններուն հանդէպ, իսկ արտաքին քաղաքականութեան մէջ ունեցած են համեստ ակնկալութիւններ, նոյնիսկ՝ Հայկական Հարցին առնչութեամբ: Այս պահանջներուն սահմանափակութիւնը հայօճախը չէ հակադրած երկրի իշխանութիւններուն, ոչ ալ՝ համայնքներուն, եւ հետեւաբար նուազ ենթակայ դարձուցած է զանոնք ճնշումներու, հետապնդումներու եւ վերահսկողութեան:

Դժուար է առանձնացնել կամ մատնանշել մեծագոյն նպաստը գոր լիբանահայ օճախը բերաւ Լիբանանեան Հայրենիքին: Անվարան կարելի է հաստատել, սակայն, թէ հայութեան բերած նպաստը՝ վերջին հարիւր տարիներու Միջին Արեւելքի վերելքին, աւելի՛ է նոյն միջավայրին բերած որեւէ ա՛յլ ազգի նպաստէն:



# ՀԱՄԱՐԿՈՒՄԻՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ (1920-1940ԱԿԱՆՆԵՐ).

## Օսմանցիությունէ Գաղթականացում Եւ Ասպնջականացում

### Մուտք

Լիբանահայերուն մեծամասնութիւնը, այսօր ժառանգորդն է Առաջին Աշխարհամարտին զուգադիպող Հայոց Ցեղասպանութեան զոհերու մնացորդացին: Արդարեւ, Հայոց Ցեղասպանութեան խլեակներէն խումբ մը, հաստատուելով Լիբանան, ճգնեցաւ իւրովի վերապրիլ՝ վերականգնել իր կեանքը, վերաստեղծել իր մշակոյթը եւ նորաստեղծել իր կենցաղը: Զուգահեռաբար՝ Լիբանան հաստատուած բնօրրանէն արմատախլուածներու այդ խումբը ջանաց իր տեղը յառաջացնել լիբանանեան մրցակից համայնքներուն միջեւ: Յաջորդող էջերուն մէջ որոշ մանրամասնութեամբ կը կատարուի պատումը այդ գործընթացին:

### Ա) Ցեղասպանութենէն Տեղաւորում

#### 1. Փոխանցման Հանգրուան

##### ա) Օսմանեան Ժառանգութիւնը

Ի տարբերութիւն ԺԳ. դարէն սկսեալ Լեռնալիբանան եւ Հիւսիսային Լիբանան հաստատուած հայերուն, որոնք ձուլուեցան եւ մեզի ծանօթ պատմական հետքեր չձգեցին, հայերը որոնք տարտղնուած էին աշխարհագրական Սուրիոյ ծովեզերքին, ԺԸ. դարէն սկսեալ, զգալի դարձուցին իրենց ներկայութիւնը: «Հիանալիօրէն աշխատասէր [եւ] բացառիկ արհեստաւորներ»<sup>1</sup> ըլլալով, անոնք ակնյայտ դարձան շուկային վրայ: Միաժամանակ, փոքր խումբ մը հայ կաթողիկէ կղերի, մարոնիթ եկեղեցիին ասպնջականութեամբ քաջալերուած, ամրապնդեց իր գոյութիւնը եւ 1749ին հիմնեց Զմմառու Վանքը Լեռնալիբանանի մէջ եւ զայն վերածեց իր պատրիարքական նստավայրին՝ 1786էն սկսեալ: Հայ կաթողիկէ կղերը իր դէմ եղած հալածանքներէն ազատում գտաւ կաթողիկէ մարոնիթներուն միջավայրին մէջ եւ համարկուեցաւ: Միւս կողմէն, Լեռնալիբանանի առաջին օսմանեան կառավարիչ հայ կաթողիկէ Տաւուս Փաշայի (1861-

<sup>1</sup> Stephen Longrigg, *Syria an Lebanon Under French Mandate*, 2<sup>nd</sup> imp., Oxford University Press, 1968, էջ 13:

1868) իմաստուն քաղաքականությունը կայունություն է վերելք բերաւ միջհամայնքային բախումներու թատերավայր դարձած Լեռնալիբանանին եւ լաւ համարում յառաջացուց տեղացիներուն մօտ՝ հայերուն հանդէպ<sup>2</sup>: Տաւոտ Փաշայի պաշտօնակոչութիւնը եւ իմաստուն գործելաձեւը ապահովութիւն եւ վստահութիւն ներշնչեց Լիբանան հաստատուած հայ կաթողիկէ ընտանիքներու՝ Բրզբալլա, Խաշօ-Խաշպօ, Ֆարժալլա, Խուբագ, Սիքիաս, Թոքաթլի, Թուրք, Խայեթ, Մըկըր, Արմալի, Գասպար, Մուրատ եւն., որոնք տարտղնուած էին Լեռնալիբանանի քրիստոնէական զանազան վայրերուն մէջ<sup>3</sup>: Այս հայերը չհիմնեցին համայնքային կազմակերպութիւններ, շատ քիչ հետաքրքրութիւն ցուցաբերեցին հայկական հարցերուն առնչութեամբ<sup>4</sup> եւ շատ կարճ ժամանակ ետք գրեթէ ձուլուեցան շրջապատի քրիստոնէութեան մէջ, քանի որ անոնք կաթողիկէութիւնը կը նկատէին իրենց ինքնութեան գլխաւոր բաղադրիչը: Այս ընտանիքներու զաւակներէն Բրզբալլա Հասունը եւ Էտիպ Իսհաքը, իսկ աւետարանական Եուհաննա Վարդապետն ու Իսքենտէր Ապքարիուը արաբերէն ստեղծագործեցին, միանալով արաբական *նահստլի*՝ զարթօնքին, ԺԹ. դարու երկրորդ կէտէն:

Պէյրութի մէջ, որ արեւմտահայ բնօրրաններէն յարաբերաբար նուազ անապահով վայր մըն էր հայերուն համար, Օսմանեան իշխանութիւնները ճնշման տակ կը պահէին փոքրաթիւ հայ առաքելականներն ու հայ կաթողիկէները: Հայ աւետարանականներու աւելի փոքր խումբ մը՝ մտաւորականներ եւ բժիշկներ, ծուարեր էր Պէյրութի Ամերիկեան Համալսարանի շրջափակէն ներս<sup>5</sup> եւ Արեւմուտքի միսիոնարներու Պէյրութի ու Սայտայի ովասիսներուն մէջ, կղզիացած իրենց հայրենակիցներէն:

<sup>2</sup> Սիսակ Վարժապետեան, *Հայերը Լիբանանի Մէջ*, Բ. Հատոր, 1920-1980 Շրջան, Պէյրութ, 1981, Տպ. Սեւան, էջ 229. նաեւ՝ Հայր Եփրեմ Պողոսեան, «Ֆրանքօ Նասրի Փաշա Բ. Կուսակալ Լիբանանի (1868-1873)», *Հանդէս Ամսօրեայ*, Հտր. 64, թիւ 1-3, 1950, էջ 102-103, 110:

<sup>3</sup> Սիսակ Վարժապետեան, *Հայերը Լիբանանի Մէջ*, Ա. Հատոր, *Հանրագիտարան Լիբանանահայ Գաղութի*, Բ. Տիպ., Պէյրութ, 1982, Տպ. Համազգային, էջ 229, էջ 442, Հտր. 2, էջ 259, 266:

<sup>4</sup> Nikola Scahahgeldian, "Ethnicity and Political Development in the Lebanese-Armenian Community, 1925-1975", *Armenian Review*, Vol. 36, Spring 1983, էջ 47-48:

<sup>5</sup> Վարժապետեան, Հտր. 1, էջ 290:

1895-1896ին Հայկական Վիլայեթներուն մէջ<sup>6</sup> տեղի ունեցած համիտեան ջարդերը ցնցեցին այս գաւառական, յարաբերաբար լճացած կեանքը պէրոյթահայերուն. հայ առեւտրական հաստատութիւններու Պէրոյթ հաստատուած ներկայացուցիչները իրենց ընտանիքները, իսկ ուրիշներ՝ իրենց գործի կեդրոնատեղին փոխադրեցին Պէրոյթ, ուր շուրջ 50 ընտանիքներ ապաստանեցան՝ փախչելով կոտորածներէն: Նորեկներու այս ալիքը Պէրոյթ բնակող հայերուն թիւը բարձրացուց շուրջ 120 ընտանիքի<sup>7</sup>, աշխուժացուց հայ համալսարանականները եւ ազգային գիտակցութեան ալիք մը յառաջացուց անոնց մէջ:

Առաջին Համաշխարհային Պատերազմի շրջանին պէրոյթահայերու հանդէպ օսմանեան բռնաճնշումներ կիրարկուեցան. անոնց տեղաշարժերը հետապնդուեցան, արտասահման մեկնումը արգիլուեցաւ, անոնց հարստութիւնը բռնազրաւուեցաւ, համալսարանականներ զինուորագրուեցան, ազգայնականութեամբ կասկածելիները աքսորուեցան, առաքելական դպրոցը փակուեցաւ, մատուռը քանդուեցաւ, իսկ Քեսրուանի շրջանի Այնթուրայի մէջ հաստատուած որբանոցը հայ որբերու թրքացման ծրագիր գործադրեց:

Կարելի է հետեւցնել, թէ նախատեղեւնեան փոքրաթիւ լիբանահայութիւնը անկազմակերպ էր, յարանուանականօրէն տարտղնուած եւ անհամաչափօրէն առնչուած հայկական խնդիրներուն: Յամենայնդէպս, հայ աւետարանականներուն եւ կաթողիկէներուն համարկումը տեղացի համայնքներուն՝ լաւ տպաւորութիւն յառաջացուցած էր տեղացիներուն մօտ հայերուն մասին:

#### բ) Ցեղասպանութեան Ժառանգութիւնը

1920ականները նոր հանգրուան մը յառաջացուցին լիբանահայ պատմութեան մէջ: Խորքային (ներքին եւ արտաքին) փոփոխութիւններ վերաձեւեցին լիբանահայութեան կարգավիճակն ու պայմանները: 1915ի Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով, արեւմտահայ

---

<sup>6</sup> Jean Claude Gaudin (ed.), *Les Chrtetiens d'Orient En France*, Paris, Le Sarment, Fayard, 1997, էջ 40:

<sup>7</sup> Zaven Messerlian, "Armenian Participation in the Lebanese Legislative Elections during the French Mandate, 1934-1943", *Haigazian Armenological Review*, Vol. 21, 2001, էջ 307. նաեւ՝ Լէւոն Չորմիսեան, *Համապատկեր Արեւմտահայոց Մէկ Դարու Պատմութեան, Ա. Հատոր, 1850-1878*, Պէրոյթ, Տպ. Տօնիկեան, 1972, էջ 95:

բոնագաղթի ակիբներեն վերապրած շուրջ 150.000 հայեր ապաստանեցան Հալեպի, Պաղտատի եւ Դամասկոսի մէջ ու շրջակայքը եւ շուրջ 3-4000 հոգի՝ Լիբանանի Չահլէի աւանին մօտակայքի Բայաթ երկաթուղակայանի մօտ: Ֆրանսայի քաջալերանքով ասոնք վերադարձան Կիլիկիա: Սակայն, Հոկտեմբեր 1921ին կնքուած Ֆրանքո-Թրքական Համաձայնագիրին հետեւանքով ծայր առաւ անոնց պարպումը Կիլիկիայէն: Համաձայնագիրը կործանեց միջերկրականեան անկախ հայկական պետութեան մը գոյատումին յոյսերը<sup>8</sup>: Կիլիկեհայութեան այս երկրորդ տեղահանութեան, հայեր հաստատուեցան Լիբանանի ծովափնեայ շրջանները՝ հիւսիսային Թրիփոլի քաղաքէն մինչեւ հարաւային Սուր քաղաքը, ինչպէս նաեւ լեռնային այլեւայլ վայրեր (Ղազիր, Չահլէ, Պաալպէք եւն.): Անոնց զուգահեռ, բարեսիրական հաստատութիւններ իրենց որբանոցները, շուրջ 12,000<sup>9</sup> որբերով, տեղափոխեցին Լիբանան, մինչ Պէրլուի հայ գաղթակայանները կը հաշուէին շուրջ 3700 ընտանիք մօտաւորապէս 19,380 հոգի<sup>10</sup>: Գաղթականութեան այս հոսքը զուգադիպեցաւ Մեծն Լիբանան Պետութեան հռչակումին:

1923ին Սուրիա հաստատուած շուրջ 50,000 հայութեան<sup>11</sup> կողքին մօտ 40,000 հայեր հաստատուած էին Լիբանան<sup>12</sup>: Ըստ 1932ի պաշտօնական մարդահամարին, Լիբանանի հայերը 32,000 էին (4%ը բնակչութեան)<sup>13</sup>, թէւ հայկական աղբիւրները աւելի բարձր կը դնեն այս թիւը<sup>14</sup>:

---

<sup>8</sup> Albert Hourani, *Syria and Lebanon, A Political Essay*, London, Oxford University Press, 1946, էջ 47. նաեւ՝ Anahit Ter Minasian, *Histoires Croisees. Diaspora. Armenie, Transcaucasie 1890-1990*, Marseille, Editions Parentheses, 1997, էջ 25. նաեւ՝ Ասպետ Մանճիկեան, «1915-1921. Հայութեան Դաժան Գոյամարտը», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2001, էջ 171:

<sup>9</sup> Կը հաշուուի որ շուրջ 25,000 որբեր տեղափոխուեցան արաբական երկիրներ (Հմայեակ Գրանեան, «Հայ Որբութիւնը», *Յուշամատեն Մեծ Եղեռնի*, խմբ. Գերսամ Ահարոնեան եւ Ն. Թօփալեան, Պէրլու, Տպ. Ատլաս, 1965, էջ 952):

<sup>10</sup> Վարժապետեան, *Հտր. 2*, էջ 37:

<sup>11</sup> Longrigg, էջ 138: Շուրջ 45,000 հայեր անցած էին Յունաստան (Fridtjof Nansen, *Armenia and the Near East*, (reprint), New York, Da Capo Press, 1976, էջ 23):

<sup>12</sup> Վարդան Սրբ. Տեմիրճեան, *Գաւազանագիրք Լիբանանի Եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց*, *Հտր. 1*, Պէրլու, Տպ. Ալթափրէս, 1980, էջ 87:

<sup>13</sup> Արա Մանճեան, «Լիբանան», *Հայ Սփիւռք Հանրագիտարան*, Հայկական Հանրագիտարանի Հրատ., Երեւան, 2003, էջ 291-2:

<sup>14</sup> Շողիկ Աշրգեան, «80Ամեակ Մը Եռագոյնի Հաւատարմութեամբ», *Ազդակ*, 28 Մայիս 1998, էջ 45:

Հայ գաղթականության արտահոսքը նորահոշակ Թրքական Հանրապետությունն շարունակուեցաւ այնքան ատեն որ այնտեղ ցեղային միատարրութեան եւ խտրականութեան քաղաքականութիւնը ի գորտւ մնաց<sup>15</sup>: Սուրիոյ Ալեքսանտրէթի Նահանգին կցումը Թուրքիոյ 1938-1939ին, տեղի հայ բնակչութիւնը մղեց արտագաղթի: Ասոնց մեծ մասը հաստատուեցաւ Լիբանան եւ մասնաւորաբար Այնճար (Պէքաայի Դաշտին մէջ) եւ Բաս Ուլ Այն (Սուրի շրջան) եւ ստացաւ լիբանանեան քաղաքացիութիւն<sup>16</sup>: 1930ականներու աւարտին լիբանահայութիւնը կը հաշուէր 54,850 անձ<sup>17</sup>. այս թիւը բարձրացաւ 61,000ի՝ 1945ին, 110,000ի՝ 1961ին<sup>18</sup>, եւ 162,000ի՝ 1971ին<sup>19</sup>: 1975ին լիբանահայութեան թիւը հաւանաբար հասաւ 225-250,000ի<sup>20</sup>, երբ Լիբանանի հայօճախը դարձած էր կեդրոնատեղին՝ Սփիւռքի հայ քաղաքական կուսակցութիւններուն, մշակութային միութիւններու, Կիլիկիոյ հայ առաքելական ու կաթողիկէ կաթողիկոսութիւններուն եւ Մերձաւոր Արեւելքի հայ աւետարանականութեան: Այդ շրջանին Պէրթուր վերածուեցաւ Սփիւռքի փեթակին:

Այս մեծ թիւը սկսաւ անկում կրել Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն (1975-1990), եւ 1990ականներու աւարտին նուազեցաւ 120,000ի: 2000ին լիբանահայութիւնը հաւանաբար կը հաշուէր 60-100,000<sup>21</sup>: Ներկայիս այդ թիւը հաւանաբար կը դառնայ 70,000ի շուրջ:

Կարելի է հետեւցնել որ լիբանահայութեան թուական աճը հետեւանք էր ցեղասպանութեան եւ բռնի տեղահանութեան, ինչպէս

<sup>15</sup> Vahe Tachjian, “Du Rapatriement en Cilicie au Nouvel Exode Vers la Syrie et le Liban” in Kevorkian, R., L. Nordikian et V. Tachjian (eds.), *Les Armeniens 1917-1939, La Quete d'un Refuge*, St. Joseph University Press, Beirut, 2006a, էջ 51, 53:

<sup>16</sup> Մելքոն Էպլիդաթեան, *Գաղթակայանէն Խորհրդարան, Հտր. 1*, Հալէպ, Կիլիկիա Հրատ., 1998, էջ 48: Ալեքսանտրէթի Նահանգի 1933ի մարդահամարը հայութեան թիւը կը նշէր 23,500 (Longrigg, էջ 238), մինչ հայկական աղբիւրներ այդ թիւը կը հասցնէին 40,000ի (Յովհաննէս Թովուզեան, *Հայերի Մասնակցութիւնը Միւրիայի Եւ Լիբանանի Ազգային-Ազատագրական Եւ Դեմոկրատական Շարժումներին*, Երեւան, Հայկ. ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, 1968, էջ 73): Ասոնց շուրջ 6000ը հաստատուեցաւ Այնճար:

<sup>17</sup> Ղազար Չարբզ, *Մերձաւոր Արեւելքը. Սուրիա, Լիբանան, Պաղեստին, Անդր-Յորդանան: Բնական, Քաղաքական, Տնտեսական Ընդարձակ Մասերով*, Պէրթուր, Տպ. Ազդակ, 1939, էջ 36, 144:

<sup>18</sup> Հակառակ շուրջ 10,000 լիբանահայերու Սովետական Հայաստան ներգաղթին:

<sup>19</sup> Սանճեան, էջ 292. նաեւ՝ Վարօ Գեորգեան, *Ամէնուն Տարեցոյցը, Բ. Տարի*, Պէրթուր, Հայ Կաթողիկէ Տպարան, 1955, էջ 322. նաեւ՝ Վարժապետեան, Հտր. 2, էջ 24:

<sup>20</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 79:

<sup>21</sup> Սանճեան, էջ 292-293:

նաեւ դրացի երկիրներէ ներհոսքի: Այս պատճառները միշտ ներգործեցին լիբանահայութեան գաղափարախօսական կերտումին վրայ. սերունդներ դաստիարակուեցան եւ թրծուեցան ազգայնականութեամբ: Միւս կողմէն, լիբանահայութեան աճին եւ հայկական ինքնութեան զօրացումին սատարող Լիբանանի համայնքապետական համակարգը միջհամայնքային լարուածութիւն ու հակամարտութիւն յառաջացնելով, դուռ բացաւ քաղաքացիական պատերազմին, արտագաղթին ու հետեւաբար՝ լիբանահայութեան թիւի անկումին:

## 2. Տեղաւորման Հանգրուան

Օտար զանգուածի մը ներհոսքը նորակազմ պետութեան մայրաքաղաքը՝ միջհամայնքային լարուածութիւնը բորբոքեց: Նորածին այս երկրին համակարգը, բնոյթը եւ ինքնութիւնը տարտա մ էին ու ենթակայ՝ այլազան հակասական նախագծումներու: Նորեկ հայերը չէին կրնար օգնել՝ սահմանելու Մեծն Լիբանանի պետական համակարգի յատկանիշերը, բայց դրապէս ազդեցին անոր բոլոր բնագաւառներու զարգացումին:

### ա) Համայնքներու Հակազդեցութիւնը

Հայերու զանգուածային մուտքը Լիբանան՝ այլազան հակազդներու դուռ բացաւ: Հին լիբանահայերու խումբ մը սկիզբը հեռու մնաց գաղթական այս զանգուածէն<sup>22</sup>: Տեղացի ազգայնական-լիբանապաշտները հայերը նկատեցին երկրին խնդիրներուն աւելցող փոքրամասնական խնդիր մը, <sup>23</sup>: Ուրիշներ նոր բաղադրատարր մը նկատեցին հայերը որ կու գար աւելնալու լիբանանեան խառնուրդին եւ կրնար աւելի՛ բորբոքել բաժանումները<sup>24</sup>: Մարոնիթ պատրիարքն ու ղեկավարութիւնը իրենց հօտին թելադրեցին իրենց միջավայրին մէջ հիւրընկալել հայերը<sup>25</sup> եւ անոնց հետ վարուիլ իբրեւ լիբանանցիներու, որովհետեւ հայերու ներկայութիւնը կրնար սատարել քրիստոնէական

<sup>22</sup> Longrigg, էջ 144: Ուշագրաւ բացառութիւն էր հայ կաթողիկէ վարդապետ Պօղոս Արիս, որ իր ֆրանսական կապերը օգտագործեց ամոքելու համար այս գաղթականներուն վիճակը (Վարժապետեան, Հտր. 1, էջ 293-296):

<sup>23</sup> Albert Hourani, *Syria and Lebanon, A Political Essay*, London, Oxford University Press, 1946, էջ 136:

<sup>24</sup> Carla Edde, “Beyrouth Face a Ftablissement des Refugies Armeniens Pendant les Annees 1920: Les Limites de l’Hospitalite” in Kevorkian, R., L. Nordikian et V. Tachjian (eds.), *Les Armeniens 1917-1939, La Quete d’un Refuge*, Beirut, St. Joseph University Press, 2006, էջ 192:

<sup>25</sup> Նոյն, էջ 187:

գերակշռութեան, ուստի՝ քրիստոնէական ղեկավարութիւն տալ երկրին: Առանց հայերուն՝ 1932ի մարդահամարը 25,000ի իսլամ-տիրրի գերակշռութիւն մը պիտի տար ի հեճուկս քրիստոնէաներուն<sup>26</sup>: Հայերու յառաջացուցած վճռորոշ գերակշռութիւնը մղեց իսլամները, որ հայերը նկատեն քրիստոնէաներուն թիւին յաւելումին նպաստող տարրեր միայն<sup>27</sup>:

բ) Հոգատար Եւ Տեղական Իշխանութեանց Քաղաքականութիւնը

Հայերուն ժամանումը զուգադիպեցաւ Մեծն Լիբանան Պետութեան հռչակումին: Ընդհանրապէս մեծամասնութեամբ իսլամաբնակ ծայրամասերը կցուելով խիտ քրիստոնէաբնակ Լեռնալիբանանին, յառաջացուեցաւ Լիբանանը, որուն վարչաձեւին եւ իշխանութեան ձեւաւորումին մէջ վճռական պիտի ըլլար ժողովրդագրութիւնը:

Լիբանանցիք բացարձակապէս դէմ էին որեւէ յատկացում կատարելու հայկական գաղթականներուն<sup>28</sup>: Անոնք առարկեցին որ քանի որ հայերը բերուած էին հոգատար իշխանութեանց որոշումով, ապա այդ իշխանութիւնները պարտէին հոգալ հայերը եւ ոչ թէ՛ Լիբանանը: Կառավարութիւնը՝ նախապատուութիւն տուաւ օղակայանի կառուցման, քան թէ՛ հայերու վիճակի բարօքման: Ան քաջալերեց հայ եկեղեցին որ նախաձեռնէ գաղթականութեան համայնքացումին եւ կազմակերպումին: Պէրութի քաղաքապետարանը հազուադէպօրէն միջամտեց հայ գաղթականներուն ներքին հարցերուն (ուր անիշխանութիւն կը տիրէր սկզբնական տարիներուն<sup>29</sup>), ոչ ալ որեւէ գումար տրամադրեց բարելաւելու հայերու պայմանները, բայց յանձնարարեց որ վարակի բարձր սպառնալիքի պատճառով գաղթականները կղզիացուին<sup>30</sup>:

---

<sup>26</sup> Betts, *Christians in the Arab East*, Athens, Lycabettus Press, 1978, էջ 55-56:

<sup>27</sup> William Harris, *Faces of Lebanon: Sects, Wars, and Global Extensions*, Princeton, Markus Wiener Publishers, 1997, էջ 70. նաեւ՝ Vahe Tachjian, “Des Camps de Refugies aux Quartiers Urbains: Processus et Enjeux,” in Kevorkian, R., L. Nordikian et V. Tachjian (eds.), *Les Armeniens 1917-1939, La Quete d'un Refuge*, St. Joseph University Press, Beirut, 2006b, էջ 128:

<sup>28</sup> Edde, էջ 194:

<sup>29</sup> Tachjian, 2006b, էջ 122:

<sup>30</sup> Edde, էջ 188:

գ) Թրքական Հակազդեցությունը

Մէկ կողմէն, կարգ մը հայերու զինուորագրումը ֆրանսական *մանտաթային* զօրքերուն<sup>31</sup>, եւ միւս կողմէն հայ գաղթականներուն խնդրով ֆրանսացիներուն ձախորդ քաղաքականութիւնը հակահայ զգացումներ եւ բռնութեանց ալիք յառաջացուցին երկրին մէջ<sup>32</sup>: Դեռ աւելին, Թուրքիան շրջանին մէջ հայոց տեղաւորումին դէմ քարոզարշաւ կատարեց ահազանգելով Հիւսիսային Սուրիոյ մէջ 'յառաջանալիք' հայկական քաղաքական միաւորի մը մասին: Ան կասկած գրգռեց իսլամ շրջանակներուն մէջ, թէ հայերը երկիրը ձեռք պիտի առնէին, եւ տեղացիները օտարականներու վերածէին<sup>33</sup>: Թերեւս Թուրքիոյ իսկ ճնշումով եւ Մոսկուայի մղումով, Սովետական Հայաստանի իշխանութիւնները ներգաղթի կոչեր ըրին, այնպիսի՝ ժամանակ երբ գաղթականները դեռ տեղաւորուած չէին Խորհրդային Հայաստանի մէջ<sup>34</sup>:

Հայ Եկեղեցին շատ արագ հակադարձեց: Ան չքաջալերեց հայերուն զինուորագրումը՝ ֆրանսական զօրքերուն (որ մասամբ հետեւանք էր գործազրկութեան), մինչ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսը հանդիպումներ ունեցաւ Դամասկոսի շէխերուն հետ՝ ջրելու համար անտեղի ու անհիմն կասկածները<sup>35</sup>: Միւս կողմէն, դէպի Արեւմուտք արտագաղթի փոքր առիթ մը տրուեցաւ գործազուրկ հայերուն, որ նուազեցուց յառաջացած միջհամայնքային եւ ընկերային ճնշումը ու մասամբ պակսեցուց տեղական դժգոհանքը:

Հայ գաղթականներուն ճակատագիրը Միջին Արեւելքի մէջ մինչեւ 1920ականներու կէսերը մնաց անստոյգ եւ առկախ<sup>36</sup>: Արեւմտեան պետութիւնները չփափաքեցան ֆինանսաւորել գաղթականութեան ներգաղթը Սովետական Հայաստան, ոչ ալ վճռեցին անոնց Սուրիա-Լիբանան հաստատումը: 1920ականներու աւարտին, սակայն, ըստ

<sup>31</sup> Longrigg, էջ 161. նաեւ՝ Hourani, էջ 188. նաեւ՝ Tabitha Petran, *Syria*, London, Ernest Benn Limited, 1972, էջ 62:

<sup>32</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 7. նաեւ՝ Nicola Migliorino, "Le (re)-etablissement des Institutions Armeniens au Liban et en Syrie: les Refugies et l'Etat" in Kevorkian, R., L. Nordikian et V. Tachjian (eds.), *Les Armeniens 1917- 1939, La Quete d'un Refuge*, St. Joseph University Press, Beirut, 2006, էջ 103:

<sup>33</sup> *AlMaarad*, October 14, 1923.

<sup>34</sup> Կարլէն Դալլաքեան, *Ռամկավար Ազատական Կուսակցութեան Պատմութիւն (1921-1940) Գիրք Առաջին*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1999, էջ 222-223. նաեւ՝ Վարժապետեան, Հտր. 2, էջ 209:

<sup>35</sup> Դալլաքեան, 1999, էջ 225. նաեւ՝ E.P. Maccallum, *The Nationalist Crusade in Syria*, New York, 1928, էջ 152:

<sup>36</sup> Tachjian, 2006b, էջ 116:

երևոյթին, որոշում մը յառաջացաւ յօգուտ տեղաւորումին: Ի վերջոյ ոչ-միակուռ, տնտեսապէս ունեգուրկ, հոգեբանօրէն ընկճուած հայկական գանգուած մը հաստատուեցաւ Լիբանան, որուն ինքնութիւնը յստակ չէր, ոչ ալ գոյութիւն ունէր, իսկ կարգավիճակը՝ կը մնար չորոշուած:

Սեպտեմբեր 1920ին Լիբանանի խորհրդարանին համայնքային դրութիւնը հաստատուեցաւ: Ֆրանսացի Բարձր Կոմիսար՝ Տը Քէ, կը մատնանշէր թէ Լիբանանի Ներկայացուցիչներու Խորհուրդը պիտի հիմնուած ըլլայ համայնքային համեմատական ներկայացուցչութեան դրութեան վրայ, հաւաստելով թէ՛ լիբանանցիութեան բաղադրատարրը յարանուանութիւնն է, կրօնական համայնքը: Տարբեր համայնքներու անդամներու մէկտեղումը կուսակացական գաղափարախօսութեան մը շուրջ՝ խոտոր նկատուեցան Լիբանանի վարչաձեւին<sup>37</sup>: Աւելի ետք, Լիբանան օրինականացուց քրիստոնէայ, իսլամ եւ հրեայ կրօնական խմբաւորումները, անոնց շնորհեց դատաստանական իրաւունքներ՝ ընտանեկան օրէնքի ծիրին մէջ<sup>38</sup>, լիբանանցիները դրաւ անիրաւահաւասար հարթակներու վրայ եւ նկատի չառաւ ու մերժեց ապահամայնքայնութիւնը: Այսպիսի քայլեր աւելի ամրացուցին համայնքային ընկերա-մշակութային եւ կրօնական ինքնավարութիւնը, անթափանցելի դարձուցին միջհամայնքային պատերը եւ խոչընդոտներ դրին համարկումի ու լիբանացիի ազգակերտման ճամփուն վրայ:

### 3. Քաղաքական Տեղաւորում

Ի տարբերութիւն հոգատար իշխանութեան, որ քաղաքացիութիւն շնորհեց հայ գաղթականներուն<sup>39</sup>, խորհրդարանը, ծերակոյտը եւ հանրութիւնը առհասարակ գոհ չէին հայոց տրուող այս իրաւունքէն եւ առարկեցին որ հայերը ազգութեամբ, լեզուով եւ սովորոյթներով<sup>40</sup> իրենցմէ կը տարբերէին, ուստի եւ անոնց համարկումը անհաւանական կը դառնար: Դժգոհները պահանջեցին քաղաքացիական իրաւունքներու տուչութեան յետաձգումը, կամ՝ միայն քուէարկելու իրաւունքի շնորհումը՝ հայ գաղթականներուն: Կը

<sup>37</sup> Meir Zamir, *The Formation of Modern Lebanon*, Ithaca and London, Cornell University Press, 1988, էջ 142-143:

<sup>38</sup> Bashir Al Bilani, *Qawanin AlAhwal AlShakhsiyya Fi Lubnan*, 5<sup>th</sup> ed., Beirut, Dar El E'lm LilMalayin Press, 1997, էջ 17-18:

<sup>39</sup> Սեպտեմբեր 1924ին ֆրանսական հոգատար իշխանութիւնները քաղաքացիութիւն շնորհեցին «բոլոր փափաքող հայերուն» (Migliorino, էջ 105):

<sup>40</sup> Edde, էջ 191, 195:

թուի թէ մարդահամարի գործընթացի ասարտով, երբ ժողովրդագրական նժարը քրիստոնէութեան կողմ թեքեցաւ, կարիքը չմնաց փոխհատուցելու հայերուն: Կարծես ուզուածը այն էր, որ հայերը ընտրելու եւ ոչ թէ ընտրուելու իրաւունք ունենան.<sup>41</sup> անոնք լիբանանցի նկատուին, բայց ուրիշներ օգտուին զիրենք ներկայացնելու պատեհութիւններէն:

1920ականներու ասարտին հայոց ներկայացուցչութեան հարցը դարձեալ արժարձուեցաւ<sup>42</sup>: Ի տարբերութիւն Սուրիոյ հայերուն, որոնք 1928ին ունեցան իրաւունքը ընտրելու եւ ընտրուելու<sup>43</sup>, լիբանահայութեան քաղաքական ներկայացուցչութեան առաջին քայլերը քիչ մը աւելի ուշ կատարուեցան: Լիբանահայութիւնը անուղղակիօրէն ներկայացուեցաւ լիբանանեան առաջին եւ երկրորդ խորհրդարաններուն մէջ՝ Ընտրական Ներկայացուցչական Մարմնի միջոցով: Գործնապէս, սակայն, հայերը ո՛չ մասնակցեցան նորահաստատ պետութեան գոյատեւումի երաշխիքներու համակարգի քննութեան, ո՛չ ալ՝ սահմանադրութեան նախագիծին<sup>44</sup>: 1929ին Ապտալա Իսհաք (հայկական ծագումով լիբանանցի մը) ներկայացուցիչը եղաւ փոքրամասնութիւններուն՝ Ներկայացուցիչներու Խորհուրդին (խորհրդարան) մէջ<sup>45</sup>:

1920ականներու ասարտի Ընկերային-տնտեսական բարելաւումէն ետք<sup>46</sup>, քաղաքական համարկումի նոր քայլերը չուշացան: 1934ին, ֆրանսական իշխանութիւնները խորհրդարանական աթոռի մը իրաւասութիւնը տուին լիբանահայ առաքելական համայնքին, իսկ 1936ին Պէյրութի քաղաքապետարանի աթոռի մը:

Թէեւ հայերուն հանդէպ վերաբերումն ու զգացումները խառն էին, 1930ականներու կէսին, հակահայ զգացումները նուազած էին: Ժամանակ առաւ մինչեւ որ բոլորն ալ հասկնան որ հայերը բառին իսկական առումով անջատ *միլլէթ* մըն են: Խորհրդարանական աթոռին յատկացումը գործնապէս դրսեւորեց «քրիստոնէայ» հայերուն տարբերութիւնը միւս քրիստոնէաներէն եւ նուազեցուց իսլամական դժգոհանքը: Խորհրդարանական երկրորդ աթոռի մը իրաւասութիւնը՝

---

<sup>41</sup> Նոյն, 2006, էջ 193-4:

<sup>42</sup> Ֆրանսատառ լիբանանեան *l'Orient* օրաթերթը առարկեց որ Պէյրութի 39,000 հայեր իրաւունքն ունենին առնուազն մէկ ներկայացուցիչ ունենալու (*L'Orient*, May 7, 1929):

<sup>43</sup> Longrigg, էջ 181, 190:

<sup>44</sup> Zamir, 1988, էջ 200-208, 266ծնթ.117:

<sup>45</sup> Longrigg, էջ 203:

<sup>46</sup> Tachjian, 2006b, էջ 136, 140:

1937ին, ներհայկական կրկնակի ուժականություն մը յառաջացուց. ի յայտ եկաւ բազմակի եւ տարբերակուող լիբանահայ ներկայացուցչություն մը. միաժամանակ ներհայկական եւ միջհամայնքային քաղաքականություն մշակելու տարածքը աւելցաւ: Միւս կողմէն, լիբանանեան միջհամայնքային քաջքշուքներուն հայոց չմիջամտելը նպաստեց հայերուն վարկին եւ իսլամներուն քով անոնց վստահութեան աճին: Ոչ-հայերու կողմէ հայերու ընդունման ընթացքը հոդ գտաւ<sup>47</sup>:

Մինչեւ 1930ականներու կէսերը, Լիբանանի համայնքներու խառնուրդին մէջ հայութիւնը կը գտնուէր խոնարհագոյն եւ ամէնէն խոցելի աստիճանին վրայ: Հայերը կ'ապրէին աննախանձելի պայմաններու մէջ. տնտեսապէս խեղճ էին, անկազմակերպ եւ քաղաքականապէս թերզարգացած<sup>48</sup>: Ի տարբերութիւն միւս համայնքներուն, լիբանահայութիւնը աշխարհագրական տարածք չունէր: Թէեւ շուրջ 12,000 որբեր եւ փոքրեր դպրոց կը յաճախէին 1929ին<sup>49</sup>, երկրորդական վարժարան գոյութիւն չունէր տակաւին<sup>50</sup>, լիբանահայութիւնը լիբանանցիներու եւ լիբանանեան քաղաքական մշակոյթին անձանօթ կը մնար: Լիբանահայերը չունէին անհրաժեշտ լծակները՝ քաղաքական իրաւունքներ ձեռք բերելու, հայկական ներկայացուցչություն եւ ներկայութիւն պարտադրելու լիբանանեան քաղաքական բեմին վրայ: Միւս կողմէն, պետութիւնն ալ այնքան զօրաւոր չէր որ տարհամոզէր համայնքները, զիջումներ կորզէր անոնցմէ եւ բաժնեկից դարձնէր հայերը: Մէկ խօսքով՝ հայերը այլազան հակազդեցութիւններու ենթարկուեցան տարբեր համայնքներէ եւ չունեցան տեղական միահամուռ աջակցութիւն:

---

<sup>47</sup> Agop Der Karapetian and Levon Melikian, "Assimilation of Armenians in Lebanon", *Armenian Review*, Vol. 27, 1974, էջ 70:

<sup>48</sup> Nikola Scahahgaldian, "Ethnicity and Political Development in the Lebanese-Armenian Community, 1925-1975", *Armenian Review*, Vol. 36, Spring 1983, էջ 46:

<sup>49</sup> *Այլպոլ Յուշանատեան, Նուիրուած՝ Հ.Բ.Միութեան Լիբանանի Վեթերաններու Եւ Բարերարներու, 1947-1967*, խմբ. Ներսէս Շիրինեան, Յակոբ Ղազարեան, Ասատուր Մակարեան, Զաւէն Մսրրլեան, Պէրոյթ, Տպ. Ատլաս, 1969, էջ 36. նաեւ՝ Վարժապետեան, Հտր. 2, էջ 391. նաեւ՝ Սանճեան, էջ 301:

<sup>50</sup> Աշըգեան, 1998, էջ 45: Հայ Աւետ. Գոլէճը տակաւին չէր տուած իր առաջին շրջանաւարտները:

## **Բ. Տեղափոխումն Համարկումի Անցումին Հայկական Երեսակը**

Մուտք

Այս խնդիրներուն ենթական՝ հայ գաղթականը, քի՛չ հետաքրքրուած էր քաղաքական համարկումով եւ ներկայացուցչութեամբ: Ան կը դիմագրաւէր աւելի՛ անմիջական մտահոգութիւններ, ուստի՝ բաւարար ուշադրութիւն չդարձուց քաղաքական իշխանութեան բաժնեկցումի եւ ներկայացուելու հարցերուն: Հայ գաղթականը պարտէր վերաձեւաւորել իր ընկերամշակութային կենցաղը, վերափոխուիլ աւանդական գիւղացիէ քաղաքաբնակի, եւ վերակառուցուիլ տեղայնացուած մասնիկներէ այլ ձուլուածքի:

Դեռ աւելին, այս տասանորդուած վերապրողները, ենթակայ մնալով յետ-եղեռնեան թրոմային, հոգեբանօրէն հաւաքական դառնութեան եւ անգօրութեան ցասում կ'ապրէին. ծայրայեղօրէն չվստահող, կասկածամիտ, անցելապաշտ, գերհոգածու՝ իրենց հարազատներուն հանդէպ, օտարներէն վախցող, եւ գերզգուշ էին անոնց նկատմամբ: Ժամանակ էր պէտք, որպէսզի հայերը կարենային տարբերակել զիրենք ջարդող թուրքը՝ տեղացի սիւննիէն, որ մաս կազմած էր Օսմանեան Կայսրութեան պետականակիր համայնքին: Հայերը իրենք զիրենք նկատեցին անհայր, անք, անօգ եւ անտէր<sup>51</sup>: Անոնք ընկճուած էին եւ հիասթափուած ֆրանսական լքումէն, միաժամանակ, սակայն, Ֆրանսան անոնց միակ հոգատարն էր, երաշխաւորն ու պաշտպանը Լիբանանի մէջ:

### **1. Հայկական Գործօններ**

ա) Համարկումի Տարակարծութիւններ, Ներկան Եւ Անցեալը, Մասնակի Օգնութիւն Անոքութեան

Լիբանահայերը միակարծիք չէին Լիբանանի հանդէպ իրենց կեցուածքին մէջ: Կրօնական եւ աւանդական ղեկավարութիւնն ու ՀՅԴն թիկունք խոստացած էին ֆրանսական հոգատար իշխանութեան, մինչ հայ համայնավարները եւ նուազ չափով ալ հնչակեանները աւելի

---

<sup>51</sup> Լուտեր «Մարդ Մը» *Ազգակ*, 22 Սեպտեմբեր 1934. նաեւ՝ *Թղթակցութիւն Սահակ Ա. Եւ Բարզէն Բ. Կաթողիկոսներու*, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արխիւներ, թիւ 1, [կազմ. Գրիգոր Շահինեան], Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1999, էջ 321. նաեւ. Aida Boudjikian, "Industrie et Mutations Socio-economique d'une Communauté: L'Exemple Armenien au Liban," in *Industrialisation et Changements Sociaux dans l'Orient Arabe*, ed. A. Bourgey, Centre d'Etudes et de Recherches sur le Moyen-Orient Contemporain, Beirut, Presse Universitaire de Lyon, 1982, էջ 321:

կը համակրէին տեղական անկախական քայլերուն եւ կը հակառակէին ֆրանսական մանտաթին:

Այդուհանդերձ, տակաւ, ժամանակի ընթացքին, աշխատավայրէն բերուած ձեռավարձքով եւ միջազգային նպաստից կազմակերպութիւններու օգնութեամբ<sup>52</sup> լիբանահայ կացութիւնը սկսաւ բարելաուիլ. գաղթակայաններու վրանները փոխարինուեցան թիթեղեայ ծածկերով, անհանդուրժելի առողջական պայմանները մասամբ բարելաուեցան: 1925ին կացութիւնը «տակաւին ճնշիչ էր... բայց կայունացած»<sup>53</sup>. նորաբաց դպրոցները աշակերտական տարիքի տղաք հաւաքեցին փողոցներէն եւ վերատիրացան օտար դպրոցներ յաճախող հայ աշակերտներուն մէկ մասին:

Կենսապրուստի մտահոգութիւնները վա՛ն պահեցին անցելապաշտութիւնը հայոց մէջ: Անոնք անցեալը իտէլականացուցին, եւ խորհրդաւոր հրաշքի շղարշով պատած, զայն փոխանցեցին նոր սերունդին: Հայկական անցելապաշտութիւնը պարարտ հող գտաւ Լիբանանի մէջ, որովհետեւ երկիրին համակարգը, նպաստաւոր պայմաններն ու տեղանքը աւելի համայնքային զգացումներ, քան թէ՛ համարկում կը սնուցանէին: Ներկային եւ անցեալին միջեւ, հայը ինքզինք հոգեպէս կապեց անցեալին..., որ սերտօրէն համապատասխանեց իր կենսափիլիսոփայութեան եւ կենցաղին: Ատիկա մէկ կողմէն պահպանողական, յետադարձ շունչ մը յառաջացուց, միւս կողմէն՝ յարատելելու եւ չընկրկելու թափ տուաւ: Այս երկու՝ ներկան ապրելու եւ անցեալին կառչած մնալու, ներհակ պահանջներուն միջեւ հայը շատ քիչ բան ուզեց եւ ակնկալեց իր տեղական միջավայրէն: Ան միջավայրէն գալիք նուազագոյնով բաւարարուած էր<sup>54</sup>:

Իրաւ ալ, ի տարբերութիւն տնտեսական գաղթականին, որ կամովին կը ձգէ իր ծննդավայրը եւ պատրաստակամ է լիովին համարկուելու եւ նոյնիսկ ձուլուելու, հայերը քաղաքական գաղթականներ էին, վտարանդի արտաքսեալներ, որոնք պարտադրաբար արմատախլուած էին իրենց պապենական հողերէն: Անոնք մերժեցին համարկուիլ եւ երազեցին իրենց հայրենիք ***տունդարձք***:

Հոգեբանական այս տրամադրութիւնը առաւել դժուարացուց հայկական համարկումը արդէ՛ն իսկ անհիւրընկալ, չհամարկուող

---

<sup>52</sup> Tachjian, 2006b, էջ 120:

<sup>53</sup> Longrigg, էջ 139:

<sup>54</sup> Լեւոն Չորմիսեան, *Կուսակցութիւնները*, Պէյրութ, Տպ. Մշակ, 1965, էջ 124:

բազմահամայնքային Լիբանանի մը մէջ, ուր տեղացի համայնքները շեշտակի ազդեցութեան տակ էին նոյնիսկ դարեր առաջ իրենց համայնքին պատմութեան եւ պատահած դէպքերուն<sup>55</sup>: Այս համայնքներուն մտածելը յարիր էր գաղթական լիբանահայերուն գաղափարախօսական ըմբռնումներուն: Հայերը նոր վերադարձած ըլլալով մահէն, վճռած էին գոյատեւել, վերապրիլ եւ վերականգնել իրենց կորուստներն ու զրկանքները՝ հինը գերազանցելու մտասուեռումով<sup>56</sup> եւ կառչիլ իրարու:

Հետեւաբար, զարմանալի չէ որ հոգատար իշխանութեանց բոլոր ջանքերը՝ տարտղնելու հայերը եւ սփռելու զանոնք զանազան շրջաններ՝ չյաջողեցան: Չախողեցան նաեւ մարոնիթ եւ այլ քրիստոնէայ կրօնական ու աշխարհիկ առաջնորդներուն թաքուն եւ բացայայտ յոյսերն ու փորձերը՝ հայերը շաղախելու քրիստոնէայ համայնքներուն: Գաղթականները միշտ ալ վերախմբաւորուեցան եւ վերամիացան<sup>57</sup> յառաջացնելով հասարակաց հաւաքական կենցաղ մը՝ մշակութային եւ էթնիք իւրայատուկ արժէքներով<sup>58</sup>: Արդարեւ, կարիքը կար հոգեբանական պէտք մը բուարարելու, ինքնահաստատում-հայատեւումով՝ Տեղասպանութեան հակադարձելու<sup>59</sup>: Լիբանան հաստատուած հայ գաղթականութիւնը վերածուած էր նոյնամիտ, նոյնազգայ, նոյնակենցաղ զանգուածի մը: Լիբանանի գաղթահայուն համար հայ մշակոյթը, իր հայկական միջավայրը, գիտակցուած եւ չգիտակցուած հայ ինքնութեան տարրերն ու դրսեւորումները կ'ընկալուէին իբրեւ իր ընտանիքի մէկ բաղկացուցիչը: Ասիկա այն ժամանակն էր երբ գաղթահայ լիբանանցիներուն միջեւ եղած տարածութիւնները իջած էին նուազագոյնի:

Այսպիսի մթնոլորտի մէջ, ազգին ուժ եւ միջոցներ հայթայթելը<sup>60</sup> դարձաւ թէ՛ նպատակ եւ թէ՛ արդարացումը այս գաղթականներուն գոյութեան: Որեւէ հայու ցաւը բոլոր հայերուն սեփականութիւնը դարձաւ<sup>61</sup>: Բոլորին ալ անցեալն ու ներկան՝ ցեղասպանութեամբ ու

---

<sup>55</sup> David McDowall, *Lebanon: A Conflict of Minorities*, Minority Rights Group Report, 1983, էջ 7:

<sup>56</sup> Hrair Deukmejian, “The Armenians: History, Consciousness and the Middle Eastern Dispersion”, *Ararat Quarterly*, Vol. XIX, # 3, issue 75, Summer 1978, էջ 47:

<sup>57</sup> Tachjian, 2006b, էջ 127:

<sup>58</sup> Boudjikianian, էջ 321:

<sup>59</sup> Gerard Libaridian, “The Diaspora is not What it Used to be”, *AIM*, January 1991, էջ 52:

<sup>60</sup> Նոյն:

<sup>61</sup> Ֆիլիք Զաքարեան, *Վերջին Որբերուն Հսկումը*, Պէրյուր, Համազգային Վահէ Սէթեան Տպարան, 1974, էջ 103:

անոր հետեւանքներով, նոյն էին: Գաղթակայաններուն մեջ անոնք տարերայնօրէն վերստեղծեցին իրենց մշակոյթը եւ վերախմբաւորուեցան իրենց եկեղեցիին եւ հայրենակցական միութիւններուն շուրջ<sup>62</sup>, որոնք հանրային տարածքի աւանդական ու նորագոյն առաջին խորհրդանիշն եղան<sup>63</sup>:

1920ականներու երկրորդ կէտը հաւաքական միաձայնութեան, հաստատուելու եւ վերակենդանանալու, հաւաքական հետեւողական ճիգի ժամանակն էր, մղուած՝ հաւաքական մտայնութենէ եւ խթանուած՝ հաւաքական շահերէ: Յեղասպանութեան առթած ազգային գիտակցութեան, ինքնութեան եւ զօրակցութեան<sup>64</sup> վերաձեւաւորուած զգացումը իր պտուղները սկսած էր տալ:

Այդուհանդերձ, դիրին չէր ազգային բազմատարր խումբ մը (որ կը տարբերուէր աշխարհագրական, յարանուանական, սովորոյթներու, բարբառներու, արհեստներու, ընկերային դիրքի եւ քաղաքական հաւատարմութեան ազդակներով) վերաձեւաւորել իբրեւ լիբանահայ յարաբերաբար նման զգացողութեամբ, միատարր հաւաքականութիւն:

Այսպիսի նախաձեռնութիւն մը՝ նախաեղեռնեան լիբանահայերու կարողութենէն վեր էր<sup>65</sup>. անոնք ո՛չ մարդկային, ո՛չ ալ տնտեսական պաշարները ունէին նման յառաջադրանք մը իրականացնելու: Ի տարբերութիւն սուրիահայ, մանաւանդ հալէպահայ դարաւոր համայնքին, լիբանահայ նախաեղեռնեան համայնքը փոքրաթիւ էր, տկար եւ անկազմակերպ: Առաջին աշխարհամարտն ու օսմանեան ճնշումները ցամքեցուցեր էին անոնց նիւթական կարողութիւնները: Անդին՝ ֆրանսական, ամերիկեան եւ բրիտանական նպաստի հիմնարկները, որոնք գաղթականներուն կ'օժանդակէին, առողջապահական կարիքներ կը հոգային, կ'աջակցէին բնակարաններու շինութեան, նախնական դպրոցներու եւ որբանոցներու հաստատումին, ասակ չէին նման գործի մը...

Եւ այսպէս, երբ Լիբանանի պետական միջամտութիւնը շատ քիչ էր, օտար նպաստի ճիգերը նման դեր չէին կրնար ստանձնել, եկեղեցիին եւ կուսակցութիւններուն վրայ մնացին բազմաբեւեռ վերակերտումի կազմակերպական պարտականութիւնները:

---

<sup>62</sup> Joseph Mouwannes, *Les Elements Structuraux de la Personnalite Libanaise, Essai Anthropologique*, Ins. of Scientific Studies, Sin el-Fil, Lebanon, 1973, էջ 110:

<sup>63</sup> Raffi Shouboukian, “Back to School: Caught Between Rising Tuition Costs and Armenianism, Parents Face a Difficult Choice”, *AIM*, September 1990, էջ 44. նաեւ՝ Migliorino, էջ 100-101:

<sup>64</sup> Migliorino, էջ 96:

<sup>65</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 34-35:

բ) Շուկայական Համարկում

Վերեն եկող համարկման փորձերեն եւ ներհայկական անհետաքրքրութենէն անկախ, համարկումը սկիզբ առած էր արդէն շուկային եւ աշխատավայրին մէջ<sup>66</sup>: Հայ գաղթականները շուտով մխրճուեցան տեղական տնտեսութեան մէջ, փոխարինեցին արտասահման մեկնած, թէ Ա. Աշխարհամարտին սովէ մահացած աշխատուծը<sup>67</sup> եւ վերականգնեցին շուկան<sup>68</sup>: Հայ գաղթականները Լիբանան հասան այնպիսի ժամանակ երբ տեղական ճարտարարուեստը նոր կը ծլէր<sup>69</sup>: Անոնք աշխատանքային շուկան ողողեցին աժան ձեռավարձքով, ձեռնարկեցին իրենց ձեռարհեստի յատուկ գործերուն, եւ ստեղծագործ ու աշխատասէր ծանրակշիռ տարր մը աւելցուցին ընդհանրապէս<sup>70</sup> Լիբանանի աշխատուծին: Բացարձակ մեծամասնութեամբ դրամագուրկ ըլլալով, գաղթականները մղուեցան տեղական ճարտարարուեստի եւ շինարարութեան ոլորտներ, առաւելագոյնս օգտագործելով իրենց ձեռային կարողականութիւնը<sup>71</sup>: Մեծամասնութեամբ գտնուելով մայրաքաղաքի արուարձանին, անոնք չլծուեցան հողագործութեան: Նիւթապէս անկարող ըլլալով՝ չհիմնեցին արտադրամասեր՝ գէթ առաջին տասնամեակին:

Հայ գաղթականներուն տեղաւորումը մայրաքաղաքին սահմաններուն մօտ, կարելիութիւն տուաւ, որ անոնք դիրաւ մատչին մայրաքաղաքի կեդրոնի շուկայական փեթակին եւ 1930ականներու սկիզբին վերակառուցեն Առեւտրական Գօտին<sup>72</sup>: Ասիկա գաղթականներուն հանդէպ դժգոհանքի նոր ալիք բարձրացուց, որովհետեւ անոնք ձեռավարձքերը աժանցուցին եւ մենաշնորհի վերածեցին շարք մը արհեստներ ու գործեր<sup>73</sup>: Հալէպի մէջ, օրինակ, հազարաւոր հայ գաղթականներու պատրաստակամութիւնը՝ շատ ցած ձեռավարձքով աշխատելու, պատճառ դարձաւ երկրին մէջ

<sup>66</sup> Edde, էջ 197:

<sup>67</sup> 1900-1914՝ տարեկան միջին հաշուով 15,000 լիբանանցիներ լքեցին երկիրը: Իսկ 1915-18 սովը իսկ 150,000-500,000 անձի կեանքը Սուրիա-Լիբանանի մէջ (Migliorino, էջ 103. նաեւ՝ Tachjian, 2006b, էջ 117):

<sup>68</sup> Longrigg, էջ 275:

<sup>69</sup> Boudjikianian էջ 319:

<sup>70</sup> David Gordon, *The Republic of Lebanon: Nation in Jeopardy*, Boulder, Colorado, Westview Press, 1983, էջ 10:

<sup>71</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 45-47:

<sup>72</sup> Նոյն, էջ 45:

<sup>73</sup> Hourani, էջ 136:

ամսականներու մակարդակին 50 առ հարիւր անկումին<sup>74</sup>: Իրաւ ալ, ո՛չ մէկ-լիբանանցի կամ սուրիացի տեղաբնիկ տնտեսապէս այնքան խեղճ էր, կարիքաւոր եւ պատրաստ աշխատելու որքան գնով, որքան հայ գաղթականը<sup>75</sup>:

գ) Արտասահմանեան Օժանդակութիւններ

Տնտեսական այս ներգրաւումը արդիւնաւորուեցաւ: Ատիկա կարելիութիւն տուաւ հայերուն որ տնտեսական աստիճանը մագլցին: Արեւմտեան երկիրներ մեկնած հայեր սկսան խնայողութեան գումարներ դրկել<sup>76</sup>: Արեւմուտքի (մանաւանդ Մ. Նահանգներու) հայկական բարեսիրական հաստատութիւններ, հայրենակցական բարեկեցիկ միութիւններ, գաղթաշխարհի (մանաւանդ Եգիպտոսի, Հնդկաստանի ու Ծայրագոյն Արեւելքի) մեծահարուստ հայեր՝ մշակութային, կրթական եւ բնակավայրերու կառուցման ծրագրերու մղում տուին, նիւթապէս նպաստեցին եւ գործնապէս աջակցեցան<sup>77</sup>: Միառժամանակ ետք, գաղթակայանները դիմափոխուեցան նոր փողոցներով, աւելի մաքուր եւ աղիւսէ տուներով<sup>78</sup>: Եկեղեցի-դպրոցին գոյառումին կողքին շուկան կայունացաւ եւ սկսաւ մեծնալ, երբ 1926ին երկրին սահմանադրութիւնը որդեգրուեցաւ իբրեւ երկրին կեանքը կանոնակարգող կարելոր գործօն:

Գաղթականներուն կեանքը տակաւ կանոնաւորուեցաւ եւ կենսաձեւ մը սկսաւ կշռութաւորուիլ: Հայ գաղթականները, որոնք վերածուած էին բանուոր-աշխատաւորներու, առտուն կանուխ գործի կը մեկնէին, փոքրերը՝ դպրոց, հիւանդները կը հոգացուէին օտար նպաստի դարմանատուներու մէջ, իսկ Կիրակի օր՝ ժողովուրդը վրանաշէն կամ փայտաշէն եկեղեցին աղօթքի կ'երթար: Շուկան կարելի դարձուց որ Պէրութի հայ գաղթականներ մասնավճարեն հայրենակցական թաղամասի մը մէջ իրենց գնած հողաշերտին համար:

Սակայն, 1920ականներու աւարտին արտասահմանեան նպաստի կազմակերպութիւններուն մեծ մասը կա՛մ դադրեցաւ կամ ալ նուազեցուց իր աջակցութիւնը: Ոմանք ազդուելով նաեւ 1929ի

---

<sup>74</sup> Petran, էջ 64:

<sup>75</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 48:

<sup>76</sup> Ալպոլ, էջ 49:

<sup>77</sup> Kristen Kidd & Hratch Tchilingirian, “Armenians by Choice”, *AIM*, August 1998, էջ 14:

<sup>78</sup> Ալպոլ, էջ 41:

համաշխարհային տնտեսական տագնապէն, միացան իրարու<sup>79</sup>: Մինչայդ արդէն, որբերուն մեծ մասը արձակուած էր որբանոցներէն<sup>80</sup>, ձեռային արհեստ մը ուսուցանուելէ ետք: Այդուհանդերձ ընկերա-առողջապահական դժուարութիւնները, ընտանեկան բարելաւումները եւ բարձր ծննդաբերութիւնն ու մահացութիւնը կարելորեցին անհրաժեշտութիւնը որբանոցներու, զորս գաղթականները ի վիճակի չէին տնտեսապէս հոգալու<sup>81</sup>: Անգործութեան, վտիտ աշխատավարձքերու եւ տնտեսական շատ ցած պայմաններու, ցած կենսամակարդակին հետեւանքով լիբանահայութեան թերեւս աւելի քան 10 տոկոսը մեկնեցաւ Ֆրանսա եւ Ամերիկաները<sup>82</sup>: Պայմանները կրնային աւելի վատթարանալ՝ եթէ չըլլար անձնական միջամտութիւնը ՀԲԸՄ նորընտիր նախագահ Գալուստ Կիւլպէնկեանին, որ մղում տուաւ վերականգնումի ճիգերուն<sup>83</sup>:

1929էն սկսեալ, բնակութեան նոր շրջաններ սկսան կառուցուիլ Պէյրութի հիւսիսային արուարձաններուն անմարդաբնակ տարածքներուն վրայ, Պէյրութ գետի երկու ափերուն<sup>84</sup>:

Պապենական բնօրրանին անունը կրող նորակառոյց թաղամասերու կողքին, բնակավայրին դպրոցն ու եկեղեցին անուանուեցան ծննդավայրի մայր եկեղեցիին ու կեդրոնական դպրոցին անուններով: Հայրենակցական միութիւններու նախաձեռնած այս բնակավայրերը հանդիսացան Լիբանանի առաջին հանրային բնակարանային ծրագրերը: Նորակերտ այս թաղերը, յառաջացուցին իրենց ընկերա-մշակութային ցանցերը, ստեղծեցին տնտեսական ներթաղամասային տարածք մը: Տնտեսական այս շուկաները տակաւ ցանցաւորուեցան ու յառաջացուցին լիբանահայ տնտեսական տարածքը: Յեղասպանութեան թրոմնն ապրած, անապահովութիւն զգացող հայր բնագոյաբար նախընտրեց առաւելագոյն ապահով միջավայրը՝ ներհայկական, հայրենակցական շփումը եւ խուսափեցաւ

---

<sup>79</sup> Ter Minasian, էջ 30:

<sup>80</sup> ՀԲԸՄի նշանաւոր Քելէկեան Որբանոցը օրինակ, դադրեցաւ գործելէ 1932ին: *Ալպում*, էջ 34, 39. նաեւ՝ Vahe Tachjian, “Orphelinats Armeniens du Liban, de Syrie et de Palestine”, in Kevorkian, R., L. Nordikian et V. Tachjian (eds.), *Les Armeniens 1917-1939, La Quete d'un Refuge*, St. Joseph University Press, Beirut, 2006c, էջ 83-87:

<sup>81</sup> *Ալպում*, էջ 32:

<sup>82</sup> Շուրջ 6-10,000 հայեր մեկնեցան Լիբանանէն (Դալլաքեան, 1999, էջ 164):

<sup>83</sup> ՀԲԸՄը իր մարդասիրական ճիգերը ուղղեց Սովետ Հայաստանին՝ 1930ականներու սկիզբին (Tachjian, 2006b, էջ 134):

<sup>84</sup> 1980ականներուն լիբանահայութեան 69%ը կը բնակէր այս եւ կից շրջաններուն մէջ (Gordon, էջ 37):

(բացի տնտեսական անհրաժեշտութենէ) արտահայկականին հետ շփուելէ:

'Օտարական'ի հոգեբանութեան, 'օտար'ի հասկացութեան եւ միջհամայնքային տհաճութեան ու փոխ-անվստահութեան մշակոյթին ենթախորքին վրայ, սեփական համայնքային միջավայրը անհատին ապահովութիւն մատակարարեց, անուղակիօրէն խոչընդոտեց միջհամայնքային համարկումը եւ ամրացուց ներհայկական համարկումը:

### Եզրակացութիւն

Վերի շարադրանքէն կը պարզուի թէ ինչպիսի խառն պայմաններու մէջ, շուրջ 40,000 հայ գաղթականներ համարկուեցան Լիբանանի բազմահամայնքային կացութեամբ: Պետութիւնը պատրաստ չէր անոնց կարիքներուն ընդառաջելու, քանի որ իր գոյութեան առաջին քայլերը կ'առնէր, մինչ Լեռնալիբանանի սահմանակից գօտիները նոր սկսած էին ենթարկուիլ վարչական համարկումի գործընթացին: Հայերէն անկախ, նոյնիսկ լիբանանցիներուն կը պարտադրուէր արհեստական, անյստակ, ափյափոյ, կարկտանային համարկում մը, որուն հետեւանքով տարածքներ ու գերդաստանախումբեր մասնատուելով ու անջատուելով իրենց բնական աշխարհագրական թէ ցեղային ամբողջութիւններէն կը կցմցուէին իրարու: Ժամանակը ցոյց պիտի տար՝ թէ պետական սահմաններ կրնայի՞ն իրարմէ անջատել ու տրոհել նախնական, իրար ազուցուած համայնքներ ու խմբաւորումներ եւ կցել զանոնք նոր, բազմահամայնքային զանգուածի մը:

Մարտնիթ համայնքը մեծ յոյսեր ունէր հայերը իր մէջ ձուլելու եւ իր թիւը մեծցնելու. անդին, իսլամները կը հաւատային որ հայերը քրիստոնէական թիւերը ուժացնելու համար բերուած էին: Իսկ հայերը ուրիշ, ամբողջովին տարբեր օրակարգեր ունէին: Անոնց գերիշխող մտասեւեռումը ապրի՛լն էր, ապա եւ՝ իրենց հաւաքական գոյութիւնը եւ մշակութային ինքնութիւնը վերակերտելը: Անոնք շահագրգռուած չէին տեղական խնդիրներով, տհաճութիւն կը զգային տեղացի սիւննիներուն հանդէպ, դառնացած էին ֆրանսացիներէն, որոնք պատճառն էին իրենց տեղահանութեան, բայց անոնց յենելէ բացի այլընտրանք չունէին:

Հայերուն սկզբնական տարիները Լիբանանի մէջ տագնապալիօրէն մարտահրաւիրային էին: Հսկայ ճիգ պէտք էր տնտեսապէս խեղճ եւ

ընկճուած Լիբանանի մը մէջ<sup>85</sup> ապաստարան յառաջացնելու գաղթականներուն եւ անոնց գոյատեւումը մատակարարելու: Ի վերջոյ շուկայի պայմանները տարերայնօրէն օգնեցին որ հայ աշխատուծին աշխատանքային ոտնատեղ յառաջանայ՝ սկիզբ դնելով տնտեսական գործընթացով ծայր առնող լիբանահայ համարկումին:

## 2. Ներհայկական Համարկում

### Մուտք

Շուկայի գործօնները բաւարար չէին հունաւորելու ընդհանրական համարկումին գործընթացը: Համալիբանանեան համարկումը կ'ենթադրէր միացեալ ճիգերը պետութեան, համայնքներուն եւ հայերուն: Բայց այս երեք դերակատարներուն ձգտումներու յառաջադրանքները բաւարար չափով հասարակ յայտարար չունէին: Այդուհանդերձ, Լոզանի Պայմանագիրը, ստորագրուած Յուլիս 1923ին, սկիզբ դրաւ հայերու քաղաքական համարկումի գործընթացին: Պայմանագիրը ոչ մէկ բան կ'ըսէր Հայկական Բնօրրանին մասին. ընդհակառակը, դիւանագիտօրէն կը թաղէր հայկական հարցը<sup>86</sup>, խողխողելով հայոց յոյսերն ու վերադարձի երազը<sup>87</sup>: Լոզանի Պայմանագիրը Հայկական Հարցը գաղթականութեան խնդիրի<sup>88</sup> վերածեց, եւ լուծարեց՝ քաղաքացիութիւն տալով հայ գաղթականութեան:

<sup>85</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 32:

<sup>86</sup> Հրաչ Տասնապետեան, *Հայկական Հարցը*, Պէյրութ, Համագայինի Վահէ Սէթեան Տպարան, 1977, էջ 48. նաեւ՝ Nansen, էջ 320. նաեւ՝ Tony Halpin, “The Courtship of 3.5 Million Diasporans”, *AIM*, July 1998, էջ 73-74:

<sup>87</sup> Պայմանագրին տրամադրութիւններուն համաձայն, Լիբանանի ֆրանսական բարձր կոմիսարը 31 Օգոստոս 1924 թուակիր 2825 հրամանագրով լիբանանեան քաղաքացիութիւն շնորհեց Լիբանանի հայերուն (Tachjian, 2006b, էջ 116. նաեւ՝ Թովուզեան, էջ 22): Պայմանագրին 43րդ յօդուածը կը նշէր, որ Թուրքիոյ այն բնակիչները որոնք ներկայիս կը բնակին տարածքի մը վրայ որ անջատուած է Թուրքիայէն, *իվիսօ ֆաքթօ* եւ տեղական օրէնքներուն համապատասխան, քաղաքացիներ են այն պետութեան որուն փոխանցուած են այդ հողերը: Իսկ 32րդ յօդուածը կը նշէր որ վերոյիշեալ պայմաններուն մէջ գտնուող անհատները որոնք տուեալ երկրին բնակչութեան մեծամասնութեան չէին պատկաներ, կրնային դիմել քաղաքացիութեանը երկրի մը, ուր նոյն ցեղի մեծամասնութիւն գոյութիւն ունի եւ ստանալ այդ քաղաքացիութիւնը (Migliorino, էջ 104-105): Անոնք որոնք Լիբանան կը բնակէին լիբանանեան քաղաքացիութիւն ստացան 1805 թուակիր հրամանագրով մը, որ հրապարակուեցաւ 19 Յուլիս 1924ին եւ պետական պաշտօնաթերթին մէջ լոյս տեսաւ 3 Հոկտեմբեր 1924ին:

<sup>88</sup> Ter Minasian, էջ 25:

ա) Լոզանի Պայմանագիրը. Գաղթահայու Հոգեփոխությունը

Գաղթականներուն լիբանանեան քաղաքացիութիւն շնորհելը հայերը նոյնհետայն Լիբանանի լիարժէք քաղաքացիի չվերածեց: Այլ օրինականացուց անոնց կեցութիւնը Լիբանանի մէջ եւ զանոնք դրաւ ձեւաւորուող համայնքապետական Լիբանանի մը համարկուելու երկար եւ ոլորապտոյտ գործընթացին մէջ:

Պայմանագիրը մղեց գաղթականները գէթ մասամբ հաշտուելու իրենց ճակատագրին հետ, յաղթահարելու յուսաբեկութիւնը եւ տեղաւորուելու, կազմակերպուելու ու համարկուելու իրենց նորահաստատ երկիրներուն եւ յառաջացնելու հայկական գոյութենական նոր քաղծիր մը: Քաղաքացիութեան շնորհումը հակադրուեցաւ այն համոզումին, թէ իրենք՝ աշխարհիկ թէ կրօնաւոր հայ գաղթականները, հիւրեր էին ասպնջական Լիբանանի մէջ<sup>89</sup>: Իրաւ ալ, Լիբանանը կը նկատուէր կարճատեւ կայան մը՝ պապենական բնօրրան վերադարձէն առաջ: Խորքին մէջ, 1920-1930ականներու ամբողջ տեւողութեան Սփիւռքի երկիրները իբրեւ անցքի ժամանակաւոր ճամփաներ եւ ճամբարներ նկատուեցան, մինչ Հայաստան վերադարձը բնագանցական նպատակը եղաւ հայ գաղթականութեան<sup>90</sup>:

Քաղաքացիութեան ստացումը ըստ էութեան քրքրեց ինքնութեան եւ մշակոյթի պահպանման եւ միւս համայնքներուն հետ բարեկամական յարաբերութիւններ յառաջացնելու հարցերը<sup>91</sup>: Ասիկա կը նախադրէր հայերու քաղաքական նկրտումներ չնուցանելու յանձնառութիւնը՝ իրենց որդեգրեալ երկրին հանդէպ եւ մշակելու բարեկամական յարաբերութիւններ<sup>92</sup>, մանաւանդ որ անոնք կը յուսային վերադառնալ իրենց պապենական հողերը: Այս ապաքաղաքական ուղեգիծով լիբանահայութիւնը առաջնորդուեցաւ ներամփոփումի, ան հեռացաւ քաղաքական համարկումէն եւ չառնչուեցաւ՝ միջհամայնքային հաշիւներուն: Հայերը զբաղած էին իրենց ֆիզիքական եւ մշակութային գոյատեւումով եւ կը նախընտրէին քաղաքական լուսանցքայնութիւնը<sup>93</sup>: Միւս համայնքները դրական

<sup>89</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 159:

<sup>90</sup> Ter Minasian, էջ 27:

<sup>91</sup> Դալլաքեան, 1999, էջ 90:

<sup>92</sup> Նոյն, էջ 83:

<sup>93</sup> Hilal Khashan, “The Political Values of Lebanese Armenian College Students”, *Armenian Review*, Vol. 44, #4/176, Winter 1991, էջ 51:

նկատեցին հայոց անջատումը քաղաքականութենէն եւ իրենց մէջ բաժնեցին հայութեան բաժին ինկած քաղաքական պանրաշէտը:

Միւս կողմէն, տեղական միջամտութեան նուագումը՝ լիբանահայ հարցերուն, օգնեց որ հայերը զարգացնեն զօրաւոր, լաւ ցանցաւորուած ինքնավար ներհայկական ընկերամշակութային-տնտեսական տարածք մը, որ իրաւականացուած էր մշակութային ինքնավարութեան թոյլատու համայնքապետական Լիբանանի օրէնսդրութեամբ:

բ) Պատշաճեցումի Մարտահրաւերներ

Անհատական թէ հաւաքական պատշաճեցումին ընկերային-հոգեբանական հանգրուանային գործընթաց մը սկսաւ՝ այլազան հակասական հետեւանքներով: Անհատական առումով բնակութեան մեծ պահանջքները եւ կենցաղային հրատապ կարիքները լռութեան մատնեցին Հայոց Տեղասպանութեան զգացումները: Հաւաքական առումով, սակայն, խնդիրները աւելի բարդ էին: Լիբանահայ գաղթականութեան մէջ ո՛վ իրաւասու էր եւ խոհեմօրէն ատակ ու փորձառու՝ թաղելու անցեալին մէկ մասը<sup>94</sup>, վերաձեւելու եւ վերակառուցելու պապենական կեանքի հաւաքական, կրթական եւ եկեղեցական լիբանահայ դրոյթ մը: Միակ 'իրաւասու' հիմնարկը՝ Հայ Առաքելական Եկեղեցին, աւերակ էր: Դժուար թէ ան կարենար նման վերակազմաւորման ու վերակազմակերպման ճիգը յաջողութեամբ պատկել:

Հայրենակցական միութիւնները հայրենակցական իրենց սահմաններէն անդին չէին կրնար անցնիլ: Կուսակցութիւնները, թէեւ տկարացած էին եւ իրենց ղեկավարութիւնը արքայութեան կամ ջարդուած էր, միակն էին որ կրնային հայրենակցական սահմաններէն անդին երթալ, մասամբ շրջանցել յարանուանական անցարգելները եւ շրջանային-աշխարհագրական կանխատրամադրութիւնները: Իրաւալ, հայ կուսակցութիւններուն ասպարէզը առաւելագոյնս բաց էր: Անոնք լծուեցան նորատեսակ աշխատանքի՝ ձեւաւորելու եւ առաջնորդելու Լիբանանի հայութեան կեանքը: Կուսակցութիւնները, սակայն, դիմագրաւեցին Սովետական Հայաստանի սայթաքեցնող փորձաքարը, որ նոր գործօն մըն էր միջկուսակցական յարաբերութիւններուն մէջ եւ ընդարձակեալ ծիր ու խորութիւն տուաւ Սփիւռքի քաղաքական կեանքին:

---

<sup>94</sup> Չորմիսեան, 1965, էջ 123:

գ) Սովետական Հայաստան. Միջկուսակցական Մղումը

Պարզ էր, որ գաղթականներուն մտքին մէջ Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ զրկուածութիւնը եւ պարապօրթինը պիտի փոխարինուէր կա՛մ Սովետական Հայաստանով եւ կա՛մ «հոգեւոր հայրենիք»ով<sup>95</sup>: Այս երկու ուղիներն ալ այլազան բնոյթի փաթեթներ էին:

Կուսակցութիւնները հակադիր դիրքեր ձեւաւորեցին Խորհրդային Հայաստանի հանդէպ: ՄԴՀԿի մէկ թելը մերժեց կուսակցութեան լուծարումը<sup>96</sup>: Ան թիկունք կանգնեցաւ Սովետական Հայաստանին եւ մարքսիզմի տարածումին՝ ամբողջ աշխարհին մէջ ու կառչած մնաց Արեւմտեան Հայաստանի պահանջատիրութեան լոզունգին<sup>97</sup>: ՌԱԿը խուսափեցաւ հակադրուելէ Սովետական Հայաստանին<sup>98</sup>: Կուսակցական ղեկավար մը, 1924ին, շեշտեց թէ ազգային տունին երազը չքացաւ, ձգելով միակ մխիթարանքը Երեւանի մէջ Հայաստան պետութեան<sup>99</sup>: ՀՅԴն որ իշխանութենէն հեռացուած էր Հայաստանի Հանրապետութեան սովետականացումով եւ քաղաքական անկախութեան կորուստով, քաղաքական թշնամին դարձաւ համայնավարութեան: Ըստ բոլոր ոչ-դաշնակցական խմբաւորումներուն, ո՛չ վարչաձեւը, ո՛չ ալ գաղափարախօսութիւնը, սակայն, բաւարար պատճառներ էին հակա-սովետահայ քաղաքականութիւն վարելու<sup>100</sup>: Անոնք առարկեցին թէ Սովետական Հայաստանէն բաժանումէն ետք զգացական, բարոյական եւ մշակութային անջատում մը կրնար ծաւալիլ հայրենահողին եւ անկէ հեռու ապրողներուն միջեւ: Նման անջատումը կրնար ազգին հանդէպ անշահագրգռութեան եւ օտարումի առաջնորդել<sup>101</sup> ու ձուլման տանիլ: Այդուհանդերձ, երբ ՀՅԴ արեւմտահայ ղեկավարութեան մեծամասնութիւնը նահատակուած էր, անոնք որոնք դուրս եկան խորհրդայնացուած Հայաստանէն, ձեռք առին կուսակցութեան ղեկավարութիւնը արտասահմանի մէջ եւ սկսան Սովետ Հայաստանի

<sup>95</sup> Yves Ternon, *La Cause Annenienne*, Paris, Editions du Seuil, 1983, էջ 122. նաեւ՝ Ter Minasian, էջ 25. նաեւ՝ Վարժապետեան, Հտր. 2, էջ 152:

<sup>96</sup> Չորմիսեան, 1965, էջ 145-146. նաեւ՝ Ternon, էջ 120:

<sup>97</sup> Aram Arkun, “Hunchakians”, *AIM*, March 1991, էջ 26-27

<sup>98</sup> Ter Minasian, էջ 35:

<sup>99</sup> Դալլաքեան, 1999, էջ 81:

<sup>100</sup> Չորմիսեան, 1965, էջ 146:

<sup>101</sup> Նոյն, էջ 147:

ու անոր 'բարբարոս, անկրօն, եւ անփոյթ'<sup>102</sup> ղեկավարութեան ղէմ ցէխարձակումներու արշաւի մը:

1920ականներու սկիզբին ՀՅԴի կարգ մը արեւելահայ առաջնորդներ հաստատուեցան Մ. Արեւելք, վերակազմակերպեցին կուսակցութիւնը, հաստատեցին լայնածիր շարքայիներու ցանց<sup>103</sup>, տակաւ իրենց վերահսկողութեան տակ առին թաղական խորհուրդները, ենթակառոյցները եւ ՀՅԴն դարձուցին Սփիւռքի առաջնային կուսակցութիւնը<sup>104</sup>: Աշխարհիկ եւ կրօնական ուժերուն մէջ, որոնք կը փորձէին առաջնորդել եւ վերահսկել նորահաստատ լիբանահայ համայնքը, այս փոքրաթիւ, արդիական եւ այժմեական աւագանին ամենէն գիտակիցն էր, յստակօրէն քաղաքականացած, հետեւողական եւ վճռական<sup>105</sup>: Շեշտակի տարբերութիւն կար լիբանահայերուն - որոնք խորապէս հակաթուրք էին եւ կը համակրէին Սովետ Հայաստանին - եւ ՀՅԴ շարք մը առաջնորդներու միջեւ, որոնք հակաթուրք ըլլալով հանդերձ, առաջնահերթ ըրեր էին իրենց հակահամայնավարութիւնը<sup>106</sup>: ՀՅԴ նոր ղեկավարութիւնը ամբողջութեամբ նոր արեւելում տուաւ թեր-ՀՅԴ լիբանահայ զանգուածին<sup>107</sup> եւ կուսակցութիւնը դարձուց հակասովետական ճակատը հայութեան<sup>108</sup>: Ի վերջոյ, 1950ականներուն ՀՅԴն իր բոլոր կարեւորութիւնները ի սպաս դրաւ որպէսզի Սփիւռքը Սովետ Միութեան լծակ չդառնայ<sup>109</sup>:

Միւս կողմէն, այս ղեկավարութիւնը հայրենիք որոնող գաղթական զանգուածներուն մատուցեց «հոգեւոր հայրենիք»ի ընտրանքը: Ան միս ու արիւն դրաւ «հոգեւոր հայրենիք»ի վերացական հասկացութեան մէջ եւ զայն վերածեց կենդանի, ապրող եւ գործող համակարգի, թափ տալով արտասահմանի արեւմտահայութեան նոր ինքնութեան ձեւաւորման:

Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ընդունեց Հայաստանի սովետականացումը եւ յուսաց որ օր մը դրական եղափոխութեամբ Սովետական Հայաստանը կրնայ զգենուլ ազգային նկարագիր եւ իր

---

<sup>102</sup> Դալլաքեան, 1999, էջ 110:

<sup>103</sup> Ter Minasian, էջ 36;

<sup>104</sup> Նոյն:

<sup>105</sup> Scahahgaldian, 1983, էջ 53:

<sup>106</sup> Ternon, էջ 119-120:

<sup>107</sup> Scahahgaldian, 1983, էջ 55:

<sup>108</sup> Թորգոմ Վեհապետեան, *Լիբանանի Հայ Գաղութը (Ներկայ Իր Տագնապէն Առաջ)*, Հրատ. Հովիւեան Մատենաշարի, Պէյրութ, 1982, էջ 47:

<sup>109</sup> Աշրգեան, 1998, էջ 24:

հովանիին տակ հաւաքել տարտղնած հայութիւնը<sup>110</sup>: Եկեղեցին քաջալերեց ներգաղթը<sup>111</sup> Սովետական Հայաստան եւ աւելի մօտ կանգնեցաւ ՄԴՀԿին ու ՌԱԿին, որոնք նուազ աշխարհիկ էին քան՝ ՀՅԴ ղեկավարութիւնը:

Կուսակցութիւններուն եւ եկեղեցիին կեցուածքը՝ Սովետական Հայաստանին հանդէպ, միջկուսակցական աննախընթաց ուժականութիւն մը խթանեց: Շուտով, ձեւաւորուող Սփիւռքը վերածուեցաւ երկբեւեռ կառոյցի՝ ՀՅԴն եւ միւսները<sup>112</sup>: Գաղափարախօսական հակասութիւններուն եւ լիբանահայ հանրային տարածքը վերահսկելու մրցակցութեան կողքին, ՄԴՀԿը եւ ՌԱԿը իրենց գոյութիւնը հիմնաւորեցին յանուն սովետահայ հայրենիքի պաշտպանութեան ՀՅԴին հակադրութեամբ<sup>113</sup>: Վերջինս ձգտեցաւ Կիլիկեան Կաթողիկոսութիւնը եւս ներգրաւել հոգեւոր հայրենիքի իր համապարփակ ծրագրին մէջ:

Դիւրին էր նկատել Սովետական Հայաստանամէտ Սփիւռքի կուսակցութիւններուն քաղծիրի հակասութիւնները եւս: Սովետական Հայաստանամէտ կուսակցութիւնները «իրաւասու» նկատեցին Սովետական Հայաստանը՝ հետապնդելու Հայկական Հարցը, բայց Հայկական Հարցով՝ Մոսկուան էր որոշումներ առնողը: Անոնք ակնկալեցին որ 1926ին 744,000 հայութիւն հաշուող Սովետական Հայաստանը<sup>114</sup> ներգաղթ կը կազմակերպէ, բայց Մոսկուան 25,000 հայերու ներգաղթի բնակավայր առաջարկեց Մոչիի շրջանը, 10,000 հայերու տեղ տրամադրեց Քուպանի մէջ, իսկ ուրիշ 200,000ի ալ թելադրեց Վոլկայի շրջանը<sup>115</sup>: Պարզ է որ առաջարկուած բնակավայրերը կապ չունէին Հայաստանի հողին հետ: Միւս կողմէն, դժուար էր հաշտեցնել Սովետական Հայաստանին դաւանումը՝ իբրեւ հայրենիք՝ Սփիւռքի երկիրներուն մէջ, ուր բոլոր վարչակարգերը հակասովետ էին<sup>116</sup>, կամ՝ արեւմտամէտ: Աւելին, Սովետական

---

<sup>110</sup> Թղթակցութիւն, էջ 327-328:

<sup>111</sup> Վարդան Սրբ. Տեմիրճեան, *Գաւազանագիրք Լիբանանի Եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց, Հտր. 1*, Պէլրոյթ, Տպ. Ալթափրէս, 1980, էջ 95:

<sup>112</sup> Razmig Panossian, “Between Ambivalence and Intrusion: Politics and Identity in Armenia-Diaspora Relations”, *Diaspora*, Vol. 7, # 2, Fall 1998, էջ 158. նաեւ՝ Աշըգեան, 1998, էջ 24. նաեւ՝ Ternon, էջ 122:

<sup>113</sup> Ternon, էջ 121:

<sup>114</sup> Ter Minasian, 1997, էջ 29:

<sup>115</sup> Հայ Դատի Լուիրեալը. *Տրիտիոֆ Նանսէն, Փաստաթղթերի Ժողովածու (1920-1930)*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2005, էջ 20:

<sup>116</sup> Դալլաքեան, 1999, էջ 73-74:

Հայաստանի ղեկավարությունը կոչ ուղղեց գաղթահայության՝ միանալու համաշխարհային յեղափոխական շարժումին: Այսինքն, սփիւոքահայ գաղթականներուն կը թելադրուէր միանալ իրենց ասպնջական երկիրներու դասակարգային պայքարին եւ տապալել տեղական վարչակարգերը<sup>117</sup>: Այս անիրապաշտ եւ վտանգաւոր կոչերը կը հակադրուէին գաղթականներուն ապա-քաղաքական կեցուածքներուն, զորս որդեգրէր էին անոնք իրենց ասպնջական երկիրներուն հանդէպ եւ կտրականապէս մերժուեցան ՀՅԴի, ՄԴՀԿի ու ՌԱԿի կողմէ:

Այս բոլորէն անդին, *ազգային աղէտի* այրող հարցերը, հայ ղեկավարութեան, Եւրոպայի ու Երիտթուրքերու դերը՝ Ցեղասպանութեան մէջ, այլ խօսքով՝ անմիջական անցեալի հարցերու գնահատումն ու արժեւորումը ո՛չ պատշաճօրէն արծարծուեցան, ո՛չ ալ պէտք եղած ձեւով քննարկուեցան: Կուսակցութիւնները Սփիւոքի գլխաւոր օրակարգերէն շեղեցան<sup>118</sup>, եւ թէեւ անոնք միաձայն էին հայապահպանութեան խնդրով, տարբերեցան հայապահպանութեան սահմանումին մէջ: Կուսակցութիւններուն միջեւ առկայ գերակշիռ հասարակաց յայտարարի տարածքը տեղի տուաւ անոնց միջեւ եղած ստորադաս եւ փոքր տարածքին:

Հայապահպանումը դարձաւ ժողովրդային օրինականացնող չափորոշիչը կուսակցութիւններուն: Անոնց ազգայնականութեան քաղծիրը իրաւականացուց իրենց գոյութիւնը եւ զօրացուց իրենց վարկը: Ազգայնականութիւնը դարձաւ օգտաշատ ու պատեհ հռետորութիւնը՝ հետեւորդներ հաւաքագրելու, նաեւ՝ վերահսկելու: Մասնաւորաբար ՀՅԴն՝ իր ազգային գաղափարախօսութեան հաւատարիմ, անցաւ արմատական ազգայնականութեան, առաւել շեշտաւորելով իր տարակարծութիւնները Սովետական Հայաստանի համայնավար վարչակարգին հետ: Միւս կուսակցութիւնները պահպանեցին մշակութային սնուցման կենսուղի մը Սովետական Հայաստանի հետ:

Կուսակցութիւններուն փոխհակադրութիւնը ձախողցուց Սփիւոքի հարցերուն խնդրով միասնական քայլեր առնելու կուսակցական կարելիութիւնները: Ուստի, իրատեսութիւն չէր ակնկալել որ կուսակցութիւնները իրականացնէին լիբանահայ համապարփակ կազմակերպումը:

---

<sup>117</sup> Նոյն, էջ 93-94:

<sup>118</sup> Չորմիսեան, 1965, էջ 132:

### 3) Եկեղեցին եւ Ներհայկական Կանոնաւորումը

Լիբանանի մէջ հայոց գոյութեան իրաւականացումը, որոշ տարագում մը տուաւ պետութեան եւ լիբանահայութեան փոխյարաբերութեան՝ եկեղեցիին ճամփով: Պետութիւնը ճանչցաւ հայոց Ազգային Սահմանադրութիւնը իբրեւ կազմակերպական կանոնագիրը լիբանահայ առաքելական համայնքին<sup>119</sup> եւ եկեղեցիին թողուց հայ առաքելական համայնքին առաջնորդութիւնը: Ասիկա առաւելագոյնն էր զոր պետութիւնը պատրաստ էր եւ կրնար ընել այդ օրերուն: Եկեղեցիին եւ հայկական հիմնարկներուն կը մնար պահը կորզել՝ կազմակերպել հայ գաղթականութիւնը Լիբանանի մէջ եւ առաջնորդել:

Սակայն, հայ յարանուանական երեք եկեղեցիները պատրաստ չէին համապատասխանօրէն գործելու: Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որուն վստահուած էր կանոնաւորել քառասային լաբիրիինթոսը լիբանահայ գաղթականութեան<sup>120</sup>, չէր կրնար ձեռք առնել նման աշխատանք: Ան ունէր երեք յուսաբեկ եպիսկոպոսներ, մեծաթիւ հօտ մը գաղթականներու եւ նիւթական չունէր: Բացի Հալեպի՝ առաջնորդանանէն, իր միւս 13 առաջնորդարանները դադրած էին՝ Ցեղասպանութեան եւ տեղահանութեան պատճառով<sup>121</sup>: Կաթողիկոսութիւնը կապուած էր Պոլսոյ Պատրիարքարանին, որ քաղաքական պայմաններու բերմամբ դարձեր էր անկար: Իսկ գործող մատուռ-եկեղեցիները Պէրյուրի, Լաթաքիոյ, Դամասկոսի եւ Կիպրոսի՝ Երուսաղէմի Պատրիարքութեան իրաւասութեան տակ էին<sup>122</sup>: Թէ՛ Հայ Աւետարանական Եկեղեցին (որ կ'օգտագործէր միսիոնարական կառոյցներ), եւ թէ՛ Հայ Կաթողիկէ Եկեղեցին (որ ունէր աջակցութիւնը Հռոմի Կաթողիկէ Եկեղեցիին)<sup>123</sup>, թէ՛ թիւի, թէ՛ թիւրազգածութիւններու եւ թէ՛ իրաւասութիւններու բերմամբ չէին կրնար նման դեր ստանձնել: Ոչ ալ կարող էին:

Կային նաեւ բազմաթիւ առկախ եւ հակասական գործօններ, որոնք կը խանգարէին լիբանահայութիւնը կարգաւորելու ճիգերը.- 1) Տարբեր հայրենակցական միութիւններու գոյութիւնը, 2) Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի Պատրիարքութեան

<sup>119</sup> Վարժապետեան, Հտր. 1, էջ 300:

<sup>120</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 83, 188:

<sup>121</sup> *Թղթակցութիւն*, էջ 19, 24, 42, 190, 215, 325:

<sup>122</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 117. նաեւ՝ *Թղթակցութիւն*, էջ 188:

<sup>123</sup> Migliorino, էջ 100-101. նաեւ՝ Վարժապետեան, Հտր. 2, էջ 227-230. նաեւ՝ Hrach Tchilingirian, “When Small Is Big”, *AIM*, January/February 2001, էջ 35:

իրաւասութիւններու խաչաձեւումը<sup>124</sup>, 3) Կեդրոնական ամպիոլանի իշխանութեան մը բացակայութիւնը<sup>125</sup>, 4) Գաղթականութեան կարիքները հոգալու անկարողութիւնը, 5) Ազգային Պատուիրակութեան ներկայացուցիչի վտիտ աղբիւրները, բայց գործելու մեծ իրաւասութիւնները, 6) Քօղարկուած ճեղքը բրիտանական եւ ֆրանսական մրցակից ազդեցութիւններու, 7) Կուսակցականութեան վերընձիւղումը: Ճիշդ է՝ ասոնք չէին կրնար մրցիլ եկեղեցիին հետ, բայց կրնային յառաջացնել անկանոնութիւններ, զորս եկեղեցին չէր կրնար պարունակի մէջ առնել:

Ուստի, կարգաւորել լիբանահայ գաղթականութիւնը, որ տեղաւորուած էր 10-15 հազար հաշուող գաղթակայաններու մէջ եւ հաւաքուած էր վրանակերպ եկեղեցիի ու 1100 աշակերտ եւ 25 ուսուցիչ հաշուող երկու դպրոցներու շուրջ՝ դիւրին բան չէր: Գաղթակայանները վերածուած էին անիշխանական *կեթօն*ներու, ուր վատառողջ մթնոլորտը ոճիր ու ներհայկական պայքար կ'արտադրէր: Սկզբնական տարիներուն գաղթակայանները պետութեան, օրէնքի, կարգի, մաքրութեան ու առողջապահութեան համար արգիլեալ գօտիներ էին: Գաղթականները թիւմուած էին նեղլիկ սենեակներու մէջ, ուր ձմեռը ցուրտ ու խոնաւ էր, իսկ ամառը չափազանց տաք<sup>126</sup>:

Այդուհանդերձ, Մարտ 1925ին, Սահակ Բ. Կաթողիկոսին այլ ելք չէր մնար քան՝ հրաւիրել լիբանահայ երեւելիները՝ կազմակերպական կառոյց մը ձեւաւորելու, կազմելու Ազգային Խորհուրդը ու քննարկելու հայ գաղթականութեան եւ եկեղեցական խնդիրները: Այդ օրերուն Հայ Առաքելական Եկեղեցին կը հաշուէր 17 կրօնաւոր<sup>127</sup>, կը վարէր դպրոց ու որբանոց եւ ընտանիքի օրէնքի իրաւասութիւնն ունէր<sup>128</sup>:

4) Ներհայկական Պայքար՝ Հայկական Հանրային Տարածքին Համար

ա) Միջկուսակցական Պայքար

Սահակ Բ. Կաթողիկոսին կոչը խթանեց պայքարը ՄԴՀԿի եւ ՀՅԴի միջեւ: Քանի որ հայ առաքելական համայնքային հարցերը - ըստ ազգային սահմանադրութեան - մեծ չափով կը տնօրինուին

<sup>124</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 88-89. նաեւ՝ Աշըգեան, 1998, էջ 45:

<sup>125</sup> Նոյն, էջ 83:

<sup>126</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 59. նաեւ՝ Tachjian, 2006b, էջ 124:

<sup>127</sup> Յ. Պալեան, «Հայերը Լիբանանի Մէջ», *Սուրիահայ Տարեգիրք. Ա. Տարի*, Պէյրուք, Տպ. Ազդակ, 1929, էջ 157:

<sup>128</sup> Migliorino, էջ 98:

աշխարհիկներու կողմէ<sup>129</sup>, կուսակցութիւնները ձգտեցան տիրանալ տնօրինումի այդ օղակներուն: Իշխանութեան այդպիսի օղակներու տիրացումը լծակներ կու տար նաեւ՝ աւելի լայնօրէն վերահսկելու լիբանահայ տակաւ ծաւալող հանրային տարածքը<sup>130</sup>: Մասնաւորաբար համայնքային դպրոցները վերածուեցան կուսակցական ռազմավարական թիրախներու<sup>131</sup>. ասոնք պատրաստ դաշտեր էին, ուր կարելի էր ապահովել ամսականը ուսուցիչի վերածուած կուսակցական գործիչին, որ կրնար կուսակցականներ կամ համակիրներ մկրտել դպրոցական աւագանին մէջ:

Յուլիս 1926ին Գաւառական Խորհուրդ մը ընտրուեցաւ, որ գերազանցապէս ՀՅԴի անդամներէ/համակիրներէ կը բաղկանար: Ասիկա խախտեց լճացած, ընկալեալ աւանդական հաւասարակշռութիւնը եւ առաջնորդեց չճրագրուած սպանութեան՝ Խորհուրդին անդամ Վահան Վարդապետեանին, Սեպտեմբեր 1926ին<sup>132</sup>: Սպանութիւնը աւելի եւս սրեց միջկուսակցական լարուածութիւնը: Մարտ 1927ին Սովետական Հայաստանի հիւսիս արեւելեան գօտիին մէջ պատահած երկրաշարժը անկարող եղաւ միացնելու լիբանահայերը՝ օգնութեան նպաստներ փութացնելու ազգային այդ նոր աղէտին ու անուղակիօրէն նուազեցնելու լարուածութիւնը: Դեռ աւելին, սպանութիւնը երկու հնչակեաններու՝ Յունուար 1929ին եւ Հոկտեմբեր 1933ին<sup>133</sup> արմատականացուց կուսակցութեանց տաքցումները: Կացութիւնը բեւեռացուց հայերը եւ բաժանաբար գիծեր ուրուագծեց, որ տակաւ տարածուեցան հայկական հանրային տարածքի բոլոր ոլորտները եւ լիբանահայերը բաժնեցին հակադիր երկու հոսանքներու: Ասիկա առաջին հանգրուանը եղաւ Լիբանանի մէջ միջկուսակցական մրցակցական պայքարին՝ յանուն հայկական հանրային տարածքի վերահսկողութեան<sup>134</sup>:

Եկեղեցիին կը մնար գերլարուած հայկական հարցերը վերահսկել կամ պահել հայկական պարունակին մէջ ու հանդարտութեան կոչել կողմերը: Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի սեփականութիւնը եղող Անթիլիասի որբանոցը 1930ին վերածուեցաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նստավայրի: Շուտով, հոն հիմնուեցաւ նաեւ

---

<sup>129</sup> Panossian, 1998, էջ 186ծնթ.16:

<sup>130</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 89-90. նաեւ՝ Տեմիրճեան, 1980, էջ 73-74:

<sup>131</sup> Թղթակցութիւն, էջ 189:

<sup>132</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 91-93, 98, 123:

<sup>133</sup> Նոյն, էջ 216-217. նաեւ՝ Թոփուզեան, էջ 49:

<sup>134</sup> Տեմիրճեան, 1980, էջ 229. նաեւ՝ Scahahguldian, 1983, էջ 55ծնթ. 20. նաեւ՝ Arkun, էջ 27:

դպրեվանքը: Կաթողիկոսարանը լծուեցաւ առկախ խնդիրներու՝ տնտեսական, եկեղեցական, վարչակառավարման, տեղական մարմիններու հետ յարաբերութեան, մանաւանդ դպրոցական եւ այլ հարցերու կարգաւորման<sup>135</sup>: Միւս կողմէն, ի հետեւանք բրտութեան ալիքին մագցումին, ոմանք հեռացան համայնքէն եւ սերտացուցին իրենց յարաբերութիւնները տեղական քրիստոնէայ համայնքներուն հետ: Մինչ, յարաբերաբար բարեկեցիկ լիբանահայ ընտանիքներ որոնք առնչուած էին եւ կը նպաստէին հայ կեանքին՝ նահանջեցին, խուսափեցան կուսակցական կապերէ եւ նուազեցուցին իրենց ազգային յանձնառութիւնները<sup>136</sup>: Իսկ ֆրանսական իշխանութիւնները առկախեցին կուսակցական գործունէութիւնները, շուրջ 40 երեւելիներ եւ Գաւառական ու այլ Խորհուրդներու անդամներ արգելափակուեցան<sup>137</sup>: Կոչեր եղան որ լիբանահայութիւնը յարգէ ասպնջականութեան կանոնները<sup>138</sup>:

ՀՅԴն այս պայքարներէն յաղթական դուրս եկաւ եւ իր դիրքը ամրապնդեց ու տարածեց լիբանահայ հանրային տարածքին վրայ, լուր համաձայնութեամբը ֆրանսական իշխանութեանց, որոնք թիկունք կանգնեցան ՀՅԴի հակահամայնավար ընթացքին<sup>139</sup>:

Միջկուսակցական պայքարը դանդաղեցուց համայնքին ընկերային-տնտեսական զարգացումին թափը: Կուսակցութիւնները տակաւ լայնցուցին իրենց բաժանարար գիծերը, կատարեցին աշխարհագրական սահմանագծումներ եւ հայկական բնակավայրերը տրոհեցին իրենց միջեւ: 1940ականներու կէսերէն, միջկուսակցական մրցակցութիւնը վերածուեցաւ երկբեւեռ համակարգի: Կուսակցական օղակներ բուռն եւ երբեմն ալ արինալի վէճեր աշխուժօրէն բոցավառեցին հայկական հատուածներուն միջեւ՝ ամէն անգամ երբ առիթ յառաջացաւ: Իսկ միջկուսակցական վէճերու առիթներ չէին պակսեր: Այդպիսի առիթներ էին թաղական, գաւառական եւ պետական խորհրդարանական ընտրութիւնները, ուսուցիչներու նշանակումը համայնքային դպրոցներուն մէջ եւն.<sup>140</sup>: Մանր

<sup>135</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 125, 127-129:

<sup>136</sup> *Սուրիահայ Տարեցոյց*, Բ. Տարի, Մ. Աճէմեան, Մ. Սիսեռեան, Ե. Ոսկերիչեան (խմբ.), Հալէպ-Սուրիա, Տպ. Արաքս, 1925, էջ 35:

<sup>137</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 125. նաեւ՝ Ջաւէն Մսրըլեան, «Զարթօնք Օրաթերթի Հիմնադրութիւնը Եւ Անոր Սկզբնական Տարիները Համաշխարհային Բ. Պատերազմին», *Զարթօնք Բացարիկ*, 13ունուար 1998, էջ 16:

<sup>138</sup> Edde, էջ 196:

<sup>139</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 107:

<sup>140</sup> Ternon, էջ 125:

միջադեպեր բաւարար էին ի յայտ բերելու անթեղուած կայծերը, բորբոքելու յաւելեալ բաժանումներ որոնք անցան Սփիւռքի տարբեր գաղութներ եւ նոր ծաւալներ տուին միջկուսակցական պայքարին:

1933ին, Նիւ Եորքի մէջ սպանութիւնը առաջնորդ Դուրեան Սրբազանին՝ միջկուսակցական պայքարի ու վերահսկողութեան դաշտի վերածեց նաեւ Հայ Եկեղեցին: Շուտով յաջորդեցին հակադարձութիւններն ու փոխ-սպանութիւնները, որոնք շրջագայեցան Սփիւռքի զանազան գաղութներ, մասնաւորաբար Յունաստան եւ Միջին Արեւելք<sup>141</sup> եւ սերմանեցին առաջին սերմերը հայ առաքելական եկեղեցոյ բաժանումին: Շարք մը թաղական խորհուրդներ մերժեցին Էջմիածնի գերագահութիւնը<sup>142</sup>: Այս մերժումի շարժումը իր զագաթնակէտին հասաւ 1955ին, երբ Զարեհ Արք. Փայասլեան կաթողիկոս ընտրուեցաւ Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսական աթոռին<sup>143</sup> եւ ՀՅԴն ազդեցութիւն ունեցաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վրայ: Էջմիածնի Կաթողիկոսութենէն ետք (որ կը գտնուէր սովետական ազդեցութեան տակ) ահա Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կ'իյնար արեւմտեան ազդեցութեան տակ: Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը առաջնորդարաններ հաստատեց Մ. Նահանգներու, Յունաստանի եւ Իրանի մէջ՝ արդէն իսկ գործող էջմիածնական առաջնորդարաններուն հանկընդդէմ<sup>144</sup>:

բ) Ընկերային Վերակերտում եւ Ցանցակալում՝ Սփիւռքի Տարածքին

Լիբանահայութեան երկրէնեռացումն ու անոր հանրային տարածքին ու մշակութային եւ բնակավայրային տարածքներու կուսակցական բաժանումները գունաւորեցին պատկանելիութեան աճող զգացում մը<sup>145</sup>: Յեղասպանութեան նուիրուած յուշարձան մը կառուցուեցաւ 1930ին, հանրային ու հրապարակային յուշատօներ սկսան կազմակերպուիլ 1932էն սկսեալ<sup>146</sup> եւ Հայագիտական Կեդրոն

---

<sup>141</sup> Նոյն, էջ 124-125. նաեւ՝ Վարժապետեան, Հտր. 2, էջ 75, 183. նաեւ՝ Մարրլեան, 1998, էջ 15:

<sup>142</sup> Դալլաքեան, 1999, էջ 254:

<sup>143</sup> Ալպում, էջ 115:

<sup>144</sup> Նոյն, էջ 115. նաեւ՝ Arkun, էջ 27. նաեւ՝ Hratch Tchilingirian, "Aram I on Faith and Homeland", *AIM*, April 1998, էջ 33. նաեւ՝ Hratch Bedoyan, "The Social, Political and Religious Structure of the Armenian Community in Lebanon", *The Armenian Review*, Vol. 32, June 1979, էջ 123:

<sup>145</sup> Panossian, 1998, էջ 184:

<sup>146</sup> Աշրզեան, 1998, էջ 51:

մը հաստատուեցաւ Մէն ժողէֆ Համալսարանին մէջ 1933ին<sup>147</sup>: Այս տասնամեակին երկրորդ կէտը յատկանշուեցաւ նաեւ ի միջի այլոց բազմակարծութեան այլ դրսեւորումով, երբ 1920ականներու երկրորդ կէտէն ի վեր հրատարակուող *Ազդակ*ին կողքին, 1937ի վերջաւորութեան սկսան լոյս տեսնել *Զարթօնք*ն ու *Արարատը*<sup>148</sup>:

Այս ժամանակաշրջանը յատկանշուեցաւ նաեւ հայ ընտանիքին մնացորդացին վերամէկտեղումով, ապա եւ՝ վերակերտումով<sup>149</sup>: Տիկնանց յանձնախումբեր եւ մասնաճիւղեր սկսան եռանդուն գործունէութիւն ծաւալել՝ ամբողջացնելով վերակերտումը հայկական տարածքին, որ տակաւ կամրջուեցաւ իր անդրսահմանային քոյր հայօճախներուն որոնք նման վերականգնումներ կը դրսեւորէին<sup>150</sup>: 1930ականներու աւարտին 106,300 հայեր կ'ապրէին դրացի Սուրիոյ մէջ, 12,000՝ Երուսաղէմ-Պաղեստինի, 16,000՝ Իրաքի, 6000՝ Յորդանանի, եւ 40,000՝ Եգիպտոսի մէջ<sup>151</sup>: Անդին, սակայն, Սովետական Հայաստանը գէթ մասամբ փակուեցաւ հայկական համայնական տարածքին առջեւ ստալինեան երկաթե վարագոյրով<sup>152</sup>: Արեւմուտքի մէջ ձեւաւորուող հայօճախներու տարածքը տակաւ ցանցաւորուեցաւ Միջին Արեւելքի օճախներուն հետ՝ եկեղեցիին եւ կուսակցութիւններուն միջոցով, որով հայութիւնը հատուածականօրէն վերակազմակերպուեցաւ հզօրապէս<sup>153</sup>: Ի տարբերութիւն Արեւմուտքին, Միջին Արեւելքի մէջ հասակ առնող նոր սերունդները պահպանեցին իրենց հայերէն լեզուն եւ դաստիարակուեցան հայկական ասանդներով՝ յարաբերաբար աւելի բացայայտօրէն: Երկու եւ երբեմն երեք սերունդներ միասին ապրեցան Միջին Արեւելքի հայ տուններուն մէջ, որոնք սերունդներու տնտեսական հնարաւորութիւնները համախմբելու եւ անհատը աղքատութեան եւ անապահովութեան դէմ պատասպարելու միջոցներ դարձան<sup>154</sup>: Միաժամանակ, այս երեւոյթը նորահաս հայ սերունդները պատուաստեց անցեալի ասանդներով:

<sup>147</sup> Վարժապետեան, Շտր. 2, էջ 466:

<sup>148</sup> Մամուլի բազմակարծութեան միացան թատերական եւ երգչախումբային համոյթները եւ մշակութային այլ երեւոյթներ:

<sup>149</sup> Ter Minasian, էջ 31:

<sup>150</sup> Gaudin, էջ 54:

<sup>151</sup> Չարլզ, էջ 36, 144. նաեւ՝ Raffy Kourouian, "In the Land of the Pharaohs. The Centuries-old Armenian Community in Egypt", *AIM*, April 1999, էջ 53-55:

<sup>152</sup> Ternon, էջ 122:

<sup>153</sup> Ter Minasian, էջ 32:

<sup>154</sup> Նոյն:

Բ. Աշխարհամարտի ավարտին, երբ երկրագունդի երկիրներու յարաբերութիւնները նորովի կը վերակերտուէին, պատերազմի տաժանքը ապրած էին Եւրոպայի հայօճախները, յաչս հայկական տիեզերքին Միջին Արեւելքի եւ մանաւանդ Լիբանանի հայօճախը Սփիւռքին կը ներկայանար նոր ու թարմ տեսքով:

1950ականներու սկիզբին, լիբանահայութիւնը կը կազմէր Սփիւռքի շուրջ 10 տոկոսը<sup>155</sup>: ՀԲԸՄի տեղական մասնաճիւղը անկախացեր էր Գահիրէէն եւ ուղղակիօրէն կապուեր Նիւ Եորքի Կեդրոնին, մինչ ՀՅԴի, ՄԴՀԿի եւ ՌԱԿի կեդրոններու գերակշռութիւնը հակեր էր Լիբանան<sup>156</sup>: Այս զարգացումները լիբանահայութեան տուին Սփիւռքի կարգ մը ոլորտներու առաջնորդողի դերը:

Լիբանահայութիւնը ընթացաւ երկուդի համարկումի ճամփով.- ա) ներլիբանանեան՝ միջհամայնքային, եւ բ) արտալիբանանեան՝ անդրսահմանային Սփիւռք: Իրաւ ալ, շարունակուող գաղթականի հոգեբանութեան պատճառով հայկական անդրսահմանային յարաբերութիւնը յատկանշական տարագում զգեցաւ լիբանահայ մտածելին մէջ. լիբանահայուն հաւաքական յիշողութիւնը տակաւին թարմ էր եւ կը թրթռար ազգայնական զգացումներով:

Այս զարգացումներուն զուգահեռ, սակայն, հայրենադարձութեան եւ բռնագրաւեալ Կարս-Արտահանի (շուրջ 20,000 քառ. քլմ.)՝ Սովետական Հայաստանին վերակցումի յոյսերը յօդս կը ցնդէին երբ հազիւ 100,000 հայեր կը հայրենադարձուէին Հայաստան 1946-48ին: Այս եւ Սովետական Հայաստանի ընկերային քաղաքական դժուար պայմանները, մղեցին արտասահմանի հայերը որ վերատեսութեան ենթարկեն իրենց օրակարգերը եւ առաջնահերթութիւնները<sup>157</sup>՝ տեղական յարաբերութեանց եւ հայապահպանութեան առնչութեամբ:

1950ականներու սկիզբին, յետադաձ հայեացքով կարելի է հետեւցնել, որ գաղթականութեան հոսքէն երկու տասնամեակ ետք, լիբանահայերը արդէն տեղաւորուած, բաւականաչափ կազմակերպուած, հիմնած եւ զարգացուցած էին իրենց կրօնական, կրթական<sup>158</sup> եւ կուսակցական ցանցերը եւ վերածուած հայօճախի՝ դիմագրաւելով հանդերձ միջազգային տնտեսական տագնապն ու Երկրորդ Համաշխարհային Պատերազմը: Նորահաստատ լիբանահայութեան երրորդ տասնամեակին, գաղթականներուն մեծ

<sup>155</sup> Գեորգեան, էջ 322. նաեւ՝ Վարժապետեան, Հտր. 2, էջ 24:

<sup>156</sup> *Այլում*, էջ 51-52:

<sup>157</sup> Ter Minasian, էջ 27:

<sup>158</sup> Longrigg, էջ 286, 289:

մասը տեղաւորուած էր նորաշէն բնակավայրերու մէջ՝ եկեղեցիի եւ դպրոցի մը շուրջ, յաղթահարած կենցաղային-առողջական հիմնական դժուարութիւնները, շրջանցած բնակավայրի դժուարագոյն պայմանները, յաջողած եկամուտի կայուն (թեկուզ յարաբերաբար վտիտ) աղբիւրներ ապահովել, հուսկ՝ կանոնաւորել կեանքի կշռոյթը:

Այս ընկերատնտեսական բարելաւումը իրագործուեցաւ շնորհիւ գլխաւորաբար որբանոցային սերունդին: Օգտուելով Բ. Համաշխարհայինի յառաջացուցած սահմանափակ առիթէն, այս արհեստաւոր եւ կարգապահ որբերը (որոնք վերածուած էին արտադրողական ուժի) ներածուած սուղ ապրանքներուն դիմաց մրցունակ, աժան ապրանքներ արտադրեցին, բաւարարելով լիբանանեան շուկային պահանջքը<sup>159</sup>, միաժամանակ նիւթական զգալի եկամուտ ապահովելով իրենց նիւթատնտեսական վերելքին: Ազգային տնտեսական այս աճը արտացոլուեցաւ պէյրութահայ հանրային-մշակութային կեանքին վրայ<sup>160</sup>: Արդարեւ, այս անտուն որբերն ու գաղթականները քսանամեակի մը ընթացքին, ապահովապէս հաստատուելով Արաբական Արեւելքին մէջ, տնտեսապէս կրցան դրսեւորուիլ իբրեւ աճող եւ ծաղկող հաւաքականութիւն եւ տնտեսական ուժ մը գոր պէտք էր հաշուի առնել<sup>161</sup>:

Լիբանահայ քաղաքական տարածքը աւելի ընդարձակուեցաւ 1950ականներու սկիզբին, երբ լիբանահայ առաքելական համայնքին խորհրդարանական աթոռի մը իրաւասութիւնը տրուեցաւ Լեռնալիբանանի ընտրատարածքէն, իսկ լիբանահայ կաթողիկէներուն՝ Պէյրութի ընտրատարածքէն: Ասոր կողքին, հաստատուեցաւ Պուրճ Համուտի քաղաքապետարանը, որ ծաւալեց եւ օրինականացուց հայկական քաղաքական տարածականութիւնը՝ Լիբանանի քաղաքական իւրօրինակութիւն մը արդարեւ: Խորհրդարանի չորս աթոռներու համար պայքարը աւելի վերափոխեց լիբանահայ կուսակցութիւններուն նախապատուութիւնները: Սերնդափոխութիւնը, ամենօրեայ կենցաղային կարիքները, ինքզինք պարտադրող անմիջական առօրեան<sup>162</sup> սկսան զգալի դառնալ եւ կարգ մը պարագաներու նախորդել հայկական ազգային յառաջադրանքներ

<sup>159</sup> Վարժապետեան, Հտր. 1, էջ 415:

<sup>160</sup> Էպիլիդաթեան, 1998, էջ 64. նաեւ՝ Սիսակ Վարժապետեան, *Հայերը Լիբանանի Մէջ, Գ. Հատոր, 1920-1980 Շրջան*, Պէյրութ, Տպ. Սեւան, 1981, էջ 47-48, 436, 459, 460, 464, 478, 542:

<sup>161</sup> Betts, էջ 55:

<sup>162</sup> Էպիլիդաթեան, 1998, էջ 66:

եւ ապահանգուցել լիբանահայերու ինքնամփոփ կենցաղն ու հոգեբանութիւնը:

Միւս կողմէն, դպրոցական ցանցը աճեցաւ՝ Սփիւռքի միւս հայազաղութներուն կողմէ չգերազանցուած չափերով<sup>163</sup>. 1946-47 կրթաշրջանին 6800 աշակերտներ կը յաճախէին լիբանահայ առաքելական վարժարաններ, որոնցմէ միքանիին շէնքերը վատառողջ պայմաններ ունէին<sup>164</sup>: Ոչ-յարանուանական երկրորդական դպրոցներու ծաւալումը աւելի բարելաւեց մակարդակը լիբանահայ դպրոցին, ուր սերունդներ թրծուեցան, որոնք փոխարինեցին թէ՛ բարբառները եւ թէ՛ թրքախօսութիւնը: Հայերէնը դարձաւ հիմնական հաղորդամիջոցը ազգային համախմբուածութեան<sup>165</sup> եւ՝ տարբեր հայահատուածներու համարկումին մէկ, միասնական լիբանանեան հայօճախի մը, որ ամբօրէն կառչեցաւ իր հայկական արմատներուն: Ազգայնական այս ուղղութիւնը բարձրացուց կուսակցութիւններուն դերը եւ հեղինակութիւնը: Անոնց մրցակցութիւնը տարածուեցաւ լիբանահայ աշխարհիկ ու կրօնական բոլոր ոլորտներուն վրայ: Ասիկա պատճառ դարձաւ որ հայօճախը բաժնուի երկու ազգայնական հատուածներու, որոնք տարագուեցան նաեւ ներլիբանանեան գաղափարախօսական ենթահողին հիմամբ եւ եղան հայկական տարբերակը լիբանանցիներու գաղափարախօսական խորունկ բաժանուածութեան: Հայ քաղաքական ղեկավարութիւնը օգտուելով համայնքին տնտեսական եւ ազգային վերընձիւղումէն, հայօճախը վերածեց իր գաղափարախօսական հռետորութեան կորիզին, ինքնութեան ցուցանմուշին՝ Սփիւռքի մէջ, եւ նոր սերունդներու թրծումին համար<sup>166</sup>:

Հռչակուած իրենց բարեխիղճ<sup>167</sup> աշխատանքով, լիբանահայ գաղթականները, որոնք մեծ հաւանականութիւն ունէին վերածուելու մոխրագոյն քաղաքային բանուորութեան, ընդհակառակը՝ վերածուեցան երկրին ճարտարարուեստական վագրին<sup>168</sup>: Այդուհանդերձ, 1946-48ի ներգաղթը եւ դէպի Արեւմուտք արտագաղթը փոքրացուցին համայնքին թիւը, նուազեցուցին աշակերտութեան

---

<sup>163</sup> Մանուանդ Հայ Աւետարանականները վերականգնեցին իրենց նախաեղեռնեան կրթական առաքելութեան աւանդը:

<sup>164</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 400-401, 408-409. նաեւ՝ *Ալպում*, էջ 81:

<sup>165</sup> Panossian, 1998, էջ 157:

<sup>166</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 39-40, 55-56, 60-61:

<sup>167</sup> Boudjikianian, էջ 336:

<sup>168</sup> Khashan, էջ 52:

թիւր<sup>169</sup>, կծկեցին հայօճախին ծայրամասերը եւ զայն կեղրոնացուցին մայրաքաղաքին ու անոր անմիջական շրջակայքին մէջ<sup>170</sup>, փոքրացուցին սովետամետ զանգուածին կշիռը եւ նոր անհաւասարութիւն յառաջացուցին ներհայկական հաւասարակշռութեան մէջ<sup>171</sup>:

Տնտեսական եւ ազգային վերելքն ու յարաբերական ճոխութիւնը, սակայն, ակնկալելի էր որ ազգային առաւել համարձակ քայլերու եւ հեռահար ներդրումներու մղէր լիբանահայ ղեկավարութիւնը: Անհրաժեշտ էր նաեւ զօրակոչել մասնագիտացած տարրեր՝ անցում կատարելու համար հայօճախին հանրային տարածքի սիրողական գործելաձեւէն՝ արհեստավարժ գործելաձեւին, սիրայօժար նուիրումի ձեւէն՝ արժանի պաշտօնակոչութեան ձեւին, անհատական-միանձնեայ (կամ նեղխմբակային) գործունէութենէն՝ հաստատութեանական լայնընդգրկուն գործունէութեան: Անհրաժեշտ էր նաեւ ազգային հոռտորաբանութեան մէջ զգացականութեան կողքին աւելի տեղ տալ բանականութեան, սերունդները դաստիարակել այժմեական համազգային-համաշխարհային պատումներով, բարեշրջել օսմանականութենէն ժառանգուած մտաձեւեր: Դժբախտաբար, սակայն, ենթակայական եւ առարկայական գործօններ եւ ներքին ազդակներ չօգնեցին որ իրականացուի տեսակարար բարեշրջումը հայօճախին:

Ի վերջոյ երկակի կենցաղ մը սկսաւ յառաջանալ համայնքին մէջ. ա) ներհայկական ազգային, ինքնամփոփ ուղի մը, եւ՝ 2) լիբանահայկական ուղի մը, որ աւելի առնչուած էր համալիբանանեան հանրային կեանքին ու մանաւանդ շուկային: Ըստ երեւոյթին հայկական համարկումը՝ լիբանանեանին, ձգուած էր բնական հոսքի: Շրջանային, միջազգային զարգացումներ ու Պաղ Պատերազմը, սակայն, պիտի ներգործէին լիբանահայութեան եւ համարկումին գործընթացին վրայ:

---

<sup>169</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 403:

<sup>170</sup> *Ալլոս*, էջ 58:

<sup>171</sup> Bedoyan, էջ 126-127:

# ՀԱՄԱՐԿՈՒՄԻՆ ԸՆԹԱՅՔԸ (1950-1975).

## Ասպնջականացումէ Համայնքացում Եւ Սփիւոքացում-Քաղաքացիացում

### **Մուտք**

Լիբանանի հայօճախին այս հանգրուանը յատկանշուեցաւ – ի միջի այլոց - կարճատեւ եւ հեռահաս ներքին տագնապներով, ժողովրդագրական աճով (նաեւ՝ ներհոսքով ու արտահոսքով), կազմակերպական հզօրացումով, ազգային հանրային տարածքի ընդարձակումով, տնտեսական-մշակութային եւ ազգային վերելքով, ներլիբանանեան տնտեսական-քաղաքական համարկումի ծաւալումով, տակաւ ձեւաւորուող հայկական տիեզերքի մէջ հայօճախին տեղին եւ դերին մեծացումով, իսկ կարգ մը ոլորտներու մէջ անոր յառաջապահութեամբ: Բիւրեղանալ սկսաւ Սփիւոքի հայապահպանութեան գաղափարականը, յստակացան ազգային օրակարգի նախապատուութիւնները: Նկատելի գործօն սկսան դառնալ սփիւոքածին սերունդները: Խորհրդային Հայաստանը քարեշրջուած էութեամբ մուտք գործեց հայօճախ:

### **Ա) Քաղաքականութեան հարցեր. Պաղ Պատերազմի Շրջանը**

Պաղ Պատերազմին ծաւալումը խորացուց լարուածութիւնը Միջին Արեւելքի մէջ: Իր նորագոյն պատմութեան մէջ, հայօճախը առաջին անգամ այսպիսի համեմատութեամբ օտար ճնշումի եւ ազդեցութեան թիրախ կը դառնար: Տեղական գործօններ ազդեցին ներհայկական խնդիրներուն եւ բացայայտեցին համայնքին ենթակայութիւնն ու խոցելիութիւնը<sup>1</sup>: Հայօճախը դիմագրաւեց նոր մարտահրաւերներ եւ վերադասաւորեց ներհամայնքային ուժային հաւասարակշռութիւնը: Կուսակցութիւնները հարցականի տակ դրին բաժնեկցուած հայկական հանրային տարածքը: Արեւմտամէտ եւ սովետամէտ դաշտերուն մէջ գտնուող հայերը, որոնք գաղթականներէ վերածուեր էին քաղաքացիներու եւ ազգայնականներու<sup>2</sup>, վերատեսութեան ենթարկեցին իրենց նախապատուութիւնները, անտեսեցին իրենց

<sup>1</sup> Nikola Scahahgaldian, “Ethnicity and Political Development in the Lebanese-Armenian Community, 1925-1975”, *Armenian Review*, Vol. 36, Spring 1983, էջ 59:

<sup>2</sup> Albert Hourani, *Syria and Lebanon, A Political Essay*, London, Oxford University Press, 1946, 136:

հայկական յառաջադրանքները եւ առաւել խորացուցին միջկուսակցական բաժանարար գիծերը՝ հասնելով մինչեւ Ցեղասպանութեան յուշատօներուն անշքացումին:

Պաղ Պատերազմը համայնքին ղեկավարութիւնը սխալ ուղղութեամբ տարաւ եւ հայ քաղաքական ու ընկերային տարածքը վերածեց - 1958ի Լիբանանի առաջին քաղաքացիական կռիւներուն զուգահեռ - կողմնակի ռազմադաշտի մը՝ դէպքերը հասցնելով ներհայկական բրտութեան ալիքի գագաթնակէտին: Ներհայկական տարակարծութիւնը՝ Սովետական Հայաստանի հանդէպ եւ հայկական հանրային տարածքի վերահսկողութեան մրցակցութիւնը, անհամեմատօրէն գերակշռեցին համահայկական շահերը: Հայ քաղաքական կեանքը առեւանգուեցաւ-սպրդեցաւ համայնքին վերահսկողութենէն: Արեւմտամետ լիբանանեան *էսթեպլիշմընթիւն* աջակցութիւնը ՀՅԴին՝ մղեց վերջինս որ հարցականի տակ առնէ առկայ հայկական *սթէյթըս քօն* եւ իր ազդեցութիւնը ջանայ ծաւալել եկեղեցիին վրայ<sup>3</sup>: Եկեղեցին իր անկախութիւնը կորսնցուց<sup>4</sup> ՀՅԴին՝ ի հեճուկս ՄԴՀԿի եւ ՌԱԿի, Էջմիածինի եւ Սովետական Հայաստանի դժգոհութեան: Հայօճախին գրեթէ բոլոր դրսեւորումները հատուածականացան: Ի վերջոյ ՀՅԴն դուրս եկաւ պայքարէն իբրեւ տիրական ուժը, գլխաւոր վստահելին՝ լիբանանեան պետութեան<sup>5</sup> եւ գլխաւոր հոգատարը՝ լիբանահայութեան: Ան առաւել տարածեց իր ազդեցութեան գօտին ու հայ հանրային կառոյցներուն մեծամասնութիւնը իր վերահսկողութեան տակ առաւ<sup>6</sup>: Ասիկա մեծցուց կուսակցութեան վարկը եւ ազդեցութիւնը՝ տիրութիւն ընելու, ընդառաջելու եւ հասնելու հայկական կարիքներուն, եւ զօրացուց իր հայրիշխանական դիրքը հայօճախին մէջ եւ վրայ: Ձեւով մը կուսակցութիւնը փոխարինեց ընկերային կարիքներու օժանդակող

<sup>3</sup> Jonathan Randall, *Going all the Way: Christian Warlords, Israeli Adventurers and the War in Lebanon*, New York, The Viking Press, 1983, էջ 160:

<sup>4</sup> *Թղթակցութիւն Սահակ Ա. Եւ Բարգէն Բ. Կաթողիկոսներու*, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արխիւներ, թիւ 1, [կազմ. Գրիգոր Շահինեան], Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1999, էջ 322:

<sup>5</sup> Aram Arkun, "Hunchakians", *AIM*, March 1991, էջ 27. նաեւ՝ Aida Boudjikian, "Industrie et Mutations Socio-economique d'une Communaute: L'Exemple Armenien au Liban," in *Industrialisation et Changements Sociaux dans l'Orient Arabe*, ed. A. Bourgey, Centre d'Etudes et de Recherches sur le Moyen-Orient Contemporain, Beirut, Presse Universitaire de Lyon, 1982, էջ 340:

<sup>6</sup> Վարդան Սրբ. Տեմիրճեան, *Գաւազանագիրք Լիբանանի Եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց, Հտր. 1*, Պէլրոյթ, Տպ. Ալթափրէս, 1980, էջ 229. նաեւ՝ Schahgaldian, 1983, էջ 55ծնթ.20. նաեւ՝ Arkun, էջ 27:

պետութեան դերը եւ առաւել հեռացուց իր հայ համակիրներն ու հետեւորդները պետութենէն:

'Վտանգուած' սովետամետ հայ հատուածէն շերտեր նոյնպէս հեռացան պետութենէն: Ասոնցմէ ոմանք, իբրեւ իրաւագրկուածներ, մօտեցան ձախ եւ ընկերվարական շրջանակներուն ու աւելցուցին իրենց թեքումը հակաամերիկեան, գլխաւորաբար՝ իսլամ խմբաւորումներու:

1958ի քաղաքացիական բախումներուն պատճառով ներհայկական բաժանարար գիծերը իրարմէ հեռացուցին երկու հայկական խմբաւորումները, միաժամանակ զանոնք մօտեցնելով հակառակորդ լիբանանցի խմբաւորումներուն, եւ մեծցուցին ճեղքը պետութեան եւ հայ համայնքին միջեւ: Ներհայկական այս բաժանումն ու հատուածական մերձեցումը ոչ-հայկական խմբաւորումներուն՝ հայերը դուրս բերին իրենց ինքնամփոփումէն, որոշ չափով զանոնք կամրջեցին այլ համայնքներու եւ խթանեցին համարկումը:

Պաղ Պատերազմի ժամանակաշրջանը յատկանշուեցաւ կուսակցութեանց կողմէ լիբանահայ հանրային տարածքին ամբողջական վերահսկողութեամբ: Միաժամանակ, սակայն, հայապահպանումի խորքային խնդիրը պահպանուեցաւ: Հայկական երկու բեւեռները տակաւ զարգացուցին իրենց ազդեցութեան ոլորտները, յառաջացուցին ենթախումբեր եւ զանոնք ցանցաւորեցին կուսակցութեանց: Իրավիճակին իբրեւ արդիւնք յառաջացան երկու՝ Կիլիկիոյ եւ Էջմիածնի Կաթողիկոսութեանց հետեւորդներ, երկու գուգահեռ մշակութային, բարեսիրական, մարզական, կրթական, մամուլի եւն. ենթախումբեր: Մարդ կրնար ծնիլ ու մեծնալ ենթախումբին մէջ, քան թէ՛ ըստ կամս միանալ կամ լքել զայն<sup>7</sup>:

Այսպիսով, կուսակցութիւնները վերածուեցան լայնածիր, համընդգրկուն, բազմերես, երկայնաբազուկ կազմակերպութիւններու: Իրենց իրաւականութիւնը կը հիմնուէր հայկական շահերու միակ պաշտպաններն ըլլալու յաւակնութենէն: Եւ անոնք մրցակցեցան իրարու դէմ՝ այդ տիտղոսին մենատիրութեան համար: Ոչ մէկ գործունէութիւն, ընկերային իրադարձութիւն կրնար պատկերացուիլ եւ կատարուիլ՝ կուսակցական կառոյցներէն, գաղափարախօսութենէն կամ ղեկավարութենէն դուրս Կուսակցութեան հզօրութիւնը եւ

---

<sup>7</sup> Razmig Panossian, "Between Ambivalence and Intrusion: Politics and Identity in Armenia-Diaspora Relations", *Diaspora*, Vol. 7, # 2, Fall 1998, էջ 157:

նկրտումները կ'ամրապնդուէին անոր ենթախումբերու հորիզոնական եւ ուղղահայեաց տարածութեամբ<sup>8</sup>:

Հայօճախին մեծամասնութիւնը սարսափահար եւ ապիկար կանգնեցաւ այս բաժանումներուն եւ սպանութիւններուն դիմաց: Հազարաւոր - այսպէս կոչուած - շահագրգիռ հայեր նահանջեցին դէպի ապակուսակցականութիւն: Շատեր քաշուեցան հայկական եւ քաղաքական երեւոյթներէն: Ուրիշներ իրենց զաւակները ոչ-հայկական դպրոցներ դրկեցին, իսկ օտար ամուսնութիւններու *թապուն* քիչ մը եւս խզուեցաւ: Բարեկեցիկ հայերու կարելոր մէկ մասը աւելի մեծ տեղ սկսաւ տալ ընկերա-կենցաղային յարաբերութիւններու արտահայկական հարթակին:

Շատեր անջատուեցան կուսակցական համակարգի հիմնարկներէ եւ լծուեցան ապաքաղաքական, ոչ-հատուածական գործունէութեան: Յառաջացաւ «երրորդ գիծ» մը, որ սակայն հակառակ աւելի քան տասնամեայ գոյատեւումին, չկրցաւ յեղադրջել կամ հակակշռել լիբանահայ երկբեւեռ «վարչաձեւը»<sup>9</sup>, բայց անուղակիօրէն սանձեց անոպայութիւնը:

Տնտեսական բնագաւառին մէջ հայ ճարտարարուեստականներու փոքր խումբ մը, 1960ականներու սկիզբի տնտեսական առատութեան առիթն օգտագործելով աւելի լայն թափով անցաւ հագուստեղէնի, գորգագործութեան, մորթի եւ կօշիկի ճարտարարուեստին, ծաւալեց գործարանային իր արտադրութիւնը: Լիբանահայ ճարտարարուեստականներու այս առաջին սերունդը մեծ ճամփայ կտրեց նաեւ մետաղամշակութեան, տպագրութեան, կահագործութեան, ուժանիւթի եւ էլեկտրական կազմաձեւերու ոլորտներուն մէջ<sup>10</sup>: Այս ճարտարարուեստականներուն կողքին համայնքը կը հաշուէր մեծաթիւ դերձակներ, ոսկերիչներ, լուսանկարիչներ, կօշկակարներ, բանուորներ, ժամագործներ, արուեստաւորներ ու արհեստաւորներ, ինչպէս նաեւ ճարտարապետներ, ուսուցիչներ, երկրագործներ, բժիշկներ, ատամնաբուժներ, դեղագործներ, քիմիագէտներ, հիւանդապահուիիներ եւ դայեակներ<sup>11</sup>: Լիբանահայ կարգ մը

<sup>8</sup> Jivan Tabibian, “The Risk of Democratization: Reforming Diaspora Institutions will Require Freeing them from each other’s Clutches, and Insuring their Autonomy”, *AIM*, August-September 1999, էջ 29:

<sup>9</sup> Schahgaldian, 1983, էջ 60:

<sup>10</sup> Boudjikianian, 1982, էջ 322, 326:

<sup>11</sup> Միսակ Վարժապետեան, *Հայերը Լիբանանի Մէջ, Բ. Հատոր, 1920-1980 Շրջան*, Պէյրութ, 1981, Տպ. Սեւան, էջ 229, էջ 25-26:

արհեստներ վերածուեցան դպրոցներու՝ ոճի, ճաշակի եւ արտադրութեան առումով: Անոնցմէ ոմանք բացառիկ արհեստաւորներ թրծեցին: Կարգ մը արհեստներ վերածուեցան արտադրական գրեթէ ամբողջական շղթայի՝ հումքի պատրաստման-մշակման, օգտագործումին, արտադրութեան եւ մեծաքանակ ու փոքրաքանակ վաճառքի օղակներով եւ այս բոլոր օղակներուն համար ներհայկական հնարաւորութիւններով մասնագէտ արհեստաւորներու մարդուժ յառաջացնելով: Ուրիշներ երաժիշտներ եւ գեղանկարիչներ դարձան, ընտրեցին ազատ ասպարեզներ: Պէյրութի կեդրոնական առեւտրական շուկաներուն մէջ փոքրաքանակի հայ խանութները, որոնք սկսած էին յայտնուիլ 1930ականներու կեսերէն<sup>12</sup>, առաւել ծաղկեցան ու շատցան: Անհամեմատ ընդարձակուեցաւ լիբանահայ օճախի տնտեսական եկամուտի աղբիւրներուն ծիրը, հետեւաբար մեծապէս աւելցան լիբանահայ ընտանիքներու տնտեսական շերտաւորումները: Ի տարբերութիւն նախորդ հանգրուանի մտածելի, կառոյցի, խմբաւորումի յարաբերական միօրինակութեան, հայօճախին մէջ յառաջացան բազմակիւրութեան, բազմակարծութեան կարելոր նախադրեալներ, որոնք ալ Պաղ Պատերազմի նահանջով հրապարակ եկան տարատեսակ դրսեւորումներով:

#### **Բ) Մշակութային Հարցեր. Ծաղկում**

Հայօճախին կեանքը սկսաւ շեշտաւորուիլ կուսակցութիւններու, մշակութային կազմակերպութիւններու, մարզական միութիւններու, քսանհինգ թերթերու եւ այլ ընկերա-մշակութային դրսեւորումներով<sup>13</sup>: Լիբանահայ գրականութիւնը ծաղկեցաւ, մինչ Սփիւռքի մշակութային արեւմտեան կեդրոններու մէջ աւարտին կը մօտենային վերելքի ստեղծագործական կարճատեւ հանգրուանները<sup>14</sup>: Այս կեդրոնները խամրեցան՝ Փարիզն ու այլ քաղաքային ուստանները գաւառական Պէյրութէն աւելի նախընտրած գաղթական հայ գրողներուն մահով եւ որբանոցայիններու առաջին սերունդին անցումով: Մինչ Պէյրութի մէջ տեղածին (եւ մօտակայ երկիրներէ եկած) գրողներու սերունդներ

---

<sup>12</sup> Ղազար Չարրզ, *Մերձաւոր Արեւելքը. Սուրիա, Լիբանան, Պաղեստին, Անդր-Յորդանան: Բնական, Քաղաքական, Տնտեսական Ընդարձակ Մասերով*, Պէյրութ, Տպ. Ազդակ, 1939, էջ 132:

<sup>13</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 26:

<sup>14</sup> Vahe Oshagan, "Literature of the Armenians in Lebanon", *Ararat Quarterly*, Vol. XIX # 3, # 75, Summer 1978, էջ 37:

սկսան ստեղծագործել, անդին Արեւմուտքը չկրցաւ հայագիր հեղինակներ յառաջացնել, այլ՝ ներածեց զանոնք:

Լիբանահայութեան ընկերամշակութային կառոյցի իւրայատկութիւններուն, միջավայրին եւ ազգայնական հոգեմտայնութեան պատճառով լիբանահայ գրականութիւնը զգացական էր, հայրենասիրական, ուղղորդող եւ իտէլալապաշտ: Ան արտացոլեց եւ առաւել ամրապնդեց միջին դասակարգի արժէհամակարգը եւ վերափոխատուորեց անցեալէն մնացած աւանդներն ու նշխարները<sup>15</sup>: Լիբանահայ գրականութիւնը վերածուեցաւ խուսանաւումի գրականութեան, երագատեսութեան, արտացոլացնելով ամբողջ սերունդի մը զգացումները, որ անարմատ եւ անապահով վիճակով նետուած էր օտար աշխարհ: Այս յատկանիշերը դրսեւորուեցան նաեւ լիբանահայ թատրոնին մէջ, որ ջանաց արծարծել եւ պահպանել հայ լեզուի սերը, ազգային բարոյականութիւնը, հայ մշակոյթը եւ ազգային զգացումներ: Թատրոնը վերածուեցաւ դաստիարակչական դպրոցի ու՝ գաղափարախօսական ազգայնականութիւն եւ հայապահպանութիւն ջատագովեց<sup>16</sup>: Թէ՛ թատրոնը, թէ՛ գրականութիւնը նուազ ուշադրութիւն դարձուցին տեղական համարկումի խնդիրներուն եւ նուազ արծարծեցին լիբանահայուն ինքնութեան, էութեան եւ առօրեական, կենցաղային հարցերը:

#### **Գ) Ինքնութեան Հարցեր. Հայապահպանում**

Հայօճախին մեծ իրագործումը դպրոցական ցանցի ստեղծումն էր, որ իւրայատուկ յատկանիշերէն եղաւ եւ հայօճախը առանձնացուց Սփիւռքի մէջ: 1920ականներուն շուրջ 16 դպրոցներ բացուեցան. նոյնքան թիւ մըն ալ՝ 1930ականներուն<sup>17</sup>: Հակառակ անմրցունակ վարձատրութեան, հայ ուսուցիչներուն կորովն ու նուիրումը օրինակելի էին<sup>18</sup>: 1960ականներու սկիզբին, դպրոցները բնօրրանին մշակութային ժառանգը միախառնեցին պետական կրթական ծրագրին<sup>19</sup> եւ յաճախ ալ կրցան մրցիլ տեղական դպրոցներուն հետ: Եղան ժամանակներ, երբ դպրոցները անդրանցան իրենց

---

<sup>15</sup> Նոյն, էջ 36, 37, 40:

<sup>16</sup> Ralph Setian, "The Armenian Theater in Lebanon", *Ararat Quarterly*, Vol. XIX, No 3, # 75, Summer 1978, էջ 31-32:

<sup>17</sup> Վարժապետեան, Հտր. 2, էջ 435-436:

<sup>18</sup> Zaven Messerlian, "Armenian Education in Lebanon", *Ararat Quarterly*, Vol. XIX, # 3, #75, Summer 1978, էջ 24:

<sup>19</sup> Messerlian, 1978, էջ 25:

առաքելութիւնը եւ վերածուեցան մշակութային կեդրոններու: Անոնց շրջանաւարտից միութիւնները դերասանախումբեր յառաջացուցին եւ երգչախումբեր: Այս իրագործումները հրաշք նկատուեցան ի դիմաց համայնքին կատարած կրթական ներդրումներուն<sup>20</sup>:

Դժուար է գերագնահատել բացառիկ ռազմավարական դերը գոր հայ դպրոցը խաղաց՝ հայօճախին զօրացման, հայապահպանման եւ մեկնողներուն տեղ նոր գործիչներ յառաջացնելու առումով: Լիբանանի հայօճախին գոյատեւումը շատ բան կը պարտի դպրոցներուն, որոնք պատրաստի աւագաններ եղան՝ կուսակցական գործիչներ, շարքայիներ, հետեւորդներ ու համակիրներ թրծելու եւ կազմակերպութեանց-ցոյցերու-արշաներու նաեւ քանակական կշիռ հայթայթելու, ընկերամշակութային ձեռնարկներու՝ տոմսեր սպառելու, գիրքեր եւ ղեկավարներ յառաջնդելու, եւ մշակուած միտքերով նոր սերունդներ արտադրելու: Դպրոցները ընկերայնացման վայրեր եղան ոչ միայն աշակերտներուն, այլեւ ծնողաց համար, որոնք ընդարձակեցին իրենց ծանօթութիւններու շրջանակները՝ ծնողական հանդիպումներու, հանգանակութեան ձեռնարկներու եւ մշակութային երեկոյթներու ընթացքին: Դեռ աւելին, դպրոցները հանդիսացան այն պաստառը որով հայկական ենթախումբերը զօրացուցին, աշխուժացուցին եւ թարմացուցին իրենց ցանցերը: Միւս կողմէն, դպրոցները առաւել ամրագրուեցան կիրակնօրեայ դպրոցներով, որոնք հայ ընտանիքին քրիստոնէական արժէքներուն, հայ եկեղեցւոյ հանդէպ սեր զարգացնելու եւ հայ մշակութային ու կրօնական արժանիքներու պահպանման սատարեցին:

### **Դ) Սովետական Հայաստանի Վերայայտնութիւնը**

Հայօճախին ազգային դիմագիծը առաւել զօրացաւ Սովետական Հայաստանի լիբանահայ տարածք վերստին մուտքով: 1960ականներու սկիզբէն ՀՅԴԻ լիբանահայ ենթախումբ-պետութիւն գերակայութիւնը հակակշռուեցաւ Համայնավար-ՄԴՀԿ-ՌԱԿԻ լիբանահայ ենթախումբ - Սովետական Հայաստան յարաբերութիւններով:

Խորքին մէջ, Սովետական Հայաստանը, որ շարունակած էր մնալ հաւանական խորհրդանիշը ցրուած ժողովուրդի յոյսերուն<sup>21</sup>, յատկանշական վերամուտ մը կատարեց համասփիւռքեան առումով:

<sup>20</sup> Ազգային Իշխանութեանց Ուսումնական Խորհուրդ, «Ազգային Վարժարաններ, Թիւեր, Ծրագիրներ», *Ազգակ Բացարկի*, 1 Յունուար 1981, էջ 8:

<sup>21</sup> Hrair Deukmejian, “The Armenians: History, Consciousness and the Middle Eastern Dispersion”, *Ararat Quarterly*, Vol. XIX, # 3, issue 75, Summer 1978, էջ 46:

Օդային երթուղիի գիծը բացուեցաւ 1958ին եւ այնուհետեւ հարիւրաւոր լիբանահայ երիտասարդներ Սովետական Հայաստանի կրթական բարձրագոյն հիմնարկներու մէջ սկսան ուսանիլ ձրիօրէն: Սովետահայ մշակութային խումբեր եւ դէմքեր Լիբանան այցելեցին, ոգեւորելով եւ ներշնչելով Լիբանանի հայօճախը: Այս այցելութիւնները շէնշող, ազգայնական Հայաստանի մը նոր դիմագիծը Պէյրութ տեղափոխեցին<sup>22</sup>: Հայերէնի եւ հայոց պատմութեան լիբանահայ ուսուցիչներ ամառնային վերապատրաստման դասընթացքներու մեկնեցան Հայաստան. հայերէնի, հայ գրականութեան եւ աշխարհագրութեան յատուկ դասագիրքեր պատրաստուեցան Երեւանի մէջ՝ սփիւռքահայ վարժարաններու համար, յաջողագոյն աշակերտներու Հայաստան ամառնային արձակուրդի մեկնելու մրցանակներ շնորհուեցան: Տարբեր տեսակի մասնագէտներ եւս հրաւիրուեցան Երեւան ու պետական ճիգ տարուեցաւ Խորհրդային Հայաստանը միացնելու համահայկական տարածքին ու անոր տալու մշակութային տիրական դիրք:

1964ին հիմնուեցաւ Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէն, որ կը նպատակադրէր զօրացնել Սփիւռքի հետ մշակութային կապերը, բացայայտել եւ ծանուցանել սովետահայ մշակութային նուաճումները Սփիւռքին, եւ սփիւռքահայութեան դէպի Սովետական Հայաստան արեւելում տալ:

1960ականներու կէսերէն, կարծէք Սովետական Հայաստանը ստանձնած էր հայութեան հայաբարբառ մշակութային առաջնորդութիւնը որակապէս եւ քանակապէս: 1967էն սկսեալ Արմէնփրէսը՝ հայկական պաշտօնական լրատուական գործակալութիւնը, հեռասփռեց 'լաւ' լուրերը Սովետական Հայաստանի վերելքին, նուաճումներուն եւ յաջողութեանց՝ բոլոր ոլորտներուն մէջ: Կուսակցական ու յեղափոխական դէմքերու, բնօրրան ծնած երէց ծնողներու նկարներուն կողքին կարելի էր այլեւս հանդիպիլ սովետահայ յուշանուէրներու, յարդարանքներու եւ նկարներու, որոնք կը զարդարէին ներքին պատերը լիբանահայ տուններուն եւ խանութներուն: Հայրենակցական պատի օրացոյցները սկսան կրել նկարները Սովետական Հայաստանի մէջ նոր կառուցուած կամ վերանուանուած ասաններու եւ գիւղերու, որոնք կը կրէին ցեղասպանուած սփիւռքահայութեան բնօրրաններուն անունները: Այս բոլորը վերաշխուժացուցին **տունդարձի** յոյսերը ազգայնական

<sup>22</sup> Միսակ Վարժապետեան, *Հայերը Լիբանանի Մէջ*, Գ. Հատոր, 1920-1980 Շրջան, Պէյրութ, Տպ. Սեւան, 1981, էջ 157, 159, 325:

հայերուն, թէ իրենց կեցութիւնը Լիբանանի մէջ ժամանակաւոր էր եւ թէ օր մը իրենք պիտի վերադառնան իրենց հայրենիքը՝ Սովետական Հայաստան, որ պիտի ընդարձակուէր ներառելով Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած պապենական Հայաստանէն մասեր:

Անկասկած, Սովետական Հայաստանի գօրաւոր վերերեւումը արդէն իսկ ազգայնականօրէն բորբոքուն Լիբանանի հայօճախին մէջ, ազդեց լիբանահայութեան տեղական համարկումին:

### **Ե) Համարկում Ե՛ւ/Կամ/Թէ՞ Հայապահպանութիւն. Հակադրութեան Շեշտաւորումը**

Կենցաղային ամենօրեայ պահանջները՝ մէկ կողմէն եւ ազգային զգացումները՝ միւս կողմէն, կողմնորոշումի մնայուն խնդիր մը թելադրեցին<sup>23</sup> լիբանահայուն: Նորահաս սերունդը, որ տնտեսական յարաբերաբար բարօր պայմաններու մէջ ծնած էր, տարօրինակ զգաց էր իր ուղեղը հայկական արձագանգեց<sup>24</sup> մինչ իր շուրջբոլորը անգլերէն, ֆրանսերէն ու արաբերէն կը հնչէր: Կարծես հակօրինական էր իր կա՛մ հայկականութիւնը եւ կա՛մ՝ լիբանանցիութիւնը: Տարտամ գիտակցում մը կար օրինականացնելու համակեցութիւնը անցեալին (հայկականութեան) ու ներկային (լիբանանցիութեան): Նման համակեցութիւնը դիրքին չէր, որովհետեւ անցեալի արժեհամակարգը կ'աճեցուէր իբրեւ հակադրութիւն ներկայի կենցաղին: Ասիկա ընտրութիւն մը կը պարտադրէր. Մերժե՛լ՝ կա՛մ հայկականութիւնը, կա՛մ՝ առօրեայ համարկող կենցաղը: Ասիկա ա՛հն էր ձուլման եւ խուճապը՝ բարեկեցութեան<sup>25</sup>: Լիբանահայը կ'ապրէր խառն կեանքը հակասութիւններու՝ միաժամանակ վարելով հայկական եւ ոչ-հայկական կենցաղ մը. ինքնութիւն, պատկանելիութիւն, հայերէնի տիրապետում, լաւ հայու սահմանում, հայկականութեան էութիւն, առնչութիւն անցեալին եւ հաւանական արդիականացում՝ շփոթեցնող հարցեր էին որոնք ընդհանրական բնութագրումի եւ թափանցիկ քննարկումներու հրատապութիւնը ունէին, մանաւանդ նորահաս սերունդին համար<sup>26</sup>: Հարցերը կը վերաբերէին հայկական երկակի ինքնութեան. անցած բայց վերապրող

<sup>23</sup> Յարութիւն Քիւրքճեան, *Փորձ Տարա-գրութեան Մասին (Essai sur l'Exil)*, Collection "Diaspora Armenienne" # No. 1, Haratch Press, 1978, էջ 103:

<sup>24</sup> Նոյն, էջ 91, 93:

<sup>25</sup> Նոյն, էջ 95:

<sup>26</sup> Մելքոն Էպլիդաթեան, *Գաղթակայանէն Խորհրդարան, Հտր. 1*, Հալէպ, Կիլիկիա Հրատ., 1998, էջ 347:

ազգային անցեալի մը եւ հրատապ, բազմազգ ներկային միջեւ անլոյծ բախումներ կային<sup>27</sup>: Կարելի՞ էր լիարժէք հայ ըլլալ միաժամանակ լիբանանցի ըլլալով<sup>28</sup>:

Այս բարդութիւնները խոչընդոտեցին<sup>29</sup> համարկումը:

Ստաւորական շրջանակներուն մէջ հարցադրուեցան հայկական սփիւռքի գոյատեւումն ու գոյատեւումի հնարաւորութիւնը, Սփիւռքի դիմագիծին, բովանդակութեան, կարգավիճակին սահմանումը եւ սփիւռքահայուն պատկանելիութիւնները<sup>30</sup>: Այս հարցադրումները պարարտ հող գտան լիբանահայութեան մէջ, որովհետեւ Լիբանանը ինքնին կ'ապրէր քաղաքակրթական եւ ինքնութեան գոյութենական սուր տագնապը<sup>31</sup>:

Կեանքը կը յառաջանար, սակայն այս խնդիրները յամեցան. հայապահպանում ու հայագործում՝ մէկ կողմէն<sup>32</sup> եւ պատշաճում ու համարկում՝ միւս կողմէն, մնայուն խաչաձեւումները եղան լիբանահայու մտքին:

Այս հակադրութիւնը լաւապէս նկատուած ու գիտակցուած էր Լիբանանի ոչ-հայ դէտերու կողմէ: Անոնցմէ մին ուշագրաւօրէն նշած էր արդէն միջ-1960ականներուն, թէ շատ մը հայեր իրենք զիրենք օտարներ կը նկատեն Լիբանանի մէջ<sup>33</sup>: Կարծես՝ արհեստական կառոյց մը, հայկական կեանք մը աճեցուած էր ուրիշ քաղաքակրթութեան մը մարմնին վրայ<sup>34</sup>: Սուզըն Փէթի այս վիճակը կը նկարագրէ հետեւեալ ձեւով. շատ մը հայեր «օտարական զգալով, կը նախընտրեն չառնչուիլ քաղաքականութեան... 'ետ' Հայաստան չեն երթար, որովհետեւ առկայ հայրենիքը չի բաւարարէր իրենց ակնկալութիւնները: Շատ սփիւռքահայեր անապահով կը զգան իրենց ասպնջական երկիրներուն մէջ: Ասիկա զիրենք կը դնէ մնայուն երկընտրանքի մը առջեւ: Ասոր հետեւանքն այն է, որ քննական խօսքի համար այնքան անհրաժէշտ քաղաքական առնչուածութիւնը չկայ, որովհետեւ... հայերը կը զգան թէ

---

<sup>27</sup> Oshagan, էջ 39:

<sup>28</sup> Քիւրքճեան, էջ 81, 97:

<sup>29</sup> Արա Արծրունի, «Սփիւռքահայը Եւ Հայրենիքը», *Ազդակ Բացարկիկ*, 2 Յունուար 1995, էջ 45-49:

<sup>30</sup> Քիւրքճեան, էջ 71:

<sup>31</sup> Նոյն, էջ 105-7:

<sup>32</sup> Նոյն, էջ 123, 145:

<sup>33</sup> Michael Hudson, *The Precarious Republic: Modernization in Lebanon*, New York, Random House, 1968, էջ 29:

<sup>34</sup> Քիւրքճեան, էջ 99:

իրենք կ'ապրին 'հիրընկալ' պետութեան մը մէջ, որ ըստ իրենց ամբողջութեամբ իրենցը չէ...»<sup>35</sup>:

## Չ) Եղեռնի Յիսնամեակ. 1965

Լիբանահայուն ընկերա-զգացական, ինքնութեան ու պատկանելիութեան այս վիճակը յարատեւ մակընթացութիւն մը եղաւ երկու հակադիր անհրաժեշտութիւններու. հայապահպանումի եւ ամենօրեայ կեանքի պահանջք հանդիսացող համարկումի միջեւ: Այս երկուքը ծաւալեցան եւ ամփոփուեցան ըստ Լիբանանի, Սփիւռքի եւ Սովետական Հայաստանի մէջ պատահող զարգացումներուն:

Լիբանահայ միտքն ու սիրտը չէր կրնար այս երկու արահետներէն մէկուն վրայ հանգչիլ: Հետեւաբար, որդեգրուեցան երկուքն ալ, ուստի՝ թերի մնաց թէ՛ համարկումը, թէ՛ հայապահպանումը: Երկակի այս թերացումը, սակայն, անմիջական, մեծ, վճռական հետեւանքներ չունեցաւ, որովհետեւ Լիբանանի բոլոր համայնքներն ալ մասամբ միայն առնչուած էին լիբանանեան համարկումի գործընթացին՝ իբրեւ հետեւանք Լիբանանի համայնքապետական դրութեան: Միւս կողմէն, հայապահպանման թերացումներն ալ բնական էին՝ նկատի առնելով Սփիւռքի էութիւնը եւ անոր բազմատեսակ սահմանափակումները:

Դժբախտաբար լայնածիր, հրապարակային քննարկումներ չկատարուեցան այս ուղղութեամբ: Փակ դռներու ետին, նեղ միջավայրերու ծիրով, անհատական-անկախ նախաձեռնութիւններով կատարուեցան տրամասացութիւններ, որոնք սակայն հայկականօրէն չօրինականացան, հայօճախը չիրազեկուեցաւ այս մասին: Այլ խօսքով չզարգացուեցաւ գիտագործնական տարագումը այս երկակիութեան, ուր գաղափարապէս հիմնաւորուէր այս երկակիութեան բեւեռներուն կարելի 'համակեցութիւնը':

24 Ապրիլ 1965ը յատկանշական առիթ մըն էր վերատեսութեան ենթարկելու հայապահպանում եւ համարկում երկակիութիւնը: Հայոց Ցեղասպանութեան յիսնամեակը նշեց աւարտը Սփիւռքի առաջին *մաքրո* հանգրուանին (1915-1965) եւ սկիզբ դրաւ աւելի քաղաքականացուած հանգրուանի մը<sup>36</sup>: Առաջին այս հանգրուանը ականատես եղաւ գաղթահայութեան աշխուժ Սփիւռքի մը վերափոխումին, հայկական առաջնահերթութիւններու վերադասաւորման, եւ զանազան ընտրանքներ բացաւ հայկական

<sup>35</sup> Մէջբերուած՝ Andre Levy, “Diasporas Through Anthropological Lenses: Contexts of Postmodernity”, *Diaspora*, Vol. 9, Spring # 1, 2000, էջ 142:

<sup>36</sup> Էպլիդաթեան, 1998, էջ 229:

օրակարգի եւ համարկումի: Հանգրուանը առանձնացաւ կերտումովը հօր, ուժական հայօճախի մը, որ կը յատկանշուէր ընկերաքաղաքական, տնտեսական եւ մշակութային տարածքով: Յետ-1965 շրջանին տարտամ պատշաճեցուած համարկումն ու հայապահպանումը պիտի գոյակցէին հայուն միտքին ու հոգեբանութեան մէջ: Իսկ թէ անոնցմէ իւրաքանչիւրը ի՞նչ տարածք պիտի զբաղէցներ հայու գործունէութեան մէջ՝ անձնական հարցն էր իւրաքանչիւր հայու գիտակից ընտրութեան, եւ կախեալ էր լիբանահայուն ներագողոյ բազմազան գործօններէ:

Լիբանանի հայօճախը պէտք էր հաշտեցնէր «երկու հակադիր ծայրեր»ը հայապահպանումին եւ համարկումին, բայց նաեւ գործնականացնէր զայն ու կառուցէր անոր վրայ: Համատեղ վարումը այս երկու ուղիներուն կարելի դարձաւ տարերայնօրէն եւ ինքնըստինքեան. այլեւայլ մշակութային, տնտեսական եւ քաղաքական ձեռնարկումներով, կենցաղային-շուկայական շփումներով.-

- 1) Կառուցուեցան յուշարձաններ, որոնք ծանօթացուցին հայոց ցեղասպանութիւնը եւ երախտագիտութիւն դրսեւորեցին Լիբանանի ասպնջականութեան.
- 2) Արաբերէն եւ օտարալեզու գիրքեր հրատարակուեցան՝ ծանօթացնելու համար Լիբանանի ոչ-հայուն՝ հայութեան պատմութիւնը, ցեղասպանութիւնը, Սփիւռքը եւ հայութեան ներկայութիւնը Լիբանանի մէջ.
- 3) Լիբանահայ դպրոցին ուսումնական ծրագիրը բարեխառնուեցաւ, ընդգրկելով երկակի համադրումը հայկականին եւ լիբանանեանին.
- 4) Քաղաքական դաշինքներ հաստատուեցան տեղական այլեւայլ խմբակցութիւններու հետ.
- 5) Գործընկերութիւններ հաստատուեցան տնտեսական եւ շուկայական ոլորտներուն մէջ.
- 6) Լիբանահայուն շփումը՝ համարկումի գործընթացը, անցաւ տնտեսական շրջափուլէն կենցաղային եւ ընկերային հանգրուան:

Այս քաղաքականութիւնը արտադրեց սերունդներ, որոնք սահուն արաբերէնով հաղորդակցեցան եւ համարկուեցան տեղական միջավայրին ու մշակոյթին, որ իր կարգին դրական տրամադրուած էր հայկական մասնայատկութիւններուն հանդէպ: Այս բոլորը

նպաստաւորեցին լիբանահայութեան մասին դրական տրամադրութիւններուն:

### **Է) Ազգայնականութիւն Եւ Լիբանանեան Բաժնեկցութիւն**

Հայկական Յեղասպանութեան յիսնամեակը առաջին հաշուեյարդարային անկիւնադարձն էր Լիբանանի հայօճախի պատմութեան: Վերաբանաձեւուեցան սփիւռքահայ գոյութենական նպատակները, իրաւական տարագում առին անոնք, ընդհանուր ուղեգիծ դարձան եւ վերաձեւեցին իւրաքանչիւր լիբանահայու տեղի, դերի ու յանձնառութեան սեփական ընտրանքը: Սեփական այս կեցուածքներու հանրագումարը հայկական կարողականութեան բախելով բարեխառնուեցաւ իր միջոցներու եւ աղբիւրներու առարկայական սահմանափակումներով: Հայոց Յեղասպանութեան ճանաչման պայքարը դարձաւ հայօճախին եւ ընդհանրապէս Սփիւռքի խորքային յառաջադրանքը: Միւս կողմէն, 'Հարցը' դարձաւ գերագոյն այն խնդիրը որ հայկական բացուածքներ կամրջեց, բաժանումներ կարկտնեց:

Յեղասպանութեան յիսնամեակին առթիւ Սփիւռքի մայրաքաղաքներու փողոցներուն մէջ կազմակերպուած յուշատօները անցան ւանդական ձեւաչափը Յեղասպանութեան նուիրուած ձեռնարկներուն<sup>37</sup>: Չանք թափուեցաւ որ կառավարութիւններ պաշտօնապէս դատապարտեն Օսմանեան Կայսրութեան ցեղասպանական արարքները, որ իբրեւ նախընթաց ծառայած էին այլոց<sup>38</sup>: Շարք մը պետութիւններու թէ քաղաքական եւ հաստատութենական այլեայլ միաւորներու կողմէ Յեղասպանութեան ճանաչումը որոշ թափ տուաւ սփիւռքահայ ճիգին<sup>39</sup>: Միւս կողմէն, Յեղասպանութեան զոհերուն նուիրուած յուշարձաններ կանգնեցուեցան աշխարհի աւելի քան երկվեցեակ մը երկիրներու, ներառեալ՝ Սովետական Հայաստանի մէջ, Երեւանին հսկող Ծիծեռնակաբերդի բլուրին<sup>40</sup>:

1960ականներուն, Եաքով Զարուպեան՝ Հայաստանի Համայնավար Կուսակցութեան Առաջին Քարտուղարը, դրական արտայայտուեցաւ

<sup>37</sup> Anahit Ter Minasian, *Histoires Croisees. Diaspora. Armenie, Transcaucasie 1890-1990*, Editions Parentheses, Marseille: 1997, էջ 37-38. նաեւ՝ Էպլիդաթեան, 1998, էջ 68:

<sup>38</sup> Mathew Karanian, "Century of Genocide", *AIM*, January/February 2001, էջ 27:

<sup>39</sup> Շողիկ Աշրգեան, «Հայկական Պահանջատիրութիւնը Հեռանկարային Առումով», *Ազդակ Բացարկիկ*, 24 Ապրիլ 2001, էջ 18:

<sup>40</sup> Karanian, էջ 31:

ՄԴՀԿի եւ ՌԱԿի հասցէին եւ տարբերակում դրաւ ՀՅԴ ղեկավարութեան ու շարքերուն միջեւ<sup>41</sup>: Այս քայլը կ'արտացոլացնէր արժեւորումի եւ կեցուածքի նոր ճկունութիւնը՝ Սովետական Հայաստանի համայնավար ղեկավարութեան, նաեւ փրակմաթիզմը անոնց: Սովետական Հայաստանի հանդէպ ոճի փոփոխութիւն մը նկատուեցաւ ՀՅԴ ղեկավարութեան հռետորականութեան մէջ ալ, որ հետեւանք էր նաեւ՝ նախորդ - արմատականօրէն հակասովետ - ղեկավարութեան անցումին<sup>42</sup>: Հաշտուողական տրամադրութիւն նկատուեցաւ նաեւ եկեղեցական շրջանակներուն մէջ: Արդարեւ, Երուսաղէմի ողջագործումէն ետք (1963), Վազգէն Վեհափառի գահակալութեան տասնամեակին առթիւ, Պէյրութի Առաքելական Հայոց Առաջնորդը այցելութիւն մը տուաւ Էջմիածին, որուն յաջորդեց Երեւանի Առաջնորդին պատարագը՝ Անթիլիասի Կաթողիկոսարանին մէջ<sup>43</sup>: Անշուշտ, սակայն, հաշտուողական այս տրամադրութիւնը նոյն խորքով եւ միանգամայն չտարածուեցաւ Սփիւռքի բոլոր ենթախումբերուն ու բոլոր հարցերուն վրայ:

1970ականներուն, Սովետական Հայաստանի ազգայնական ներկայութեան կշռոյթը Սփիւռքի մէջ արագացաւ եւ սկսաւ ինքզինք պարտադրել: Համայնավար գաղափարախօսութիւնը վերածուեցաւ հայրենասիրական ինքնութիւնը եւ ազգայնական մղումները<sup>44</sup> շղարշող միջոցի: Մինչ Հայաստանը ազգային գունեղ վերելք ապրեցաւ:

Լիբանանի հայօճախին մէջ, հայկական բազմակարծութիւնը սկսաւ հող գտնել՝ կուսակցական փոխհանդուրժողութեան ծաւալումին կողքին: Կուսակցութիւնները կորսնցուցին ամբողջական վերահսկողութիւնը մանաւանդ երիտասարդութեան, որոնք ձեռով մը հիասթափած էին անմիաբանութենէն եւ Հայոց Յեղասպանութեան խնդրով արձանագրուած համեստ արդիւնքներէն:

Այս դժգոհանքը 'թթխմորեց' ազգայնական երիտասարդութիւն մը, որ պարարտ հող գտաւ Պէյրութի յեղափոխական մթնոլորտին մէջ, մասնաւորաբար 1967ի արաբ-իսրայէլեան պատերազմէն ետք: Այլախոհութիւնը շեշտակիօրէն մեծ էր համալսարանական երիտասարդութեան մէջ եւ անոնց, որոնք խմբուած էին *Երիտասարդ*

<sup>41</sup> Կարլէն Դալլաքեան, *Յուշապատում (Դէմքեր, Իրողութիւններ, Մտորումներ)*, Երեւան, 1998, էջ 66-67:

<sup>42</sup> Nikola Schahgaldian, "The Political Integration of an Immigrant Community into a Composite Society: The Armenians in Lebanon, 1920-1974" (Columbia University Ph.D. thesis, 1979), էջ 238:

<sup>43</sup> Տեմիրճեան, 1980, էջ 168-169:

<sup>44</sup> Panossian, 1998, էջ 155:

Հայ պարբերաթերթին շուրջ, որ բանական քննդատության բարձրաձայն ոճ մը ուներ՝ արձանագրուած նախկին 'յաջողութիւն'ներուն հանդէպ: 'Երրորդ գիծ'ի բարեշրջուած գաղափարախօսութեամբ լայն ճակատ մը յարդարուած էր, մանաւանդ մտաւորական դրսեւորումովը վերոյիշեալ պարբերաթերթին եւ անկէ առաջ ձայն հանած *Մփիւռք*ին ու *Նայիրի*ին: 'Երրորդ գիծ'ը, սակայն, ո՛չ համակարգուած էր, ո՛չ համադրուած. պարզապէս բազմաձայն հոսանք մըն էր ան, առանց որեւէ ներքին կառոյցի:

## Ը) Տնտեսական Հարցեր. Առատութիւն

Վերոյիշեալ զարգացումներուն զուգահեռ, 1960ականներէն սկսեալ, լիբանահայութիւնը վերածուած էր տնտեսական վագրի: Ի տարբերութիւն նախորդ տասնամեակներուն, հայօճախը կ'ապրէր տնտեսական բարեկեցութիւն մը: Ըստ գնահատումներու, լիբանահայուն տարեկան եկամուտը 40% աւելի էր քան միջին լիբանանցիինը<sup>45</sup>: Աշխատասէր, կարգապահ հայօճախը յաջողապէս մրցունակ դարձած էր ճարտար աշխատանքի, արհեստներու եւ արուեստներու<sup>46</sup>, նորոգութեան արհեստներուն թէ լումայափոխութեան եւ ազատ ասպարեզի ոլորտներու մէջ<sup>47</sup>, ան յառաջացուցած էր հայկական տնտեսական տարածք մը՝ Լիբանանի տնտեսական ընդհանուր տարածքին մէջ: Լիբանահայութիւնը տէրն էր դրամատնային խնայողութեանց գումարներու 25%ին, կը կազմէր 25%ը լիբանանեան ոսկերչական շուկային<sup>48</sup> եւ կը յառաջացնէր Լիբանանի ազգային տնտեսութեան 15%ը<sup>49</sup>: Արեւելեան Պէյրութի արուարձաններու ճարտարարուեստի բանուորներուն շուրջ 45%ը գլխաւորաբար հայեր եւ մարոնիթներ էին<sup>50</sup>: Հայերը սեփականատէրերն էին 5 գործաւորէ աւելի հաշուող

---

<sup>45</sup> Լիբանահայութեան շուրջ 80%ը կը պատկանէր միջին դասակարգի խոնարհ կամ աւելի բարձր խաւին (John Munro, "Introduction", *Ararat Quarterly*, Vol. XIX # 3, # 75, Summer 1978, էջ 22):

<sup>46</sup> Oshagan, էջ 40:

<sup>47</sup> Theodor Hanf, "The Skeptical Nation: Opinions and Attitudes Twelve Years after the End of the War", in Theodor Hanf and Nawaf Salam (eds.), *Lebanon in Limbo: Postwar Society and State in an Uncertain Regional Environment*, Baden-Baden, Nomos Verlagsgesellschaft, 2003, էջ 199:

<sup>48</sup> David Gordon, *The Republic of Lebanon: Nation in Jeopardy*, Boulder, Colorado, Westview Press, 1983, էջ 112:

<sup>49</sup> Munro, էջ 22:

<sup>50</sup> Michael Johnson, *All Honourable Men: The Social Origins of War in Lebanon*, Centre for Lebanese Studies in association with I.B.Tauris Publishers, London, New York, 2001, էջ 192:

ճարտարարուեստական միաւորներու 14,05%ին<sup>51</sup>: Լիբանանցի 1800 բժիշկներուն 300ը հայեր էին, կային հայ 90 ատամնաբուժներ, 70 դեղագործներ, 300 երկրաչափներ: Միայն իրաւաբանական ոլորտին մէջ հայերը քիչ էին՝ 20 հոգի, ընդհանուր թիւին 0,01%ը<sup>52</sup>:

Յիրաւի, Լիբանան դարձաւ հայ տնտեսութեան Սփիւռքի դրախտ մը, որ պիտի տկարանար Լիբանանի 15ամեայ պատերազմին<sup>53</sup>:

Ժողովրդագրական առումով լիբանահայութիւնը տեղ գրաւեց լիբանանեան մեծագոյն համայնքներու եօթնեակին մէջ<sup>54</sup>: Ան դարձաւ երկրորդ մեծագոյն քրիստոնէայ համայնքը երկրին, ուր շուրջ 1,250,000 քրիստոնէայ եւ 2 միլիոն իսլամ կը գնահատուէր Լիբանանի բնակչութիւնը 1975ին: Ասոնց 496,000ը մարոնիթ էին, 260,000ը՝ հայ, 230,000ը՝ օրթոտոքս, եւ 213,000ը՝ ոչ-մարոնիթ կաթողիկէներ<sup>55</sup>: Լիբանահայութիւնը կը հանդիսանար միակ համայնքը՝ Մովետական Հայաստանէն դուրս, որ այսքան զօրաւոր, գործօն եւ կարեւոր դեր կը խաղար հիւրընկալ երկրի մը մէջ: Ան աւելի՛ հզօր կրնար ըլլալ՝ եթէ չըլլար խնդիրը լեզուին, որ կը խոչընդոտէր աւելի սերտ գործընկերութեան մը՝ Լիբանանի միւս համայնքներուն եւ լիբանանեան վարչակարգին միջեւ<sup>56</sup>:

Լիբանանը յառաջացուց խտացեալ օրինական եւ իրաւական տարածք մը հայոց համար որուն նմանը չկար Սփիւռքի մէջ<sup>57</sup>: Լիբանահայութեան համեմատութիւնը Լիբանանի բնակչութեան հետ անկրկնելի էր Սփիւռքի մէջ, այլուր: 1967ին, շուրջ 20,000 ուսանողութիւն կ'աշակերտէր 67 հայկական կրթական հաստատութիւններու. հայագիտական երկու հաստատութիւններ կը գործէին՝ շուրջ 17 գրատուններու, 9 մեծ գրադարաններու<sup>58</sup> եւ

---

<sup>51</sup> Boudjikianian, էջ 328:

<sup>52</sup> Megerditch Bouldoukian, “Armenian Business in Lebanon”, *The Armenian Review*, Vol. 32, June 1979, էջ 132:

<sup>53</sup> Ter Minasian, էջ 37:

<sup>54</sup> Kamal Salibi, *The Modern History of Lebanon*, 3<sup>rd</sup> impression, Worcester & London, The Trinity Press, Weidenfeld and Nicolson, 1968, էջ xxvi:

<sup>55</sup> *AnNahar*, 5 Նոյեմբեր 1975. նաեւ՝ Betts, *Christians in the Arab East*, Athens, Lycabettus Press, 1978, էջ 56, 59. նաեւ՝ Dickran Kuymjian, “Two Studies of the Armenian Community of Lebanon and a Special Introduction”, *The Armenian Review*, Vol. 32, June 1979, էջ 117:

<sup>56</sup> Hratch Bedoyan, “The Social, Political and Religious Structure of the Armenian Community in Lebanon”, *The Armenian Review*, Vol. 32, June 1979, էջ 129:

<sup>57</sup> Ոսկեբերան Արզումանեան, *Ծաղկաքաղ*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2006, էջ 223-224:

<sup>58</sup> *Այլով Յուշամատեն, Նուիրուած՝ Հ.Բ.Ը.Միութեան Լիբանանի Վերթրաններու Եւ Բարերարներու, 1947-1967*, խմբ. Ներսէս Շիրինեան, Յակոբ Ղազարեան, Ասատուր

հայկական երկու թանգարաններու կողքին<sup>59</sup>, մինչ շուրջ 200 համալսարանականներ կ'օգտուէին ՀԲԸՄի համալսարանական կրթանպաստէն որ 1967-68ին կը կազմէր 100,000 տոլար: Համասփիւռքեան հայկական գանազան բարեսիրական հաստատութիւններ նիւթական նպաստներ կը հոսեցնէին հայօճախին, որով բարեկեցիկ եւ ազդու կը դառնային անոր հանրային սպասարկութեան կալուածները: Լիբանահայ *Ազդակ* օրաթերթի էջաթիւին կրկնապատկումը Դեկտեմբեր 1970ին՝ 4էն՝ 8ի, մասամբ կ'արտացոլացնէ ուժական վերելքը հայօճախին, ուր ազգային զգացումները աննախընթաց բարձրութեան հասան:

Պէրութը դարձաւ Սփիւռքի անպաշտօն քաղաքական, մշակութային եւ կրօնական մայրաքաղաքը, նաեւ՝ շնորհիւ պետական համակարգին:

Եռապատկուեցաւ թիւը կամաւոր կազմակերպութիւններուն, որոնք հայկական ընկերա-մշակութային լայնածիր դաշտ մը յառաջացուցին<sup>60</sup>: Կամաւոր այս կազմակերպութիւններուն շարքին էին աղջկանց եւ կանանց, երիտասարդական, սկաուտական, գրական, մշակութային, ուսանողաց, ընկերային եւ մարզական, տնտեսական, արհեստակցական, առողջապահական եւ բարեսիրական ենթախումբերը: Այս կառոյցները անուղակիօրէն եւ ինքնըստինքեան գերակայութեան մտայնութիւն մը եւ հայկական բոլոր երեւոյթներուն հանդէպ նախընտրութիւն մը դարբնեցին լիբանահայուն մէջ: Ասոնք հայօճախը վերածեցին ազգային-մշակութային հարցերուն առնչուող մեծագոյն տոկոսը ունեցող հաւաքականութեան:

Այս կացութիւնը, անկասկած, ժխտապէս ազդեց համարկումի գործընթացին: Հայերը անճիշդ եւ անարդարօրէն նկատուեցան

---

Սակարեան, Զաւեն Մարրլեան, Պէրութ, Տպ. Ատլաս, 1969, էջ 45, 57, 77, 83. նաեւ՝ Վարժապետեան, Հտր. 2, էջ 234:

<sup>59</sup> 1990ականներու աւարտին Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը վերակերտեց թանգարան-մատենադարանը, աւելի քան 80,000 հաշուող գիրքերով (Zaven Vartan, "Cilicia Opens its Doors: The New Four-story Structure in Antelias, Lebanon, Houses the Treasures of the See of Cilicia", *AIM*, July 1998, էջ 40-41):

<sup>60</sup> Farid ElKhazen, *The Breakdown of the State in Lebanon, 1967-1976*, London, New York, I.B. Tauris, 2000, էջ 67. նաեւ՝ Vicken Berberian, "The War Inside the New Lebanon", *AIM*, June 1993, էջ 26. նաեւ՝ Վարժապետեան, Հտր. 2, էջ 298. նաեւ՝ Միսաք Գոյլումճեան, «Հ.Բ.Ը.Միութիւնը Սուրիոյ Եւ Լիբանանի Մէջ», *Սուրիահայ Տարեգիրք, Ա. Տարի*, Պէրութ, Տպ. Ազդակ, 1929, էջ 235. նաեւ՝ Զաքար Մկրեան, *Վկայութիւն Եւ Պատգամ*, Պէրութ, Համազգային Վահէ Մէթեան Տպարան, 2006, էջ 629:

արմատապէս ազգայնական<sup>61</sup>, հազիւ թէ, կամ գրեթէ չհամարկուած, հազիւ թէ արաբացած<sup>62</sup>, կիսակղզիացած, դեռ չձուլուած եւ իրենց Լիբանան կեցութիւնը ժամանակաւոր քստոր նկատող, բայց նաեւ այս քստորին երկարատեւութեան գիտակցողներ<sup>63</sup>:

Կարելի է առարկել, սակայն, թէ նման բանաձեւումները կը վերաբերէին անցեալի կարծրատիպային եւ ժամանցուած թիւրընկալումներու: Որովհետեւ, լիբանահայերը շրջանցած էին կենսապրոստի ապահովման մտահոգութեան հանգրուանը եւ կ'որոնէին կենցաղի *մոտոսօփերանտի* մը՝ Լիբանանի միւս համայնքներուն եւ տարբեր ուժերուն հետ: Անոնք յա՛տկապէս երկու երկիրներու հանդէպ տարբեր կը զգային:

Հաւաստելով եւ գործնապէս ապացուցելով իրենց հաւատարմութիւնը՝ Լիբանանին, անոնք միաժամանակ ամրապնդեցին իրենց հոգեկան-ազգային կապը իրենց պապենական բնակավայրի նշխար երկրի մշակոյթին հետ<sup>64</sup>: Դեռ աւելին, հայօճախը ներդաշնակ կը զարգանար «մեծամասնական մշակոյթին ...եւ [անոր] կը ձուլուէր՝ ըստ տեղական հոգե-ընկերային միջավայրին»<sup>65</sup>: Լիբանահայութիւնը յաջողած էր վերափոխել ինքզինք՝ օտար, չհամարկուած հաւաքականութենէ մը լիովին ընդելուզուած խումբի<sup>66</sup>: 1963ի ներգաղթը՝ Խ. Հայաստան, չխանդավառեց լիբանահայն այնպէս ինչպէս խանդավառած էր 1946ին<sup>67</sup>: Խառն ամուսնութիւնները 1961ի 7,3%էն հասած էին 1971ի 10,7%ին<sup>68</sup> եւ աւելի բարձր էին քան քրիստոնէական միջհամայնքային ամուսնութիւնները<sup>69</sup>: Ի մասնաւորի տնտեսական ոլորտին մէջ եւ շուկային վրայ, համարկումը երկար եւ լայն ճամփայ կտրած էր արդէն: Հայ ճարտարարուեստականներ գործընկերութիւն հաստատած էին ոչ-հայերու հետ<sup>70</sup>: Այս բոլորին կողքին, հայօճախը ամբօրէն կը պաշտպանէր Լիբանանի համայնքապետական վարչակարգը, որ կ'երաշխաւորէր համայնքային

---

<sup>61</sup> Joseph Mouwannes, *Les Elements Structuraux de la Personnalite Libanaise, Essai Anthropologique*, Ins. of Scientific Studies, Sin el-Fil, Lebanon, 1973, էջ 111:

<sup>62</sup> Betts, էջ 56:

<sup>63</sup> Hourani, էջ 136:

<sup>64</sup> Munro, էջ 21:

<sup>65</sup> Agop Der Karapetian and Levon Melikian, "Assimilation of Armenians in Lebanon", *Armenian Review*, Vol. 27, 1974, էջ 70:

<sup>66</sup> Schahgaldian, 1979, էջ 2-3:

<sup>67</sup> Սսիկա 0,15%ը կազմեց բնակչութեան՝ 1946ի 10%ի դիմաց (Schahgaldian, 1979, էջ 247):

<sup>68</sup> Der Karapetian and Melikian, էջ 70:

<sup>69</sup> Hanf, 2003, էջ 81:

<sup>70</sup> Boudjikianian, էջ 321, 331-2:

իրաւունքներ, մշակութային ինքնավարութիւն եւ ինքնութեան պահպանում:

Սակայն եւ այնպէս, թիրընկալումները ունէին երեւութական միակ հիմք մը՝ լեզուն: Լիբանահայութիւնը փեռեկտեալ Լիբանանի միակ հաւաքականութիւնն էր, որ արաբերէնի կողքին հիմնականօրէն կը գործածէր այլ լեզու մը՝ իր մայրենին, հայերէնը, եւ պատրաստ չէր հրաժարելու անկէ:

### **Թ) Հայօճախը Կը Ձգտի Պետական Իր Արդար Բաժնեկցութեան**

Ընկերա-մշակութային, տնտեսական եւ ժողովրդագրական այս ծաղկումը հայօճախը մղեց պետութեան մէջ իր ունեցած քաղաքական իրաւունքներուն վերատիրանալու: Իրաւունքներ, գորս ատենին, իր կազմաւորման հանգրուանին առաջնահերթ չէր նկատած ան: Իրաւ ալ, յաւելեալ համարկումը կը պահանջէր վերահաւասարակշռումը եւ վերադարձը լիբանահայութեան պատկանող պետական իրաւունքներուն: Այս քայլը, սակայն, դրապէս չընդունուեցաւ: Լիբանանեան պետական իր արդար պանրաշերտին տիրանալը կը նշանակէր նուազումը միւս՝ մանաւանդ քրիստոնէայ համայնքներու պանրաշերտերուն<sup>71</sup>: Արդար բաժնեկցութիւնը նաեւ կը բարդացնէր միջհամայնքային սակարկութեան գործընթացը՝ լիբանանեան առումով: Արդարեւ, լիբանահայ օրթոտոքս համայնքին յաւելումը լիբանանեան համայնքներու մեծ վեցեակին (սիւննի-շիի-տիրզի եւ մարոնիթ-յոյն կաթողիկէ-յոյն օրթոտոքս), ինքնաբերաբար կշիռքը պիտի թեքէր քրիստոնէաներուն կողմը: Ասիկա վտանգաւոր կրնար ըլլալ, մանաւանդ որ համայնքները կը նախընտրէին ապահով քայլեր առնել եւ խուսափիլ անակնկալներէ:

Լիբանահայ երեսփոխանական պլոքը գլխաւորեց հայօճախին շահերուն եւ իրաւունքներու վերականգնումի այս երթը<sup>72</sup>: Պլոքին 1972ի օրակարգին վրայ էր հայկական խնդիրներու երկար ցանկ մը, ինչպէս՝ հայ երեսփոխաններու մասնակցումը խորհրդարանական ծառայողական յանձնախումբերուն, հայերու ներգրաւումը պետական բարձրաստիճան պաշտօնատարութեան, հայաբնակ թաղամասերու հանրային սպասարկութեան եւ ծառայութեան պետական մատակարարումներու բարելաւումը, քաղաքապետարաններու եւ քաղաքական կուսակցութիւններու օրէնքի բարեկարգումը, Այնճարի Միջազգային Փառատօնի նիւթական մատակարարումը,

<sup>71</sup> Էպլիդաթեան, 1998, էջ 321, 324, 345:

<sup>72</sup> Նոյն, էջ 303:

սուրիահայերու աշխատանքային իրաւունքի արտօնագրերու շնորհումը, տասնամեակներէ ի վեր Լիբանան բնակութիւն հաստատած հայերու քաղաքացիութեան շնորհումը: Պլոքին յանձնառութիւնը բնական էր, որովհետեւ իւրաքանչիւր համայնք իր օրակարգը յառաջ կը մղէր, մինչ նախարարներու անուանումն ու կառավարութեանց կազմութիւնը իրաւ *պագար* մըն էր<sup>73</sup>:

Խորքին մէջ, յատուկ նպատակ չկար հայերը կամ որեւէ այլ համայնք դուրս ձգելու այս *պագար*էն, սակայն անկախ գործօններու բազմազանութիւնը եւ գլխաւոր համայնքներու աւելի մեծ պանրաշերտեր ունենալու պահանջներուն զոհացում տալը զիջումներ կը պարտադրէին: Այդուհանդերձ, հայերը կառչած մնացին իրենց պահանջներուն, հոն՝ ուր լծակներ ունէին<sup>74</sup>: Օրինակ, Պէյրութի բաժանումը երեք ընտրատարածքի, զօրացուց հայերուն դիրքը եւ չորս քրիստոնէայ ոչ-հայ երեսփոխաններու ճակատագիրը կապեց հայկական քուէներուն: Միւս կողմէն, Պուրճ Համուտի շաղկապումը Մէթնի ընտրատարածքին, ներառած եղաւ 20% հայկական քուէներու ծանրութիւն մը՝ մասնատուած քրիստոնէական ընտրատարածքին մէջ: Այս երկու լծակները միջոց հանդիսացան որ հայերը յառաջ մղեն Պէյրութի Աւետարանականներուն համար հայ թեկնածուի մը պահանջը:

Լիբանանեան իշխանութեան բաժնեկցումի այս պահանջները, սակայն, պատճառ դարձան որ մամուլին մէջ հակահայ աղմուկ բարձրացուի<sup>75</sup>: Նախկին նախագահ Շամուն, հայերը նկատեց նախ հայ, յետոյ շէյքի անդամ, յետոյ՝ քրիստոնէայ, հուսկ՝ լիբանանցի<sup>76</sup>:

Այդուհանդերձ, պետութեան կողմէ որդեգրուած շարք մը քայլեր դրական, բարենպաստ մթնոլորտ մը յառաջացուցին հայերու համարկումին գործընթացին համար: Պետք է կրկնել, որ իշխանութեան բաժնեկցումի համայնքապետական դրուածքը, որ զերօ-հանրագումար հաշիւ մը կը նկատուէր, դժուար թէ բաւարարէր բոլոր համայնքները: Ընդհակառակը, ատիկա բացասաբար տրամադրեց համայնքները՝ մակերեսէն խորերը անցնող համարկումին հանդէպ: Ատիկա նուազեցուց շուկայական յարաբերութիւններէն անդին անցնող միջհամայնքային կամրջումին հաւանականութիւնը: Միւս կողմէն, ատիկա ընդարձակեց

---

<sup>73</sup> Նոյն, էջ 315-325:

<sup>74</sup> Schahgaldian, 1979, էջ 240:

<sup>75</sup> Նոյն, էջ 290:

<sup>76</sup> Էպլիդաթեան, 1998, էջ 29, 290:

համայնքային հանրային օղակները, մշակութապես ամրապնդեց  
համայնքները, պատնիշեց զանոնք իրարմէ եւ սանձեց համարկումին  
կշռոյթը: Բազմահամայնքային Լիբանանի մէջ համարկումին հանդէպ  
ընդունելի կեցուածք մը կերտելը անյաղթահարելի մարտահրաւէր մը  
շարունակեց մնալ:



# ՀԱԿԱՀԱՄԱՐԿՈՒՄԻ ՏԱՐԻՆԵՐԸ (1975-1990).

## Համայնքային Օրակարգերուն Ուժը

### Մուտք

Իր կարողականութեան, ծաղկումին եւ ազգայնական մթնոլորտի աննախադէպ բարձունքին, Լիբանանի հայօճախը 1975ին դիմագրաւեց աննախընթաց տարողութեամբ քաղաքացիական պատերազմ մը:

Հայօճախը պէտք էր ռազմավարական ընտրութիւն կատարէր պատերազմին, ապա նաեւ՝ պատերազմող կողմերուն միջեւ: Իր դիրքորոշումը երկարատեւ ազդեցութիւն պիտի ունենար Լիբանանի եւ Միջին Արեւելքի հայութեան վրայ: Խորքին մէջ հայօճախը ստանձնած էր բարացուցական դեր եւ վերագրումի աղբիւր մըն էր Միջին Արեւելքի արաբ պետութիւններուն համար՝ յաչս իրենց հայօճախներուն:

Լիբանանեան առումով, որեւէ դիրքորոշում իր հետեւանքները պիտի ունենար միջկուսակցական, ներհայկական եւ ներլիբանանեան յարաբերութիւններուն վրայ: Ան հետեւանքներ պիտի ունենար նաեւ հայօճախին խոցելի կողմերուն եւ շահերուն վրայ: Անորոշ էր՝ կուսակցութիւնները պիտի կարենային՞ կառչած մնալ իրենց որդեգրած քաղաքականութեան, թէ՞ տեղի պիտի տային ճնշումներուն: Ի՞նչ մեքանիզմ պէտք էր դիրքորոշումը գործնականացնելու համար: Ինչպէ՞ս պիտի կարելի ըլլար վարել եւ պաշտպանել շահերը աւելի քան 200,000 հաշուող լիբանահայերուն, որոնք ցրուած էին Լիբանանի ողջ տարածքին: Ի՞նչ խորութեամբ կրնային կուսակցութիւնները առնչուիլ Լիբանանի քաղաքացիական պատերազմին: Ի՞նչ էր իրենց շահը այդ պատերազմէն: Ի՞նչ տարողութեամբ ճիգ պէտք էր թափել՝ չերաշխաւորուած շահի մը համար: Միասնական, միացեալ կեցուածք, թէ՞ ինչպիսի՞ որոշում կրնար հայկական սերտ մերձեցումը պահպանել եւ խուսափիլ 1958ի ողբերգութեան կրկնումէն: Հայ յարանուանութիւններու եկեղեցիները թիկունք պիտի կանգնէին՞ կուսակցական այս կեցուածքին: Նման աշխարհիկ-կրօնական դաշինք մը ինչպիսի՞ հետեւանքներ կրնար ունենալ Լիբանանի միջկրօնական յարաբերութիւններուն: Որոշումը պիտի ունենար՞ որեւէ տեղական, շրջանային եւ միջազգային աջակցութիւն: Ինչպիսի՞ ըմբռնողութեամբ հայօճախը պիտի

ընդառաջեր եւ քայլ պահեր կուսակցութիւններու հաւանական դիրքափոխումներուն հետ: Ինչպիսի՞ յաջողութեամբ լիբանահայութիւնը պիտի հակադէր շրջանային ուժերու ներգրաւումին, յառաջանալիք անակնկալ տագնապներուն, ինչ տարողութեամբ զոհողութիւններ կարելի էր ակնկալել հայօճախէն:

Այս բոլորին պատասխանը ժամանակը ցոյց պիտի տար: Հայօճախին առաջնորդները պարտէին զատորոշել խորքային եւ հեռահաս օրակարգերն ու ինդիքները անմիջական, կարճաժամ 2ահերէն:

### **Ա) Քաղաքացիական Պատերազմի Հայկական Ուղեգիծ. Դրական Զեղոքութիւն**

Հայ կուսակցութիւնները որոշեցին միացեալ ու միասնական ըլլալու գերակգրունքը: Այս կորիզին խարսխուելով, անոնք կտրականապէս մերժեցին պատերազմի տրամաբանութիւնը: Ընդգծելով որ ըստ լիբանանեան փորձին՝ լիբանանեան տագնապները դժուար թէ ուժի զօրութեամբ լուծուին: Անոնք համոզում յայտնեցին որ տարակարծութիւնները եւ հակառակութիւնները կրնան քանակցութեանց միջոցով լուծուիլ: Միաժամանակ, անոնք մերժեցին այս կամ այն կողմին կուսակից դառնալ: Ըստ անոնց, կռուախնձորը իշխանութեան բաժնեկցութեան վերադասաւորումն էր, ընկերային արդարութեան բարելաւումը: Ասոնք պետք էր եւ կրնային երկխօսութեամբ ու բանակցութիւններով լուծուիլ: Հայերը պնդեցին որ իշխանութեան վերաբաժանման գինը չէր համապատասխաներ այն բազատեսակ վնասներուն զորս քաղաքացիական պատերազմը կրնար բերել բոլորին գլխուն: Ներքնապէս, հայերը կը պնդէին որ հայկական շահերու յետագայ ելակետերէն մեկնելով, Միջին Արեւելքը եւ մանաւանդ իսլամ երկիրները լաւագոյն տեղն էին պահպանելու համար հայ լեզուն եւ ինքնութիւնը, ուր կրօնքը, գրաճանաչութիւնը, մշակոյթը եւ ինքնութիւնը փոխկապակցուած էին<sup>1</sup>:

Այս խոհեմ քաղաքականութիւնը շարունակութիւնն էր լիբանահայ քաղաքական աւանդին: Իրենց վիճակին զգօն, Լիբանանի հայօճախը ընդհանրապէս խուսափած էր բացայայտ հակադիր կեցուածք որդեգրելէ, կամ այս ու այն համայնքին թէ խմբաւորումին կողմնապահ ըլլալէ: Հայօճախը՝ իր քաղաքական արեւելումին հաւատարիմ, հպատակութիւն ցուցաբերեր էր Լիբանանի

<sup>1</sup> Eliz Sanassarian, “State Dominance and Communal Perseverance: The Armenian Diaspora in the Islamic Republic of Iran, 1979-1989” *Diaspora*, Vol. 4, # 3, Winter 1995, էջ 244, 248:

պետութեան, զոր կը նկատէր իր շահերուն եւ իրաւունքներուն երաշխաւորը:

Իրաւ ալ, Լիբանան հիւրընկալած էր հայերը 1915ի կոտորածներէն ետք եւ անոնց շնորհած համայնքային իրաւունքներ: Ան վերածուած էր իրենց ասպնջական հայրենիքին, իսկ հայերու յաջորդական սերունդներ իրենք զիրենք նկատած էին լիբանանցիներ՝ հայկական արմատներով<sup>2</sup>: Կեցուածքի խորքային տարբերութիւն մը կար լիբանահայութեան եւ միւս համայնքներուն միջեւ՝ Լիբանանի հանդէպ: Ասիկա հետեւանք էր հայրենիքին հանդէպ վերաբերումին, քաղաքական մշակոյթին եւ ազգային օրակարգերուն: Միւս կողմէն, հայերը ունեցեր էին գերպետութիւններուն «բարեկամութիւն»ը վայելելու փորձառութիւնը<sup>3</sup> եւ սորվեր էին որ փոքր ազգերն ու պետութիւնները զոհեր էին քաղաքական ճատրակի խաղասեղանին, հետեւաբար, պէտք էր ծայրայեղօրէն զգուշ ըլլալ<sup>4</sup>:

Լիբանահայ ղեկավարութիւնը զգուշ էր լիբանահայութիւնը աղէտի չառաջնորդելու: Համայնքին դէմ թշնամացում յառաջացնելը պիտի նշանակէր Պէյրութի թէ՛ քրիստոնէական եւ թէ՛ իսլամական շրջաններուն մէջ սփռուած հայկական վաճառատուներ եւ համայնքային կեդրոններ վտանգել: Հայօճախը ներգրաւել պատերազմին մէջ՝ պիտի նշանակէր ո՛չ միայն վտանգել զայն, այլեւ՝ շեղել հայութիւնը իր գլխաւոր՝ «նորահաս սերունդները տոհմիկ մթնոլորտի մէջ»<sup>5</sup> պահպանելու օրակարգէն:

Հայօճախին հզօրութիւնը անցեալին հնարաւորութիւն տուեր էր լուսանցքային խուսանաւումներով ինքնավար գործելու ի հեճուկս նախկին դաշինքներու<sup>6</sup>, մանաւանդ երբ հարցը վերաբերէր ազգային խնդիրներու:

<sup>2</sup> AlArman fi Lubnan/Les Armeniens Au Liban, *AlMadina*, 2<sup>nd</sup> Year, issue No. 14, 24 April 1974, էջ 15:

<sup>3</sup> Խմբագրական, «Արդար Քաղաքականութիւն», *Չարթօնք Բացառիկ*, Երեքշաբթի, 1 Յունուար 1986, էջ 1:

<sup>4</sup> Մերօրեայ հայերուն մեծամասնութիւնը անվստահութեան խորունկ զգացում մը կը տածէ եւ կ'օտարէ ինքզինք պետութիւններու ընտանիքէն (Hrair Deukmejian, "The Armenians: History, Consciousness and the Middle Eastern Dispersion", *Ararat Quarterly*, Vol. XIX, # 3, issue 75, Summer 1978, էջ 46): Իրաւ ալ, շարք մը պատմաքաղաքական դրուագներ եւ հայկական հիասթափութիւններ 'օգնեցին' որ հայեր նման ընկալում մը գոյացնեն Յեղասպանութենէն ետք:

<sup>5</sup> Յարութիւն Քիւրքճեան, *Փորձ Տարա-գրութեան Մասին (Essai sur l'Exil)*, Collection "Diaspora Armenienne" # No. 1, Paris, Haratch Press, 1978, էջ 101:

<sup>6</sup> ՀՅԴն տարիներ շարունակ դաշինքի մէջ էր Քաթալէպ Կուսակցութեան (ՔԿ), իսկ ՄԴՀԿը կը գործակցէր Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան հետ:

Պէտք է ըսել, որ Լիբանանի մէջ Թուրքիոյ դեսպանատան բացած դատը՝ լիբանահայ *Ազդակ* եւ *Ձարթօնք* օրաթերթերուն դէմ 1970ին, խթաներ էր հայկական կուսակցութիւններու միջեւ մերձեցումը: Ասոնք միացուցեր էին իրենց ուժերը՝ «թուրք սպաննալիքին» դէմ: Դեռ աւելին, Մայիս 1974էն սկսեալ, միջկուսակցական խորհրդակցութիւններ տեղի ունեցան՝ Հայոց Ցեղասպանութեան վաթսունամեակին յուշատօնին նախապատրաստուելու համար: Ասոնք վերաճեցան լիբանանեան տագնապը միաճակատ դիմագրաւելու քննարկումներու<sup>7</sup>: Միասնականութեան խնդիրը համակեր էր բոլոր լիբանահայութիւնը, նաեւ կուսակցութիւններն ու եկեղեցիները<sup>8</sup>:

Պատերազմի նախափուլին, կացութեան վատթարացումով, 1975 Ապրիլ 24ի յուշահանդէսները յետաձգուեցան Մայիս 6ին Լիբանանի Նահատակաց Տօնին, երբ հսկայ՝ շուրջ 75,000 մասնակիցներով քայլերթ մը ուղղուեցաւ մայրաքաղաք Պէյրութի կեդրոնը՝ Լիբանանի Նահատակաց Յուշարձան:

Վերոյիշեալ իրադարձութիւնները հիմնաքարերը հանդիսացան լիբանահայ դրական չեզոքութեան, որ հայօճախին սահմանափակ ազատութիւն տուաւ եւ օգնեց որ հայերը կամրջեն պատերազմող կողմերու ճեղքեր: Ըստ երեսփոխան Խաչիկ Պապիկեանի բացատրութեան. «Մեր չեզոքութիւնը չէր նշանակեր մէկ կողմ քաշուիլ: Մենք միշտ ալ փորձեցինք պահպանել մեր յարաբերութիւնները տարբեր կողմերուն հետ, որպէսզի երբեք ալ կամուրջները այրած չըլլանք»: Հայօճախին դրական չեզոքութեան հանդէպ վերապահ ըլլալով հանդերձ, պատերազմիկ կողմերը յաճախ դիմեցին հայութեան միջամտութեան՝ այս կամ այն առեւանգեալին կեանքը փրկելու:

Կարձ՝ հայերը, որոնք տակաւին կը նկատուէին իրարու յարող<sup>9</sup>, ընտրեցին նուազագոյն վնասակար ճամփան: Հայերուն նման, այլ համայնքներ ալ, ինչպէս՝ յոյն օրթոտոքս եւ յոյն կաթողիկէ համայնքները պաշտօնապէս չմիացան պատերազմին<sup>10</sup>:

<sup>7</sup> Մելքոն Էպիդաթեան, *Գաղթակայանէն Խորհրդարան, Հտր. 1*, Հալէպ, Գիլիկիա Հրատ., 1998, էջ 343-4:

<sup>8</sup> Վարդան Սրբ. Տեմիրճեան, *Գաւազանագիրք Լիբանանի Եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց, Հտր. 1*, Պէյրութ, Տպ. Ալթափրէս, 1980, էջ 205-8:

<sup>9</sup> David Gordon, *The Republic of Lebanon: Nation in Jeopardy*, Boulder, Colorado, Westview Press, 1983, էջ 10:

<sup>10</sup> Betts, *Christians in the Arab East*, Athens, Lycabettus Press, 1978, էջ 208: Սակայն, մեծաթիւ յոյն օրթոտոքսներ եւ յոյն կաթողիկէներ միացան քրիստոնեայ

Յետադարձ հայեացքով, կրնանք ըսել որ իրադարձությունները եւ հետեւանքները աւելի ծանրակշիռ պիտի ըլլային հայութեան մասնակցութեամբ: Հայօճախը նոխազ կրնար դառնալ երկուստեք, եւ հուսկ՝ հայերը կրնային կռուիլ իրարու դէմ, բիրտ պատերազմը աւելի աւերիչ պիտի ըլլար<sup>11</sup> ու ոչ ոքի պիտի խնայուէին բազմադէտ հետեւանքները: Լաւ էր որ «1958ի կսկծալի փորձառութիւնը վճռական դէր խաղաց 1975ի քաղաքական իրադարձութիւնները միացեալ ճակատով դիմագրաւելու հայկական որոշումին մէջ»<sup>12</sup>: Կրնայ առարկուիլ, սակայն, որ եթէ հայերը աւելի համարկուած ըլլային լիբանանեան հաւաքականութեան, աւելի հաւանական կ'ըլլար անոնց մասնակցութիւնը պատերազմին:

Ի տարբերութիւն 1958ի հատուածական մօտեցումին, 1975ին էթնիք հայկական շահերը գերադասուեցան տեղական, միջազգային ու կուսակցական շահերուն: Հայ կուսակցութիւնները ընդգծեցին, որ լիբանահայութեան ֆիզիքական պահպանումը բոլորին պարտականութիւնն է եւ որդեգրեցին դրական չեզոքութեան քաղաքականութիւնը:

1975ը կանխող տասնամեակին՝ Լիբանանի մէջ «*փոխադարձ հանդուրժողութեան մշակոյթ մը յառաջացած էր... իւրաքանչիւր համայնքի իւրայատուկ գիծերու ճանաչումը դարձեր էր բաժանարար գիծը համայնքներուն միջեւ ու Լիբանանը վերածեր ազատութիւններու երկրի մը*»<sup>13</sup>: Լիբանանի ընկերութիւնը գոյացնող համայնքները լռելեայն համաձայն էին համայնքային գոյատեւումին եւ բոլոր այլ նկատառումներու վրայ էթնօկրօնական իրաւական շահերու գերակշռումին: Քաղաքացիական պատերազմի մը ձեռնարկումը կը հակասէր Լիբանանի միջհամայնքային այս հանդուրժողութեան, որ խորքային արժէքն էր Լիբանանի համայնքապետական դրութեան: Այս ծիրին մէջ փոխհամաձայնութիւն կար շրջանցելու եւ չանդրադառնալու պետութեան զօրացման սատարող, սակայն նաեւ հակամարտութեան առաջնորդող եւ անկայունութիւն գրգռող խնդիրներու: Հետեւաբար, տասնամեակներ շարունակ, համայնքային եւ պետական շահերու եւ

---

զինեալներուն, որոնք կը յաւակնէին ներկայացնել Լիբանանի քրիստոնէութիւնը: Եղան նաեւ հայեր, որոնք միացան քրիստոնէայ կամ հակադիր զինեալներուն, բայց անհամեմատօրէն փոքր թիւերով:

<sup>11</sup> Marius Deeb, *The Lebanese Civil War*, New York, Praeger, 1980, էջ xii-xiv:

<sup>12</sup> Էպլիդաթեան, 1998, էջ 174:

<sup>13</sup> Էպլիդաթեան, 1998, էջ 294:

առաջնահերթություններու պարանաձգությունը պատճառ դարձեր էր որ պետությունը չկարենայ իր իշխանությունը զօրացնել եւ սատարել քաղաքացիական հանրագումար ինքնութեան մը ճարտարակերտումին, որ պարունակի մէջ առնէր համայնքային հաւատարմութիւնները:

Ընդհակառակը, սակայն, հաւաքականութեան մը մէջ, ուր աղբիւրները նկատելիօրէն քիչ են եւ անոնց ձգտող խումբերը՝ շատ<sup>14</sup>, գաղափարախօսութեանց, կուսակցութեանց, տեղայնական մտայնութեան բազմակիւթիւնը ու աւանդական ընտանիքներու եւ շահերու բազմազանութիւնը կրնար ծայրայեղօրէն վտանգալից ըլլալ եւ անկանխատեսելի: Իրաւ ալ, 1970ականներու սկիզբի «*Լիբանանը խճողուած էր երկու միլիոն բնակչութեամբ, բոլորն ալ վայրագօրէն փարած իրենց հատուածական ազգային կամ համայնքային խումբին... Խճանկարին մէջ ոչ ոք յանձնառու էր Լիբանանի շահերուն. Ընդհակառակը, իւրաքանչիւր խումբ միայն իրեն վերաբերող շահերը կ'որոնէր... կրօնական եւ համայնքային հիւանդագին բաժանուածութեամբ*»<sup>15</sup>: Գերպետական մրցավազքին ու շրջանային լարուածութեան ենթահողին վրայ, նման մօտեցումներ քաղաքացիական պատերազմի թթիւմորը դարձան:

Լիբանահայ քաղաքական ըմբռնողութեան մէջ փոփոխութիւնը սկսաւ յառաջանալ միջ-վաթսունականներուն, երբ լիբանահայերը սկսան տեղայնացուած (տեղայնաբար) ապրիլ, եւ միջազգայնացուած (անդրասահմանային) մտածել՝ սփիւռքեան ցանցին միջոցով: Անոնք կը վարէին ու կ'ապրէին լիբանահայ հաւաքական կեանքը՝ Լիբանանի համայնաքապետութեան համակարգին մէջ, բայց միաժամանակ օրակարգի վրայ ունէին իրենց անդրլիբանանեան էթնօ-ազգային նպատակներն ու ծրագիրերը:

Հայօճախը նաեւ այս մտային-տնտեսական-քաղաքական մթնոլորտին մէջ դիմագրաւեց Լիբանանի քաղաքացիական պատերազմը:

Տեսականօրէն ասիկա երրորդ անգամն էր որ հայօճախը կը դիմագրաւէր նման փորձութիւն: Ֆրանսական մանտայի տարիներուն լիբանահայերը յաճախ ընտրութիւն պէտք էր կատարէին լիբանանցի ազգայնական ըմբոստներուն եւ ֆրանսական իշխանութեան միջեւ: Ի

<sup>14</sup> Hilal Khashan, “The Political Values of Lebanese Armenian College Students”, *Armenian Review*, Vol. 44, #4/176, Winter 1991, էջ 54:

<sup>15</sup> Sandra Mackey, *Lebanon: Death of a Nation*, New York, Chicago, Congdon & Weed, Inc, 1989, էջ 11:

տարբերություն լիբանահայ մեծամասնության, որ լուսանցքի վրայ դրաւ ինքզինք, լիբանահայ փոքրամասնություն մը հակառակ կողմերու մէջ դիրքաւորուեցաւ: Երկրորդ նման կացութիւնը 1958ին էր, երբ իւրաքանչիւր կողմ կողմնակալ եղաւ եւ կուսակցութիւնները իրարու դէմ կռուեցան: Երրորդ փորձութիւնը Լիբանանի ամէնէն աւերիչ իրադարձութիւնն էր:

Անկասկած, դրական չեզոքութիւնը դիւրին որոշում մը չէր: Հայ կուսակցութիւնները ռազմավարական տեղաշարժ մը պարտէին ընել իրենց նախապատերազմեան քաղաքական դաշինքներէն եւ յանձնառութիւններէն դէպի ներհայկական դաշինք մը: Ասիկա կը նշանակէր նաեւ հիմնական վերադասաւորում մը՝ երկարատեւ հայկական միջկուսակցական հակադրութենէն դէպի հայկական համագործակցութիւն: Ասիկա կը համապատասխանէր Յեղասպանութենէն ետք Սփիւռքի ֆիզիքական գոյատեւումին եւ հայապահպանումին հանդէպ կուսակցութեանց յանձնառութեան: Կուսակցութիւնները նաեւ ինքնութեան պահապանները եւ մշակութային ձուլման դիմադրողներն ու կազմակերպիչներն էին համահայկական այլ կառոյցներու, մանաւանդ եկեղեցիին կողքին<sup>16</sup>: Անդին, հայ կրօնական առաջնորդութիւնն ալ որոշ հեռաւորութիւն մը պէտք էր յառաջացնէր քրիստոնէական եւ համալիբանահայ շահերուն միջեւ:

Դրական չեզոքութիւնը՝ յանձնառութիւն էր խաղաղ քան թէ վայրագ քաղաքականութեան<sup>17</sup> եւ հարիւր առ հարիւր յաջողեցաւ<sup>18</sup> ու հայութեան պատճառեց նուազագոյն վնասները՝ շուրջ 1000 հայերու սպանութիւն կամ անհետացում, 2000 վիրաւոր 1975-76 պատերազմի տարիներուն, որ իսկեց կեանքը աւելի քան շուրջ 50,000 լիբանանցիներու եւ վիրաւորեց-անդամալուծեց շուրջ 60,000 ուրիշներ:

Հայ կրօնական, մշակութային եւ քաղաքական հաստատութիւններ շրջանցեցին պատերազմը, թէեւ ծանր վնասներու ենթարկուեցան, երբեմն՝ դիտմամբ<sup>19</sup>: Միւս կողմէն, սակայն, հայութիւնը ծանրագոյնս

---

<sup>16</sup> Jivan Tabibian, “The Risk of Democratization: Reforming Diaspora Institutions will Require Freeing them from each other’s Clutches, and Insuring their Autonomy”, *AIM*, August-September 1999, էջ 29:

<sup>17</sup> Մելքոն Էպլիդաթեան, *Գաղթակայանէն Խորհրդարան*, Հտր. 2, Հալէպ, Կիլիկիա Հրատ., 2005, էջ 32:

<sup>18</sup> Vicken Berberian, “The War Inside the New Lebanon”, *AIM*, June 1993, էջ 18:

<sup>19</sup> Էպլիդաթեան, 2005, էջ 23. նաեւ՝ Տեմիրճեան, 1980, էջ 213. նաեւ՝ Ջաքար Մկրեան, *Վկայութիւն Եւ Պատգամ*, Պէյրութ, Համազգային Վահէ Սէթեան Տպարան, 2006, էջ 586. նաեւ՝ Միլվա Աւագեան, «Արարատ Եկաւ, Յաղթեց, Հիացուց Եւ Իր Հետ Տարաւ

հարուածուեցաւ արտագաղթով: 1975-76ին շուրջ 15-20,000 հայեր հեռացան Լիբանանէն դէպի Ամերիկաները, Եւրոպա եւ Աւստրալիա<sup>20</sup>, իսկ ուրիշ 20,000 մըն ալ արտագաղթեց մինչեւ 1980<sup>21</sup>: 1983ին համայնքին թիւը ինկաւ շուրջ 175,000ի<sup>22</sup>: Գաղթը երկու ուղղութեամբ զարգացաւ.-

ա) Լիբանանի ծայրամասերէն եւ իսլամական Արեւմտեան Պէյրութէն դէպի քրիստոնէական Արեւելեան Պէյրութ, Պուրճ Համուտ եւ Լեռնալիբանանի քրիստոնէական շրջան.

բ) Լիբանանէն դէպի դուրս<sup>23</sup>:

Տակաւ, գաղթն ու տնտեսական մաշումը նուազեցուցին տնտեսական եւ մշակութային տարրերն ու տարածքը հայօճախին<sup>24</sup> եւ յառաջացուցին յետագայ համարկումի նոր գործօններ:

Ուստի, կրնանք ըսել, թէ հայ տեղական եւ միջազգային փորձառութիւնը, լիբանանեան միջհամայնքային բրտութեան աւանդը, յետ-1965ի ներհայկական մերձեցումը, հայ կրօնական եւ աշխարհիկ ղեկավարութեան միաձայնութիւնը օգնեցին որ կարելի ըլլայ հակակշռել ճնշումները եւ խուսափիլ Լիբանանի պատերազմի ճախճախուտէն, դրական չեզոքութիւն հոշակել, նուազեցնել հասանելի վնասները եւ ձուլել Լիբանանահայ Միացեալ Ճակատը: Չեզոքութեան հոշակումը նուազեցուց քաղաքացիական պատերազմէն հայօճախին գալիք վնասները: Հայօճախը, սակայն, չկրցաւ խուսափիլ արտագաղթէն որ ունեցաւ տագնապալի հետեւանքներ:

## **Բ) Դրական Չեզոքութեան Պահպանման Գինը Եւ Լիբանանահայ Միացեալ Ճակատը (ԼՄՃ)**

### **1. Պատերազմիկ Կողմերու Հակազդեցութիւնը**

Պատերազմի առաջի՛ն իսկ ամիսներէն ԼՄՃի եւ դրական չեզոքութեան քաղաքականութեան հոշակումը՝ ՀՅԴի, ՄԴՀԿի եւ ՌԱԿի ու Համայնավար Կուսակցութեան հայկական խմբակցութեան կողմէ,

---

Բոլորին Սէրը», *Արարատ Բացառիկ*, 1 Յունուար 1998. նաեւ՝ Յակոբ Բագրատունի, «Տողովուրդին չեւ Տողովուրդին Համար», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1991, էջ 27:

<sup>20</sup> Տեմիրճեան, 1980, էջ 210:

<sup>21</sup> Yves Ternon, *La Cause Annenienne*, Paris, Editions du Seuil, 1983, էջ 232:

<sup>22</sup> David McDowall, *Lebanon: A Conflict of Minorities*, Minority Rights Group Report, 1983, էջ 8:

<sup>23</sup> Berberian, "The War Inside", էջ 17-18:

<sup>24</sup> Anahit Ter Minasian, *Histoires Croisees. Diaspora. Armenie, Transcaucasie 1890-1990*, Editions Parentheses, Marseille, 1997, էջ 3:

լիբանանահայոց վրայ դրական ներգործություն ունեցաւ<sup>25</sup>: Պատերազմիկ կողմերուն հակազդեցութիւնը, սակայն, խառն էր:

ԼՍՃն ամուր համոզում յայտնեց Լիբանանի միասնականութեան եւ անոր ժողովուրդին ու պետութեան հանդէպ ու մերժեց միանալ ուժի միջոցին<sup>26</sup>: Խորքին մէջ, լիբանանայ կուսակցութիւնները միշտ ալ պաշտպանած էին Լիբանանի անկախութեան սկզբունքը, անոր հողային ամբողջականութիւնը եւ քաղաքական վարչակարգը: Անոնք համախոհ էին բարեկարգում պահանջողներուն, եւ չհակադրուեցան պետութեան վարչակարգի բարելաւման որեւէ տեսակի առաջարկի<sup>27</sup>:

Ձախակողմեանները եւ իսլամները զգուշաւորութեամբ դիմաւորեցին հայկական ուղեգիծը, եւ ուշադիր էին ԼՍՃի որեւէ 'շեղումի' նկատմամբ: Իրենց հասողութեան տակ էր հայկական երեք եկեղեցիներու (ներառեալ Հայ Առաքելական Առաջնորդարանի), հինգ դպրոցներու (չորսը՝ երկրորդական), չորս ակումբներու եւ շուրջ 35,000 հայերու բնակարաններու եւ կալուածներու ցանց մը՝ Արեւմտեան Պէրութի մէջ<sup>28</sup>:

Դրական չեզոքութեան այս ուղեգիծը, սակայն, ժխտական հակազդեցութիւն գտաւ քրիստոնէայ շրջանակներէ: Ատենին ՀՅԴ-ՔԿ ընտրական դաշինքը ամրապնդած էր ՀՅԴի իշխանութիւնը հայկական երեսփոխանական աթոռներուն վրայ եւ կարելի դարձուցած ՔԿի խմբավարումը Պէրութի եւ Լեռնալիբանանի քրիստոնէայ քուէներուն: Ըստ ՔԿին այդ դաշինքը չէր վերաճած պատերազմական դաշինքի: Դեռ աւելին, ԼՍՃի ուղեգիծը յարիր չէր Քրիստոնէայ ճակատի ծրագիրներուն, որ քրիստոնէական շահեր կը յառաջադրէր<sup>29</sup>:

---

<sup>25</sup> Էպլիդաթեան, 2005, էջ 47. նաեւ՝ Հայկ Նազգաշեան, «Ինչ Կրցանք Եւ Ինչ Չկրցանք Իրագործել», *Ձարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1986, էջ 3. նաեւ՝ Խմբագրական, «Վերապրումի Եւ Յառաջդիմութեան Տարի», *Ձարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1981, էջ 1:

<sup>26</sup> Էպլիդաթեան, 2005, էջ 46, 48-49. նաեւ՝ *Լիբանանահայութեան Ղեկավարի Տիպարներէն՝ Յարութիւն Կուժունի*, խմբ. Պէյօ Սիոնեան, Պէրութ, Տպ. Շիրակ, 2002, էջ 13:

<sup>27</sup> Hrach Bedoyan, "The Social, Political and Religious Structure of the Armenian Community in Lebanon", *The Armenian Review*, Vol. 32, June 1979, էջ 128:

<sup>28</sup> Ոչ աւելի քան 1 քառ. քլմ. տարածքի մէջ մէկտեղուած էին հայ կաթողիկէ Հոփիսիմեանց (միառժամանակ) եւ Հայ Աւետ. Գոլէճները, Ազգային Սուրէն Խանամիրեան եւ ՀԲԸՄ Յովակիմեան-Սանուկեան վարժարանները, Համազգային Նշան Փալանճեան Ճեմարանը (բոլորը երկրորդական վարժարաններ) ու ՀԲԸՄ Երուանդ Տեմիրճեան Վարժարանը, երեք ակումբներ, *Ազդակ* օրաթերթի տպարանն ու խմբագրատունը, երկու եկեղեցիներ եւ 1955ին հիմնուած Հայկազեան Գոլէճը:

<sup>29</sup> Էպլիդաթեան, 2005, էջ 29:

Քրիստոնեայ ճակատը կը հաւաստէր որ «*դաւադրութիւն մը կար քրիստոնեաները ոչնչացնելու եւ զանոնք մնայունօրէն փոխարինելու պաղեստինցիներով: Մահու կենաց այս պայքարին հայերը [կողմ քաշուեցան] օգտագործեցին կացութիւնը եւ հարստցան*»: Ուստի անոնք նկատուեցան «*օտարներ, որոնք երկրին մէջ իրաւունքներ պետք չէր ունենային, որովհետեւ չէզոք եւ անտարբեր էին երբ հայրենիքը յարձակումի կ'ենթարկուէր*»: Եղան նոյնիսկ յայտարարութիւններ, թէ. «*Հայերը իրենց հայկականութիւնը իրենց լիբանանցիութենէն գերիվեր կը նկատեն: Պատերազմի շրջանին անոնք չգործեցին իբրեւ հարազատ լիբանանցիներ. անոնք հիասթափեցուցին մեզ*»<sup>30</sup>: Նոյնպէս, դժուար էր հասկացողութեան գալ մարտնիթ զինեալներու երիտասարդ առաջնորդ Պեշիր Ճեմայէլի հետ. ան լիբանահայերուն հետ ուցեզ վարուիլ իբրեւ «*երկրորդ կարգի քաղաքացիներ*»<sup>31</sup>: Խորքին մէջ, այսպիսիք «քրիստոնեայ» կը համարէին Լիբանանը, գոր պետք էր պաշտպանել իսլամներուն եւ պաղեստինցիներուն դէմ, ու չէին նկատեր Լիբանանը երկիր մը, որ պետք ունէր իշխանութեան բաժնեկցութեան նոր Ազգային Ուխտի մը:

Դրական Չեզոքութիւն չէր նշանակեր, սակայն, ձեռնծալ մնալ: Ատենի երեսփոխան Մելքոն Էպլիդաթեանի հաստատումները դիպուկ էին. «*երբ տարբեր ինքնութիւններ ունեցող բազմաթիւ հաւաքականութիւններ, էթնիկ խմբաւորումներ, կրօնական համայնքներ եւ ազգութիւններ մէկ պետութեան սահմաններուն մէջ կ'ապրին, իւրաքանչիւրը ի ինքնութիւնը կորսնցնելու մտահոգութիւնը կ'ապրի, իւրաքանչիւրը յարատեւ պայքար կը մղէ, որպէսզի ի ի շահերը պաշտպանէ, երբեմն ի հեճուկս կեդրոնական իշխանութեան, այսինքն ի վնաս բոլորին ընդհանրական շահերուն*»<sup>32</sup>: Իրաւ ալ, երբ պետութիւնը տակաւ կը տարանջատուէր, երբ կանգ առաւ հանրային սպասարկութիւններուն կանոնաւոր գործունէութիւնը, մէկ խօսքով՝ երբ չքացաւ օրէնքի ու պետութեան ապահովութիւնը, ամէն համայնք, իւրաքանչիւր շրջան հարկադրուեցաւ փոխարինել աներեւութացած կառավարութիւնը, կազմակերպելով տեղական հանրօգուտ սպասարկութիւններ<sup>33</sup>: Հետեւաբար, փոխադարձ անվստահութեան եւ խորունկ

<sup>30</sup> Նոյն, էջ 31:

<sup>31</sup> Նոյն, 37-39:

<sup>32</sup> Նոյն, էջ 70-71:

<sup>33</sup> Նոյն, էջ 5:

բաժանուածութիւններու<sup>34</sup> պահերուն, համայնքներ, որոնք կը վերահսկէին բնակութեան վայրերու եւ կից տարածքներու, պատնիշեցին մուտքերն ու ելքերը այդ տարածքներուն եւ լծուեցան շրջանը ինքնուրոյն վարելու աշխատանքին: Այսպիսի պահպանողական, գերզգուշ հոգեվիճակը եւ համայնքային մտայնութիւնը բնականօրէն անհատը պիտի վերադարձնէր իր ընդարձակ ընտանիքին՝ համայնքին: Անապահով լիբանանցին ետդարձ կատարեց դէպի նախնական համայնքային յարաբերութիւնները ամրապնդելով համայնքայնութիւնը: Իրաւ ալ, պահը ներլիբանանեան մասնատումի ժամանակն էր՝ քան թէ համարկումի կամ միջհամայնքային սերտաճումի:

Լիբանահայերը եւս ձեռնարկեցին ինքնակառավարման: ԼՃՄն քայլեր առաւ վարելու կենցաղային եւ այլ հարցերը անոնց, որոնք կը գտնուէին հայկական բնակութեան միջնաբերդերուն մէջ: Զինեալ խումբեր կազմուեցան պաշտպանելու համար բնակչութեան ապահովութիւնը եւ հասնելու անոնց առօրեայ կարիքներուն: Տեղական ցանցեր, դարմանման կեդրոններ հաստատուեցան եւ յաւելեալ քայլեր առնուեցան գալիք մարտահրաւերները դիմագրաւելու<sup>35</sup>: Լիբանահայ ղեկավարութիւնը աչալուրջ հետեւեցաւ զարգացումներուն, հաւաքագրեց եւ զօրաշարժեց կուսակցական եւ անկուսակցական ատակ հայեր, որոնց պակասը արդէն չկար:

Հայ կուսակցութիւնները ակնկալէր էին գալիք պատերազմը. այն օրէն երբ պետութիւնը սկսաւ տկարանալ, մանաւանդ երբ Լիբանանի կացութիւնը ապրեցաւ մտահոգիչ զարգացումներ, ինքնապաշտպանութիւնը դարձաւ անմիջական պահանջ<sup>36</sup>: Ասոր ընդգրկուեցան թէ՛ կուսակցականներ եւ թէ՛ ատակ ոչ-կուսակցականներ:

Հետեւաբար, երբ դէպքերը սկսան զարգանալ, հայկական թաղամասերուն մէջ եւ շուրջ, մօտ 2000 զինեալ հայեր դիրքաւորուած էին տուներու մէջ: 1975ի աւարտին, հայ բնակութեան միջնաբերդ Պուրճ Համուտը, որ կը հաշուէր շուրջ 2,5 քառ. քլմ., չէզոք գօտիի մը վերածուեցաւ եւ անոր ապահովութիւնը ստանձնեցին հայ զինեալները ԼՃՄի, բայց մանաւանդ ՀՅԴի տնօրինութեամբ: Շրջանը

---

<sup>34</sup> Theodor Hanf, “The Skeptical Nation: Opinions and Attitudes Twelve Years after the End of the War”, in Theodor Hanf and Nawaf Salam (eds.), *Lebanon in Limbo: Postwar Society and State in an Uncertain Regional Environment*, Baden-Baden, Nomos Verlagsgesellschaft, 2003, էջ 65:

<sup>35</sup> Բալիդաթեան, 2005, էջ 6, 32, 36:

<sup>36</sup> Նոյն, էջ 33:

կը վերահսկեր երկու կամուրջներ, որոնք քրիստոնեայ Արեւելեան Պէրուօրը կը կապէին Լեոնալիբանանի քրիստոնեայ միջնաբերդին, որով ան կ'ունենար ռազմավարական նշանակութիւն<sup>37</sup>: Պուրճ Համուտի հանդիպակաց՝ Նոր Հաճընի եւ Խալիլ Պետելիի հայաբնակ թաղամասերը եւս (սակայն նուազ յաջողակութեամբ) վերահսկուեցան ՄԴՀԿ-ՌԱԿ մարտիկներու կողմէ<sup>38</sup>: Այնճարի մէջ ալ նման քայլեր առնուեցան, ուր շուրջ 400 երիտասարդներ զենքի կանչուեցան<sup>39</sup>: Արեւմտեան Պէրուօրի հայաբնակ շրջաններուն մէջ նման ծրագիրէ մը հրաժարուեցաւ, թէեւ զինեալ ներկայութիւն կար Առաջնորդարանին, դպրոցներուն եւ սկումբներուն մէջ<sup>40</sup>:

Հայ ղեկավարութեան եւ տեղական կրօնական ու քաղաքական ղեկավարութեան եւ սուրիացի պաշտօնատարներու հետ հաղորդակցութեան գիծեր յառաջացան եւ պահպանուեցան: Կուսակցութիւնները պահպանեցին իրենց նախապատերազմեան դաշինքային կապերը՝ ԼՄՃի ծիրին համաչափ<sup>41</sup>: Միջկուսակցական համագործակցութիւնն ու համադրութիւնը հասան կարելի առաւելագոյնին, փոխադարձ վստահութեան մթնոլորտի մէջ: Լիբանանահայ կեցուածքը լուսաբանող յօդուածներ հրատարակուեցան տեղական եւ միջազգային մամուլին մէջ: Մարդ շրջահայեաց պէտք էր ըլլար երբ կ'առնչուէր շուրջ 40 խմբաւորումներու, որոնք իրարու դէմ կը կռուէին<sup>42</sup> եւ պատրուակ կը փնտռէին ուրիշներ խառնելու պատերազմին:

Լիբանանահայ յարանուանական եկեղեցիները աջակցեցան եւ թիկունք կանգնեցան ԼՄՃին: Երբեմն անջատաբար, յաճախ ալ միասին անոնք առաւելագոյնս լծարկեցին իրենց տեղական եւ միջազգային կապերը՝ ռազմավարական խորք տալու հայկական ուղեգիծին եւ վահանելու զայն կրօնական պատեանով: Աւելին, անոնք, ըստ կարելոյն, զօրակոչեցին միջազգային մարդասիրական օժանդակութիւնը եւ հայօճախին բաժին հանեցին Լիբանանին ուղղուած միջազգային օգնութենէն: Դրական չեզոքութիւնը աներեր

---

<sup>37</sup> Նոյն, էջ 29:

<sup>38</sup> Այստեղ վիճակը Պուրճ Համուտէն աւելի բարդ էր. իսլամ-քրիստոնեայ-հայ բաժանարար գիծերը տկար էին, տարածքը աշխարհագրական եւ ժողովրդագրական հայկական խորութիւն չունէր եւն.:

<sup>39</sup> Նոյն, էջ 35, 37. նաեւ՝ Մկրեան, էջ 555-557:

<sup>40</sup> Էպլիդաթեան, 2005, էջ 36:

<sup>41</sup> Նոյն, էջ 41:

<sup>42</sup> Նոյն, էջ 27, 47:

մնաց իր քաղաքական-աշխարհիկ եւ հոգեւոր-կրօնական առողջ  
գոյումին շնորհիւ:

## 2. *ԼՍՃի Քննութեան Փորձերը*

Պատերազմիկ բոլոր կողմերը ձեռնոց նետեցին ԼՍՃին: Հայ  
զինեալները, մանաւանդ անոնք որոնք կը պահակէին մայրաքաղաքին  
հիւսիսային դարպասի կամուրջներուն կից հայկական թաղերուն,  
կարճատեւ կռիւներու դրդուեցան: Փորձեր եղան հայերը  
կողմնակցութեան մղելու: Հայկական բնակավայրերը ոմբակոծուեցան  
զանազան առիթներով եւ իսլամ-քրիստոնէայ հակադիր կրակոցներու  
միջեւ մնացին, մանաւանդ երբ քրիստոնէայ զինեալներ ջանացին  
գրաւել հայկական բնակավայրերու դրացնութեամբ գտնուող Նապաս  
եւ Մաւլախ-Քարանթինա-Չարչապուք շրջանի իսլամ բնակավայրերը:  
Իսլամներու՝ շրջանէն հեռացումով, խաղաղութիւնը  
վերահաստատուեցաւ, բայց՝ կարճատեւ: Տեղահանուած  
քրիստոնէաներ բնակեցուեցան Նապասի իսլամ  
տեղահանուածներուն տեղ<sup>43</sup>: Ասով հայկական թաղամասերը  
սեղմուեցան երկուստեք քրիստոնէայ զինեալներու կողմէ, եւ  
խեղդուեցան ծովեզերքին ու քրիստոնէաբնակ թաղամասերուն միջեւ:  
Հայերը նեղը դրուեցան, նոյնիսկ պարտադրուեցան  
պահապանութեան զումարներ վճարել<sup>44</sup> քրիստոնէայ զինեալներուն:  
Վերջնագիրեր արձակուեցան՝ ստիպելով վաճառաշահ Պուրճ  
Համուտի ժամանակաւոր փակումը: Հայոց Յեղասպանութեան  
Պիքֆայայի յուշարձանը՝ «Երախտիքի արտայայտութիւն մը  
Լիբանանին, որ պատասպարեց մեզ 1915ի թրքական ջարդերէն ետք»,  
պայթեցուցաւ Հոկտեմբեր 1978ին իբրեւ սրբապղծում: Աւելի առաջ,  
Մեպտեմբեր 1978ին անյաջող փորձ կատարուեցաւ սուրիական  
բանակին ու քրիստոնէայ ուժերուն միջեւ ռազմադաշտը տարածելու  
հայկական թաղամասերը: Սուրիական զօրքերու քաշուելէն ետք,  
հայկական եւ քրիստոնէայ ուժերուն միջեւ կռիւներ վերսկսան: 1978-  
79ին քրիստոնէայ ուժերը փորձեցին հայերը զէնքի ուժով իրենց  
ենթարկել<sup>45</sup>: Տուրքեր պահանջող անզիջում զինեալներու եւ հայերու  
կորովի ինքնապաշտպանութեան դիմաց<sup>46</sup>, երկու կողմերուն

<sup>43</sup> Մաւլախ-Քարանթինա-Չարչապուք տարածքը հիմնայատակ քանդուեցաւ:

<sup>44</sup> Gordon, էջ 112. նաեւ՝ Ternon, էջ 231:

<sup>45</sup> Jonathan Randall, *Going all the Way: Christian Warlords, Israeli Adventurers and the War in Lebanon*, New York, The Viking Press, 1983, էջ 31:

<sup>46</sup> Randal, էջ 134:

չկամութեամբ, երեւութապէս կողմերուն պատիրը փրկող փոխզիջում մը հաստատուեցաւ Սեպտեմբեր 1979ին<sup>47</sup>: Այս բախումները խլեցին շուրջ 31 զոհ, 49 վիրաւոր, վեց տասնեակ առեւանգեալ եւ շուրջ քսանեակ մը հայ վաճառատուներ ականահարուեցան<sup>48</sup>: Մինչ այդ, միջհամայնքային կռիւներու կարճատեւ դադարը չկրցաւ արգիլել երկրին քառսային անկումը: Պատերազմական դադարները միայն կրցան առիթ տալ բնակիչներուն՝ լքելու բնակավայրերը եւ յարաբերաբար աւելի ապահով վայրեր տեղափոխուելու<sup>49</sup>:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի յաջորդ հանգրուանը յատկանշուեցաւ ներհամայնքային յօշոտիչ բախումներով: 1984-87 ներխուժման պայքարին յաջորդեց ներքրիստոնէական իշխանութեան պայքարը: Ներխուժման պայքարը մեծ վնասներ չպատճառեց հայօճախին: Նոյնը չենք կրնար ըսել սակայն ներքրիստոնէական կռիւներու հետեւանքներուն մասին:

Արդարեւ, 1988 եւ 1989 Սեպտեմբերներուն միջեւ, քրիստոնէական շրջանին մէջ տագնապը խորացաւ: Ներքրիստոնէական պայքարը խլեց հարիւրաւոր զինեալներու կեանքը եւ աւերներ գործեց հայաբնակ թաղամասերու եւ հայկական վաճառատուներու: Հայերը զգացին որ քանդումով եւ կեանքի կորուստով կը վճարեն զինը 'դատի' մը գոր չէին որդեգրած: Խեղիչ մթնոլորտը<sup>50</sup> յուսահատութիւն եւ դրամական քանդում բերաւ<sup>51</sup>: Հայօճախը աւելի քան յոգնած էր: Հազարաւորներ լքեցին երկիրը՝ բարելաւումի բոլոր յոյսերը կորսնցնելով: Տագնապը շա՛տ երկարած էր: Դժուար էր սպասել աւելի քան 15 տարի, մինչ տակաւին լոյս չէր երեւեր երկար փապուղիին մէջ:

Անհատ հայեր ալ ձեռնոց նետեցին ԼՍՃին: Միջհայկական սպանութիւններ ցնցեցին հայկական համախոհութիւնը: Գլխաւոր ինդիքը յառաջացաւ ՀՅԴ-ԱՍՍԼԱ կարճատեւ, բայց արինալի եղբայրասպանութենէն եւ առեւանգումներէն:

Լիբանանեան այս կացութիւնը առիթ յառաջացուց որ հայ կուսակցութիւնները վերահաստատեն իրենց համատարած վերահսկողութիւնը հայօճախին վրայ: Պատերազմի պայմանները միասնականութիւն քան թէ բազմակարծութիւն կը պարտադրէին: Տակաւ, համայնքային կեանքի բոլոր դրսեւորումները կախեալ

---

<sup>47</sup> Բայլիդաթեան, 2005, էջ 40:

<sup>48</sup> Ternon, էջ 231-2:

<sup>49</sup> *Annual Report*, Jinishian Memorial Program, 1981, էջ 1:

<sup>50</sup> Բայլիդաթեան, 2005, էջ 61:

<sup>51</sup> Minas Kojanian, "Caught in Crossfire: Yet Struggling to Stay", *AIM*, September 1990, էջ 17:

դարձան կուսակցություններին. ժամանակաշրջանը կարելի է բնութագրել իբրև քաղաքական ամբողջատիրություն: Միակ գերիշխող հաստատություն մը՝ հայ քաղաքական կուսակցությունները իւրացուցին օրինականացումն ու իշխանատուչությունը հայօճախին բոլոր երեւոյթներուն:

Այս վիճակը որոշապէս պիտի տագնապալի հետեւանքներ ունենար յետպատերազմեան հայօճախին հաստատութեանկան կեանքի զարգացման եւ հոլովոյթին վրայ: Հայապահպանումը վերատարազուեցաւ 'առաջնորդներու' եւ գործադրողներու երեւոյթի, եւ կուսակցություններուն ու եկեղեցիին վերապահուեցաւ ծրագրումն ու օրինականացումը հայկական հանրային որեւէ քայլի: Այլեւս դժուար դարձաւ անհատական, նոյնիսկ ազգային բնոյթի արարքի մը օրինականացումը՝ առանց կուսակցութեանց կամ եկեղեցիին հովանաւորութեան:

Պատերազմի աւարտին, հայօճախը գերսպառած էր իր հնարաւորությունները՝ իր դիրքը պահպանելու եւ գոյատեւելու համար: Գէթ միառժամանակ, դժուար թէ ան կարենար վերատիրանալ Սփիւռքի իր նախկին դերին ու դիրքին<sup>52</sup>:

Քաղաքական պաստառին վրայ, դրական չեզոքութիւնը ժխտական հետեւանքներ ունեցաւ հայօճախին՝ պետական պանրաշերտին բաժնեկցութեան առումով: Ջինեալ հրամանատար մը հաւաստեց. «Իւրաքանչիւրը պիտի ստանայ իր նպաստածին համեմատ»<sup>53</sup>: Հայերը չէին նպաստած - զինուորապէս - պատերազմական ճիգին: Դրական չեզոքութիւնը յաճախ սխալ մեկնաբանուեցաւ իբրև ինքնապարտադրուած հեռացում կամ լուսանքայնացում: Նախագահ Ֆրանժիէ 1976ին, մինչ կը տքներ տագնապին լուծման հասարակ յայտարար մը յառաջացնել չներգրաւեց հայերը: Նոյնպէս՝ նախագահ Ճեմալէլ չառնչեց հայերը Մարտ 1984ի Ժընեւի Խաղաղութեան Բանակցություններուն: Մինչ Լոզանի Համագումարին, երեսփոխան Սուրէն Խանամիրեան ուշացումով հրաւիրուեցաւ:

Կարելի է նկատել հայկական ուղեգիծին ներհակութիւնը: Հայերը թիկունք կանգնեցան եւ աջակցեցան պետութեան մը, ուր սակայն համայնքներուն կը պատկանէր վճռորոշ խօսքը: Վերջիվերջոյ համայնքներն էին որ տեղ պիտի յատկացնէին հայկական շահերուն եւ

<sup>52</sup> Խմբագրական, «Մաքառումի Եւ Յոյսի Տարի», *Ձարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1988, էջ 1. նաեւ՝ Խմբագրական, «Տագնապին Դիմագրաւումը», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1988, էջ 2:

<sup>53</sup> Էպլիդաթեան, 2005, էջ 37-39:

իրաունքներուն: Բայց հայերը չէին կռուած պետութեան մէջ իրենց բաժինին համար ոչ ալ կթիով զայն պարտադրած էին կռուող կողմերուն:

Ամփոփելով, մայրաքաղաքին երկու ասփերուն եւ որոշ չափով ալ ծայրամասերուն մէջ բնակող հայութիւնը վարել եւ պահպանելը բարդ եւ խրթին մարտահրաւեր մըն էր: Իրաւ ալ, 1975-90ին հայօճախը գերլարուած էր պատասխանատուութիւններու շատութեամբ, որ իր հնարաւորութիւններէն եւ կարողականութենէն շատ աւելին կը պահանջէր:

Քաղաքացիական պատերազմը կուսակցութիւններուն պարտադրեց ինքնակառավարման դերը՝ դրական չէզոքութեան ծիրին մէջ: Ղեկավարութիւնը պարտէր հոգալ գրեթէ բոլոր կարիքները վտանգաւոր գօտիի մէջ ապրող հաւաքականութեան մը, եւ միաժամանակ պարտէր բարեացակամ յարաբերութիւններ պահպանել վտանգաւոր եւ գրգռող միջավայրի մը հետ: Ձեռնոց նետելու արարքները ծառայեցին հայօճախին ներքին սերտացումին եւ կուսակցութեանց առաւել ամրացումին ու պայմանական ամբողջատիրութեան: Պատերազմական պայմաններուն բերմամբ, կուսակցութիւնները կրցան զօրաշարժել հայօճախին կարողականութիւնը եւ ծաւալել իրենց վերահսկողութիւնը հայօճախին բոլոր ոլորտներուն վրայ:

Դրական չէզոքութեամբ հայօճախը դուրս մնաց լիբանանեան ճախճախոտէն յարաբերաբար նուազագոյն վնասներով: Այդուհանդերձ կարելի չէր քաղաքացիական պատերազմին հետեւանքով յառաջացած արտագաղթը սանձել:

#### **Գ) Քաղաքացիական Հասարակութեան Դրսւերումներու Վերաձեւումը**

Մինչեւ միջ-1980ականները մարդուժի պակասը այնքան ալ զգալի չէր հայօճախին ընկերա-մշակութային հաւաքական դրսւերումներուն մէջ: Շատ կամաւորներ կային որոնք անգործ էին, կամ շատ ազատ ժամանակ ուէնին՝ ապահովական կացութեան պատճառով կրճատուած իրենց աշխատաժամերուն բերմամբ: Միւս կողմէն, անոնք որոնք հեռացած էին հայկական միջավայրէն՝ նաեւ ապահովական նկատառումներով վերադարձան հայկական միջավայր: Պատերազմն ու բրտութեան ալիքը կրճատեցին քաղաքացիական հասարակութեան դրսւերումները՝ կենսականօրէն անհրաժեշտ, գրեթէ միայն մահու կենաց կարիքներու

մատակարարումով: Պատերազմի ընդմիջումները ստիպեցին հայօճախին ղեկավարութիւնը՝ վերածրագրելու եւ վերաձեւելու հանրային ծառայութեան եւ քաղաքացիական հասարակութեան բազում դրսեւորումներ: Այս միջոցառումները կը նպատակադրէին հայօճախին աղբիւրներու եւ կարողականութեան առաւելագոյն օգտագործումը, դիմագրաւելու համար պատերազմին մարտահրաւերները: Այդուհանդերձ, վերաձեւումները բաւարար չեղան համապարփակ, հիմնական վերակառուցումի ենթարկելու հանրային ցանցը եւ ղեկավարութիւնը: Միւս կողմէն, պատերազմական ընդմիջումները դուռ չբացին կառուցային ամբողջական փլուզումի:

Այն հայերը, որոնք չկրցան յաղթահարել արհաւիրքն ու պատերազմի շարունակուող մարտահրաւերները, գաղթեցին երկրէն եւ մասնակցեցան իրենց նորահաստատ երկիրներու հայօճախներու ազգային վերելքին: Մնացողներուն մեծամասնութիւնը որդեգրեց ազգային արմատականութեան ուղին, մինչ աւելի փոքր խումբ մը միայն իր անձնական գործերով զբաղեցաւ<sup>54</sup>:

Առերեւոյթ վիճակը այնքան ալ փլուզում չէր ցուցներ: Նոյնիսկ հայկական տպարանները լաւ գործ կ'ընէին. 1975-90 տասնամեակին շուրջ 700 հայերէն գիրքեր լոյս ընծայուեցան Պէյրութի մէջ<sup>55</sup>: Սակայն դրամական տագնապը սկսաւ զգալի դառնալ եւ ճնշել կենսապրոստի պայմաններուն վրայ: Առողջապահական եւ ընկերային ոլորտներուն կողքին, նկատուեցաւ որ դպրոցական ցանցը պիտի գլխաւոր գոհը դառնայ պատերազմին: Իրաւ ալ, լիբանահայ դպրոցները դիմագրաւեցին տնտեսական լուրջ տագնապներ<sup>56</sup>: Ծայրայեղ առաջարկներ եղան՝ չեղեալ համարելու ուսուցիչներու 1976-77 կրթաշրջանի համաձայնագրերը, կամ՝ աւելիով կրթանպաստ հայթայթելու կարօտեալ աշակերտութեան: 1984ին լիբանահայ ազգային դպրոցներուն մէկ երրորդը չստացաւ պետական 20%ի տարեկան նպաստը (շուրջ 100 տոլար առ աշակերտ)<sup>57</sup>: Միւս կողմէն, 22 Մայիս 1977ին աթոռակից կաթողիկոս մը ընտրուեցաւ աշակցելու

<sup>54</sup> Գարեգին Բ. Կաթողիկոս Սարգիսեան, «Տարի Մը Յատկանշուած Հակաթուրք Ահաբեկչութեամբ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1982, էջ 7-9:

<sup>55</sup> Ժիրայր Դանիէլեան, *Լիբանանահայ Տպագրութիւնը Պատերազմի Տարիներուն. 1975-1984*, Պէյրութ, Տպ. Ալթա'րէս, 1986, էջ 122:

<sup>56</sup> Մկրեան, էջ 554, 558, 565:

<sup>57</sup> Ազգային Իշխանութեանց Ուսումնական Խորհուրդ, «Ազգային Վարժարաններ, Թիւեր, Ծրագիրներ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1981, էջ 9:

համար Կիլիկիոյ կաթողիկոսին<sup>58</sup> կրօնավարչական գործունեութեան: Կաթողիկոսութեան ժողովրդագրական միջնաբերդ Լիբանանը վտանգուած էր, եւ ատակ եպիսկոպոսի մը՝ Ս. Նահանգներէն Առաջնորդի մը ընտրութիւնը կրնար աւելցնել կշիռը եւ յաւելեալ ուշադրութեան արժանանալ բարեկեցիկ ամերիկահայութենէն:

Բացառիկ երեւոյթ էր քաղաքացիական պատերազմի առաջին հանգրուանի ասարտին (1975-76) հայօճախին դրսեւորած վերականգնումի անյողողող կամքը: Հայօճախին յաջորդող հնգամեակը ականատես եղաւ կազմակերպական ուշագրաւ երեւոյթներու. քանդուած-վնասուած հայ բնակարաններու վերանորոգման հիմնադրամ հաստատուեցաւ որ միառժամանակ յաջողապէս գործեց, կեանքի կոչուեցան լիբանահայ հիմնարկներ՝ ոչ միայն սատարելու համար վերականգնումին, այլեւ տնտեսական փոխատուութիւններով աջակցելու հայ փոքր եւ միջին գործարարներու պիզնէսներուն վերաշխուժացումին, հիմնական վերանորոգումի ենթարկուեցաւ հայ ծերանոցը...:

...1985ին հայօճախը պատերազմական մկրտութիւնը ստացած էր: Ան՝ որ 1975ին փարոսն էր ամբողջ Սփիւռքին, եւ կը հպարտանար իր լայնածիր ազգային-կազմակերպական ցանցով, կրթա-մշակութային կենսունակութեամբ, պարտէր պայքարիլ իր կերտածը պահպանելու համար<sup>59</sup>: Հայօճախին ենթախումբերուն վերաձեւումներն ու գոյատեւման պայքարը գաղափարախօսական հռետորութեան կարիքն ունէին:

## **Դ) Հայոց Ցեղասպանութեան Ճանաչման Համար Բիրտ Պայքար**

Լիբանանի պատերազմի լուսանցքներուն վրայ խումբ մը երիտասարդ հայ ազգայնականներ պայքար մղեցին հայկական առաջնահերթութիւններու համար: Ըստ անոնց, եթէ Հայկական Հարցը չլուծուէր՝ հայերուն կը սպառնար ինքնութեան կորուստը եւ ձուլումը, որով հայութիւնը ենթարկուած պիտի ըլլար այլ տեսակի Ցեղասպանութեան մը: Ժամանակը կը սահէր եւ քանի աշխարհը քայլեր չառաւ Հայկական Հարցին առնչութեամբ, իրենք հարցը իրենց ձեռքն առնել սկսան բրտութեան ալիքով մը: Խաղաղ միջոցները

<sup>58</sup> Տեմիրճեան, 1980, էջ 204:

<sup>59</sup> Ն. Պերպլերեան, «Պատմէշի Վրայ», *Ազդակ Բացարկի*, 1 Յունուար 1985:

ապարդին եղեր էին, երբ անդին Պաղեստինեան Ազատագրութեան Կազմակերպութեան գործողութիւնները սկսեր էին արդիւնք տալ<sup>60</sup>:

Իրաւ ալ, Թուրքիոյ կամակոր ժխտումները դառնացուցած էին լիբանահայ երիտասարդներ, որոնք հասակ առեր էին 1965-1975ի ազգայնական տասնամեակին: Անոնք մեծցեր էին տնտեսապէս բարեկեցիկ հայօճախ ունեցող երկրի մը մէջ, ուր ազգայնականութիւնը կը ծաղկէր ու կ'աճէր շեշտակիօրէն: Այդ երիտասարդները որոշեցին դիմել քաղաքական բրտութեան<sup>61</sup> եւ հանրութեան ներկայացան իբրեւ Հայաստանի Ազատագրութեան Հայկական Գաղտնի Բանակ<sup>62</sup>, երբ երկու հրթիռ արձակեցին 29 Դեկտեմբեր 1975ին՝ Պէյրութի թրքական դեսպանատան վրայ, մինչ Լիբանանի պատերազմը ծայր առած էր արդէն: ԱՍՍԱՒԱն ոմբահարեց նաեւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Պէյրութի գրասենեակը, մեղադրելով վերջինս որ քաջալերեր էր լիբանահայերուն արտագաղթը՝ Ս. Նահանգներ, նուազեցնելով անոնց արեւմտահայ պապենական տունդարձի հնարաւորութիւնները<sup>63</sup>: Շատ կարճ ժամանակ ետք, Հայկական Յեղասպանութեան Արդարադատութեան Մարտիկները նման ընթացք մը որդեգրեցին:

Բրտութեան ալիքը շարունակուեցաւ աւելի քան տասնամեակ մը՝ ուշադրութիւն գրաւելու համար դէպքերու շուրջ գորս աշխարհը մոռցեր էր: Երբ այս խումբերը դադրեցուցին գործողութիւնները, շուրջ 300 սպանութիւն, պատանդառութիւն, ոմբահարումներ եւ այլ բիրտ արարքներ կատարուեր էին եւ շուրջ երկուտասնեակ թուրք դիւանազէտներ սպանուեր<sup>64</sup> էին:

Բրտութեան այս արարքները հակասական տրամադրութիւններ յառաջացուցին լիբանահայերուն մէջ, որոնք կ'ապրէին պատերազմի մթնոլորտի մէջ: Երիտասարդ սերունդէն շատերու համար բնական թուեցան այս բռնարարքները, եւ ի տարբերութիւն երեց սերունդին, հայրենասիրական նորատեսակ ալիք մը յառաջացաւ երիտասարդութեան մէջ: Մասնաւորաբար Լիզպոնի գործողութիւնը (1983 Յուլիս, որ աւարտեցաւ 5 հայդուկներու նահատակութեամբ)

---

<sup>60</sup> Յակոբ Բագրատունի, «Ժամանակակից Հայկական Ահաբեկչութիւնը», *Ազդակ Բացարկ*, 1 Յունուար 1981, էջ 48:

<sup>61</sup> Mathew Karanian, “Century of Genocide”, *AIM*, January/February 2001, էջ 31:

<sup>62</sup> Աւելի ծանօթ իրենց անունին անգլերէն յապաւումով՝ ԱՍՍԱՒԱ:

<sup>63</sup> Gordon, էջ 112:

<sup>64</sup> Karanian, էջ 31. նաեւ՝ Salpi Haroutinian-Ghazarian, “Comrades in Arms” *AIM*, May-June 1997, էջ 19:

շատ մօտ էր երիտասարդ սրտերուն: Հինգն ալ լիբանահայեր էին: Անոնց պատրաստակամութիւնը՝ իրենց կեանքը նուիրելու «Դատ»ին, բարձրացուց լիբանահայութեան բարոյական զգացումները<sup>65</sup> եւ անոնց հոգեբանութեան մէջ արմատաւորեց պատրաստակամութիւնը՝ իրենց գերագոյնը զոհաբերելու 'Հայկական Դատ'ին համար: Խորքին մէջ, զոհաբերութիւնը կ'ընդգրկէր հայօճախին ապահովութիւնը՝ ամէն իմաստով:

Հայկական Հարցին նորովի զարթումն ու յանուն անոր յառաջացած պայքարը նման տարագումով, վերարծարձեց գաղափարախօսական էութիւնը Սփիւռքի հայապահպանումին: Հռետորականութիւնը կը միտէր հայերը մղել մտածելու աւելի ազգային, քան թէ՛ անձնական, հատուածական կամ տեղայնական առաջնահերթութիւններու մասին: Արարքները կոչ էին որ հայերը դարձեալ Հայկական Հարցը դնեն իրենց առաջնահերթութիւններու կատարին:

Նման ազգայնական յառաջադրանք մը պիտի նուազեցնէր կապուածութիւնը լիբանանեան տարածքին եւ նոր ուղիներ յառաջացնէր՝ հայերը համահայկական տարածքին կապող: Խորքին մէջ ասիկա բնական եւ սովորական հնչեց Լիբանանի մէջ, ուր բոլոր համայնքները իրենց համայնքային յառաջադրանքները կը գերադասէին. անոնց պատերազմի ճիգը կը միտէր իրենց համայնքային շահերը պաշտպանելու եւ յառաջ մղելու:

## **Ե) Ազգայնական Սեղմիրանը**

### *1. Գաղափարախօսական Ամրացումներ Եւ Զօրաշարժ*

Ընկերահամայնքային ճակատին վրայ, ատենի հռետորաբանութիւնն ու գոյատեւող մթնոլորտը աճեցուցին մտայնութիւն մը, որով անհատը նկատուեցաւ աւելի հաւաքականութեան մասնիկ, քան թէ՛ անկախ միաւոր մը պետութեան համակարգին մէջ, որ տեսողութենէ սկսեք էր տարանջատուելով սպրդիլ:

Պատերազմի պայմանները համայնքային սեղմիրան մը պարտադրեցին անհատին: Պատերազմը 'յանձնարարեց' համայնքամէտ, այլամերժ ազգայնական համապատկեր մը: Անհատին տեսադաշտը դարձան համահայկական ազգային կեանքը վարող մարմինները, այսինքն՝ կուսակցութիւնները, եկեղեցին, մշակութային,

<sup>65</sup> Ռ. Կիրիւնեան, «Միջազգային Մամուլի Տարին Հայկական Ահաբեկչութեան Մասին», *Ազդակ Բացարիկ*, 1 Յունուար 1984, էջ 29-30:

մարզական, բարեսիրական, հայրենակցական ենթախումբերը<sup>66</sup>: Խտացեալ դաստիարակութիւնը՝ հայկական դպրոցներուն մէջ թէ թերթերուն միջոցաւ, բնական եւ բերրի հող գտաւ: Հայկական սեղմիրանը ջրդեղուած էր Լիբանանի ընկերատնտեսական մթնոլորտով, որ որոշակիօրէն կ'առաջնորդէր ներխմբային սերտացումի ու զօրացման: Լիբանանի բոլոր համայնքները դիմագրաւեցին անապահովութեան եւ միջհամայնքային անվստահութեան սպառնալիքը, որ մղեց լիբանանցի համայնքները աւելի եւս ստանձնելու իրենց սեփական հարցերը:

Պատերազմի պայմանները բոլոր համայնքներուն պատեհութիւն տուին վերադաստիարակելու իրենց նորահաս սերունդները: Հայօճախին պարագային, վերադաստիարակումը շեշտաւորուեցաւ հայոց պատմական յիշողութեամբ: 1980ին կայացած հարցախոյզ մը կը պարզէր որ հայ ուսանողութիւնը միջին լիբանանցիէն աւելի բարձր ներհայկական սերտաճում ունի: Ասիկա հետեւանք էր ցեղասպանութեան գոյատեւող սպիին<sup>67</sup>: Լիբանահայ նախորդ սերունդը բաւարար չափով ստացած էր ազգային դաստիարակութիւն՝ ի տարբերութիւն 'հեռատեսիլի այս սերունդին'<sup>68</sup>, որ պետք ունէր գաղափարախօսական թրծումի, որպէսզի մնայ համայնքին սահմաններուն մէջ եւ պահպանէ ու պաշտպանէ համայնքային ինքնութիւնը<sup>69</sup>:

Այս դաստիարակութիւնը՝ ընտրովի սահմանափակումը, կանխատրամադրուած ու նախապատրաստուած մօտեցումը, եւ այլախոհութեան խլացումը մնայուն կերպով ամրապնդուեցան, նորոգուեցան եւ թարմացուեցան: Միջոցը՝ ընտրովի լրատուութիւն եւ տեղեկատուութիւնն էին, որոնք կը վերաբերէին տեղական, հայկական, շրջանային եւ միջազգային զարգացումներու: Այս հայեցակարգին մէջ Ցեղասպանութեան խնդրով քաղաքականացման եւ յեղափոխականացման հարցերու քննարկումները<sup>70</sup> զուգորդուեցան հակաթուրք բրտարարաքներուն եւ 1980ի թրքական պետական հարուածին հետ:

---

<sup>66</sup> Վազգէն Էթիսեզեան, «Ծանօթանանք Արտասահմանեան Մեր Կառոյցներուն» *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1983, էջ 21:

<sup>67</sup> Khashan, էջ 54:

<sup>68</sup> Շահանդուխտ, «Պուրճ Համուտէն Մինչեւ Երկիրն Հայոց», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1981, էջ 40:

<sup>69</sup> Խմբագրական, «Դէպի Նոր Հանգրուաններ», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1985, էջ 1:

<sup>70</sup> Ազգային Խորհուրդի, էջ 18:

Համայնքային դաստիարակութեան այս ընթացքով լիբանահայր վերակերտուեցաւ եւ վերասահմանուեցաւ իբրեւ ան որ իր կեանքը եւ արժեհամակարգը կը տեսնէ հայկական ազգային հաւաքականութեան մէջ եւ անոր ընդմէջէն: Ան կը պատկանէր ազգի մը եւ պարտականութիւնն ունէր ծառայելու անոր<sup>71</sup>: Իր ազգային պարտաւորութիւններն ու դերը ի սպաս դրուած էին պէյրութահայութեան՝ Սփիւռքի մտաւորական եւ հոգեւոր կեդրոնին<sup>72</sup>:

Տակաւ, Լիբանանի պատերազմը մշակեց նոր պատկերը սփիւռքահայուն՝ 'հարազատ' կերպարը ժամանակակից հայուն, որ ազգայնական էր, կը տարբերէր իր միջավայրի ուրիշէն եւ պատրաստ էր իր կեանքը գոհելու յանուն հայութեան «սուրբ» արժէքներուն<sup>73</sup>: Յիրաւի, հայօճախն ու Լիբանանի պատերազմական մեքենան վերածուեց էին այն աշխատանոցին եւ գործիքներուն, որոնք սփիւռքահայ ազգայնական եւ հայութեան արմատական պահանջքները պաշտպանող հայր արտադէցին:

## 2. Մեղմիրանին Բաղադրատարրերը

Յառաջացաւ հռետորաբանութիւն մը, որ կը հիմնուէր փառաւոր, հերոսական անցեալի յիշողութեան վերաթարմացման վրայ. շրջանառութեան դրուեցան հերոսական դէպքերը անցեալի, վերականգնեցան առասպելապատումները, ֆետայապատումները եւ հայոց պատմութեան ու մօտիկ անցեալի մշակութային մեծ իրագործումները: Այս բոլորը զետեղուեցան Յեղասպանութեան փորձառութեան արժեւորումին ենթախորքին վրայ: Ըստ գործող մտածելին, հայօճախը պէտք էր պահպանուէր ու գոյատեւէր՝ հակառակ կեանքի եւ ինչքի անապահովութեան, որովհետեւ հայօճախը առաւելագոյն պատեհութիւնն ունէր սփիւռքեան հայապահպանումին: Կ'ընդգծուէր որ տոկոսութիւնը (այնպէս ինչպէս պատահեց էր 1915ի Յեղասպանութեան օրերուն) ի վերջոյ պիտի արդիւնատրուէր<sup>74</sup> եւ կարելի պիտի դարձնէր հայօճախին վերատիրացումը իր բարձր դիրքին՝ Լիբանանի միւս համայնքներուն

<sup>71</sup> Մկրեան, 2006, էջ 544:

<sup>72</sup> Պերպերեան:

<sup>73</sup> Մկրեան, էջ 618:

<sup>74</sup> Մուշեղ Իշխան, «Յաղթանակը Տոկացողին է», *Ազգակ Բացառիկ*, 1 Յունուար 1987, էջ 15. նաեւ՝ Անհէրինակ, «Լիբանանի Ականուած Յոյսերու Տարին», *Ազգակ Բացառիկ*, 1 Յունուար 1986, էջ 36. նաեւ՝ Պարոյր Աղպաշեան, «Յանուն Լիբանանահայ Գաղութի Պահպանման Ու Գոյատեւման», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1986, էջ 2:

շարքին<sup>75</sup>: Ժողովրդային ազգայնական հռետորաբանութիւնը կը հաւաստէր որ համայնքը պէտք էր պինդ մնար եւ յառաջ շարժեր անպարտելի վճռականութեամբ<sup>76</sup>:

Այս հռետորաբանութիւնը լաւապէս կը յարմարի Փանոսեանի բանաձեւումին, թէ՛ «Սփիւռքները դատ մը ունին հետապնդելիք... Այս դատը զիրենք կ'առնչէ իրենց ազգին՝ հայրենիքին մէջ թէ այլուր, եւ համայնքը կը զօրաշարժուի այդ դատին շուրջ տարբեր տարողութեամբ, ընդհանրապէս կանոնակարգուած»<sup>77</sup>:

Դեռ աւելին, կ'առաջադրուէր անձնական զոհողութեան որդեգրումը՝ ոչ միայն ծառայած ըլլալու հայօճախին, այլեւ՝ Սփիւռքին ընդհանրապէս, քանի որ Լիբանանի հայօճախը կը շարունակէր յաւակնիլ Սփիւռքի դէկը իր ձեռքին ունենալ: Անիկա կը կազմէր ողնաշարը Սփիւռքին, որ այլապէս կրնար տապալիլ<sup>78</sup>: Ուստի անհրաժեշտ էր զոհողութիւն ընել՝ փրկելու համար Լիբանանը՝ հայոց երկրորդ հայրենիքը, յատուկ ողբերգութեան հետեւանքներէն<sup>79</sup>:

Խորքին մէջ, հին օրերուն, երբ անյոյս կը թուէին իրողութիւնները Սփիւռքի արեւմտեան համայնքներուն մէջ, ամէն մարդ դէպի Միջին Արեւելք կը նայէր՝ յոյսի համար: Հոն, հայերը կը խօսէին, կը կարդային եւ կը գրէին հայերէն: Հոն լեզուին եւ մշակոյթին ապագան երաշխաւորուած էր<sup>80</sup>: Իրաւ ալ, կ'ըսուէր ու կը հաւատային, թէ Լիբանան էր եւ կը մնայ անփոխարինելի մայրաքաղաքը Սփիւռքին, ուստի եւ միջնաբերդը Սփիւռքի հայապահպանումին, ու եթէ Սփիւռքի միջնաբերդը<sup>81</sup> իյնայ՝ հայկական սփիւռքը կը մեռնի<sup>82</sup>:

---

<sup>75</sup> Խմբագրական, «Փորձութեան Եւ Հաւատքի Վերահաստատման Տարին», *Ազդակ Բացարկի*, 1 Յունուար 1987, էջ 1-2:

<sup>76</sup> Բաբկէն Փափազեան, «Քալել Անընկճելի Կամքով», *Ազդակ Բացարկի*, 1 Յունուար 1983, էջ 5:

<sup>77</sup> Razmig Panossian, “Between Ambivalence and Intrusion: Politics and Identity in Armenia-Diaspora Relations”, *Diaspora*, Vol. 7, # 2, Fall 1998, էջ 151:

<sup>78</sup> Պարոյր Աղպաշեան, «Ամանորեան Հաշուեյարդար», *Զարթօնք Բացարկի*, 1 Յունուար 1982, էջ 2:

<sup>79</sup> Deukmejian, էջ 47:

<sup>80</sup> Hratch Tchilingirian, “Crisis Without Borders”, *AIM*, July 1999, էջ 37:

<sup>81</sup> Սօնա Զէյթլեան, «Միջնաբերդը Կանգուն Պահելու Համար», *Ազդակ Բացարկի*, 1 Յունուար 1980, էջ 84-5:

<sup>82</sup> Կարօ Փոլատեան, «Շահինք Այս Ճակատամարտն Ալ», *Ազդակ Բացարկի*, 1 Յունուար 1980:

Գործող հոետորաբանությունը կոչ էր կառչելու այս հողերուն<sup>83</sup>, որովհետեւ Միջին Արեւելքի ամբողջ շրջանը տագնապի մէջ էր, ներառեալ հայերն ու հայկականութիւնը, որ նման դժուարութիւններ կը դիմագրաւէր ամէնուրեք: Լիբանանի մէջ մարդ կրնար հայկական կեանք ապրիլ՝ վտանգաւոր պայմաններու մէջ, մինչ Արեւմուտքին մէջ մարդ կրնար աւելի ապահով կեանք ապրիլ՝ ինքնութեան կորուստի գնով:

Նման ազգայնական սեղմիրանի մը մշակումը կարելի դարձաւ զանազան գործոններու համատեղումով, այնպիսի ժամանակի մը մէջ երբ Լիբանանի պետութիւնը նուազագոյն դերակատարութիւն ունէր:

Քաղաքական եւ հոգեբանական մտածելը հայօճախին, որ հիմնականին մէջ պահպանողական էր եւ անցելապաշտ, դիրութեամբ պիտի որդեգրէր նման դեր մը, շնորհիւ դէպի պահպանողականութիւն իր «գրեթէ անզգայ միտումին»<sup>84</sup>: Դեռ աւելին, Լիբանանի համայնքային համակարգը թրծեց սերունդներ, որոնք ձեւաւորուած էին համայնքային մտայնութեամբ: Ասոնք հայօճախը նկատեցին իրենց ծաւալուն ընտանիքը, իսկ անոր շահերը՝ իրենց անձնական շահերուն համազօր: Եւ անշուշտ, քաղաքացիական պատերազմին մէջ անհատին «անխոցելիութեան» որոնումը մղեց զինք որ պաշտպանութիւն փնտռէ իւրայիններուն քով: Իրաւ ալ, նման մահացու ժամանակներուն, համայնքները անուշադիր պիտի ըլլային այլ համայնքներու զաւակներուն, եւ անհատը հաւանաբար ապահովութիւն պիտի գտներ ի՛ր համայնքին մէջ<sup>85</sup>:

### 3. *Երկակի Վերայայտնումը (Սովետական) Հայաստանին*

Պատերազմի դժուարութիւններուն դիմաց հայօճախը միախորտեցաւ իրագործումներովը Հայաստանի<sup>86</sup>՝ ա՛յն հողին, ուր հայութեան ներկան եւ ապագան կը կերտուէր՝ գաղափարախօսական հասկացութիւններէն եւ քաղաքական նախընտրութիւններէն անկախ<sup>87</sup>: Իրաւ ալ, (Սովետական) Հայաստանը միակ երաշխիքն էր

<sup>83</sup> Խմբագրական, «Անժամանցելի Պատգամը», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1983, էջ 1:

<sup>84</sup> Vahe Oshagan, “Literature of the Armenians in Lebanon”, *Ararat Quarterly*, Vol. XIX # 3, # 75, Summer 1978, էջ 38-40:

<sup>85</sup> Tabibian, էջ 29:

<sup>86</sup> Հայկ Նազգաշեան, «Պառակտումը Եւ Իր Հետեւանքները», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1983, էջ 4:

<sup>87</sup> Խմբագրական, «Վերապրումի Եւ Յառաջդիմութեան Տարի», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1981:

հայութեան մնայունութեան, անկործանելի հիմնաքարը բոլոր երագներուն, աղբիւրը հայութեան վերականգնումին եւ ազգային մշակոյթին<sup>88</sup>: 1979ին, Սովետ Միութեան հայութեան 66%ը կը բնակէր Սովետական Հայաստանի մէջ, 11%ը՝ դրացի Վրաստանի մէջ, եւ 11,5%ը՝ Ազրպէյճանի մէջ: Հայաստանը վերածուած էր Սովետ Միութեան ամենամիատարր հանրապետութեան, իր 90% հայ բնակչութեամբ: 1980ականներուն Սովետական Հայաստանը դարձած էր ազգային կեդրոն եւ կը յաւակներ ըլլալ բոլոր հայութեան հայրենիքը ու ը ալ ապրէին<sup>89</sup> անոնք: Հայրենիքը կ'աճէր զարմանալի արագութեամբ եւ կշռոյթով: Արփա-Սեւան փապուղիին կառուցումը, որով լեռնային ջուր պիտի փոխադրուէր Սեւանայ Լիճ, որ կենսաւորող երակն էր քաղաքամայր Երեւանի շնչերակին՝ Հրազդան գետին, գրեթէ աւարտած էր. Երեւանի մեթրօն ուներ 5 բանուկ կայարաններ. միջազգային օդակայանը կառուցման ընթացքի մէջ էր, եւ ամենակարելորդ՝ յաղթանակի ոգին հոն էր: Հայութեան գրեթէ կէսը կ'ապրէր իր նախնիներուն բնօրրանին վրայ եւ հրաշքներ կը գործէր:

Բայց Սովետ Հայաստանի միւս երեսակը այնքան ալ խոստմնալից չէր. 'անիծեալ' արտագաղթը Հայաստանէն հայկական շահերու դէմ կը գործէր: Անդին, 1987ին հրատարակած իր գիրքին մէջ, Հայաստանի Գրողներու Միութեան Նախագահ Վարդգէս Պետրոսեան կոչ կ'ընէր հայերուն՝ մոռնալ Յեղասպանութիւնը, ներել թուրքերուն եւ բարեկամութիւն հաստատել անոնց հետ: Աւելին, բնապահպանական աղէտը եւ աթոմակայանի հետեւանքները առողջապահական վտանգներ կը սպառնային<sup>90</sup>:

Լիբանահայ մամուլը, սակայն, մաղէ կ'անցընէր Հայաստանէն եկած լուրերը եւ կը ցրուէր ա՛յն ինչ կը ծառայէր ազգային շահերուն<sup>91</sup>: Աբէլ Ադանբէկեանը 1988 Տարուան Հայ Մարդը հոշակելով, *Ձարթօնք* կը հաւաստէր որ տարբերութիւն չկայ հայութեան երկու հատուածներուն միջեւ, եւ թէ սովետահայերը սփիւռքահայերուն չափ ազգայնական էին:

---

<sup>88</sup> Խմբագրական, «Դէպի Նոր Հանգրուաններ»:

<sup>89</sup> Panossian, 1998, էջ 156:

<sup>90</sup> Զօրի Բալայեան, «Հայրենիքը Կենսաբանական Յեղասպանութեան Վտանգի Տակ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1981. նաեւ՝ Խմբագրական, «Վերապրումի Եւ Յառաջդիմութեան Տարի», *Ձարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1981:

<sup>91</sup> Խմբագրական, «Մաքառումի»:

#### 4. Հայոց Յեղասպանությունը

Հայաստանի բաղադրատարրին կողքին, հայկական սեղմիրանը առաւելագոյնս օգտագործեց Յեղասպանութեան խնդիրը: Յեղասպանությունը ամենագոյ նիւթն էր հայօճախին հոգեբանութեան եւ մամուլի հոռետրաբանութեան: Յեղասպանութեան 70ամեակին, շուրջ 20,000 հայեր մասնակցեցան ոգեկոչումի ձեռնարկին<sup>92</sup>, վերահաստատելով իրենց յանձնառությունը Դատին եւ հայկականութեան: Յեղասպանությունը շատ յստակ սահմանում մը ունէր անոնց մտքին մէջ. 1,5 միլիոն հայերու ջարդ եւ հայապատկան պապենական ընդարձակ հողերու կորուստ, ցեղային մաքրագործում՝ Օսմանցի երիտօրրքերուն կողմէ<sup>93</sup>:

Միջ-1960ականներէն, Հայկական Հարցին հանդէպ Սփիւռքին արդէն փոխուած հայեացքը նոր երեսակներ առաւ պատերազմի տարիներուն: Հայկական Հարցին թափը կտրուկ կերպով լարեց հայկական տարածքը՝ Սովետական Հայաստանի թէ Սփիւռքի մէջ: Հայկական մօտեցումը, ընկալումը եւ վերաբերումը՝ Հայկական Հարցին, նոր կերպաւորում առին՝ սկզբնաւորելով Հայկական Հարցին արժարժման նոր հանգրուանը:

Միջ-1960ականներուն, հայօճախը էական դեր ունեցաւ Հայկական Հարցին խնդրով զօրաշարժի ենթարկելու Սփիւռքը եւ անոր գիտակցականութեան սատարելով: Պէյրութի երիտասարդ, արմատական ազգայնականները ուղեմղիչ եւ վճռորոշ դեր ունեցան Հայկական Հարցի ճանաչման զինեալ քայլերուն մէջ, միջ-1970ականներէն մինչեւ միջ-1980ականներ: Հայօճախը եւ Հայ Դատը գաղափարականօրէն ազուցուած էին: Ինքնին, հայօճախին ծնունդը կապուած էր Յեղասպանութեան:

Այլ առումով ալ, պատմական իրողութենէն անկախ, հայօճախը զօրաշարժելը, անոր գիտակցութիւնը վառ պահելը եւ Դատին հանդէպ զգօն դարձնելը վճռորոշ գործօն էին՝ հայօճախին հայատեւումին յանձնառութեան համար: Արդար Դատին հանդէպ հաւատարիմ մնալ՝ անուղղակիօրէն յանձնառութիւն եւ խոստում կը նշանակէր՝ ազգայնականութեան եւ հայատեւումին<sup>94</sup>: Հայապահպանումի այս

<sup>92</sup> Ասպետ Մանճիկեան, «Եղեռնի Ոգեկոչումներուն Հոլովոյթը Լիբանանահայ Կեանքին Մէջ», *Ազդակ*, 24 Ապրիլ 2002, էջ 88-97:

<sup>93</sup> Խմբագրական, «70Ամեակի Հանգրուանէն Անդին 95Ամեայ Ուխտին Հաւատարմութեամբ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1986, էջ 1:

<sup>94</sup> Յ. Պարազեան, «Հայ Դատի Հետապնդումը Հայապահպանման Ազդակ», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2004, էջ 9-10:

ծիրին ետին Հայկական Հարցը բանաձեւուեցաւ իբրեւ բազմերեսակ խնդիր, քանի որ Սփիւռքն ու Հայրենիքը տարբեր մարտահրաւերներ եւ յանձնառութիւններ ունէին յաջորդ հազարամեակի փորձանաւոր ժամանակներուն գոյատեւելու համար: Կ'ընդգծուէր որ փոքր պետութիւնները-խմբաւորումները պարտէին սորվիլ խաղին կանոնները եւ անխոցելի կառոյցներով դիմագրաւել գերպետութիւններուն 'ոտնակոխումները'<sup>95</sup>:

Այս առումով, լիբանահայ մամուլը օգտագործեց ամէն տուեալ որ կրնար ծառայել ազգային հռետորաբանութեան՝ մեկնելով այն համոզումէն որ պէտք էր արդիւնաւետօրէն իրացնել մտային եւ հոգեւոր ներքին ուժերը եւ առաւելագոյնս կազմակերպել եւ համադրել ճիգերը՝ աւելի զօժն, զօրաւոր ու պատրաստ ըլլալու համար<sup>96</sup>:

### 5. Թուրքիան. Թշնամիին Մարտահրաւերը

Անկասկած Թուրքիան պիտի հանդիսանար ռազմավարական հումքը գաղափարական դաստիարակումի ճիգին: Ան առատօրէն օգտագործուեցաւ մամուլի հռետորաբանութեան մէջ: Պէտք է ըսել, նաեւ, թէ թրքական սխալագործութիւններ չպակսեցան՝ որպէսզի մատնացոյց ըլլան: Հայոց Յեղասպանութեան թրքական ժխտումին եւ պատմութեան կեղծումներու տեղեկացումները լաւ պատճառներ էին լիբանահայերը աւելի՛ մղելու ազգայնական գաղափարախօսութեան<sup>97</sup> եւ զայն վերաճեցնելու: 1974ին Թուրքիան հիւսիսային Կիպրոս ներխուժած էր, գրաւած լայն տարածքներ, վտանգած դարաւոր հայկական Ս. Մակարայ վանքի ճակատագիրը եւ նոյնիսկ ոմբակոծած Նիկոսիոյ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը: Թուրքիան կը դիտուէր իբրեւ Յեղասպանական արաքները շարունակող, դարաւոր հայ ճարտարապետական յուշարձանները քանդող, մշակութային ցեղասպանութիւն իրականացնող՝ արեւմտահայ տարածքներուն վրայ մարդկային ցեղասպանութիւն իրականացնելէ ետք<sup>98</sup>: 1982ին տարածուած այն լուրերը թէ 3800 թրքախօս աֆղան գաղթականներ տեղաւորուած էին գրաւուած հայկական վիլայէթներուն մէջ, եւ թէ այս

<sup>95</sup> Յակոբ Բագրատունի, «Հայկական Ահաբեկչութիւնն Ու Հակահայ Արշաւը», *Ազդակ Բացարիկ*, 1 Յունուար 1984, էջ 1:

<sup>96</sup> Խմբագրական, «Գաղափարական Պայքարի Դարաշրջանը», *Ազդակ Բացարիկ*, 1 Յունուար 2000, էջ 2:

<sup>97</sup> Խմբագրական, «Պատերազմի Ու Խաղաղութեան Լուսանցքներուն Վրայ», *Զարթօնք Բացարիկ*, 1 Յունուար 1983, էջ 1:

<sup>98</sup> Մովսէս Հերկէլեան, «Վանտալական Ոտնահետքեր Սրբաքանդակի Վրայ», *Ազդակ Բացարիկ*, 1 Յունուար 1983, էջ 71-75:

գործընթացը պիտի շարունակուեր՝ բախեցան հայ ազգայնականներուն *տունդարձի* երագներուն<sup>99</sup>: Թուրքիան մեղադրուեցաւ ՀՅԴ Լիբանանի ղեկավարներու առեւանգումին եւ սպանութեան մէջ: Ան մեղադրուեցաւ նաեւ Իսթանպուլի նուազող հայ համայնքը ճնշելու մէջ<sup>100</sup>: Հանրային արծարծումներ կատարուեցան թէ ինչպէ՛ս պէտք էր հակազդել թրքական ժխտումներուն եւ ռազմավարութիւններ քննարկուեցան<sup>101</sup>: Զանազան ուղիներ առաջնահերթ նկատուեցան, ինչպէ՛ս Հայկական Յեղասպանութեան ժխտման դէմ պայքարը, Սփիւռքի հայօճախներու հայկական ինքնութեան պահպանումը, ամուր եւ յանձնառու մնալը՝ ընդդէմ բոլոր տեսակի դժուարութիւններու, համահայկական ձեռով նշումը Հայոց Յեղասպանութեան եւ զայն ամբողջ աշխարհին իրազեկելը<sup>102</sup>, Միջին Արեւելքի հայօճախներու պահպանումը եւն.:

Այդուհանդերձ, թուրք-հայկական հակադրութիւնը խառն հետեւանքներ ունեցաւ: Դրական առումով, հայերը կէտեր արձանագրեցին. հայկական բրտարարքները 'ստիպեցին' Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարար Իհսան Մապրի Չաղլայանկիլը նստելու հայ կուսակցութիւններու ղեկավարներու հետ 1978ին, եւ նիւթական հատուցում խոստանալու, բայց ոչ՝ հողային<sup>103</sup>, մինչ անդին Ժողովուրդներու Մնայուն Դատարանի Փարիզի 1984ի նիստը հաստատեց Հայոց Յեղասպանութեան պատմականութիւնը, թէեւ 1987ին Մ. Նահանգներու Ներկայացուցիչներու Տունը մերժեց իր օրակարգին անցընել Յեղասպանութեան Յիշատակի Օրուան օրինագիծը<sup>104</sup>:

Ինչպէ՛ս կը տեսնուի, 1975-1990 լիբանահայ ազգայնական հռետորաբանութիւնը որ տարագուած էր նաեւ հայօճախը ոտքի պահելու դիտաւորութեամբ, շատ քիչ լիբանանեան բաղադրատարրեր ունէր: Այդ հռետորաբանութիւնը կառուցուած էր հայօճախը նաեւ

---

<sup>99</sup> Խմբագրական, «Պատերազմի Ու Խաղաղութեան Լուսանցքներուն Վրայ»:

<sup>100</sup> Խմբագրական, «Իմաստութեամբ Եւ Մասամբ Նորին», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1982, էջ 1:

<sup>101</sup> Խմբագրական, *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2004. նաեւ՝ Յ. Պալեան, «Ժամադրութիւնը», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2001, էջ 5:

<sup>102</sup> Մկրտիչ Մկրտիչեան, «Հայ Դատը Բազմաթիւ Երեսներ Ունի», *Ազդակ*, 24 Ապրիլ 2002, էջ 2-3. նաեւ Խմբագրական, «Գաղափարական Պայքարի Դարաշրջանը»:

<sup>103</sup> Հայկ Նազգաշեան, «Վ. Պետրոսեանի 'Կրակէ Շապիկ' Գրքին Յարուցած Աղմուկին Առթիւ», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1988, էջ 5:

<sup>104</sup> Շ. Գանտահարեան, «Տասնամեայ Հաշուեկշիռ (1983-1993) Յետ-Լիզպոնեան Ժամանակահատուած», *Ազդակ*, 1 Յունուար 1994, էջ 36-38:

Սփիւռքին համար պահելու նպատակով: Այդուհանդերձ խօսք չկար որ հայօճախին անհետացումը պիտի ժխտապես ազդեր Լիբանանին:

Նման գաղափարախօսական համայնքային սեղմիրան մը դժուար թէ յառաջմղեր միջհամայնքային շփումները, համարկումը՝ այնպիսի ժամանակի մը, երբ Լիբանանի համայնքները պատնիշուած, գերարթուն վիճակի մէջ էին, յանուն իրենց ապահովութեան եւ շահերու պաշտպանութեան:

## **Զ) Հայկական Օգնութիւն Հայօճախին**

Սփիւռքահայ եւ խորհրդահայ զօրակցութիւնը լիբանահայութեան հանդիսացաւ շօշափելի հաւաստիացումը հայօճախին վճռորոշ դերին եւ տեղին, ու շեշտաւորեց հայկական տարածքի միասնականութեան հռետորաբանութիւնը, թափ տալով համահայկականութեան<sup>105</sup>:

Քաղաքացիական պատերազմի առաջին իսկ օրերէն Սովետական Հայաստանն ու Սփիւռքը կարեկցեցան հայօճախին: Անոնք զօրաշարժի ենթարկեցին իրենց ճիգերը՝ նիւթապէս եւ քաղաքականապէս օժանդակելու համար: Սովետ Հայաստանը եւ Էջմիածնի Կաթողիկոսութիւնը մարդասիրական օժանդակութիւն տրամադրեցին: Աջակցական այս արարքները աւելի լիցքաւորեցին հայօճախին բարոյահոգեբանութիւնը եւ վերահաստատեցին անոր կապուածութիւնը Հայաստանին, քան՝ սպեղանի եղան անոր տառապանքներուն: Հայ եկեղեցւոյ երկու կրօնապետերը՝ Վազգէն Ա. եւ Գարեգին Բ. Կաթողիկոսները, միացեալ հաղորդագրութեամբ մը կոչ ուղղեցին աշխարհի չորս ծագերու հայերուն՝ օգնութեան հասնելու հայօճախին, որպէսզի ոչ մէկ հայ զրկուի Լիբանանի մէջ կեանքի նուազագոյն կարիքներէն<sup>106</sup>: Եկեղեցական այս առաքելութեան մէջ նշանակալից էր դերը նաեւ Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական եկեղեցիներուն: Մեծ զումարներ նուիրուեցան հայօճախին<sup>107</sup>, որով կարելի դարձաւ հաւասարակշռել կրթանպաստուած ուսուցումը<sup>108</sup>: Ի վերջոյ Սփիւռքէն հայօճախին հոսող նպաստը կանոնաւորուեցաւ եւ վերածուեցաւ ամենամեայ հանգանակութեան:

<sup>105</sup> Պարոյր Աղպաշեան, «Ճերմակով Ու Սետով Պարուրուած Լիբանանահայ Գաղութը», *Ջարթօնք Բացարիկ*, 1 Յունուար 1988, էջ 2. նաեւ՝ Խմբագրական, «70Ամեակի Հանգրուանէն Անդին 95 Ամեայ Ուխտին Հաւատարմութեամբ» *Ազդակ Բացարիկ*, 1 Յունուար 1986, էջ 1:

<sup>106</sup> Kojanian, էջ 17:

<sup>107</sup> Անստորագիր, «Համազգայինի 1985 Տարին», *Ազդակ Բացարիկ*, Յունուար 1986, էջ 1:

<sup>108</sup> Խմբագրական, «Տագնապին Դիմագրաւումը», *Ազդակ Բացարիկ*, 1 Յունուար 1988, էջ 2:

Բայց Սփիւոքը միանշանակ տեսակետ չունեցաւ հայօճախին հանդէպ: 1987ին (եւ աւելի առաջ եւս) Սփիւոքի մէջ յայտարարութիւններ եղան՝ հայօճախին աւարտին խնդրով: Բազմաթիւ 'մահագրականներ' գրուեցան հայօճախին մասին<sup>109</sup>: Լիբանահայ ղեկավարութիւնը, սակայն, տեղի չտուաւ: Ան պայքարեցաւ եւ ժխտեց այդպիսի մեկնաբանութիւնները իբրեւ 'անմտութիւն'<sup>110</sup>: Միւս կողմէն, սփիւոքահայ այլ տազնապներ աճեցան, եւ 'վտանգուած համայնքները' լքելու քաղաքականութիւնը նկատուեցաւ որ ժխտական հետեւանքներ կ'ունենայ Սփիւոքի անդրսահմանային քարտէսին վրայ:

### **Եզրակացութիւն**

Աւերող քաղաքացիական պատերազմ մը դիմագրաւելու մարտահրաւերին դիմաց, Լիբանանի հայօճախը որդեգրեց դրական չէզոքութիւնը: Հայ կուսակցութիւնները, օրհնութեամբն ու համագործակցութեամբը հայ յարանուանական եկեղեցիներուն, իրացուցին այս քաղաքականութիւնը, որ յաղթահարեց զանազան փորձութիւններ եւ հայօճախը դուրս բերաւ քաղաքացիական պատերազմէն նուազագոյն վնասներով:

Կուսակցութիւնները լաւապէս օգտագործեցին պատերազմի պայմանները: Անոնք լարեցին լիբանահայ քաղաքացիական հասարակարգի դրսեւորումները եւ դրամագլուխի վերածելով հայօճախին տարաբնոյթ ադրիւրամիջոցները, ձեռնարկեցին ազգային դաստիարակութեան: Հայօճախին գոյապահպանումը նկատուեցաւ հայրենասիրական ծրագիր, որ կ'անդրանցնէր հայօճախին տեղական շահերը: Ատիկա կը նպատակադրէր պահպանել Սփիւոքը, հարուած տալ Թուրքիոյ՝ հայութեան գերագոյն թշնամիին, եւ պահպանել Դատը: Լիբանահայ պատերազմական ճիգը ըմբռնուեցաւ իբրեւ աւելի լայն նպատակի մը մասը, որ կ'առնչուէր ազգային գոյատեւումին:

Լիբանահայ զոհողութիւնները քաջալերուեցան եւ լիզքաւորուեցան իրագործումներովը Սովետական Հայաստանին, որ համայն հայութեան բարեբախտ ապագայի յոյս ներշնչեց եւ երաշխաւորեց հայ ազգին յաւիտենականութիւնը:

Միւս կողմէն, յառաջացած հոետորաբանութիւնը շատ քիչ բան ունէր Լիբանանի առնչութեամբ: Քիչ մը կ'առնչուէր հայօճախին քաղաքական կարգավիճակին, եւ շատ աւելի՝ հայկական տիեզերքին:

<sup>109</sup> Նոյն:

<sup>110</sup> Աղպաշեան, «Յանուն Լիբանանահայ Գաղութի Պահպանման Ու Գոյատեւման»:

Ազգային հարցեր լուսարձակի տակ առնելն ու զանոնք անհամաչափօրէն մեծցնելը նպատակ ունէր աւելի մեծ ծաւալ եւ տարածութիւն եւ աւելի ուշագրաւութիւն տալ անոնց՝ հայուն մտապաստառին վրայ, ցոյց տալ անոր հրատապութիւնը, լեցնելու համար հայ երիտասարդին հոգեմտաւոր պաստառը եւ երիտասարդութիւնը հայկական խնդիրներով զբաղ պահելու, քան թէ ներգրաւելու Լիբանանի անվերջանալի պատերազմին, կամ՝ այլ 'շեղող' խնդիրներու: Այս համապարփակ (մասամբ նաեւ տարերային) քաղաքականութիւնը ծառայեց նաեւ հայօճախին վրայ կուսակցական վերահսկողութիւն պահպանելու եւ հայօճախը կուսակցական հայեցակարգի մէջ պահելու նպատակներուն: Լիբանանի պատերազմական պայմաններն ու լիբանանահայ աւանդական մտայնութիւնը վերասահմանեցին սփիւռքահայը իբրեւ ազգայնական մը, որ կանխատրամադրուած-կանխորոշուած է հայկական շահերով: Այդուհանդերձ, հայօճախը իր կարողութիւններէն շատ աւելին ըրաւ եւ խոնջացաւ:

Մեծաթիւ հայեր վերջնականապէս լքեցին երկիրը: Հայկական դրական չեզոքութիւնը եւ հայկական սեղմիրանը նուազեցուցին համարկումը այլ համայնքներուն հետ եւ պարագայաբար աւելի դժուար դարձուցին Լիբանանի քաղաքական կարկանդակի վերաբաժանման հայկական մասին դատապաշտպանութիւնը:



# ԻՆՔՆԱԲԱԻՈՒԹԵԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ (1990-2005)

Բազմուղի՝ Չկանոնակարգուած, Ինքնահոս Եւ  
Անհատական Հայեցողութեամբ Համարկում

## ՄՈՒՏՔ

Ի տարբերութիւն հայօճախին նախապատերազմեան հանգրուանի ուռճացումին, 1990-2005 հանգրուանը յատկանշուեցաւ անոր կծկումով: Հայօճախին տնտեսական, ընկերային-քաղաքական եւ ժողովրդագրական փոփոխութիւնները սպառնացին անոր առողջ գոյատեւումին եւ ազդեցին անոր դիրքին՝ Լիբանանի քաղաքական նոր բաժնեկցութեան մէջ ու յառաջմղեցին համարկումը: Լիբանանեան իշխանութեան վերադասաւորումը (յօգուտ իսլամական շրջանակներու), հայօճախին փոքրացումը, համահայկական տարածքին զարգացումները վերաձեւեցին լիբանահայութեան կեցուածքը եւ հայօճախին դերն ու տեղը՝ Լիբանանի եւ հայկական տիեզերքի ազգային-քաղաքականութեան մէջ:

Հայօճախին ճիգերը՝ յարմարելու անդրսահմանային հայկական նորութիւններուն, ինչպէս՝ Հայաստանի անկախութեան, Ղարաբաղի հակամարտութեան եւ Սփիւռքի խորքային փոփոխութիւններուն ուշագրաւ եղան: Այս փոփոխութիւնները ներգործեցին հայօճախին օրակարգին եւ յանձնառութեան տարողութեանց վրայ՝ յաչս հայկական յառաջադրանքներուն եւ Լիբանանի մէջ իր գոյատեւումին:

Այս շրջանին հայկական սեղմիրանը թուլցաւ եւ հայօճախին մտայնութիւնը բարեշրջուեցաւ, նկատուեցաւ կուսակցական վերահսկողութեան թուլացումը՝ յօգուտ բազմակարծութեան եւ յոգնակի կենցաղի: Մինչ Լիբանան ուղղուեցաւ յարաբերական կայունութեան:

## Ներածութիւն

29 Սեպտեմբեր 1989ին, լիբանանցի 62 երեսփոխաններ ժողով գումարեցին Սէուտական Արաբիոյ Թաէֆ քաղաքին մէջ եւ չորս շաբաթ տեւած քննարկումներէ ետք կէսարական ծնունդը տուին Թաէֆի Համաձայնագրին: Իր կարգ մը տրամադրութիւններուն մէջ տարտամ՝ այս համաձայնագիրը գուրկ էր գործադրութեան մեքենականութիւններէ եւ հայեցակարգերէ: Ան յստակ չէր գործադիր իշխանութեան վերադասաւորումներուն, ոչ ալ յաչս պետութեան՝

համայնքներուն վերադիրքաւորման խնդրով: Թաեֆի քննարկումներուն լուսանցքին, հայ երեսփոխաններ եռանդով տարհամոզեցին մասնակիցները՝ վերահաստատելու Հայ Առաքելական Համայնքին կարգավիճակը՝ իբրեւ Լիբանանի եօթ գլխաւոր համայնքներէն մին<sup>1</sup>:

Համաձայնագիրը զուգադիպեցաւ համաշխարհային հիմնափոխութիւններու, որոնք ցնցեցին երկրագունդին քաղաքական համակարգը եւ ներազդեցին հայկական տիեզերքին վրայ՝ խթանելով Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակումը, Արցախի ռազմական հակամարտութեան սկզբնաւորումը<sup>2</sup>:

Ձուգահեռաբար եւ անկախաբար, երկրորդ հազարամեակի աւարտին Սփիւռքը յատկանշականօրէն փոխուած վիճակ մը պարզեց: Ան 1960ականներու Սփիւռքէն տարբեր էր եւ շատ հեռու՝ 1920ականներու Սփիւռքէն: Էութենական, խորքային եւ աշխարհագրական խոշոր փոփոխութիւններ արձանագրուած էին հոն: Նոր սերունդները շատ տարբեր էին իրենց գաղթական մեծհայրերէն: Նոյնիսկ 'ինքնութեան գոյատեւում'ի գերագոյն յառաջադրանքը փոփոխութիւններու ենթարկուած էր:

Հայկական տիեզերքի այս փոփոխութիւնները համայն աշխարհի հայութեան ձեռնոց կը նետէին: Թէ՛ նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնը, թէ՛ Ղարաբաղը օգնութեան կարիքն ունէին, մինչ Սփիւռքի տարատեսակ կապերը Հայրենիքին հետ՝ պարտէին խորանալ, վերատարազել իրենց բնոյթն ու տեսիլքը՝ յանուն Սփիւռքի գոյատեւման: Խորքին մէջ, հայկական երեք ոլորտները՝ Հայաստանի Հանրապետութիւնը, Ղարաբաղն ու Սփիւռքը, իրարու կարիքն ունէին. եթէ փոխկապուածութեամբ ու նոր տեսլականներով չգործէին անոնք՝ ապա առանձինն պիտի չկարենային գոյատեւել<sup>3</sup>:

Զօրաշարժուելու, առնչուելու եւ Հայաստանի, Ղարաբաղի եւ Սփիւռքի ճիգերը միացնելու անհրաժեշտութիւնը<sup>4</sup> կարելորեց

---

<sup>1</sup> Մելքոն Բալիդաթեան, *Գաղթակայանէն Խորհրդարան, Հտր. 2*, Հալէպ, Կիլիկիա Հրատ., 2005, էջ 63, 69:

<sup>2</sup> Խմբագրական, «Արցախեան Պատգամ. Բնքնամսխումը Ներելի Չէ», *Ազդակ*, 1 Յունուար 1994, էջ 1-2:

<sup>3</sup> Salpi Haroutinian-Ghazarian, "Brave New World: Armenians in Transition," *AIM*, May 1992, էջ 15:

<sup>4</sup> Գասպար Տերտրեան, «Արցախի Բնքնորոշման Խաղաղ Լուծումը Կրնայ Գալ Միայն Իրաւական Հիմքի Վրայ», *Զարթոնք*, 1 Յունուար 1998, էջ 61. նաեւ՝ Միհրան Քիրտոզլեան, «Հին Պայքարին Նոր Մարտահրաւերը», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ

արծարծումը տնտեսական եւ ընկերային զարգացման, գիտութեան, մշակոյթի եւ կրթութեան, տեղեկատուութեան եւ հանրային հաղորդակցութեան, քաղաքականութեան եւ հայրենի գորակցութեան, երկքաղաքացիութեան, Հայոց Տեղասպանութեան միջազգային ճանաչման, Սփիւռքի հայկականութեան եւ անոր ազգային յառաջադրանքներու, Ղարաբաղի, Թուրքիոյ հետ յարաբերութեանց 'հայկական' խնդիրներու<sup>5</sup>: Սփիւռքի աղբիւրամիջոցներն ու մասնագէտները պարտէին գորահաւաքուիլ<sup>6</sup>, որպէսզի Հայաստանը ինքնատեսացնող երկրի մը վերածուի առ ի երաշխիք հայութեան տեսականացումին<sup>7</sup>:

Այս մարտահրաւերները հայկական օրակարգի վերադասաւորում պարտադրեցին եւ՝ վերատեսում հայկական մտածելին ու մտայնութեան, յառաջադրանքներուն եւ ռազմավարութիւններուն: Բայց Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւռքի պատմական փորձառութիւններն ու ներկայի հրամայականները տարբեր էին: Ուստի, ակնկալելի չէր որ անոնց քաղաքական մտածելը, օրակարգերը, մշակոյթը՝ անոնց արժեւորումը ազգին դիմագրաւած խնդիրներուն նոյնն ըլլային<sup>8</sup>: Միւս կողմէն՝ կարիքներու եւ կարելիութիւններու անյարիրութիւն-անհամաչափութիւնը աւելի եւս պիտի բարդացներ Հայաստան-Սփիւռք ազգային-գործնական համադրութիւնը: Ազգային մտածելի հորիզոնը կը ներառներ ապրող Հայրենիքը, Արցախը, 20րդ դարավերջի մարտահրաւերները՝ ազգային եւ համաշխարհային հարթակներով եւ Սփիւռքի հայկական ինքնութեան գոյատեւումն ու պահպանումը<sup>9</sup>: Իրականութեան մէջ, Սփիւռքը խորունկ, կառուցային, ժողովրդագրական, ընկերային եւ

---

2004, էջ 3. նաեւ՝ Salpi Haroutinian-Ghazarian, "An Armenian Face on Universal Issues: An Interview with the Armenian Assembly's Ross Vartian", *AIM*, February 2000, էջ 38:

<sup>5</sup> Tony Halpin, "A Second Chance: Armenia-Diaspora Conference Looks to Make Up for Lost Time", *AIM*, May 2002, էջ 19. նաեւ՝ «Հռչակագիր», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 2000. նաեւ՝ Tony Halpin, "The Search for Common Ground: Armenia and Diaspora Meet and Make Progress", *AIM*, June 2002, էջ 21. նաեւ՝ Վրէժ Արմէն, «90 Տարի Ետք Մեր Ճակատագրին Դեմ Յանդիման», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 2005, էջ 9-10:

<sup>6</sup> Haroutinian-Ghazarian, "Brave New World," էջ 12:

<sup>7</sup> Շողիկ Աշրգեան, «Հայկական Պահանջատիրութիւնը Հեռանկարային Առումով», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2001, էջ 17:

<sup>8</sup> Razmig Panossian, "Between Ambivalence and Intrusion: Politics and Identity in Armenia-Diaspora Relations", *Diaspora*, Vol. 7, # 2, Fall 1998, էջ 183:

<sup>9</sup> Պէպօ Միմոնեան, «Հայ Գրողը Եւ Ազգային Մտածողութիւնը», *Նայիրի Բացառիկ*, 1 Յունուար 2005, էջ 18-19:

մշակութային փոփոխություններ կրած էր: Ան վերափոխուած էր, դարձեր էր բազմամշակութային, այլազան եւ համաշխարհայնացած:

Լիբանանի պատերազմին պարտադրանքներուն բերմամբ, այս փոփոխությունները պատշաճօրէն չէին նկատուած Լիբանանի հայօճախին կողմէ, որ ստիպուած էր նոր կացութեան յարմարիլ կա՛մ կտրուկ քայլերով, կա՛մ՝ կամաց-կամաց:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին աւարտը կարելի դարձուց որ լիբանահայութիւնը՝ ընդարձակէ իր տեսադաշտը եւ աշխուժօրէն վերստին առնչուի հայկական անդրսահմանային հարցերուն: Իր աւանդին եւ դերին հաւատարիմ, սակայն լիբանանեան եւ ինքնա-վերակառուցման օրակարգերով կաշկանդուած ըլլալով հանդերձ, հայօճախը ճիգ ըրաւ վերաձեւաւորուելու: Խորունկ էին Լիբանանի ներքին փոփոխությունները. անոնք էական կը դարձնէին համապատասխան քայլերու որդեգրումը հայօճախին կողմէ, որ կորսնցուցած էր յատկանշական բաժին մը իր թիւէն ու կշիռէն: Հայօճախը պարտէր պայքարիլ ներլիբանանեան երկու ուղղություններով. ա) Լիբանանեան համարկում եւ իշխանութեան բաժնեկցում, ու՝ բ) Իր ենթախմբային հասարակարգի ոլորտներու եւ հիմնարկներու վերակառուցում: Այս գոյգ մարտահրաւերները գուգադիպեցան այնպիսի ժամանակի մը, երբ, ի տարբերութիւն նախորդ հանգրուանին, այլեւս կարելի չէր դիմագրաւել օտար աշխարհի ամէնօրեայ ներթափանցումները եւ զանոնք յաղթահարել միայն ազգային օրակարգ հրամցնելով<sup>10</sup>:

Հետեւաբար, երբ հայօճախը պարտէր ինքզինք վերաձեւաւորել եւ տեղաւորուիլ Թաէֆի Համաձայնագրին հայեցակարգին մէջ, Հայաստանն ու Ղարաբաղի հակամարտութիւնը զինք լարեցին ազգային շտապ յառաջադրանքներով: Հայօճախը իբրեւ մաս եւ բաժին Լիբանանին եւ Սփիւռքին<sup>11</sup>, տարբեր տարողություններով ընդառաջեց այս մարտահրաւերներուն, ըստ՝ անոնց հրատապութեան, եւ ըստ իր ունեցած յարմարութիւններուն եւ սահմանափակուած կարողականութեան:

Խորքին մէջ, երկու երկիրներ՝ Հայաստանն ու Լիբանան, շարունակեցին անմիջականօրէն կապուած մնալ հայօճախին կեանքին եւ հանդիսացան անոր մտասելեռումը: Լիբանահայուն բազկերակը կը տրոփէր ըստ միջազգային, շրջանային, եւ լիբանանեան քաղաքական

<sup>10</sup> Սեդա Մարկոսեան-Խտրշեան, «Հայ Քաղաքացիական Ընկերութիւնը», *Ազգակ Բացառիկ*, 1 Յունուար 2005, էջ 30, էջ 30:

<sup>11</sup> Խմբագրական, «Հաշուետուութիւն», *Զարթօնք*, 1 Յունուար 1989, էջ 2:

զարգացումներուն եւ ի պատասխան Հայրենիքի ու Սփիւռքի համայնքներուն կեանքին<sup>12</sup>: Ձեռով մը, հայօճախը թե՛ պէտք էր առնչուէր տեղական, շրջանային եւ միջազգային խնդիրներուն, եւ թե՛ ներհամայնքային, սփիւռքեան եւ հայկական տիեզերքին: Ասոնք անհրաժեշտ կը դարձնէին լիբանահայ մտաձեւի վերաորակաւորումը: Ազգային սեղմիրանը պարտէր պահպանել աւելի ազատական ձեւաչափ մը, բարեխառնել գաղափարախօսական դաստիարակութիւնը, նոր ձեւեր ու արհեստամիջոցներով տարածել հայօճախին յառաջադրանքներուն նորատեսակ տարբերակը:

Ի վերջոյ, ոչ-միաձոյլ հայօճախին վրայ այսպիսի տարաբնոյթ գործօններու ազդեցութիւնը եւ փոխներգործութիւնը յառաջացուցին բարդ ուժականութիւն մը եւ ունեցան նոյնիսկ հակադիր ու բացասական հետեւանքներ անոր տարբեր ենթախումբերուն վրայ:

1990-2005ի տասնհինգամեայ զարգացումները ամրագրեցին հայօճախին հիմնական մտասուեռումներն ու հայապահպանում-համարկում երկակի ուղիին պարագաները: Երկու ուղիներն ալ այլազան եւ բազմաբնոյթ ազդեցութիւն ունեցան սփիւռքահայու, հայկականութեան եւ առնչակից հարցերու լայն խումբի մը գոյութենական հասկացութիւններու համակարգին վրայ:

Լիբանանի երկրորդ հանրապետութեան արշալոյսին, Լիբանանի հայօճախը պարտէր լծուիլ տեղական, սփիւռքեան եւ հայրենական յառաջադրանքներու պատշաճումի եւ յարմարումի բարդ գործընթացի մը: 1990-2005 հանգրուանը վկան է Լիբանանի յարաբերաբար սկարացած հայօճախին ենթախումբերուն ճիգին՝ վերատարազուելու այս ոլորտներուն:

## **Ա) Փոխուող Սփիւռքի Քաղաքականութիւնը Եւ Անոր Ներթափը**

Յետ-եղեռնեան եօթանասուն տարիներուն մեծ փոփոխութիւններ յառաջացան Սփիւռքի բոլոր երեսակներուն: Այդ փոփոխութիւնները կոհակուեցան անոր ժողովրդագրութեան, ընկերա-տնտեսական, մշակութային եւ կրթական ոլորտներուն, մտաձեւին, յառաջադրանքներուն, հանրային հիմնարկներուն եւ հիւրընկալ երկիրներուն համարկումի աւազաններուն մէջ: Սփիւռքը ենթարկուեցաւ տպաւորիչ կերապարանափոխումի եւ հասունացում

---

<sup>12</sup> Խմբագրական, «2002ի Հայ Կեանքի Թղթածրարը», *Ազգակ* Բացառիկ, 1 Յունուար 2003, էջ 1:

ապրեցաւ, խորք եւ աշխարհագրաքաղաքական ձեւափոխում ունեցաւ, տեսանելիութեան եւ կշիռի իր վիճակը փոխուեցաւ<sup>13</sup>:

Այդուհանդերձ, Հայոց Յեղասպանութեան նիւթը մնաց Սփիւռքի խորհրդանշական սկզբնաւորողը, ողնաշարային էութիւնը եւ ծուծը<sup>14</sup>: Ան մնաց նախատիպային այս սփիւռքին իմացական արմատներուն կից<sup>15</sup> եւ ազդուօրէն ձեւաւորեց անցնող տասնամեակներուն բոլոր սերունդներուն մտածելն ու գիտակցականութիւնը<sup>16</sup>: Այս սերունդներուն առաջին երկուքը - ծնած՝ *երկիր*, կամ՝ տեղահանութեան եւ քստրի ճամփաներուն - կամ՝ ակնատես էին Յեղասպանութեան տարբեր դրուագներուն, կամ՝ ալ անոր անմիջական հետեւանքները զգացին որբանոցներուն թէ գաղթակայաններուն մէջ: Ասոնք բնօրրանի մշակոյթին մնացորդացին կրողներն եղան եւ օտարականներ մնացին իրենց հիւրընկալ երկիրներուն մէջ: Ասոնց համար, կազմակերպական նախօրինակը բնօրրանն էր. վերատեղաւորուիլ կը նշանակէր վերակենդանացնել կուսակցութիւնները, կրթական հաստատութիւններ հիմնել, նորահաս սերունդին դաստիարակութեամբ զբաղիլ, եւ եկեղեցի կառուցել<sup>17</sup> ու համայնքային կեանքը դարձնել այս առանցքներուն շուրջ եւ որոշ չափով ալ յարաբերութիւններ յառաջացնել ոչ-հայ շրջապատին հետ որ օսմանցին չէր այս պարագային:

Ի տարբերութիւն այս գաղթականներուն, որոնք իրարու նման էին՝ ամէնուրեք՝ Արեւմուտքի մէջ թէ Արեւելքի, ասոնց զաւակները՝ 'սփիւռքցի'ները, այլազան էին: Անոնք որոնք Արեւմուտքի մէջ ծնած ու հասակ առած էին՝ անհատապաշտ եղան, հայախօս չէին: Անոնք այժմեական էին, յաճախ համալսարանաւարտ, ամբողջութեամբ համարկուած քաղաքային միջին դասակարգին, եւ՝ ձուլման ճամփուն տարբեր հանգրուաններուն կը գտնուէին<sup>18</sup>: Անոնք որոնք Միջին Արեւելքի մէջ ծնած ու հասակ առած էին, սակայն, ընդհանրապէս

<sup>13</sup> Gaidz Minassian, "Des Elections au Suffrage Universel, Huit Bonnes Raisons", *France Arménie*, No 213, July/August 2001, էջ 8:

<sup>14</sup> Gregory Geokjian, "Diaspora and Denial; The Holocaust and the 'Question' of the Armenian Genocide", *Diaspora*, Vol. 7, # 2, Spring 1998, էջ 3:

<sup>15</sup> Susan Pattie, "At Home in Diaspora: Armenians in America", *Diaspora*, Vol. 3, #2, Fall 1994, էջ 185:

<sup>16</sup> William Safran, "Comparing Diasporas: A Review Essay", *Diaspora*, Vol. 8, # 3, Winter 1999, էջ 281:

<sup>17</sup> Andre Levy, "Diasporas Through Anthropological Lenses: Contexts of Postmodernity", *Diaspora*, Vol. 9, Spring # 1, 2000, էջ 144:

<sup>18</sup> Anahit Ter Minasian, *Histoires Croisees. Diaspora. Armenie, Transcaucasie 1890-1990*, Marseille, Editions Parentheses, 1997, էջ 33:

հայախօս էին, ուսանած, նուազ համարկուած, աւելի առնչուած եւ ցանցուած հայկական գործերուն, մշակութապէս աւելի մօտ էին իրենց արմատներուն եւ պորտային ընտանիքին, աւելի աւանդական էին ու համայնքային: Այս տարբերութիւնները, սակայն, ընդհանրապէս սկսան նուազիլ յաջորդող սերունդներուն պարագային, մանաւանդ՝ համաշխարհայնացումի հանգրուանին: Միջին Արեւելքի Սփիւռքը համարկումի եւ քոզմփոլիթիզմի քայլեր առաւ, իսկ Արեւմուտքի Սփիւռքը՝ քայլեր առաւ դէպի հայկականութիւն:

Իր կարգին, 'հայկականութիւն'ը եւս փոփոխութիւններ կրեց: Ի տարբերութիւն Միջին Արեւելքի հայօճախներուն, Արեւմուտքի մէջ իր իմաստը վերաթրծուեցաւ իբրեւ ինքնութիւն մը, որ յարաբերաբար հեռու է բնօրրանէն եւ *տունդարձի*<sup>19</sup> գաղափարէն: Բնօրրանը ոչ միայն աշխարհագրականօրէն հեռաւոր նկատուեցաւ, այլեւ մշակութապէս օտար, իսկ զգացումներով՝ հեռու: Անոնց 'տուն'ը հոմանիշ դարձաւ 'ընտանիք'ին, քան թէ՛ որոշակի տեղի մը, «հիրընկալ» հասարակութիւնը վերածուեցաւ «տուն»ի, իսկ հայկական սահամանագիծերը կորսնցուցին անջատումի ազդեցութիւնը, եւ հայ հաւաքականութիւնը սկսաւ հալիլ աւելի լայն միջավայրին մէջ: Եթէ 1920ականներուն սփիւռքեան ազգ մը կը ստեղծուէր, որ զգացական զօրաւոր կապեր ունէր կորուսեալ բնօրրանին հետ, հիմա խաչասերուած հայկական ինքնութիւն մը կը ստեղծուէր կրկնակի երեւակայութեան վրայ հիմնուած. Սփիւռք մը որ կ'երեւակայէր «երեւակայական համայնք» մը, որ գոյութիւն ունէր տեղ մը՝ հիրընկալ երկիրներուն եւ բնօրրանին (հին ու նոր Հայաստաններ) մէջ եւ միջեւ: Սփիւռքի քաղաքականութեան երկու հարթակներ գոյացեր էին. ա) Աւանդականը - Միջին Արեւելքի մէջ - դեռ գերիշխող, համայնքամետ կուսակցական գերիշխանութեամբ, եւ՝ բ) Նորը - Արեւմուտքի մէջ - արհեստավարժ լոպիինկի քաղաքականութիւնը, որ կը ձգտէր իբրեւ համարկուած խումբ ցանցաւորուելու հիրընկալ երկրին քաղաքական համակարգին<sup>19</sup>:

Անդին, ընկերային-ժողովրդագրական փոփոխութիւնները, Լիբանանի եւ Իրան-Իրաք պատերազմները տկարացուցին լաւապէս ցանցաւորուած, յարաբերաբար խիտ, խորապէս ազգայնական հայօճախները Լիբանանի եւ Իրանի: Իրականութեան մէջ, Միջին Արեւելքի բոլոր համայնքները ենթարկուեցան տարբեր չափի անկայունութեան, որուն յաջորդեցին արտագաղթը, տնտեսական

---

<sup>19</sup> Panossian, էջ 162-163:

տազնապները: Ասոնք մարտահրաւեր կարդացին տեղական հաստատութիւններուն, ենթախումբերուն որակին, տեսադաշտին, ծիրին եւ օրակարգին:

Ապակայունութեան այս պայմանները դէպի Արեւմուտք արտագաղթի ալիքներու դրդեցին Միջին Արեւելքի աւանդապահ հայերը: Իվերջոյ վերոյիշեալ հայօճախները կորսնցուցին իրենց ժողովրդագրական ծանրութիւնը, իսկ Հայաստանի Հանրապետութիւնը, մանաւանդ իր անկախութենէն ետք, գլեց անցաւ անոնց ազգայնական յատկութիւնները եւ դարձաւ բոլոր հայերու ազգայնականութեան սելեռուն կետը: Մինչ, Սովետ Միութեան տարանջատումը վերակենդանացուց հին եւ յառաջացուց նոր հայօճախներ՝ նախկին Սովետ Միութեան տարածքին: Դեռ աւելին, համաշխարհայնացումը վար առաւ (այն աստէն Սովետական) Հայաստանը Սփիւռքի հակասովետ ենթախումբերէն բաժնող արգելքները եւ յառաջացուց հայկական անդրասահմանային անսահման տիեզերքը:

Այս փոփոխութիւնները յեղաշրջեցին հին Սփիւռքին քարտէսը: Սփիւռքը շատ աւելին կը հաշուէր քան այն շուրջ 6-700,000 ամերիկահայերը, շուրջ 300,000 ֆրանսահայերը, 150,000 սուրիահայերն ու նոյնաթիւ լիբանահայերը<sup>20</sup> 1980ականներուն: Համեստ հաշուումներով աւելի քան շուրջ 400,000 հայ դպրոցականներ կ'ապրէին Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն դուրս<sup>21</sup>: Լոս Անճելըս Նահանգը ունէր Հայաստանէն դուրս հայկական մեծագոյն հայօճախներէն մին: Իսթ Նոլիտուտի մէջ, շուրջ 30,000 հայեր կ'ապրէին եւ կը գործէին Լիթըլ Արմինիայի մէջ եւ շուրջ, որ Լոս Անճելըս քաղաքին տարածքն ունէր եւ որ Հոկտեմբեր 2000ին բնութագրուեցաւ իբրեւ էթնիք մարզ մը, հայերէն ազդանշաններով ու պաշտօնական փաստաթուղթերով<sup>22</sup>:

70 տարիներու սառեցումաձ պատմութենէ մը ետք, Հայաստանի անկախութիւնն ու Ղարաբաղի հակամարտութիւնը հայերը զետեղեցին ժամանակակից ուժական պատմութեան կշռոյթին մէջ: Սփիւռքի հայկական ինքնութիւնը, որ խարսխուած էր անցեալին մէջ, մարտահրաւիրուած էր այժմեականացնելու ինքզինք եւ արծարծելու

---

<sup>20</sup> Ter Minasian, էջ 19:

<sup>21</sup> Պետրոս Շեմմէսեան, «Ցեղասպանութեան 90 Ամեակ եւ 90 Առ Հարիւր Ցեղասպանութիւն», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2004, էջ 43:

<sup>22</sup> Eliza Galfayan, “Hye Fidelity: Hollywood’s Armenian Quarter”, *AIM*, April 2002, էջ 22:

փոփոխուող արժեքները բազմացող Սփիւռքին<sup>23</sup>, կամրջուելու ապագային: Սփիւռքեան հաստատութիւններ եւ կազմակերպութիւններ մարտահրաւիրուած էին նոր պայմաններու հարթակին բարձրանալու, պահպանելու եւ ամրապնդելու իրենց անկախ պետականութիւնը եւ զայն վերածելու երկրի մը, որ բոլոր հայերը կը հպարտացնէ<sup>24</sup>:

Յիրաւի, ստոյգ առիթ մը կար հայերը բարձրացնելու 21րդ դարու շոգեկառքին<sup>25</sup>: Հայերուն կը մնար իմաստուն նախանձախնդրութեամբ ստանձնել պետականակիր ժողովուրդ մը ըլլալու մարտահրաւիրը եւ լծուիլ ժողովուրդէ մը՝ վերստին ազգի վերածուելու դժուար տեսլականի մեծ երագին իրականացումին:

Ոչ-միաձոյլ, անձեւ հայ զանգուածը՝ տարածուած աշխարհի հազարումէկ անկիւններուն վրայ, իրար կապուած էր ընդհանրական պատմութեամբ, ճակատագրով<sup>26</sup> եւ Յեղասպանութեան հաւաքական յիշողութեամբ, տեսանելի, շօշափելի ու ենթազգայական քիչ ու շատ երակներով: Ան յատկանշական տարբերութիւններ եւ նմանութիւններ ունէր եւ զուրկ էր ինքնակազմակերպող, համահայկական ամպիովանի կառոյցներէ եւ շրջանային մարմիններէ<sup>27</sup>: Խորքին մէջ, աշխարհի հայերը երեւակայական ամբողջութիւն մըն էին: Անոնք անցեալի իրենց անհոգի անելի հասարակաց բաներ ունէին քան՝ իրենց ներկայով: Միւս կողմէն, Սփիւռքի տարբեր հայօճախներ կազմութեան, կարողականութեան եւ հայկականութեան տարբեր հանգրուաններու վրայ կանգնած էին: Անոնք այլազանօրէն կը սահմանէին Սփիւռքը եւ անոր բնոյթը, դերը ու ապագան<sup>28</sup>: Բոլորն ալ, սակայն, լաւապէս կը գիտակցէին, որ ձուլումը եղած էր էթնիք փոքրամասնութիւններու մեծագոյն մարտահրաւիրը: Եւ որքան ալ վճռականօրէն մղուէր պայքարը անոր դէմ, կը թուէր թէ միշտ ալ փոքրամասնութիւնները պարտուած էին, տեղի տալով

---

<sup>23</sup> Haroutinian-Ghazarian, “Brave”, էջ 14:

<sup>24</sup> Armenian Survey, “Old Dreams”, *AIM*, April 1996, էջ 16. նաեւ՝ Halpin, “The Search”, էջ 21. նաեւ՝ «Հռչակագիր», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 2000, էջ 33-34:

<sup>25</sup> Յակոբ Միքայէլեան, «Մտորումներ 21րդ Դարու Սէմին», *Զարթօնք Բացառիկ* 1 Յունուար 1998, էջ 165:

<sup>26</sup> Levy, էջ 146:

<sup>27</sup> Վրէժ Արմէն, էջ 9-10. նաեւ՝ Haroutinian-Ghazarian, “Brave,” էջ 14. նաեւ՝ Armenian Survey, “An Interview with President Ter Petrossian”, *AIM*, January-February 1997, էջ 31:

<sup>28</sup> Ter Minasian, էջ 27. նաեւ՝ Pattie, էջ 186:

մեծամասնական մշակոյթներուն: Աշխարհի տարբեր վայրերու հայօճախներուն ալ պարագան կրնար նոյնը ըլլալ<sup>29</sup>:

Իւրաքանչիւր հայօճախի ենթախումբերը այլազանօրէն հակազդեցին հայկական տիեզերքի զարգացումներուն: 'Լուռ մեծամասնութիւն' մը ինքզինք պարագայաբար եւ օրացուցային թելադրանքով առնչեց Սփիւռքի աւանդական հաստատութիւններու, եւ զանոնք չնկատեց իր լիարժէք ներկայացուցիչները: Անդին, անորոշ թիւ մը, աւելի ընդառաջումով առնչուեցաւ աւանդական հաստատութիւններուն եւ կառոյցներուն<sup>30</sup>: Միայն փոքր խումբ մը ինքզինք գիտակցօրէն "հայ" որակեց: Մակայն, հայկական կարողականութեան հսկայ հատուած մը մրափի մէջ էր, շփոթած, կամ՝ առայժմ խուլ<sup>31</sup>: Յատկանշական զանգուած մը սակայն, յանձնառու էր ս յօդակապով բնորոշուող հայակեանքի մը՝ սփիւռքի մէջ: Ասոնց առաջնային յառաջադրանքը էթնիք գոյատեւումն էր՝ յամեցող պայմաններով: Ասոնք կը հաւատային որ սպասողական պէտք էր ըլլային: Իսկ այդ սպասումը կրնար սերունդներ տեսել:

Ի տարբերութիւն Արեւմուտքի հայօճախներուն, 70 տարուան սփիւռքեան կեանքը շատ բան չէր փոխած Միջին Արեւելքի հայօճախներէն: Կը թուի նաեւ, թէ Հայաստանի անկախացումն ու Ղարաբաղի հակամարտութիւնը շեշտաւորեցին այս հայօճախներուն ազգայնական հակումները (ի տարբերութիւն Արեւմուտքի հայօճախներուն, ուր այս գործօնները վերակենդանացուցին հայկականութեան զգացում մը): Հայաստանի անկախացումը փոփոխութիւն խթանեց<sup>32</sup> որ սակայն դեռ ազատ չէր կացուցած միջին արեւելքցի հայը իր միջավայրէն եւ համայնքային սահմաններէն եւ զինք բաւարար չափով չէր կապած հայկական տիեզերքին, որ կուսակցական ու աւանդական գիծերէն շատ անդին կ'երթար: Այդ փոփոխութիւնները դեռ տասնամեակներու ճիգի պէտք ունէին՝ որպէսզի փլուզէին անտեսանելի պատերը հատուածականութեան, ենթագիտակիցին նստուածք տուած ենթախմբային ինքնաբաւութեան: Այս վիճակը մեղկացնող էր ու կրնար վտանգաւոր հակադրութեան մտնել համաշխարհայնացումէն հոսանքներուն հետ: Դեռ աւելին,

---

<sup>29</sup> Agop Der Karapetian and Levon Melikian, "Assimilation of Armenians in Lebanon", *Armenian Review*, Vol. 27, 1974, էջ 65:

<sup>30</sup> Salpi Haroutinian-Ghazarian "So Near and Yet So Distant", *AIM*, February 1992, էջ 12:

<sup>31</sup> Մարկոսեան, «Հայ Քաղաքացիական Ընկերութիւնը», էջ 33:

<sup>32</sup> Ishkhan Jinbashian, "Weird World: Father Haroutioun Bezdikian on the Psychology and Transformation of the Ghetto", *AIM*, July 1992, էջ 28:

սփիւռքահայ աւանդական կուսակցութիւններու տեղական մասնաճիւղերը, եկեղեցին եւ այլ ենթախումբեր դեռ չէին հասած վճռորոշ փոփոխութեան այն հանգրուանին, որ ազատականացնէր զիրենք անցեալի 'դիցաբանութենէն', հայապահպանումի հնամաշ համակարգէն, կրօնական եւ կուսակցական կառոյցներու, կեթօներու, ինքնօտարումի յաւիտենականութենէն, զոհ ազգի զգացումէն, ցեղամոլութենէն ու լեզուի պաշտամունքէն<sup>33</sup>: Ոչ ալ անոնք սկսած էին որդեգրել ընկերայնացումի եւ դաստիարակումի նոր ձեւաչափ մը, որ անհատին ազատութիւն տար ինքնութեան գիտակից ընտրութիւն կատարելու: Արդարեւ, ի տարբերութիւն Արեւմուտքի անհատամետ կենցաղին, որ անհատին/ենթախումբին կարելիութիւն կու տար համայնքամետ անձնական/խմբակային քայլեր նախաձեռնելու, աւանդական մամուլի հաստատութիւնները անուղղակիօրէն կը սանձէին ու կը ցանցակալէին Միջին Արեւելքի անհատը եւ իր նախաձեռնութիւնները: Քիչեր միայն ունեցան յախտոնութիւնը այդ ցանցերէն դուրս ձգտելու եւ իրենց հետ քաշել-տանելու այդ ցանցը, կամ ալ ուրիշները ներշնչելու:

Ուստի, վերաձեւուած Սփիւռքին մէջ, Լիբանանի աւանդական հայօճախը պարտէր յարմարիլ իր առաջնորդողի դերը, ազգայնական եւ ժողովրդագրական կշիռն ու կարողականութիւնը Արեւմուտքին ու Հայաստանի Հանրապետութեան զիջելէ ետք: Լիբանահայերու խումբ մը հետեւեցաւ կուսակցական եւ հատուածական ուղիներուն, իսկ ուշագրաւ թիւ մը մասամբ բարեխառնեց իր աւանդական մտածելը եւ նուազ օգտագործեց հայկական հաստատութիւններու միջոցները՝ հայկական տիեզերքին ցանցաւորուելու համար:

### **Կճկուող Հայօճախին Քաղաքականութիւնն Ու Ընկերատնտեսական Եւ Ազգայնական Ներթափը**

Լիբանանեան պատերազմին աւարտը կարելի դարձուց որ հայօճախը իր կազմակերպական կառոյցն ու ենթախմբային հաստատութիւնները վերաձեւէ: Աւելի քան 100,000 հայեր հեռացեր էին երկրէն<sup>34</sup>, եւ լիբանահայութեան թիւը նուազեցուցեր 100,000ի

<sup>33</sup> Ishkhan Jinbashian, "Poles Apart: Vahe Oshagan on the Habitat, Imagery and Inner Reaches of the Diaspora", *AIM*, July 1991, էջ 13:

<sup>34</sup> Vicken Berberian, "The War Inside the New Lebanon", *AIM*, June 1993, էջ 17-19:

շուրջ<sup>35</sup>: Այս նուագումը ունեցաւ լուրջ հետեւանքներ, մինչ արտագաղթը շարունակեց մնալ օրուան գլխաւոր խնդիր<sup>36</sup>:

Հայօճախը դժուարութիւններ պիտի դիմագրաւէր՝ պետութեան, ընկերութեան եւ շուկային համարկուելու գործընթացին մէջ: Ան՝ փոքրացած ուժերով եւ կարողականութեամբ, վերատեսութեան ենթարկեց իր առաջնահերթութիւնները, փորձեց վերակազմակերպուիլ, սահմանափակուիլ եւ վերաչափաւորուիլ ամէնահիմնական նուագագոյնով՝ դպրոց-ընկերային ծառայութիւն-կուսակցութիւն-եկեղեցի ցանցով եւ անոնց ենթացանցերով: Ի տարբերութիւն կարիքաւոր ընտանիքներուն համար իրագործուած փոքրածաւալ բնակարանային ծրագրին յաջողութեան, կեդրոնական դպրոցի մը ծրագիրը, ուր համաձուլուէին Պուրճ Համուտի թաղային ազգային վարժարանները Ազգային Առաջնորդարանին հովանիին տակ, կը դանդաղէր<sup>37</sup>: Համայնքային աճի եւ զարգացման հնարաւորութիւնները գունատ կը թուէին: Լիբանահայերուն տարիքային կառոյցը կրնար պատճառ դառնալ որ սահուն չըլլայ անցումը նոր մտածողութեան ու արհեստագիտութեան, եւ՝ դանդաղի<sup>38</sup>: Հայօճախին 18,8%ը 60էն վեր տարիք ունէր (մինչ Լիբանանի միջինը 9,9% էր), իսկ անոնք որ 20էն նուազ տարիք ունէին կը բաղկացնէին 25,5%ը հայօճախին (մինչ Լիբանանի միջինը 38,9% էր)<sup>39</sup>: Հայօճախին մէջ պատերազմի սերունդներ յառաջացած էին՝ արժեզրկումի եւ տեղահանութեանց ու ընկերային բարդութեանց կողքին<sup>40</sup> եւ նուազած էր թիւը բարձրագոյն կրթութեան տէր անձերուն ու երիտասարդներուն (նաեւ՝ ի հետեւանք արտագաղթի):

Աւելին, ժամանակաշրջանը յատկանշուեցաւ յարաբերական հանդարտութիւն-բրտութեան ալիք-քաղաքական անել կրկնուող դիպաշարով<sup>41</sup>: Այս վիճակը դանդաղեցուց պետութեան

<sup>35</sup> Jinishian Report, *A Survey of Living and Social Needs of Armenians in Lebanon – 2002*, Beirut, 2004, էջ 162:

<sup>36</sup> Armineh Johannes, “Attached to the Land. Anjar Recalls its Roots and Fights to Retain Them”, *AIM*, June 2002, էջ 24:

<sup>37</sup> Այս կրթաշրջանին ան իրականութիւն դարձաւ:

<sup>38</sup> Jinishian Report, էջ 185:

<sup>39</sup> Նոյն, էջ 164:

<sup>40</sup> Սեդա Մարկոսեան-Խտրշեան, «Լիբանանի Պատերազմին Թողած Ընկերային Հետքերը Սեղմ Տողերով», *Ազգակ Բացառիկ*, 2 Յունուար 1995, էջ 71-2. նաեւ Vicken Berberian, “Medicine for the Masses: An Armenian Health Care Center in Lebanon Has Become An Oasis for the Down and Out”, *AIM*, October 1993, էջ 27:

<sup>41</sup> Manal Shaaya, “Ay Sigha LilDawla AILubnaniyya Fil Marhala AlJadida”, *AnNahar*, 8 August 2005, էջ 17:

վերակերտումը, վնասեց երկրին ազգակերտումին եւ համարկումին հաստատութենական փորձերուն եւ խոչընդոտեց երկարաժամկետ տնտեսական վերականգնումը: Բրտութեան ալիքի շրջանին մարդիկ ծախսեցին ինչ որ խնայեր էին կարճատեւ խաղաղ շրջաններուն: Կացութիւնը աւելի կնճռոտեցաւ երբ անդրսահմանային հայկական եւ ոչ-հայկական բարեսիրական կազմակերպութիւններ իրենց գործունէութեան ծիրը եւ նպաստից պարկը թեքեցին Հայաստանի Հանրապետութիւն եւ Ղարաբաղ ու նուազեցուցին իրենց ընկերատնտեսական մատակարարումը հայօճախին: Միւս կողմէն, սակայն, հայօճախին խնդիրները պատերազմի օրերէն աւելի գէշ էին<sup>42</sup>: Հակառակ բարձր աշխատունակութեան, լիբանահայերուն շուրջ 22%ը աղքատութեան գիծին վրայ էր 2002ին, 13,1%ը՝ այդ գիծէն վար, իսկ 30%ը կը յենէր օժանդակութեան եւ նպաստի: Անդին կը մնար ինքնաբաւ մէկ-երրորդ մը, որ չէր կրնար հոգալ հայօճախին բոլոր պէտքերը: Անսպասելի էր որ լիբանահայ շուկայական ուժերը շակէին լիբանահայ մշակութային մեծ ծրագիրներ<sup>43</sup>: Ուշ ընտանեւորման եւ փոքրաթիւ զաւակաբերութեան պատճառը տնտեսական կը թուէր ըլլալ (3,8 անձէ կը բաղկանար լիբանահայ միջին ընտանիքը՝ լիբանանէան 4,6ի դիմաց)<sup>44</sup>:

Բարեկեցիկ լիբանահայերու մեկնումը նուազեցուց հայ գործատէրերուն թիւը<sup>45</sup>: Ուրիշներ հարուածուեցան մրցունակ ներածումներէն, կամ աժան ձեռավարձքով աշխատող գաղթական բանուորներէ: Պէրութի կեդրոնական առեւտրական շուկաներու հայկական փոքրաքանակի խանութները նուազեցան եւ տեղափոխուեցան Պուրճ Համուտի արդէն իսկ խճողուած շուկաները: Լիբանահայ կարգ մը ոչ-կառավարական կազմակերպութիւններ եւ արհեստագիտական ենթախումբեր միաձուլուեցան, ուրիշներ՝ դադրեցան գոյութենէ եւ իրենց անդամները կա՛մ լուսանքայնացան եւ կա՛մ լուծուեցան ոչ-հայկական խմբաւորումներուն մէջ:

Հայօճախը դադրեցաւ խտացեալ զանգուած մը ըլլալէ: Հազարաւոր հայեր տեղափոխուած էին իրենց ականդական բնակավայրերէն եւ կազմած հայկական նոր կղզեակներ՝ Լեռնալիբանանի այլեւայլ

---

<sup>42</sup> David Zenian, “Lebanon in Transition: A reality Check”, *AGBY News*, Vol. 8, No. 3, Sept. 1998, էջ 13:

<sup>43</sup> Hratch Tchilingirian, “Master of Grand Theater”, *AIM*, June 1999, էջ 48:

<sup>44</sup> Jinishian Report, էջ 163:

<sup>45</sup> Hratch Tchilingirian, “Integration: The Point of No Return: Cabinet Minister Arthur Nazarian Discusses Lebanon and the Armenian Community”, *AIM*, December 1999, էջ 48:

շրջաններուն մէջ: Այս վերաբնակեցումին չէր յաջորդած, սակայն, հայկական հանրային հաւաքավայրի՝ ակումբի, դպրոցի, եկեղեցիի կամ նման տարածքի մը հաստատումը, ուր հայեր կարենային հանդիպիլ եւ հաղորդակցիլ: Դեռ աւելին, հայօճախը զուրկ էր լիբանահայ համապարփակ ցանցի համակարգէն, որ ծայրամասային հայերը կապեր-առնչեր եւ յառաջացներ ցանցակալուած Լիբանանի հայօճախը: Ընտանիք-հաւաքականութիւն այս թերի հաղորդակցութիւնը աւելի բարակցուց հայ ծառայողական ենթախումբերը, որոնք դպրոցին ու եկեղեցիին ցանցերուն հետ սատարեր էին հայկական ինքնութեան ու հոգացեր անոր: Զրկուելով ներհայկական անմիջական շփումէն, այս ծայրամասերը հաւանական էր որ համարկուէին եւ տակաւ լուծուէին տեղական ոչ-հայկական միջավայրին: Միւս կողմէն, կուսակցական վերահսկողութեան գիծերէն եւ ենթախմբային տարածքներէն դուրս ցրուումը կարողացուց այս ծայրամասային ընտանիքներէն շատերը որ իրենց շարք մը ընկերահամայնքային թէ կենցաղային հարցերը տնօրինեն անձամբ եւ կամ՝ ոչ-հայկական միջոցներով: Զուգահեռաբար, լիբանահայ աւանդական ծայրամասային դպրոցներ փակուեցան: Կարգ մը կղզեակներ գրեթէ անհետացան առ ի հետեւանք մեծաթիւ խառն ամուսնութիւններու<sup>46</sup>:

Հայկական հանրային տարածքի – բնական վայրը ինքնահոս դաստիարակութեան – կծկուելուն պատճառով նահանջեց նաեւ նոր սերունդի ազգային կրթութիւնն ու դաստիարակութիւնը: 1975էն առաջ, շատ էին պարագաները երբ երկու, նոյնիսկ երեք սերունդներ եւ պորտային ընտանիքի անդամներ միասին, հաւաքական կեանք կ'ապրէին: Ասոնք նոյն տունը, կամ շէնքը, կամ ալ՝ իրարու շատ մօտ վայրեր կը բնակէին, որով կարելի կ'ըլլար որ խոցելի անհատը թիկնի պորտային ընտանիքին: Այս երեւոյթը ինքնահոս, չյանձնարարուած դաստիարակչական դեր մը խաղաց, կապուածութիւն եւ համարկում հաստատեց սերունդներուն միջեւ ու բանաւոր պատմութիւն, հաւաքական յիշողութիւն եւ ազգային արժէքները փոխանցեց սերունդէ սերունդ: Բայց Թաէֆի Համաձայնագրէն ետք, կենցաղային նոր պայմաններուն բերումով, լիբանահայ ընտանիքը մասնատուեցաւ ու փոքրացաւ: Շփումը պորտային ընտանիքին հետ նուազեցաւ: Բովանդակային փոփոխութիւն կրեց նաեւ ծնողաց հայկական դաստիարակչութիւնը: Զգուշութիւն մը յառաջացաւ նորահաս

---

<sup>46</sup> Շեմմէսեան, էջ 43:

սերունդին չպատմելու Ցեղասպանության մանրամասնությունները<sup>47</sup>, ոչ ալ պատմելու այն հետեւողական ճիգերը, զորս համայնքը կատարեր էր իր տնտեսական եւ ընկերամշակութային ու ազգային վերելքին համար: Ընդհակառակը, բարձրաձայն հարցադրումներ կատարուեցան հայկական դասանիւթերու անհրաժեշտութեան առնչութեամբ: Հայերէնը նախկին լրջութեամբ չէր ընկալուեր հայկական զանազան վարժարաններու մէջ<sup>48</sup> եւ առաջնահերթութիւն կը տրուէր այլ մտահոգութիւններու: Հայօճախը դիմագրաւեց մտաձեւի խորքային փոփոխութիւններ, կազմակերպական թերացում եւ ուժային նուազում: Վստահաբար ասոնք իրենց ներգործութիւնը պիտի ունենային հայօճախին ինքնութեան խորքին եւ բովանդակութեան վրայ:

Տնտեսական դժուարութիւնները ծանրօրէն հարուածեցին դպրոցական ցանցը: 1987-2003 շրջանին, արտագաղթի թէ տնտեսական պատճառներով լիբանահայ աշակերտութեան թիւը հայկական դպրոցներուն մէջ ինկաւ 12,924էն 8400ի, մինչ լիբանահայ դպրոցներուն թիւը նուազեցաւ 46էն 30ի (8 նախակրթարան, 9 միջնակարգ, 12 երկրորդական, որոնց միջեւ գտնուող հեռաւարտութիւնը ոչ-աւելի քան 20 քլմ. էր), առաւել 5 թեքնիք (534 աշակերտ), 2 յատուկ դպրոցներ (աչազուրկներու եւ թերաճներու, 87 աշակերտ), 3 դպրեւանքեր (91 աշակերտ) եւ մէկ համալսարան<sup>49</sup>: Անդին լիբանահայ աշակերտութեան առնուազն 38,46%ը կը յաճախէր ոչ-հայկական վարժարաններ: Այս ընթացքով ակնկալելի են տակաւին դպրոցափակումներ եւ դպրոցամիացումներ<sup>50</sup>: Ոչ-հայախօս լիբանահայերուն թիւը յատկանշականօրէն շատցաւ<sup>51</sup> խառն ամուսնութիւններուն (30%էն աւելի), եւ ոչ-հայկական դպրոց յաճախողներու ծնողացման պատճառով:

Գրական արեւմտահայերէն գրել-կարդալու ունակ անձերու թիւի անկումը հարուածեց լիբանահայ մամուլը եւս, չնայած տպագրութեան ոլորտին մէջ արհեստագիտական յառաջընթացին եւ կուսակցութեանց

---

<sup>47</sup> Սարգիս Մահերեճեան, «Քաղաքականացման Չհինցող Պատգամ Մը», *Ազդակ*, 24 Սպրիլ 2002, էջ 4-8:

<sup>48</sup> Sima Aprahamian, “A Multitude of Overlapping Identities: A Lebanese Armenian Community in the Beka’ a Valley of Lebanon”, *The Armenian Review*, vol. 43, Spring 1990, էջ 71:

<sup>49</sup> Երուանդ Պապայեան, «Անընկճելի Լիբանանը», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1993, էջ 47. նաեւ՝ Արա Սանճեան, «Լիբանան», *Հայ Սփիւռք Հանրագիտարան*, Հայկական Հանրագիտարանի Հրատ., Երեւան, 2003, էջ 301:

<sup>50</sup> Շեմմէսեան, էջ 43:

<sup>51</sup> Hratch Tchilingirian, “Crisis Without Borders”, *AIM*, July 1999, էջ 37, 39:

նիթական աջակցութեան: Լիբանահայ մամուլին ընդհանուր ցրուումը նուազեցաւ օրական շուրջ 3-4000ի: Ասիկա մասամբ հակակշռուեցաւ համացանցի վրայ նոյն մամուլին ձեռք բերած յաջողութեամբ: Լիբանահայ թերթերը շարունակեցին կանոնաւորաբար տեղեկացնել միջազգային դէպքերէն, սփիւռքեան, Հայաստանի եւ Ղարաբաղի զարգացումներէն, հայկական մարզական, մշակութային եւ ընկերային իրադարձութիւններէն: Ազգային դաստիարակման իւրայատուկ միջոց ըլլալով, անոնք լուսարձակի տակ կ'առնեն եւ կ'առաջնահերթեն հայկական լուրերը, հայկական պրիսմակէն կը նային միջազգային իրադարձութիւններուն:

Միջկուսակցական յարաբերութիւնները հասան հասունացման ուրիշ հարթակ: Կուսակցապատկան թերթերը չգրեցին միւս կուսակցութեանց խնդիրներուն մասին, ոչ ալ պատասխանեցին քննադատութիւններու: Մամուլը դարձաւ նուազ գաղափարախօսական եւ աւելի տեղեկատուական<sup>52</sup>: Ազգային մտահոգութիւնները նախորդեցին միջազգային որեւէ գաղափարախօսութիւն: Բարեկամական յարաբերութիւններ պահպանելու համար միջկուսակցական շփումները, կուսակցութեանց քաղաքականութիւնը եւ ուղեգիծը ուշադիր փափկանկատութեամբ զեկուցուեցան: Նման մօտեցումը, սակայն, տեղ չձգեց բաց երկխօսութեան, ազատ արծարծումներու, շինիչ քննադատութեանց: Ասիկա քաղաքական հասունացման ճամփան կը նեղցնէր եւ անցեալի սխալներէն սորվելու կարելիութիւնը կը նուազեցնէր: Այլ խօսքով, առցանցի հնարաւորութիւններէն դուրս (որ նոր սկսած էր խորապէս արմատանալ հայօճախին մէջ) քաղաքական այլախոհութիւնը արտայայտուելու ոլորտ չունի, հակառակ անոր որ աւանդական երեք կուսակցութիւններն ալ ենթարկուեցան խորունկ ցնցումներու եւ պառակտումներու (ուստի եւ շատ բան կար քննարկելու):

Այս սահմանափակումները խոչընդոտեցին բազմակարծութիւնը եւ խոցելի դարձուցին ժողովրդավարական յատկանիշերը հայօճախին, մանաւանդ անոր թափանցիկութիւնը, հաշուետոտութիւնը, արդար ներկայացուցչութիւնը եւ թարմ ու ոչ-աւանդական մտածումներու ծաւալումը:

Դեռ աւելին, նուազեցաւ կուսակցութիւններուն անմիջական կապը ենթախումբերուն հետ՝ նախա-1975 հանգրուանի բաղդատմամբ, նաեւ դիւանակալական պատճառներով: Կուսակցութիւններուն դերը,

---

<sup>52</sup> Նոյն, էջ 39:

իշխանությունը, կարողականությունը եւ վերահսկողությունը անհամատարբէն տկարացաւ: Պատերազմի շրջանի անոնց 'ամբողջատիրական մենատիրությունը' գերակշիռ չէր այլեւս, ոչ ալ անմրցակից: Ուրիշ, ոչ-հայ ազդեցիկ անհատներ, կազմակերպություններ եւ պիզնրսներ բաժնեկցիլ սկսան, զրկելով կուսակցությունները պետութեան եւ լիբանահայ քաղաքացիին միջեւ միակ միջնորդը ըլլալու դերէն:

Չուգահեռաբար, հայ արհեստատէրերու եւ համալսարանաւարտներու թիւը հայ կուսակցություններուն մէջ նուազեցաւ, մեծ թիւով կուսակցական եւ անկախ հայեր ոչ-հայ միջնորդներու դիմեցին լիբանանեան քաղաքականություն մտնելու եւ պետութեան մէջ հայութեան վերապահուած պաշտօններ ձեռք բերելու, կամ ընդհանրապէս իրենց ասպարէզին պաշտօնակոչուելու համար: Ազատ ասպարէզի երիտասարդներ եւ պաշտօնեաներ<sup>53</sup> ստիպուած եղան ասպարէզ որոնել ոչ-հայկական միջավայրերու մէջ: Հաւանականությունը աւելի մեծ էր որ անոնք յաջողութիւն գտնէին լայնածիր լիբանանեան հաւաքականութեան մէջ եւ լաւ պաշտօններու հասնէին<sup>54</sup>, քան թէ՛ լիբանահայ փոքրացող տնտեսական օղակին մէջ: Դժուար էր, օրինակի համար, ակնկալել որ երգի եւ երաժշտութեան ուսուցիչներուն 80 առ հարիւրը (որոնք հայեր էին) սահմանափակէին իրենց ասպարէզը լիբանահայ փոքրացող շուկային մէջ, մանաւանդ երբ լիբանանեան խաչասերուած մշակոյթը որոշակի դրականութեամբ կ'ընդունէր խառնուրդը՝ հայկական, արաբական եւ եւրոպական երաժշտութեան<sup>55</sup>: Շուկայի պայմանները ստիպեցին հայ երիտասարդությունը որ ընտրութիւն կատարէ սահմանափակ, նուազ մրցունակ հայկական աշխատավայրերուն եւ յարաբերաբար աւելի լայնածիր լիբանանեան տնտեսական շուկային միջեւ: Վերջինս նիւթական աւելի լաւ պայմաններ կ'առաջարկէր, հեռանկարային էր, բայց անուղղակիօրէն զիջումներ կը պարտադրէր հայկականութեան առումով, քանի որ պաշտօնակոչուողին շփումը բնականօրէն պիտի նուազէր հայօճախին հետ եւ արահետներ պիտի բացուէին յաւելեալ համարկումի: Սահուն արաբերէնին տիրապետած լիբանահայը ուրիշ կարողականութեան, միջոցներու եւ արժեհամակարգերու տէր էր:

<sup>53</sup> Tchilingirian, "Integration", էջ 48:

<sup>54</sup> Նոյն, էջ 47. նաեւ Tchilingirian, "Crisis", էջ 37:

<sup>55</sup> Hratch Tchilingirian, "Big Player: Joe Baroutjian Reaches New Height in Lebanon's Music Industry", *AIM*, October 1999, էջ 53:

Լիբանահայ մշակութային նահանջին զուգահեռ, Լիբանանի արաբ մշակոյթը աւելի ամուր թափանցեց եւ սկսաւ խարսխուիլ լիբանահայ մտքին, սրտին ու կենցաղին:

Ի դիմաց իբրեւ հայ ապրելու մնայուն պայքարին<sup>56</sup>, լիբանահայ երիտասարդը պարտէր գիտակից ընտրութիւն կատարել<sup>57</sup>՝ զոհաբերուիլ համայնքին, Ղատին եւ ազգին, կամ ալ՝ անհատական կեանք մը ապրիլ: Որոշ էր որ ի տարբերութիւն Եւրոպայի ու Արեւմուտքի, ուր անհատական ընտրութիւնները գրեթէ ինքնավար էին եւ ինքնամետ, Միջին Արեւելքի համայնքամետ ընկերութիւններուն մէջ այսպիսի ընտրութիւնները կը կատարուէին ուշադիր աչքերուն եւ շունչին տակը միջավայրին: Արդարեւ, հայկական աւանդին բեռը շատ ծանր կը կշռէր Միջին Արեւելքի հայուն խղճին վրայ: Այդ աւանդը շակեղէլ հրաժարիլը, հպարտառիթ պատմական յիշողութիւն մը շրջանցելը դիւրին չէր՝ առանց յանցաւորի եւ մեղադրեալի զգացումին<sup>58</sup>: Երիտասարդութիւնը, սակայն, երրորդ ուղի մը որդեգրեց: 17-23 տարեկան մեծաթիւ երիտասարդներ որդեգրեցին 'եղանակային' ազգային յանձնառութիւնը: Իսկ 23-24 տարեկանէն ետք, կատարած ըլլալով իրենց ազգային ծառայութիւնը, ասոնց մեծամասնութիւնը լծուեցաւ իր անձնական կեանքին, ընտանիքին, գործին եւ ասպարէզին կերտումին: Ասոնցմէ ոմանք յետագայ հանգրուանի մը պիտի վերադառնային ենթախմբային ծառայութեան՝ իրենց ընտանիքի եւ ասպարէզի հարցերը կարգաւորելէ ետք: Այսպէսով, համայնքը դրսեւորեց վերակենդանացումի որոշ նշաններ, շնորհիւ նաեւ այս երիտասարդներուն ճկունութեան: 2000ին 20,000 հայեր մասնակցեցան Հայկական Ցեղասպանութեան 85ամեակի քայլարշաւին:

Պէտք է նշել որ ինքնութեան մարտահրաւերներուն ընդառաջելը դիւրացած էր: Հռետորաբանութիւնը պարտէր պահպանել թրքական սպառնալիքին կեղրոնականութիւնը, դարաբաղեան յաղթանակները, Հայկական Հարցը, Ցեղասպանութեան պահանջները<sup>59</sup> եւ աւելի շօշափելի երազը **տունդարձի**՝ հիմա որ Հայաստանը վերատիրացած էր իր անկախութեան: Խորքին մէջ, Հայաստանի եւ Ղարաբաղի իրադարձութիւնները, թրքական շարունակուող 'սխալանքները' եւ

<sup>56</sup> Արամ Սեփեթճեան, «Ժամն է Զգաստութեան», *Չարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1995, էջ 131-2:

<sup>57</sup> Kristen Kidd & Hrach Tchilingirian, "Armenians by Choice", *AIM*, August 1998, էջ 12:

<sup>58</sup> Hrair Deukmejian, "The Armenians: History, Consciousness and the Middle Eastern Dispersion", *Ararat Quarterly*, Vol. XIX, # 3, issue 75, Summer 1978, էջ 48:

<sup>59</sup> Խմբագրական, «Դէպի Նոր Հանգրուաններ», *Չարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1985, էջ 1:

հայկական հարցին զարգացումները՝ աղբիւրներն ու մեքենաները, արտադրողները այս բոլոր խանդավառող եւ ոգեւորող հայամետ լուրերուն, բազմացած էին: Ասոնք սկսած էին յառաջանալ Սփիւռքին, Ղարաբաղի ու Անկախ Հայաստանի մէջ: Վերջինս սկսած էր գլխաւոր բաժնետէրը դառնալ հայկական տիեզերքին ու նաեւ հարցերուն:

Ղարաբաղեան հակամարտութիւնը առայժմ լաւագոյն գրաւականն էր հայութիւնը յոյսով եւ պայքարի ոգիով ներշնչելու: Լիբանահայութիւնը ականատես եղաւ թէ ինչպէս միջ-էթնիք հակամարտութիւն մը վերաճեցաւ լիարժէք պատերազմի՝ իսկ շուրջ 40,000 զոհեր: Ի վերջոյ հայկական ուժերը գրաւեցին Լեռնային Ղարաբաղի սահմանամերձ դաշտային գօտին եւ զինադադար մը ստորագրուեցաւ 1994ին: Հայերը պատերազմը յաղթած էին. կը մնար որ դիւանագիտութիւնը եզրափակէր գայն<sup>60</sup>: 1920էն իվեր առաջին անգամ էր որ հայերը որեւէ պապենական հող կ'ազատագրէին<sup>61</sup>: Պահ մը - որոշ տարողութեամբ - Ղարաբաղի հակամարտութիւնը աւելի ուշադրութեան արժանացաւ քան Յեղասպանութեան հարցը, թէեւ երկուքը նոյն Հայկական Հարցին երեսակներն էին եւ կ'ամրացնէին հայապահպանութիւնը:

Ղարաբաղը լաւատեսութիւն ներշնչեց: Նոր պետութիւն մը կը կերտուէր, որ կը համապատասխանէր հայ ազգայնական մտայնութեան: Անիկա յաղթանակի աւիշով վերակենսաւորեց եւ վերաշխուժացուց խոնջացած եւ մաշած ազգայնական զգացումները: Սփիւռքին եւ Ղարաբաղին միջեւ երեւակայական զուգահեռներ գծուեցան: Ղարաբաղի հակամարտութիւնը կը խորհրդանշէր երկու պարտադրաբար բաժանուած մասերու վերամիացումը: Ղարաբաղը օրինակ էր այն մտայնութեան թէ պայքարը կ'արդիւնաւորուի<sup>62</sup>: Իրաւ ալ, հակառակ 70 տարիներու սովետական իշխանութեան եւ անարդարութեան, Ղարաբաղի բնիկ հայերը յանձնառու յառաջադրանքով լծուէր էին պատմական պարտադրութիւն մը սրբագրելու: Պատճառ չկար որ, սփիւռքի հայերը նոյնը չկարենային ընել անարդարուած Յեղասպանութեան: Պակտողը միայն ստանձնումն էր յառաջադրանքին, զգօն ըլլալ, յանձնառու եւ սպասել

---

<sup>60</sup> Կարին Սաղտըճեան, «Զէնքը Յաղթեց, Դիւանագիտութիւնը՝ Տակաւին», *Ազդակ Բացառիկ*, 2 Յունուար 1995, էջ 20:

<sup>61</sup> Խմբագրական, «Անկիւննադարձները Կը Կերտուին Կամքով», *Ազդակ Բացառիկ*, 2 Յունուար 1995, էջ 1-2:

<sup>62</sup> Խմբագրական, «Տեսլականը», *Ազդակ Բացառիկ*, 28 Մայիս 1998, էջ 1-2:

պատեհ առիթին<sup>63</sup>: Լիբանահայերը, լի բնօրրանի հայրենասիրութեամբ<sup>64</sup>, օղակուած էին Ղարաբաղի Հարցին եւ ըստինքեան պահպանեցին իրենց յանձնառութիւնը հայապահպանութեան: Ոմանք կամաւորագրուեցան Ղարաբաղի իրենց եղբայրներուն խնդրին, ուրիշներ դրամահաւաք կազմակերպեցին եւ բարձրորակ զինամթերք դրկեցին: Պարզ է որ լիբանահայութեան պատերազմի ճիգը՝ Ղարաբաղին, անհամաչափ էր Ղարաբաղի պետքերուն. ան ծառայեց հայօճախը վերաշխուծացնելու եւ Ղարաբաղի հայերուն բարոյականը բարձրացնելու:

Զուգահեռաբար, ամբողջ 1990ականներուն Թուրքիին ու Թուրքիոյ սեւացրեքեան պատկերը յամառօրէն պահպանուեցաւ: Հայերը իրենց կարողութիւններուն լուսագոյնը տրամադրած էին Օսմանեան Կայսրութեան բարօրութեան, ու երբ փափաքեր էին արժանավայել կեանք մը ապրիլ՝ դաւաճաններ համարուեր էին<sup>65</sup>, ցեղասպանուեր ու իրենցմէ իլուեր էր պապենական երկիրը: Հետեւաբար, Թուրքիան կը նկատուեր զերթշնամին հայութեան՝ այնքան ատեն որ չէր ճանչնար Հայոց Ցեղասպանութիւնը<sup>66</sup>: Թուրքիան մերժած էր դիւանագիտական յարաբերութիւններ հաստատել Հայաստանի հետ<sup>67</sup> եւ շրջափակում պարտադրած անոր<sup>68</sup>, փորձելով խեղդել նորանկախ հանրապետութիւնը, հակահայ եւ ազերիամետ կեցուածք որդեգրած Ղարաբաղի հակամարտութեան խնդրով: Թուրքիոյ այս արարքները վերահաստատեցին հայերուն համոզումը թէ՛ «փանթուրանական սպառնալիքը տակաւին առկայ է»<sup>69</sup>, եւ թէ՛ թուրք-հայկական հաշտութեան յանձնախումբը (TARC) բացայայտ դաւադրութիւն մըն էր փոշի ցանելու աչքերուն անոնց, որոնք Թուրքիայէն կը պահանջէին Հայոց Ցեղասպանութիւնը ճանչնալ՝ Եւրոպական Միութեան միանալէ առաջ: Շրջանային պաստառին վրայ, թուրք-խորայելեան պայմանագիրը՝ Միջին Արեւելքն ու Կովկասը թուրք-խորայելեան

<sup>63</sup> Խմբագրական, «Ճշմարտութեան Տարին», *Ազդակ*, 2 Յունուար 1989, էջ 2. նաեւ՝ Tony Halpin, “The Courtship of 3.5 Million Diasporans”, *AIM*, July 1998, էջ :

<sup>64</sup> Safran, էջ 281:

<sup>65</sup> Լեւոն Չորմիսեան, *Կուսակցութիւնները*, Պէյրութ, Տպ. Մշակ, 1965, էջ 133:

<sup>66</sup> Վիգէն Աւագեան, «Մարտահրաւերներու Ընդդէմ», *Ազդակ*, 24 Ապրիլ 2002, էջ 13. նաեւ՝ Ժագ Յակոբեան, «Որպէսզի Միշտ Վառ Մնայ Պահանջատիրութեան Հուրը», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2003, էջ 4-6:

<sup>67</sup> Aram Arkun, “Hunchakians”, *AIM*, March 1991, էջ 28:

<sup>68</sup> Զաւէն Մսրըլեան, «Հայկական Հարցի Հոլովոյթը, 1994-2003», *Արարատ Բացառիկ*, 1 Յունուար 2004, էջ 18-34:

<sup>69</sup> Arkun, էջ 28:

աքցանի յարձակողապաշտ քաղաքականութեան մէջ կը դնէին: Ջուգահեռներ գծուեցան Թուրքիոյ՝ Յեղասպանութեան ժխտումին եւ Ազրպէյճանի՝ Ղարաբաղի հայոց իրաւունքներու կապտումին միջեւ<sup>70</sup>:

Հուսկ, Հայկական Հարցը վերասահմանուեցաւ այնպէս որ ան ընդգրկէ ազատագրուած Արցախի պահպանումն ու անոր հողային ամբողջականութեան ամրապնդումը, Հայաստանի Հանրապետութեան տնտեսութեան զարգացումը եւ վերականգնումը անոր ընկերային ու ազգային արժեհամակարգին, եւ վերածումը առաջին կարգի պետութեան, Արեւմտահայութեան իրաւունքներու պահանջատիրութիւնը եւ Ջաւախքի ազուցումը Հայաստանի Հանրապետութեան<sup>71</sup>: Կարգ մը ազգայականներու համար Հայկական Հարցը կ'ընդգրկէր նաեւ Նախիջեւանի ազատագրումը եւ հայութեան մէկտեղումը Միացեալ անկախ ամբողջական Հայաստանի մէջ<sup>72</sup>:

Այսպէս, Լիբանանի ծերացող հայօճախը, իր նուագած կարողականութեամբ, կրճատուած հանրային ոլորտով եւ կծկուած տնտեսական տարածքով լարուած էր դիմագրաւելու համարկումի եւ հայապահպանումի ներքին մարտահրաւերները: Կուսակցութիւնները կորսնցուցեր էին տէր ըլլալու եւ վերահսկելու մենատիրութիւնը: Մեծաթիւ հայեր դուրսը կը գտնուէին անոնց ազդեցութեան եւ վերահսկողութեան գօտիէն, մինչ երիտասարդ սերունդին ուրիշ ելք չէր մնացած, քան՝ բացուիլ լիբանանեան լայնածիր շուկային եւ միջավայրին: Ձեռով մը, ի տարբերութիւն 1975-90 հանգրուանի ազգային սեղմիրանին, յետ-Թաւփի հանգրուանը հայօճախին պարտադրեց նոր կամուրջներ հաստատել, վերաբանալ համարկումի արահետները եւ նորեր որոնել եւ որդեգրել:

Տնտեսական շուկային վրայ հայ գործատէրերու նուագումը եւ հայ կուսակցութիւններու միջնորդական դերի տկարացումը պատճառ դարձան որ յաճախ հայ հայցորդը իր ազգակից տէրը փոխարինէ ոչ-հայով: Այդուհանդերձ, լիբանահայը շարունակեց ընդառաջել հայկական խնդիրներուն: Ի տարբերութիւն 1975-90 շրջանին, համարկումը վերապարտադրեց ինքզինք եւ ստիպեց որ հայօճախը

<sup>70</sup> Խմբագրական, «88Ամեայ Աննահանջ Պահանջատիրութիւն», *Ազդակ Բացարկի*, 24 Ապրիլ 2003, էջ 3. նաեւ՝ Խմբագրական, «Օրհնաբեր Քաղաքականութեան Սպասումով», *Արարատ Բացարկի*, 1 Յունուար 1998, էջ 1-3. նաեւ՝ Խմբագրական, «Յեղասպանութիւնը Քաղաքական Խաղաքարտ Չէ», *Ազդակ*, 24 Ապրիլ 2002, էջ 1:

<sup>71</sup> Մկրտիչ Մկրտիչեան, «Հայ Դատը Բազմաթիւ Երեսներ Ունի», *Ազդակ*, 24 Ապրիլ 2002, էջ 2-3. նաեւ՝ Խմբագրական, «Գաղափարական Պայքարի Դարաշրջանը», *Ազդակ Բացարկի*, 1 Յունուար 2000, էջ 2:

<sup>72</sup> Աշըգեան, 2001, էջ 14:

առնուազն հաւասարակշռութիւն մը գոյացնէ հայապահպանումին եւ համարկումին միջեւ: Զուգահեռաբար, հանրային ոլորտին վրայ անկախ մտաւորականներու թիւը աւելցաւ: Ասոնց մեծ թիւը, սակայն, գրեթէ կը համապատասխանէր իրենց անկազմակերպուածութեան: Ասոնք խորարմատ համայնքային իրաւականութիւն ալ չունէին եւ չէին գոյացնէր այն վճռորոշ կշիռը որ ըստինքեան փոփոխութիւն յառաջացնէր կուսակցութիւններուն եւ ընդհանրապէս հայօճախին ու աւանդական հաստատութիւններուն մտածելին եւ գործելաձեւին մէջ: Միաժամանակ, ազգայնական դաստիարակութիւնը շարունակուեցաւ գլխաւոր նիւթ ունենալով Թուրքիան, Հայաստանի Հանրապետութիւնը, Ղարաբաղն ու Հայկական Հարցը:

#### **Գ) Հայաստան՝ Խնդիրներով Ծանրաբեռն**

##### **Պետութեան Մը Վերածնունդը**

7 Դեկտեմբեր 1988ին, աւերակող երկրաշարժ մը հարուածեց հիւսիս-արեւելեան Սովետական Հայաստանը: Ադէտը դրդապատճառ դարձաւ Սփիւռքի մէջ Հայաստանի հանդէպ վերաբերումի շրջափոխութեան, եւ՝ Հայրենիք-Սփիւռք յարաբերութեանց գործնական նոր տարագումի մը առիթ յառաջացուց: Այս զարգացումը գրեթէ զուգադիպեցաւ երկրին ազգայնական-ժողովրդային ուղղութեամբ առած քայլերուն, որոնց արդիւնքներէն եղան Ապրիլ 24ի Ազգային Օր հռչակումը եւ Եռագոյնի վերահաստատումը իբրեւ Հայաստանի ազգային դրօշ<sup>73</sup>: Հայաստանի Հանրապետութեան հռչակումը Սեպտեմբեր 1991ին, Առաջին Հանրապետութեան Ազգային քայլերգին վերականգնումը եւ Ղարաբաղի հայերուն բացայայտ աջակցութիւնը նոր մղում մը յառաջացուցին հայկական տիեզերքին մէջ: Այս զարգացումները սրտափոխեցին Սփիւռքի լայն շրջանակները: Սփիւռքը, ի տարբերութիւն սովետական ժամանակներուն, հիմա միաձայն էր՝ Հայաստանը հայրենիքի անկիւնաքարը նկատելու, հակառակ գաղափարական տարակարծութիւններու<sup>74</sup>: Սփիւռքին համար, Հայաստանի հայերուն ազգայնական զարթօնքը եւ երկրին անկախացումը «նոր ծիածան էին,

<sup>73</sup> Խմբագրական, «Ճշմարտութեան Տարին», *Ազդակ*, 2 Յունուար 1989, էջ 2:

<sup>74</sup> Խմբագրական, «Հայուն Երազին Մարմնաւորումը Յենարան Ու Մեկնակէտ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1993, էջ 1-2. նաեւ՝ Խմբագրական, «Որպէսզի Երազները Արդարօրէն Իրականանան», *Ազդակ*, 1 Յունուար 1996, էջ 1-2. նաեւ՝ Ter Minasian, էջ 19:

որ իր ուրախ գոյները կը սփռեր ու կը խանդավառեր տրամադրությունները Սփիւռքի մէջ»<sup>75</sup>:

Այդուհանդերձ, ի տարբերութիւն Ղարաբաղի ազգային գիտակցականութեան եւ յանձնառութեան, Հայաստանի խառն զարգացումներուն հանդէպ յոյս եւ հաւատք պահպանելը խնդիր էր: Սփիւռքի ազգայնականները պահպանեցին առաջին հանրապետութեան կարճատեւ անկախութեան յիշատակը եւ զայն ջրդեղեցին Ղարաբաղեան հակամարտութեան փաստերով: Անոնք առարկեցին որ յետ-եղեռնեան պետական պայքարը արդիւնաւորուեցաւ 1918ի Հայաստանի Հանրապետութեան հռչակումին շնորհիւ: Հիմա ժամանակն էր որ Ղարաբաղի պայքարը արդիւնաւորուէր: Ըստինքեան, անոնք ակնարկեցին Սփիւռքին շարունակելու իր պայքարը՝ հասնելու համար իր նպատակներուն:

1990 Օգոստոսին ՀՅԴն բացայայտեց իր ներկայութիւնը Հայաստանի մէջ<sup>76</sup>: Ապրիլ 1991ի իր 18րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովէն ետք, ՌԱԿը մասնաճիւղ մը հաստատել ջանաց Հայաստանի մէջ<sup>77</sup>: ՄԴՀԿը նոյն քայլին դիմեց Մայիս 1993ին<sup>78</sup>: Սփիւռքի կուսակցական գործիչներ շտապանքով առաքուեցան Երեւան, ուր վարեցին այս մասնաճիւղերը<sup>79</sup>: Շուտով անոնք սկսան հրատարակել իրենց թերթերը, որոնք ուշագրաւ դեր խաղացին ազգայնականութեան եւ արեւմտեան քաղաքական մշակոյթի ծաւալումին մէջ<sup>80</sup>: Կուսակցութեանց ներգաղթը, սակայն, չառաջացուց ակնկալուածը, թէ՛ւ յառաջմղեց բազմակարծութիւնը<sup>81</sup>:

Անկախութեան առաջին տարիներուն, սովետական իշխանութեան 70 տարիներու 'իրագործումները' ուրացումի ենթարկուեցան, մինչ

---

<sup>75</sup> Զաքար Մկրեան, *Վկայութիւն Եւ Պատգամ*, Պէյրութ, Համազգային Վահէ Սէթեան Տպարան, 2006, էջ 646:

<sup>76</sup> «Յայտարարութիւն», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1989, էջ 47. նաեւ՝ Հարցազրոյց, «Անկախ Հայաստանի Կառուցումը Համահայկական Դրօշով Ազգային Միացեալ Կառավարութեամբ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1993, էջ 4. նաեւ՝ Յակոբ Բագրատունի, «1990 Արցախի Պոռթկում, Հայաստանի Ինքնիշխանութիւն Եւ Հայ Դաշնակցութեան Վերընձիւղում», *Ազդակ*, 1 Յունուար 1991, էջ 16:

<sup>77</sup> Յովիկ Էօրտէքեան, «ՌԱԿը Հայաստանի Հանրապետութեան Մէջ (1991-1996)», *Զարթօնք Բացառիկ*, 1997, էջ 27-29:

<sup>78</sup> Եղիկ Ճերէճեան, «ՄԴՀնչակեան Կուսակցութիւնը Եւ Ղարաբաղի Հարցը», *Արարատ Բացառիկ*, 1 Յունուար 2004, էջ 6:

<sup>79</sup> Armenian Survey, “An Interview with President”, էջ 29-30. նաեւ՝ Panossian, էջ 168:

<sup>80</sup> Արմէն Իւրնէշլեան, «Փորձ-Ակնարկ Հայ Կուսակցութեանց Վրայ», *Զարթօնք Բացառիկ*, 1997, էջ 30-35:

<sup>81</sup> Նոյն:

երկրին մեջ լոյսի, ջեռուցման եւ ուտեստի զրկանք յառաջացաւ<sup>82</sup>: Այս ժխտումը օտարացուց սովետամետ մէկ մասը Սփիւռքին: Յետագային, ՀՅԴի արգիլումն ու անոր ղեկավարին արտաքսումը երկրէն (28 Դեկտեմբեր 1994) օտարացուց ՀՅԴամէտ մէկ մասը Սփիւռքին<sup>83</sup>: Այլ իրադարձութիւններ յաւելեալ լարուածութիւն եւ պրկում պիտի տային Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններուն:

Ի տարբերութիւն սովետական տարիներուն, նորանկախ հանրապետութեան մեջ շուկայական տնտեսութիւնը հարուածեց ազգային մշակոյթը եւ սպառնաց անոր ապագային յուսաբեկութեան զգացումներ սերմանելով: «Ժողովուրդը՝ կողոպտուած համայնավարութենէն, քանդուած՝ պատերազմէն եւ հարթուած՝ երկրաշարժէն»<sup>84</sup> ակնատես կը դառնար հարիւրհազարաւոր հայրենակիցներու արտագաղթին: Արտասահմանէն եկող բարեսիրական աջակցութիւնը տուրքի կ'ենթարկուէր, օրէնքները տարտամ էին եւ երբեմն հակասական<sup>85</sup>: Բնակչութեան շուրջ կէսը աղքատութեան գիծէն վար կ'ապրէր: Յուլիս 1997ին Արարատ ֆութպոլի խումբի ոսկի տոնոց ժամանումը Պէյրութ - այն տղաքը որոնք 1973ին Սովետ Միութեան ֆութպոլի ախոյեանութիւնը եւ 1975ին Բաժակը շահեր էին - հին՝ փառաւոր օրերու յիշատակներ արթնցուց<sup>86</sup>: Քաղաքական տեղքայլն ու ընկերատնտեսական եւ ապահովական անկումը՝ նորահռչակ Հայաստանի Հանրապետութեան մեջ, ցնցումի յաւելեալ ալիքներ արձակեցին եւ խախտեցին վստահութիւնը լիբանահայութեան՝ իրենց նախահայրերուն երկրին փայլուն ապագայի երազանքին հանդէպ:

Կրօնական երեսակին վրայ, Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի եւ իր յաջորդին մահերը, Հայաստանի մեջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի հանդիսութիւնները, ինչպէս նաեւ Հայ Աւետարանական եւ Կաթողիկէ եկեղեցիներուն մերձեցումը Հայ Առաքելական Եկեղեցիին՝

---

<sup>82</sup> Ընդերք Ճեպէճեան, «Տարադէպ Եփոք», *Ջարթօնք Բացարկի*, 1 Յունուար 1998, էջ 47. նաեւ՝ Tony Halpin & Zara Chatinian, “Repats in Armenia: Diasporans at Home Abroad”, *AIM*, May 2002, էջ 22:

<sup>83</sup> Խմբագրական, «Արցախեան Պատգամ. Բնքնամսխումը Ներելի Չէ», էջ 1-2. նաեւ՝ Խմբագրական, «Հայուն», էջ 1-2. նաեւ՝ Panossian, էջ 173:

<sup>84</sup> Armenian Survey, “Old Dreams New Prospects: The Armenia Fund Forges Ahead”, *AIM*, April 1996, էջ 16:

<sup>85</sup> “The Evangelicals in Armenia: On the Road to Pluralism”, *AIM*, January 2000, էջ 47:

<sup>86</sup> Սիլվա Աւագեան, «Արարատ Եկաւ, Յաղթեց, Հիացուց Եւ Իր Հետ Տարա Բոլորին Մերը», *Արարատ Բացարկի*, 1 Յունուար 1998 էջ 170:

աննախընթաց երեւոյթներ էին<sup>87</sup>: Պատմական այս զարգացումները, անոնց հետեւանքները եւ արդիւնքները լուսատեսական ակնկալութիւններու եւ յոյսի թափ յառաջացուցին եկեղեցական խումբ մը առկախ հարցերու լուծման առնչութեամբ<sup>88</sup>, առնուազն՝ եկեղեցական բաժանման վերացման ուղղութեամբ, որ կրկնութիւններ կը պարտադրէր եւ անտեղի վատնում մըն էր Սփիւռքի սահմանափակ նիւթադրփւրներուն<sup>89</sup>:

Միջ-1950ականներուն, Պաղ Պատերազմի տարիներուն, եկեղեցին գոհ գացեր էր միջ-կուսակցական պայքարներուն<sup>90</sup>: Հիմա որ Պաղ Պատերազմը վերջացած էր, ակնկալելի էր որ եկեղեցական միութիւնը վերահաստատուէր:

Տասնամեակներ տեւած բաժանման վերացումին յոյսերը շատցան երբ Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ. Էջմիածնի Կաթողիկոս ընտրուեցաւ Ապրիլ 1995ին: Սակայն, չիրականացաւ Հայ Եկեղեցոյ միութիւնը<sup>91</sup>: Թէեւ երկու կաթողիկոսներն ալ եկեղեցոյ եւ ազգին միութիւնը ամենաճնշող ազգային նիւթը նկատեցին եւ խոստացան նոր *մոտուս օփերանտի* մը յառաջացնելու, իրենց յանձնառութիւնը՝ միութիւնը չիրագործուեցաւ: Այս հիասթափութեան գործած վնասը մասամբ կը չափորոշուի հայութեան մէջ եկեղեցոյ ստանձնած դերին ու տեղին տարողութեամբ<sup>92</sup>:

Այլ անյաջողութիւններ եւ հիասթափութիւններ յաջորդեցին. Սփիւռքի սնուցանած երագները՝ ժողովրդավար Հայաստանի մէջ Սփիւռքի եւ նորանկախ Հայաստանի *քոալիսիոն* կառավարութեան մը յառաջացման, որ պիտի ըլլար համադրուած ճիգի մը սկիզբը, սատարէր հայկական տիեզերքին վերելքին ու նուիրուէր Հայկական Հարցին<sup>93</sup>՝ փշրուեցան իտէալական Հայաստանի գաղափարին հետ<sup>94</sup>:

<sup>87</sup> Նման փորձ մը եղած էր 1960ականներու կեսերուն, սակայն ըստ երեւոյթին չէր զարգացած:

<sup>88</sup> Մելքոն Էպլիդաթեան, «Ամենայն Հայոց Կաթողիկոսին Ընտրութեան Առիթով», *Ազգակ Բացարիկ*, 2 Յունուար 1995, էջ 36. նաեւ՝ Armenian Survey, “Meeting the First Year’s Challenges: Karekin I Rethinks, Reconstructs, Reeducates”, *AIM*, May/June 1996, էջ 20:

<sup>89</sup> “So Near and Yet So Distant”, *AIM*, February 1992, էջ 15:

<sup>90</sup> Մելքոն Էպլիդաթեան, *Գաղթակայանէն Խորհրդարան, Հտր. 1*, Հալէպ, Կիլիկիա Հրատ., 1998, էջ 237:

<sup>91</sup> Salpi Haroutinian-Ghazarian, “He Came He Saw He Conquered: Catholicos Karekin I’s Visit to North America”, *AIM*, February 1996, էջ 25. նաեւ՝ Panossian, էջ 192ծնթ.65. նաեւ՝ Hratch Tchilingirian, “Aram I on Faith and Homeland”, *AIM*, April 1998. նաեւ՝ “So Near”, էջ 15:

<sup>92</sup> Էպլիդաթեան, *Հտր. 1*, 1998, էջ 235-6. նաեւ՝ Yves Ternon, *La Cause Armenienne*, Paris, Editions du Seuil, 1983, էջ 154:

<sup>93</sup> Խմբագրական, «Հայուն Երագին Մարմնաւորումը Յենարան», էջ 1-2:

Արտաքին քաղաքականության շուրջ Նախագահին եւ Արտաքին Գործոց Նախարարին միջեւ յառաջացած տարակարծութիւնը պատճառ դարձաւ, որ նախարարը հրաժարի եւ աւարտին հասնի այն յարաբերութիւնը, որ կը թուէր թէ կ'ամրակայէր գործընկերութեան նոր հանգրուան մը՝ Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ<sup>95</sup>: Ասիկա կ'արտացոլէր հակադրութիւնը քաղաքական երկու դպրոցներու՝ ընդհանրապէս (եւ շուկայական տնտեսութիւն), ու՝ ազգային մշակութային արժեքամակարգի միջեւ<sup>96</sup>:

Անհասկնալի էր, որ երբ անկախ Հայաստանը կ'ըմբռնուէր իբրեւ Հայկական Հարցին տէրը, ան չգործէր «*թիրախ ունենալով Հայկական Յեղասպանութեան Ճանաչումը եւ [չ]դառնար անմասնատելի մասը Հայկական Հարցի պայքարին*»<sup>97</sup>: Բայց եւ այնպէս, դժուար թէ վտիտ եւ դիւրաբեկ երկիր մը՝ ապահովական յառաջադրանքներով ծանրաբեռնուած եւ պետականակերտման առաջնահերթութիւններով կողմնորոշուող, կարենար առաջնահերթութիւն տալ Սփիւռքի օրակարգին: Հայաստանի Հանրապետութիւնը ուրիշ մտածումներ ունէր Հայոց Յեղասպանութիւնը առաջնահերթելու՝ յաչս դրացի երկիրներուն հետ յարաբերութեան: «Դիւանագիտական մոռացում» մը կար Հայոց Յեղասպանութեան հանդէպ, մինչ Սփիւռքի մէջ Յեղասպանութեան ճանաչման պայքարը թափ կ'առնէր: Ըստ երեւոյթին Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ օրակարգերու սահուն չէին համադրուէր: Հայաստանը ո՛չ սփիւռքեան օրակարգ ունէր, ո՛չ ալ այդ առնչութեամբ՝ նախարարութիւն: Իսկ իր կապերը Սփիւռքին հետ ընդհանրապէս սահմանափակուած էին տնտեսական եւ ճարտարարուեստական օժանդակութեամբ<sup>98</sup>:

Սակայն, տակաւ, Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը բարեշրջուեցաւ եւ ընդգրկեց Հայոց Յեղասպանութեան ճանաչման հետապնդումը: Յեղասպանութեան ճիւղակին առթիւ, Հայաստանի պետական ներկայացուցիչներ հարցը բարձրացուցին միջազգային տարբեր ամբիոններու մէջ: Այդուհանդերձ, կատարուածը շատ հեռու էր Սփիւռքի ազգայնականներուն ակնկալածէն:

---

<sup>94</sup> Halpin & Chatinian, “Repats”, էջ 25:

<sup>95</sup> Tony Halpin, “The Face of Discord”, *AIM*, November 1992, էջ 8:

<sup>96</sup> Գասպար Տէրտէրեան, «Անցումային Այս Յարափոփոխ Հանգրուանի Նոր Երկրէնեռացումին Շփոթն Ու Տագնապը», *Զարթօնք Բացարձիկ*, 1 Յունուար 1996, էջ 40-42:

<sup>97</sup> Խմբագրական, «Ճանաչում եւ Հատուցում», *Ազդակ Բացարձիկ*, 24 Ապրիլ 2001, էջ 3:

<sup>98</sup> Jinbashian, “Poles Apart”, էջ 13:

Երկար ժամանակ գուրգուրուած մշակութային աւանդներ, որոնք փրկուած էին Սփիւռքի մէջ, գնուած ու Սովետական Հայաստան դրկուած՝ պահպանուելու համար, լքումի ու գողութեան ենթակայ կը դառնային: Արժեհամակարգի այս փոփոխութիւնը կը հակադրուէր տասնամեակներ շարունակ արտայայտուած կարծիքներուն, ազգայնօրէն պահպանուած համոզումներուն եւ պատկերին՝ թէ հայերը մշակութասէր ժողովուրդ էին: Հայու իտէլական դիմանկարը կը խաթարուէր: Նոյնիսկ Հայ Առաքելական Եկեղեցին, որ յաճախ հպարտութեամբ 'ազգային' էր կոչուէր, կը ձախողէր իր ափին մէջ առնել կրօնական հարցերը Հայաստանին, ուր շուրջ 40 աղանդներ եւ 'եկեղեցի'ներ պաշտօնապէս գրանցուած էին եւ կը գործէին<sup>99</sup>:

Այն երազը՝ թէ ամէն ինչ կատարեալ պիտի ըլլար երբ հայերը ձեռք բերէին իրենց անկախութիւնը եւ ստանձնէին իրենց հարցերը՝ չիրականացաւ: Անկասկած, հայերը քիչ ներգործութիւն կրնային ունենալ հայկական ցաւերուն արտաքին գործօններուն վրայ, բայց զարմանալի էր որ ինչո՞ւ անոնք չէին կրնար ներգործել ներհայկական գործօններուն վրայ<sup>100</sup>: Թէեւ շարք մը հիմնական փոփոխութիւններ Հայաստանի մէջ խորապէս ազդած էին բնօրրան-Սփիւռք յարաբերութիւններուն, այդուհանդերձ 1923ի եւ 1988ի միջեւ յառաջացած ճեղքը բազմաձեւ տարբերակներով կը գոյատեւէր<sup>101</sup>:

Այս խաչաձեւող, հակադիր, աննախընթաց եւ շփոթեցնող զարգացումներուն կոյտը չձգեց որ հայերը յստակ եզրակացութիւններ գոյացնեն ինքնութեան, քաղաքացիութեան, անդրսահմանային ազգայնականութեան հարցերուն շուրջ: Յոյսն ու հիասթափութիւնը բազմիցս իրար պիտի խաչաձեւէին լիբանահայ հոգիներն ու մտքերը շրջանի, Հայաստանի եւ Ղարաբաղի վերիվայրումներուն դիմաց: Պարզ դարձաւ որ իրականութիւններն ու երազները տարբեր բաներ էին<sup>102</sup>: Կ'արժէի՞ն արդեօք Սփիւռքի հայապահպանութեան համար կատարուած զոհողութիւնները, պէ՞տք էր շարունակուէին նորահաս սերունդներուն ազգային նոյն յառաջադրանքներուն յանձնառութիւնները, աւելի իմաստուն պիտի չըլլա՞ր համարկուիլ եւ տակաւ ձուլուիլ:

<sup>99</sup> "The Evangelicals in Armenia", էջ 47:

<sup>100</sup> Մկրտիչ Մկրտիչեան, «Համախումբ Կազմակերպումի Հրամայականը», *Ազդակ*, 1 Յունուար 1994, էջ 28-29:

<sup>101</sup> Panossian, էջ 182:

<sup>102</sup> Խմբագրական, «Որպէսզի Երազները Արդարօրէն Իրականանան», էջ 1-2:

Այս բոլորով հանդերձ, Սփիւռքի կարողականութիւնն ու մասնագէտները մասամբ զօրաշարժի ենթարկուեցան<sup>103</sup> եւ գործի մղուեցան: Դրամահաւաքի ծրագիրներ սկսան խանդավառել մեծաթիւ սփիւռքահայեր, Սփիւռքի բարեսիրական կազմակերպութիւններ Հայաստան փոխադրեցին իրենց գործունէութեան դաշտը<sup>104</sup>:

Իրերը տակաւ բարեփոխուեցան. նորընտիր նախագահ Բոպերթ Քոչարեան վերացուց ՀՅԴի դէմ դրուած արգելքը: Օգոստոս-Սեպտեմբեր 1999ին, կայացան առաջին Համահայկական Խաղերը<sup>105</sup>, ապա՝ առաջին Հայաստան-Սփիւռք համաժողովը՝ 53 երկիրներէ ժամանած շուրջ 700 պատուիրակներու մասնակցութեամբ<sup>106</sup>: Համաժողովէն ակնկալուած յոյսերը շուտով յօդս ցնդեցան երբ վարչապետը, խորհրդարանի նախագահն ու խումբ մը երեսփոխաններ սնպաննուեցան խորհրդարանին մէջ 27 Հոկտեմբեր 1999ին<sup>107</sup>: Լիբանահայերը յիշեցին 'անամօթ' եղբայրասպանութեան հին օրերը....

2000ին, անկախութենէն տաս տարի ետք, կարծես թէ Սփիւռքի ու Հայաստանի քօղարկուած եւ շուքի մէջ պահուած երեսակները յայտնաբերելու առաջին հանգրուանը վերիվարոյ հասած էր իր աւարտին: Հայկական տիեզերքին երկու կողմերուն վրայ ալ թիւր պատկերացումները մասամբ հասկնալի դարձան, մաքրուեցաւ մթնոլորտը յօգուտ աւելի լաւ փոխմբոնումի ու գործակցութեան: Դէպի նորանկախ հանրապետութիւն սկզբնական զգացական խուժումը տեղի տուաւ աւելի իրապաշտ գնահատումներու<sup>108</sup>: Փոքրաթիւ 'զինեալ հայրենադարձութիւնը' Ղարաբաղ, վերածուեցաւ 'տնտեսական հայրենադարձութեան' որ առաջնորդեց ընկերովի գործառնութեան<sup>109</sup>: Հայատեւումի եւ հայապահպանումի, Սփիւռք-Հայաստան յարաբերութեանց եւ Ղարաբաղի զօրաշարժի բերկրաթմբիքը նուազեցաւ, բայց չվերջացաւ: Շատ բան չաւելցաւ Յեղասպանութեան ճանաչման արժումին՝ Քոչարեանի

<sup>103</sup> Haroutinian, “Brave”, էջ 12. նաեւ՝ Աշըգեան, 2001, էջ 17:

<sup>104</sup> Pattie, էջ 194:

<sup>105</sup> Այս խաղերուն մասնակցեցան շուրջ 1200 մարզիկներ, 23 համայնքներէ:

<sup>106</sup> Ս. Երուանդեան, «Հայրենիք-Սփիւռք Յարաբերութիւնները 1999ին» *Ազրակ Բացառիկ*, 1 Յունուար 2000, էջ 26-32. նաեւ՝ Halpin, “The Courtship”, էջ 10:

<sup>107</sup> Տեղեկագիր, «Հայրենիքին Եւ Ազգին Դէմ Ոճիրը», *Ազրակ Բացառիկ*, 1 Յունուար 2000, էջ 2:

<sup>108</sup> Kristen Kidd, “A Decade of Giving: Will the Diaspora Assistance to Armenia’s Orphans Continue?” *AIM*, February 1999, էջ 30. նաեւ՝ Halpin & Chatinian, “Repats”, էջ 24:

<sup>109</sup> Serge Samonianitz, “Soviet Armenian Immigrants Carve Path to Success”, *AIM*, September 1990, էջ 18:

նախագահութեան օրերուն (1998-2002-2008)<sup>110</sup>. Հայոց Ցեղասպանութեան 90ամեակի յուշատօներուն հայութիւնը թէ՛ պետական եւ թէ՛ ժողովրդական առումներով շարունակեց անմիաբան մնալ<sup>111</sup>, թէեւ աւելի սերտացած՝ նախկին տասնամեակին բաղդատմամբ, եւ շատ աւելի լաւ՝ սովետական շրջանին համեմատ: Սփիւռքը ըմբռնեց պետական եւ ազգային քաղաքականութեան տարբերութիւնները<sup>112</sup>: Հայաստանի մէջ կեանքը սկսաւ աւելի նմանիլ մնացեալ աշխարհին<sup>113</sup>, անհետացան հայութեան միջեւ ֆիզիքական անցարգելները, թէեւ հոգեբանական եւ մտածելի, աշխարհընկալումի ու գործելաձեւի բազմաթիւ անցարգելներ տարբեր տարողութեամբ մնացին<sup>114</sup>:

Եղան նաեւ Հայաստան-Սփիւռք գործակցութեան օրինակելի դէպքեր, ինչպէս «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը: Նպատակ ունենալով երկրաշարժէն քանդուած շրջանին վերակառուցումը, Ղարաբաղի վերականգնումը եւ Հայաստանին վերակենդանացումը, Հիմնադրամը հայերուն առիթը տուաւ բնօրրանի մը վերականգնումին աջակցելու սփիւռքեան երազին, եւ կարելի դարձուց Հայաստանը, Ղարաբաղը, Սփիւռքը եւ բնօրրանը զօդելու յառաջաքայլերը: Հիմնադրամը դարձաւ միջոցներ հաւաքելու ամբիոն մը անհատներու եւ հիմնարկներու համար<sup>115</sup>, եւ ճիգեր միացնելու նոյն նպատակին համար: 1992-2004 տարիներուն, Հիմնադրամը իրացուց աւելի քան 165 միլիոն տոլարի ծրագրեր:

Ժամանակահատուած	Ընդհանուր Գումար (\$)	Լիբանանահայութեան մասնակցութիւն (\$)
1992-Յունիս 1995	19,078,345	66,100 (Մ. Նահանգներ հանգանակեց 6,912,900,47)
1995 Յուլիս-30 Յունիս 1996	7,794,946,69	336,000 (Ֆրանսսան հանգանակեց 1,103,216,50)
1997	11,325,821,84	125,000 (Քանադան հանգանակեց 155,000, Ֆրանսսան՝ 446,640,26)
Յուլ. 1997-31 Դեկտ. 1998	8,387,726,58	429,871-445,000 (Ֆրանսսան)

<sup>110</sup> Ժիրայր Նալիբի, «Երկու Տարեկից. Հպարտառիթ Եւ Տխրանուշ», *Նայիրի Բացարկ*, 1 Յունուար 2005, էջ 4:

<sup>111</sup> Նոյն:

<sup>112</sup> Շանթ Եագուպեան, «Պետական Թէ Ազգային Քաղաքականութիւն», *Ազդակ*, 1 Յունուար 1996, էջ 20-22:

<sup>113</sup> Halpin & Chatinian, “Repats”, էջ 22:

<sup>114</sup> Նոյն, էջ 23:

<sup>115</sup> Armenian Survey, “Old Dreams”, էջ 20.

		հանգանակեց 793,283,21)
1999		105,700
2000	4,598,503,42	---
2001		44,900
2002	3,700,000	
2004		29,900

Լիբանահայերը հազիւ դուրս եկած լիբանանեան պատերազմէն՝ դիմագրաւեցին Հայաստանի Հանրապետութեան զարգացումներու մարտահրաւերը: Արմատապէս ազգայնական, բայց պատերազմէն խոնջացած հայօճախը միացեալ ճիգեր գործադրեց նպաստելու համար Հայաստանի պետականակերտումին: 20րդ դարուն ընթացքին, հայօճախը աւելի յաճախ նիւթապէս ստացողի վիճակին մէջ եղած էր: Այդուհանդերձ, շուրջ տաս տարիներու ընթացքին հայօճախը Հայաստան Համահայկական Հիմնադրամին համար հանգանակեց աւելի քան մէկ միլիոն տոլար:

Ամփոփելով, 1980ականներու աւարտին Լիբանանի հայօճախը դիմագրաւեց խորքային փոփոխութիւնները Սովետական Հայաստանի տարածքին: Յոգնասպառ հայօճախը պարտէր վերստին զօրաշարժի ենթարկել ինքզինք եւ օգնութիւն փութացնել բնօրրանին, ուր քանդիչ երկրաշարժը, անկախութեան եւ Ղարաբաղի հակամարտութեան մարտահրաւերը եւ Հայաստանի վերակերտումը օրապահանջ էին: Հայօճախը ապրեցաւ ընկերաքաղաքական վերիվայրումները Հայաստանին: Ան մասնաւորաբար դիմագրաւեց փորձանաւոր ժամանակները՝ իր ազգային դիւցազնական երազները վերայարմարցնելու նորակազմ վտիտ անկախ Հայաստանի մը իրականութեան: Երկիր որ ունէր ի՛ր ալ օրակարգային յառաջադրանքները:

### **Դ) Համարկում Լիբանանեան Տարածքին**

Լիբանանեան երկրորդ հանրապետութեան ծնունդը մարտահրաւեր կարդաց հայօճախին՝ համարկուելու իր նորաձեւումով միջավայրին: Լիբանանեան հարթակին վրայ համարկումը կ'ընդգրկէր հայօճախը, պետութիւնը եւ միւս համայնքները: Ներհայկական առումով ասիկա մարտահրաւեր կը կարդար թէ՛ արմատական եւ թէ՛ բարեխառն ենթախումբերուն, որոնք փոփոխութիւններ կրած էին քաղաքացիական պատերազմին պատճառով: Յստակ չէր սակայն թէ որքան եւ ինչ տարողութեամբ ասոնք տրամադիր էին համարկուելու:

Համարկումը կը պահանջէր համադրեալ ճիգը բոլոր համայնքներուն՝ 'ատակ' առաջնորդութեամբը պետութեան: Սակայն,

պարզ չէր թէ որքան ատակ էր պետութիւնը եւ վճռակամ: Յստակ չէր նաեւ թէ որքան պիտի աջակցէին շրջանային եւ միջազգային ուժերը: Պէտք էր հաշուառել նաեւ թէ մարոնիթ գերակայութենէ զիջումը պետութեան, թէ՛ այլ համայնքներու պիտի նպաստէր: Կարելի պիտի ըլլար ազգային հաշտութեան հիմամբ պետութիւնը բարեկարգել, համալիբանանեան ինքնութիւն յառաջացնել: Այս եւ նման չպատասխանուած հարցումներ Լիբանանի համայնքները պահեցին զգօս վիճակի մէջ, շեշտաւորելով միջհամայնքային անվստահութիւնը:

Պետութիւնն ու իրերայաջորդ կառավարութիւնները որոշ քայլեր առին՝ համարկումի եւ ազգակերտումի ուղղութեամբ: 20 Մայիս 1993ին չորս հայեր նշանակուեցան պետական առաջին կարգի պաշտօններու: 1994ին պետութիւնը լուծում տուաւ լիբանաբնակ ոչ-լիբանանցիներու երկարամեայ թնձուկին, եւ ի միջի այլոց, շուրջ 10,000 հայերու լիբանանեան քաղաքացիութիւն շնորհեց: Պարտադիր զինձառայութեամբ նորահաս սերունդներուն հրամցուց լիբանանեան համայնապատկերը, 1997ին միօրինականացուց դպրոցական ծրագիրը<sup>116</sup> եւ նախապատուեց արարերէնը՝ անգլերէնի եւ ֆրանսերէնի (եւ ըստինքեան՝ հայերէնի) հաշուոյն: Ի պատասխան՝ հայկական դպրոցներ նուազեցուցին հայերէն նիւթերու կարելոթութիւնը եւ դասապահերը, յօգուտ՝ պետական քննութեանց<sup>117</sup>: Նոյեմբեր 1998ին, նախագահ Հրաուի ջբադրեց նախկին երեսփոխաններ Էպլիդաթեանն ու Պապիկեանը, ներկայ գտնուեցաւ հայկական շարք մը հրապարակային ձեռնարկներու: Լիբանանի խորհրդարանը երկու օրինագիծեր որդեգրեց Հայոց Յեղասպանութեան առնչութեամբ, իբրեւ զօրակցութիւն Լիբանանի հայօճախին<sup>118</sup>: 6 Սեպտեմբեր 2005ին, աննախընթաց քայլով մը, կառավարութիւնը Հայկական Սուրբ Ծնունդի տօնը հանրային տօն հռչակեց<sup>119</sup>: Միւս կողմէն, արտօնագիր տուաւ Վանայ Ձայն լիբանանահայ ռատիօկայանին: Պետութիւնը նման բազմաձեւ քայլեր նախաձեռնեց միւս համայնքներուն հանդէպ եւս: Հայօճախը, սակայն, խառն վերաբերումներ ունեցաւ պետական այս եւ այլազան քայլերուն հանդէպ:

---

<sup>116</sup> Հուրիկ Ճերէճեան, «Ակնարկ Լիբանանի Ուսումնական Նոր Ծրագրին Վրայ», *Մրարատ Բացարկ*, 1 Յունուար 1998, էջ 21-24. նաեւ՝ Zenian, “Lebanon”, էջ 13:

<sup>117</sup> Մահսերէճեան, էջ 4-8:

<sup>118</sup> Տեղեկագիր, «Հայասպանութեան Մասին Բանաձեւ», *Ազդակ Բացարկ*, 1 Յունուար 1998, էջ 57:

<sup>119</sup> No Author, “Draft Decree to Limit Public Holidays”, *The Daily Star*, Lebanon Edition, 7 September 2005, էջ 4:

Ձուգահեռաբար, 1990ականներու սկիզբէն, Հայաստանի եւ Լիբանանի հանրապետութիւններու մշակութային եւ քաղաքական պարագլուխներու փոխայցելութիւնները դրապէս ազդեցին հայօճախին տրամադրութեան վրայ: 1992ին Հայաստանի Ակադեմական Երգչախումբը, Պարախումբը եւ Արտաքին Գործոց նախկին նախարար Ռաֆֆի Յովհաննէսեան անջատաբար այցելեցին Լիբանան: Հայաստանի մէջ Լիբանանի դեսպանատուն բանալու որոշումը տրուեցաւ 20 Մայիս 1993ին, նոյն տարուան Դեկտեմբերին Հայաստանի խորհրդարանի նախագահը այցելեց Պէյրութ, եւ Մարտ 1994ին երկու երկիրներուն միջեւ օդային ուղիդ գիծ հաստատուեցաւ: Սեպտեմբեր 1997ին Լիբանանի խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի Հայաստան այցելեց, իսկ Հոկտեմբերին՝ վարչապետ Ռաֆիք Հարիրի<sup>120</sup>: 1998ին Հայաստանի Արտաքին Գործոց նախարարը, Ղարաբաղի վարչապետն ու Առաքելական Թեմի առաջնորդը այցելեցին Լիբանան: Փետրուար 2000ին, նախագահ Քոչարեան պաշտօնական եռօրեայ այցելութիւն մը տուաւ Լիբանան<sup>121</sup>, հանդիպումներ ունեցաւ նախագահին, խորհրդարանի նախագահին եւ վարչապետին, ինչպէս նաեւ նախկին վարչապետ Ռ. Հարիրիին, *պիզնըսի* ներկայացուցիչներու եւ հայօճախի աւանդական ներկայացուցիչներուն հետ: Նախագահ Լահուտ Քոչարեանը շքադրեց Լիբանանի Արժանեաց Ծառայութեան Բարձրագոյն շքանշանով, իսկ Քոչարեան Լիբանանի նախագահը՝ Հայաստանի Մերոպ Մաշտոցի շքանշանով: Նախագահին շնորհուեցաւ նաեւ պատուոյ դոկտորայի վկայական՝ Լիբանանեան Համալսարանէն, նաեւ՝ Պէյրութ քաղաքի բանալին<sup>122</sup>: Աւելի ետք, Պէյրութի քաղաքապետը եւ Լիբանանի Կեդրոնական Դրամատան կառավարիչը այցելեցին Հայաստան եւ շարք մը երկկողմանի համաձայնագրեր ստորագրուեցան: Հայաստան Լիբանանը նկատեց իր հաւանական դարպասը դէպի արաբական աշխարհ, իսկ Լիբանանը Հայաստանը նկատեց իր դարպասը դէպի Անկախ Հանրապետութիւններու Հասարակապետութիւն: Գործակցութիւնը տարածուեցաւ միջազգային ոլորտներ եւս եւ խոստմնալից էր, սակայն կ'ենթադրէր հետեւողական ու անդուլ աշխատանք:

---

<sup>120</sup> Ջաւէն Տիգրանեան, «1997. Միջազգային Բեմին Վրայ Լիբանանի Վերահաստատման Տարին», *Արարատ Բացառիկ*, 1 Յունուար 1998, էջ 14-17:

<sup>121</sup> Hratch Tchilingirian, “In the Land of Cedars”, *AIM*, February 2000:

<sup>122</sup> Նոյն:

Միջպետական եւ պետութիւն-համայնք յարաբերութիւններուն թափը, ինչպէս նաեւ Լիբանանի եւ Հայաստանի ընկերատնտեսական եւ քաղաքական պայմանները վերախառնեցին լիբանահայուն մտածելը: Նկատուեցաւ որ եթէ մինչեւ Հայաստանի անկախութիւնը լիբանահայը փայփայեց *տունդարձի* երազը, ապա հիմա ան ինքզինք 'անքակտելի' մաս նկատեց լիբանանեան ընկերային եւ մշակութային խճանկարին<sup>123</sup>: Լիբանահայը իրատեսօրէն վերատեսութեան ենթարկեց իր տեսակետերը, եւ ինքզինք վերամշակեց այնպէս՝ որ իր հոգիին մէջ տեղ գոյացնէ երկու բնօրրաններուն՝ Լիբանանին եւ Հայաստանին: Յառաջացեր էր այն գիտակցութիւնը, թէ այս երկու պետութիւնները իրար փոխչեզոքացնող էութիւններ չեն: Ընդհակառակը, ազգային զգացումներն ու լիբանանեան յանձնառութիւնները կրնան առողջ կերպով գոյակցիլ լիբանահայուն մտքին ու հոգիին մէջ: Եւ իրապէս, լիբանահայերը յատուկ, երկակի կեցութիւն մը ունեցան իբրեւ մէկ մասը Լիբանանի եւ իբրեւ հեռաւոր մասը հայ ազգին<sup>124</sup>:

Այլ առումով ալ, յետպատերազմեան լիբանանեան միջհամայնքային ցանկապատերը անցանելի դարձան եւ կամուրջներ վերահաստատուեցան համայնքներուն միջեւ: Կարծես թէ պատերազմը բոլորին սորվեցուցեր էր զիջիլ եւ իրենց տարակարծութիւնները բանակցութիւններով կարգաւորել: Լիբանանի քաղաքական հասարակութիւնը ալ ակտիվ ասպնջական դարձեր էր. քաղաքացիական պատերազմը ապրելով, լիբանահայութիւնը կը նկատուէր մէկ մասը Լիբանանին՝ որեւէ այլ համայնքի նման: Յաշտ տեղաբնիկ լիբանանցիներուն, հայերը մնայուն համայնքի մը վերածուած էին, անբաժանելի մասը՝ Լիբանանի քաղաքական եւ ընկերային խճանկարին<sup>125</sup>: Արդարեւ, ապրելով 1975-1990 պատերազմը լիբանահայերը տարբեր տեսակի լիբանանեան իրաւականութիւն մը շահեր էին յաշտ տեղաբնիկ համայնքներուն: Հայօճախը հարաւային Լիբանանի գաղթականներուն համար բացած էր իր հաստատութիւնները եւ ասպնջականութիւն ցուցաբերած անոնց Իսրայէլի կողմէ Հարաւային Լիբանանին դէմ կրկնուող ռմբակոծումներուն ստեն, անուղղակիօրէն բարեփոխելով լիբանահայուն հանդէպ կարծրատիպ ընկալումները: Անդին,

---

<sup>123</sup> Tchilingirian, "Integration", էջ 48:

<sup>124</sup> William Harris, *Faces of Lebanon: Sects, Wars, and Global Extensions*, Princeton, Markus Wiener Publishers, 1997, էջ 72:

<sup>125</sup> Tchilingirian, "Integration", էջ 48. նաեւ՝ *AnNahar*, 10 September, 2003, էջ 6:

արտասահմանի հայկական բարեփրական կազմակերպություններու օժանդակութիւնը՝ լիբանանցի գաղթականներուն<sup>126</sup>՝ ամրապնդեր էր կարծրատիպի բարեշրջումը: Նոյնիսկ շարք մը արեւմտեան հայ բարեփրական կազմակերպութիւններ ճիգ թափեր էին որ միջազգային մարդասիրական հիմնարկներ զօրաշարժի ենթարկուին եւ օգնութիւն փութացնեն Պէյրութ ապաստանած Լիբանանի հարաւի գաղթականներուն:

Ներհայկական առումով, սակայն, հայօճախին մեծագոյն մտահոգութիւնը շարունակեց մնալ համարկումը եւ ենթախումբերուն կեցուածքը ասոր հանդէպ: Արդէն թուլցած ազգային սեղմիրանը առիթ կու տար որ լիբանահայը ըստ իր ազգային գիտակցութեան, որոշէ իր համարկումին տարողութիւնը՝ ըստ իր միջավայրի պայմաններուն, ուր ազգային դաստիարակութիւնը, շուկայական, պետական եւ միջհամայնքային գործօններ մրցակցութեան մէջ էին:

Արեւմտեան սփիւռքի հայօճախները, որոնք անցեր էին համարկումի ճամփէն, լիբանահայութեան թելադրեցին բացուիլ եւ համարկուիլ: Ֆրանսահայ քաղաքագէտ Ժերար Շալեանին համար «ամբողջ խնդիրը կը կայանար հայերուն կեթօներէն դուրս գալուն մէջ... երկար ժամանակ Սփիւռքը ներամփոփուած էր, թիրախած էր հայապահպանումը բայց անկէ անդին չէր անցած»<sup>127</sup>: Արեւմուտքի հայօճախները թելադրեցին որ լիբանահայ նոր սերունդը դուրս գայ հայկական կեթոյէն եւ իրագործէ՝ իր հայկականութենէն բան մը կորսնցնելու իսկ գնով<sup>128</sup>: Ուրիշներ պնդեցին որ իբրեւ կեդրոնական ռազմավարութիւն տարիներ գործած ձուլման վախը պէտք է փոխարինել, որովհետեւ վախը դեղագիր եղած էր մշակութային լճացման եւ մտաւոր անդամալուծութեան<sup>129</sup>: Արեւմուտքը ինքնապահպանման այս ոճին մէջ կործանում կը տեսներ<sup>130</sup>, եւ կը տարհամոզէր որ միջավայրին հետ աւելի լաւ շփումը կրնար օգնել լոպիինկին, Դատին<sup>131</sup>:

Հայօճախը գիտակցեցաւ որ թէ՛ Հայաստանը եւ թէ՛ Լիբանանը «փշրած էին իր յոյսերը»: Թէ՛ Միջին Արեւելքը եւ թէ՛ Կովկասը կը դիմագրաւէին համաշխարհային քաղաքական մրցակցութեան նոր

<sup>126</sup> Announcement, “AMAA Relief for Lebanon”, *AIM*, April 1996, էջ 9:

<sup>127</sup> Haroutinian-Ghazarian, “Brave New World,” էջ 12:

<sup>128</sup> Tchilingirian, “Master”, էջ 48. նաեւ՝ Tchilingirian, “Integration”, էջ 47:

<sup>129</sup> Gerard Libaridian, “The Diaspora is not What it Used to be”, *AIM*, January 1991, էջ 52:

<sup>130</sup> Jimbashian, “Poles Apart”, էջ 13:

<sup>131</sup> Zenian, “Lebanon”, էջ 15:

հանգրուան մը<sup>132</sup> եւ չէին կրցած համոզիչ երաշխիքներ հրամցնել լիբանահայուն, որպէսզի ան երկուքէն մէկուն փարի ամբողջականօրէն:

Հարցը միայն լիբանահայուն չէր վերաբերեր. Լիբանանը չէր կրցած ապահովութիւն ներշնչել նոյնինքն տեղաբնիկին: Լիբանանցիներուն 60%ը կը փափաքէր լքել երկիրը՝ ականատես ըլլալէ ետք երկրին հանրային մարզին խայտառակ թերացումներուն եւ բարեկարգումի ծրագիրներուն կրկնուող ձախողութիւններուն<sup>133</sup>, իսկ անապահովութիւնը մթագներ էր անոր լաւատեսութիւնը<sup>134</sup>: Այս կրկանկի անելին տրամաբանութիւնը մղեց լիբանահայը, որ որդեգրէ երկուքը եւ ինքզինք վերափոխէ քոզմփոլիթ սփիւռքահայու<sup>135</sup>: Արդէն 47,7%ը լիբանահայերուն զօրաւոր պատկանելիութիւն մը կը զգար Լիբանանին հանդէպ<sup>136</sup>: Կամաց-կամաց, լիբանահայեր սկսան անդամակցիլ տեղական կուսակցութիւններու, համարկուիլ տեղական արուեստից, արհեստակցական, կրթական եւ մասնագիտական խմբակցութիւններու: Խառն ամուսնութիւնները դարձան սովորական:

Այդուհանդերձ, պահպանած ըլլալով իրենց մշակութային եւ ազգային գիտակցութիւնը եւ ինքնութիւնը, մանաւանդ՝ իրենց լեզուն, լիբանահայերը մեղադրուեցան իբրեւ համապարփակ համարկումին հակադրուողներ: Հայրնկալումի 1950-60ականներու կարծրատիպը վերամշակուած տարբերակներով հող գտաւ տեղաբնիկ արաբին քով, մինչ ընկերային նոր զարգացումներն ու տուեալները այլ բան կ'ըսէին: Այն որ լիբանահայերուն մեծամասնութիւնը հայերէն կը հաղորդակցի իրարու հետ՝ հանդիսացաւ գլխաւոր դրդապատճառը նորատեսակ կարծրատիպերուն, թէ՛ հայերը չընդառաջող հատուածն են համարկումին:

Իրականութեան մէջ, սակայն, մակերեսէն անդին շատ բան կար փոխուած: Լիբանանի միւս համայնքները արաբերէնէն բացի ուրիշ

---

<sup>132</sup> Խմբագրական, «Անկիւնադարձները Կը Կերտուին Կամքով», *Ազդակ Բացառիկ*, 2 Յունուար 1995, էջ 1-2:

<sup>133</sup> Nadim A'adra, "Iqtisad Al Nisyan WalFawda AlMunazzama", *AnNahar*, 22 September 2003, էջ 7:

<sup>134</sup> Bashir Ardidi, "Jumhuriyyat AlFasad... Kayfa Nunkizuhu", *AnNahar*, 9 September 2003, էջ 24. նաեւ՝ Hiam AlQusayfi, "Daam AlJemayel LiHilu Risala Ila AlMuarada WaA'ila: 'AlAmru Li' Intikhabiyyan WaSiyasiyyan Fi Baabda Baad AlMatn", *AnNahar*, 26 August 2003, էջ 4, 10. նաեւ՝ Michel Hallak, "AlMuhasasa WalMahsubiyya A'iqan Amama Istikmal Mashruu Marakiz Tajmi' AlHalib", *AnNahar*, 11 January 2004, էջ 12:

<sup>135</sup> Էպլիդաթեան, 1998, էջ 348:

<sup>136</sup> Jinishian Report, էջ 178:

մայրենի լեզու չէին գործածեր: Անոնք բոլորն ալ արաբերէն կը խօսէին: Ընդհանրապէս ասիկա միակ երեւոյթն էր որ զիրենք կը զատորոշէր լիբանահայերէն: Հայերը աւելի՛ շփում ունէին միւս համայնքներուն հետ՝ կեանքի բոլոր կալուածներուն մէջ: Լիբանահայ դպրոցականներու շուրջ 40%ը ոչ-հայկական վարժարաններ կը յաճախէր, լիբանահայ համալսարանականներու աւելի քան 50%ը ոչ հայկական համալսարաններ կը յաճախէր, արաբերէն թերթ ընթերցող հայերուն թիւը աննախադէպօրէն բարձրացած էր: Լիբանանեան ժողովրդային մշակոյթը, խոհանոցը ներծծուած էին լիբանահայ կենցաղին: Իսկ արաբերէն բառերը առօրեայ հայախօսութեան մէջ հարազատօրէն կ'օգտագործուէին: Այս եւ այլ փաստեր կ'ընդգծէին լիբանահայուն խորունկ համարկումը: Միակ 'տեղքայլը' հայերէն լեզուին մարզն էր, որուն հայերը ամբօրէն կառչած կը մնային:

Պէտք է ընդունիլ, սակայն, որ խորունկ համարկումէ կը խուսափէին Լիբանանի բոլոր համայնքները, հետեւաբար լիբանահայերը բացառութիւնը չէին: Իրենց ընթացքը ընդհանրական երեւոյթին մաս կը կազմէր: Յստակ, միակամ, պետականօրէն նախագծուած համարկումի ուղիի մը բացակայութեան, իւրաքանչիւր համայնք իր շահերուն համեմատ կը մեկնաբանէր համարկումը եւ ըստ այդմ ալ կը կիրառէր:

Լիբանանի հայօճախին մէջ համարկումը հանրային արծարծումի մասնակի նիւթ եղած էր 1960ականներէն<sup>137</sup> երբ սրած էին հայապահպանումի եւ կենցաղային համարկումի ընտրանքները<sup>138</sup>:

Անտարակոյս, համարկումը ինքնակայ, անկախ, պարզ եւ միաւոր գործընթաց մը չէր: Ան ունի իր փաթէթը, բարդութիւններն ու հետեւանքները: Բազմախաւ քաղաքականութիւն մըն է ան, որ կը ներգործէ հայապահպանումին, Հայկական Հարցի անհատական յանձնառութեան, *տունդարձի* երազին, հայկական շահերու արժեհամակարգին եւ բազմաթիւ այլ բաներու վրայ: Անհատական կեցուածքներու հանրագումարն էր հայօճախին կեցուածքը՝ համարկումին եւ այլ հարցերու հանդէպ: Հայ Կաթողիկէ Պատրիարք-Կաթողիկոս Յովհաննէս Պետրոս Գասպարեանը շատ յստակ բանաձեւած էր զայն. «Մփիւռքի բոլոր հայերուն կը սպառնայ ձուլման վտանգը: Մենք համարկումի գաղափարին հետ ենք, բայց կը

<sup>137</sup> Tchilingirian, “Integration”, էջ 47. նաեւ՝ Վարդան Սրբ. Տեմիրճեան, *Գաւազանագիրք Լիբանանի Եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց, Հտր. 1*, Պէյրուօ, Տպ. Ալթափրէս, 1980, էջ 230:

<sup>138</sup> Safran, էջ 258:

պայքարինք ձուլման դեմ... մենք կրօնքն ու ազգութիւնը չենք շփոթեր իրարու հետ, եւ չենք ուզեր ձուլուիլ կաթոլիկութեան մէջ»<sup>139</sup>:

Լիբանահայ ենթախումբերը միանշանակ չէին սահմաներ համարկումը: Արմատականներուն համար, ան կը նշանակէր ձուլման սպառնալիք<sup>140</sup>, ինքնութեան կորուստ եւ հաւաքական իրաւունքներու նուազում՝ յօգուտ մեծաթիւ համայնքներուն: Այս ազգայնականներուն համար, հայրենադարձութեան ժամանակը դեռ չէր հասած: Դաստիարակուած ըլլալով շեշտակիօրէն ազգային պահպանողական մտածելով, անոնք չէին ուզեր Արեւմուտք արտագաղթել, ատիկա թէ՛ ընտանիքի, թէ՛ հայկականութեան կորուստ նկատելով: Բայց նաեւ չէին կրնար մերժել արտագաղթի 'փորձութիւնը':

Բարեխառն լիբանահայերուն համար համարկում կը նշանակէր բացուիլ, դուրս ելլել կեթոյէն, ուրիշներու շաղուիլ, եւ զիջիլ: Ասոնց համար, հայրենադարձութիւնը հեռահաս ընտրանք էր, իսկ Արեւմուտք տեղափոխուիլը՝ կարելի տարբերակ: Իրականութեան մէջ, դէպի Արեւմուտք տեղափոխութիւնը հրապոյր է հայօճախին համար եւ դանդաղօրէն բայց հաստատօրէն կը նօսրացնէ զայն: Այդուհանդերձ, ընդհանուր առումով, լիբանանեան համարկումի տարբերակը ամէնէն համոզիչը կը թուէր ըլլալ, հակառակ երկրին կրկնուող քաղաքական վերիվայրումներուն եւ տնտեսական տագնապներուն:

1990-2005 տասնհինգամեակը եկաւ հաստատելու որ լիբանահայութիւնը, տեղական միւս համայնքներուն նման, որոշած է ցնոր տնօրինութիւն, նաւարկել Լիբանանի ալիքներուն մէջ եւ համարկուիլ սպասելով Լիբանանի աւելի լաւ օրերուն:

Դժուար է հանդիպիլ լիբանահայու մը, որ պատրաստ չէ համարկուելու: Լիբանանի հայօճախին մէջ խնդիրը համարկուելուն եւ կեթոյին միջեւ չէ: Խորքին մէջ, համարկումը ընթացք առած է, մանաւանդ երիտասարդ շրջանակներուն մէջ եւ հայկական հաստատութիւններուն վերահսկողութենէն անդին: Լիբանահայերը բացուած են լիբանանեան ընկերութեան դիմաց աննախընթաց համեմատութեամբ<sup>141</sup>: Այդուհանդերձ, «մեծ կարողականութեամբ այս համայնքը»<sup>142</sup>, յարատեւօրէն Սփիւռքի անապահովութիւնները

<sup>139</sup> Jean Claude Gaudin (ed.), *Les Chrtetiens d'Orient En France*, Paris, Le Sarment, Fayard, 1997, էջ 45:

<sup>140</sup> Sima Aprahamian, "A Multitude of Overlapping Identities: A Lebanese Armenian Community in the Beka'a Valley of Lebanon", *The Armenian Review*, vol. 43, Spring 1990, էջ 71:

<sup>141</sup> Tchilingirian, "Integration", էջ 47:

<sup>142</sup> Jinishian Report, էջ 158:

գիտակցելով, կ'ըմբռնե «շեղբին վրայ եղող ինքնութեան» խնդիրը: Անհետանալու սեմին գտնուելու իրողութիւնը զօրաւոր խթան մըն է չանհետանալու<sup>143</sup>:

Լիբանահայերուն՝ «աշխարհի մեծ պատշաճողներուն»<sup>144</sup> մտասելեւումը համարկումի տարողութիւնն է, ասոր «ինքնութեան հաշուոյն տրուելիք գինը»: Իրաւ ալ, ամէն պատճառ կայ լիբանահայուն՝ կառչելու Լիբանանի միասնական պետութեան, բայց ո՛չ այն պետութեան, որ իրենց հայկականութիւնը պիտի վանէ: Շուրջ 92%ը հարցախուզուած լիբանահայ ուսանողներուն, կը հաւատայ թէ համայնքապետութիւնը լաւագոյն տարազը կը հրամցնէ լիբանանը կառավարելու<sup>145</sup>: Միաժամանակ, բացակայութիւնը՝ յստակացուած եւ լաւապէս սահմանուած համարկումի տարբեր երեսակներուն եւ տարողութեանց, մտմտութիւն կը յառաջացնէ չվերահսկուող, սանձարձակ, անհակկշռելի, անկանխատեսելի եւ չուղղորդուած համարկումի գործընթացի մը հանդէպ, որ աւերներ կրնայ գործել հայօճախին հաստատութիւններուն, կառոյցներուն եւ նոյնինքն ազգային գոյութեան պարագաներուն:

ՀՅԴին համար խորարմատ համարկումը կրնայ խաթարել իր ազգայնական պատկերը: Այս կարծի կեցուածքը մղեց կուսակցութիւնը դաշինքներ կնքելու խմբաւորումներու հետ, որոնք խորահաս համարկումի գին չեն պահանջեր՝ ի տարբերութիւն այլոց: Համարկումը, սակայն, պիտի ծառայէր ՄԴՀԿի եւ ՌԱԿի նպատակներուն եւ անկախականներուն, որոնց համարկումի տարողութեան չափանիշերը նուազ հաստատուն էին:

Միւս կողմէն, համարկումի թերահաւատներ եւ անզիջում ազգայնականներ ու համայնքամէտներ կը մատնանշեն որ Լիբանանի մէջ միջհամայնքային անախորժութիւնները չեն նուազած, պարզապէս անթեղուած, մոխիրի տակ են դրուած: Ըստ անոնց, համայնքայնութիւնը Լիբանանի մէջ մակընթացութիւն կ'ապրի՝ միջազգային եւ շրջանային պայմաններուն համեմատ<sup>146</sup>: Ոմանք նոյնիսկ կ'ընդգծեն համայնքային աճող զգացումները<sup>147</sup>, եւ կ'առարկեն թէ տեղական քաղաքական մշակոյթին հետեւանքով երկիրը նոր

---

<sup>143</sup> Panossian, էջ 184:

<sup>144</sup> John Munro, "Introduction", *Ararat Quarterly*, Vol. XIX # 3, # 75, Summer 1978, էջ 21:

<sup>145</sup> Hilal Khashan, "The Political Values of Lebanese Armenian College Students", *Armenian Review*, Vol. 44, #4/176, Winter 1991, էջ 62:

<sup>146</sup> Hala Homsy, "Hadara FilTajaddod AlLubnani Musqitan Awraq AlTin A'n A'riy AlMashhad AlSiyasi", *AnNahar*, 20 October 2005, էջ 5:

<sup>147</sup> Samer Wehbe, *the Daily Star*, Lebanon Edition, October 13, 2003, էջ 2:

յառաջընթաց կ'արձանագրե համայնքայնութեան մէջ, ի հակադրութիւն միջ-1980ական պատերազմի տարիներուն: Իրաւ ալ, իրենց համայնքը երկրէն աւելի առաջնահերթող լիբանանցիներուն թիւը աւելցած էր 1987ի 12%էն՝ 2002ի 34%ի<sup>148</sup>: Կարգ մը իրապաշտներ կ'ընդգծեն որ շարք մը համայնքներ համոզուած են որ ապահամայնքացումը (քաղաքացիական պսակը են.) պիտի վտանգէ իրենց ուրոյն ինքնութիւնը եւ վերացնէ որոշ համայնքային առանձնաշնորհումներ եւ թէ՛ անոնց մտայնութիւնը չէ փոխուած: Ընդհակառակը, անոնք աւելի ամուր կառչած են իրենց իրաւունքներուն եւ արտօնութիւններուն<sup>149</sup>: Արդարեւ, 1920ականներու աւարտէն սկսեալ, պետական նշանակումները եւ դահլիճները կը կազմուին համայնքային *քոթս*ներու հիմամբ<sup>150</sup>: Սահմանադրութեան 95րդ յօդուածը կ'երաշխաւորէ համայնքային ներկայացուցչութիւնը: Սահմանադրական երկու այլ յօդուածներ կը հաւաստեն թէ անհատի կարգավիճակի եւ կրօնական շահերու համայնքային դրսեւորումները պէտք է յարգուին<sup>151</sup>: Ժողովրդային առումով լիբանանցիներուն 78,9%ը Յուլիս 2002ին Լիբանանը կը նկատէր համայնքային երկիր<sup>152</sup>: Հեզանքով կ'ակնարկուէր որ 1992ի խորհրդարանական բացման նիստին, խորհրդարանի նախագահը յոյս յայտնած էր որ այդ խորհրդարանը ըլլար համայնքային դրութեամբ ընտրուած վերջին խորհրդարանը<sup>153</sup>: Իրաւ ալ, անզիջում համայնքամէտները կ'առարկեն որ լիբանանեան բազմահամայնքային հիւսքը կը սահմանափակէ, կը սանձէ եւ կը կաշկանդէ լիբանանեան ազգակերտումն ու համարկումը: Անոնք կը մատնանշեն յաճախադէպ գանգատները ամէն անգամ երբ

<sup>148</sup> Theodor Hanf, “The Skeptical Nation: Opinions and Attitudes Twelve Years after the End of the War”, in Theodor Hanf and Nawaf Salam (eds.), *Lebanon in Limbo: Postwar Society and State in an Uncertain Regional Environment*, Baden-Baden, Nomos Verlagsgesellschaft, 2003, էջ 206:

<sup>149</sup> Մելքոն Էպլիդաթեան, «Հարկը Ջօրէնս Լուծէ՞», *Ազդակ*, 1 Յունուար 1994, էջ 86-87. նաեւ՝ Majdoline Hatoum, “Next Cabinet Meeting Already in Jeopardy: Sectarian Demands over Appointments and Sinora’s Plans for a New Ambassador to the US may Hinder Necessary Work”, *The Daily Star*, 4 August 2005, էջ 3:

<sup>150</sup> Tchilingirian, “Integration”, էջ 46:

<sup>151</sup> Nicola A. Ziadeh, *Syria and Lebanon*, London, Ernest Benn Limited, 1957, էջ 175. նաեւ՝ David Gordon, *The Republic of Lebanon: Nation in Jeopardy*, Boulder, Colorado, Westview Press, 1983, էջ 21. նաեւ՝ Meir Zamir, *Lebanon's Quest: The Road to Statehood. 1926-1939*, London, I.B.Tauris & Co. Ltd., 2000, էջ 29-30:

<sup>152</sup> No Author, “Akthariyat La Tara Siyasiyyan Lubnaniyyan Amthal Wa La Tajid Beyn AlBarizin Zai’man”, *AnNahar*, 16 August 2002, էջ 12:

<sup>153</sup> Theodor Hanf, *Coexistence in Wartime Lebanon: Decline of a State and Rise of a Nation*, London, I.B. Tauris & Co Ltd., 1993, էջ 636:

պետական բարձրադիրք պաշտօնէութեան նշանակումներ կատարուին: Դեռ աւելին, անոնք կ'ընդգծեն թէ ամէն անգամ որ խորհրդարանի նախագահի, վարչապետի եւ նոյնիսկ հանրապետութեան նախագահի ջոկում պիտի կատարուի՝ ձայներ կը լսուին թէ թեկնածուներուն ջոկումը համապատասխան համայնքին սեփական որոշումն է<sup>154</sup>: Անոնք կը հաւաստեն որ մակերեսէն անդին անցնող արմատացած բարդութիւններ կան լիբանանեան համարկումին խոչընդոտող: Ուրիշներ կ'առարկեն թէ՛ Լիբանան ցարդ չէ կրցած միախառնել ժողովուրդն ու պետութիւնը առանց միջնորդ մարմիններու եւ կասկած կը յայտնեն ապահամայնքային Լիբանանի մը գոյառումին<sup>155</sup>:

Ասոնց զուգահեռ, լիբանահայ համայնքամէտներ մատնանշեցին որ թէ՛ 2002 Դեկտեմբերի դահլիճին եւ թէ՛ պետական առաջին կարգի նշանակումներուն պարագային հայկական ակնկալութիւնները ի դերեւ ելան<sup>156</sup>: Անոնք հեզմանքով նշեցին աննախընթաց ձերբակալումը հայ նախարարի մը՝ իւրացումներու մեղադրանքով, եւ հարցադրեցին եթէ՛ միակ պարագան էր ան, թէ՛ միակ նոխազը: Անոնք առարկեցին որ հակառակ համարկումի սովորական ինքնահոսին՝ շուկային, կրթական կալուածին թէ առօրեայ կեանքին մէջ, մարդ պէտք է իրապաշտօրէն զգուշ ըլլայ Լիբանանի քաղաքական համարկումին սահմաններէն, ուր համայնքային հաւատարմութիւններ գրեթէ միշտ բանած են, առնչուելով առօրեայ կեանքի բոլոր երեսակներուն՝ որոնք միջնորդուած են կամ վերահսկուած համայնքային հիմնարկներու կողմէ<sup>157</sup>: Գործնականին մէջ, երկրին աւագանիին կողմէ նախաձեռուած լիբանանեան քաղաքական համակարգը պիտի շահեր յառաջացնէր իշխող խաւին համար իսկ ժողովուրդը մղէր գոց շրջանակներու<sup>158</sup>, զանոնք մխրճելով համայնքներու մէջ որոնք ամրակայուած են սահմանադրութեան համայնքային նկարագիրով<sup>159</sup>:

---

<sup>154</sup> Nichola Nassif, “Riasat AlMajlis LilMarra AlOula Istihqaq Shii Sarf”, *AnNahar*, 24 June 2005, էջ 2:

<sup>155</sup> Aline Farah, “AlJumhuriyya AlSaniya: Fashal Zarih Fi Bina’AlDawla WaTakris A’mali LiMabda’ ‘Nisf AlSiyada’”, *AnNahar*, 24 December 2003, էջ 13, 25:

<sup>156</sup> “AlTashnaq Yutalib Fi Zikra Ta’sisihi BiTas’hih AlTamsil AlArmani FilHukuma”, *AnNahar*, 18 December 2002, էջ 7:

<sup>157</sup> Hanf, 2003, էջ 136:

<sup>158</sup> Ziadeh, էջ 50:

<sup>159</sup> Dickran Kuymjian, “Two Studies of the Armenian Community of Lebanon and a Special Introduction”, *The Armenian Review*, Vol. 32, June 1979, էջ 119:

Իրականության մեջ, համայնքապետական Լիբանանի պատմական ասանդը չէր ներշնչեր որեւէ վերափոխում: 1920ականներէն իվեր Մեծն Լիբանանը գոյատեւելու ատակ երկրի ու ազգ-պետության մը վերափոխելը կը շարունակէր մնալ երկրին անլոյծ մարտահրաւերը: Եւ խորքին մէջ ոչ-հայ լիբանանցիներուն չհամարկուիլը առատ փաստեր ունէր հերքելու հայերուն ուղղուած համարկումի կոչերը: Դեռ աւելին, բնոյթն ու նկարագիրը պետության, նոյնիքն խորքն ու ինքնութեան ինդիը Լիբանանի՝ կը մնային անորոշ:

Կրկնելու գնով հաստատենք, թէ Լիբանան կը նկատուէր երկակի շարունակութիւնը արաբ Իսլամական Աշխարհին եւ քրիստոնէայ Եւրոպային: Լիբանանեան ինքնութեան բացակայութիւնը մեծ պատճառ դարձած էր լիբանանեան ազգ-պետության մը կայացման ձախողումին, յառաջացուցած էր միջհամայնքային կրկնուող անհամաձայնութիւններ, մրցակցութիւններ, բազմերես անվստահութիւն եւ հակադրութիւն՝ յառաջացեալ համարկումին: Հանգրուանային համարկումը կարիքն ունէր բոլոր համայնքներուն համադրուած, ժամանակացուած եւ ներդաշնակուած գործարքներուն, որ կը բարդացներ, նոյնիսկ կը տապալէր յառաջացեալ համարկումին հաւանականութիւնը:

Ուստի, համարկումի պետական խառնակ քաղաքականութիւնը, պետական տկար համակարգը, համայնքներուն վերապահումները համարկումին հանդէպ, ժամանցուած թիւրմբոնումներ եւ տասնամեակներու ընթացքին իրենց ներգործութիւնը ունեցած են լիբանանեան հայօճախին համարկումի գործընթացին վրայ եւ պատճառ դարձած որ հայօճախը երկիսաւ ինքնութիւն մը յառաջացնէ: Քաղաքական գիտակցութեան բացակայութեան եւ համայնքային նախնականութեան հենքին վրայ դժուար է ակնկալել որ լիբանահայերը (եւ լիբանանեան բոլոր համայնքները) գործեն իրենց իսկ համայնքային շահերուն դէմ:

### **Եզրակացութիւն**

Լիբանանի համայնքապետական դրութիւնը մասամբ կարելի դարձուցեր էր ուղել եւ լուծել միջհամայնքային մրցակցութիւնը, բայց շատ քիչ բան իրագործեր էր շաղախելու եւ ստեղծելու ազգային ինքնութիւն մը: Քաղաքական համարկումն ալ չէր կրցած վճռորոշ սահմանէն անդին անցնիլ, ուրկէ ետք համարկումը յառաջացներ ներքին ուժականութիւն մը եւ ինքնըստիներեան խորանար: Այդպիսի համարկում մը պիտի զօրացներ կեղրոնական պետութիւնը ի հեճուկս

համայնքներուն եւ անոնց ղեկավարութեան շահերուն: Միշտ ալ առիթը կար – խորքին մէջ առիթները անպակաս էին – կաշկանդելու համարկումը եւ նոյնիսկ ետքայլ կատարելու:

Կարծես թէ Թաէֆի Համաձայնագիրը ձախողած էր լիբանանեան համարկումին առումով եւ զայն ձգած էր առանց տնօրինումի եւ առկախ:

Այդուհանդերձ, յետ-Թաէֆեան հանգրուանին լիբանահայերը դիմագրաւեցին մեծ փոփոխութիւններ: Լիբանանի հայօճախի ընկերատնտեսական, ժողովրդագրական եւ մշակութային տարածքը վճռապէս կծկուեցաւ, կուսակցական մենաշնորհը փոխարինուեցաւ աւելի բազմակարծիք, նուազ կազմակերպ եւ չհամադրուած կառոյցով մը, միջհամայնքային խաչաձեւումներ-ոտնակոխումներ դրսեւորուեցան եւ հայօճախը դիմագրաւեց անմիջական մարտահրաւերը հայապահպանումի եւ կազմակերպական վերակառուցումի: Ան բանականօրէն վերականգնումի երկարաժամկէտ ծրագիրներու մշակման դէմ յանդիման գտնուեցաւ: Իր նուազած միջոցներով, ան դիմագրաւեց զանազան մարտահրաւերները վերաձեւաւորուող Մփիւոքի մը յարմարելու, անկախացած Հայաստանի մը եւ Ղարաբաղեան անկախութեան բիրտ հակամարտութեան մը կոչերուն ընդառաջելու եւ միաժամանակ լիբանանեան ընկերաքաղաքական ու տնտեսական նորաստեղծ իրավիճակին համարկուելու:

Հայկական անկայունութիւնը զուգադրուեցաւ լիբանանեան տարածքին շրջափոխութեան: Ասիկա մղեց որ հայօճախը պատշաճի եւ համարկուի փոփոխուող լիբանանեան միջավայրին եւ տեղաւորուի անկայուն համահայկական տարածքին մէջ: Ձեռով մը դիւրաշարժ լիբանահայ համայնքին կը պարտադրուէր ճակատիլ անկայուն իրականութեան մը հետ:

1990-2005 մէկուկէտ տասնամեակը՝ ապակողմնորոշող եւ հիասթափեցնող կացութեան մը տասնհինգ տարիները, դժուար թէ հրամցնէին համարկումի որեւէ յստակորոշ քաղաքականութիւն:

## Վերջաբան

Լիբանահայ 2005-2015 տասնամեակը կը յատկանշուի նախորդ տասնհինգամեակի տազնապներուն եւ Լիբանանի պատերազմի հետեւանքներուն ազդեցութեան ծաւալումով, երկրին ընկերային-տնտեսական տազնապին եւ քաղաքական անելին խորացումով, շրջանային կացութեան բարդացումին առաւել ազդեցիկութեամբ:

Լիբանանեան պատերազմին ընթացքին հայօճախը կրցաւ յարաբերաբար պահել իր ինքնուրոյնութիւնը, իսկ 1990-2005ին քաղեց այդ քաղաքականութեան պտուղը: 2005ը, սակայն, Լիբանանի համար դարձակէտ եղաւ յետպատերազմեան առաջին հանգրուանի քաղաքական վերապահ լուստեսութենէն, միջհամայնքային բարեխառն կեցուածքներէն, փոխհանդուրժողութենէն եւ ընդառաջումներէն: Լիբանանի քաղաքական կեանքը որոշ չափով վերադարձաւ նախապատերազմեան բնատրութեան՝ քիչ մը աւելի կարծրութեամբ: Հին քաղաքականութեան ոգիին վերադարձը աւելի տհաճ եղաւ, որովհետեւ 1975-90ին նախորդած էր տնտեսական վերելքի յատկանշական հանգրուան մը, մինչ 2005ին նախորդեցին քաղաքացիական պատերազմին վերքերը, Իսրայէլ-Լիբանանի Դիմադրական Շարժում բախումները, ներքին յարաբերական կայունութիւնը եւ տնտեսական կասկածելի տեղաշարժերը:

Ուրիշ էր 2005-2015ը՝ քաղաքական ահաբեկումներով, անկայունութեամբ, Իսրայէլ-Հրգպոլլա այլատեսակ ճակատումներով, տնտեսական անկումով, կենցաղային կարիքներու պետական ընդառաջումի ձախողումով եւ... Արաբական Գարունով: Տասնամեակը դառն ու դաժան եղաւ Լիբանանի բոլոր համայնքներուն համար: Յանուն համակեցութեան յետպատերազմեան փոխզիջումնային տրամադրութիւնները բախեցան սեւ իրականութիւններու, որոնց եկան բարդուիլ շրջանային տազնապներ: Համաշխարհայնացումի գործընթացը եւ արհեստագիտական նորագոյն միջոցները աւելի ներգործօն դարձուցին համաշխարհային թէ շրջանային այլազան զարգացումներու, տազնապներու ազդեցութիւնը՝ Լիբանանի եւ իր համայնքներուն վրայ:

Ծաղկուն եւ կորովի հայօճախը դիմագրաւեց ընդհանրական խնդիրները կծկուող որեւէ հաւաքականութեան: Ան դէմ յանդիման գտնուեցաւ գիտականօրէն չբնութագրուած եւ չհունաւորուած (նաեւ տարերային) համարկումին: Այս համարկումին հետեւանքները տակաւին մասամբ բացայայտուած են եւ հայօճախը - բնականօրէն -

իրագրել չէ՝ բայց կը զգայ անոր այլատեսակ հետեւանքները: Ուստի եւ՝ բաւարար չեն համընդհանուր ճիգերը՝ նուազագոյնի իջեցնելու յառաջացող եւ աճող վնասները նահանջանման համարկումին եւ լծուելու հեռահար ծրագրերու տեսլականին:

Գիտակցականութեան կարելոր խնդիրի առջեւ է հայօճախը. կենցաղային գերձնշումներու ենթակայ զանգուածը եւ մտաւորականութեան մեծամասնութիւնը (ներառեալ երիտասարդութիւնը) անկարող են ու անմիջոց: Մինչ ղեկավարութիւնը փորձութեան մէջ է խորաչափելու խնդիրները, ճշդելու անոնց առաջնահերթութիւնը եւ ռազմավարելու անոնց լուծման տարբերակները:

Հայօճախին քաղաքացիական համակարգը, հակառակ ուշագրաւ իր ճիգերուն, մասամբ կը յաջողի բաւարարել կարիքները, եւ ոչ-միշտ կը յաջողի արագ եւ բաւարար հակադարձել տագնապներուն: Քաղաքացիական համակարգը չաճեցաւ կարիքներուն համապատասխան տարողութեամբ:

Առաջին 7 համայնքներէն մին դառնալը մակերեսային, ձեւական դրսեւորումներէ եւ արդիւնքներէ անդին շատ չանցաւ, ոչ ալ հայօճախը անհրաժեշտ համակարգուած աշխատանքով յաջողեցաւ համապատասխան գործնական քայլերով ամրապնդել այս իրագործումը<sup>1</sup>: Չյառաջացաւ այն օժանդակ հիմնարկը որ սատարէր պետական հայ պաշտօնակոչութեան, կամ հայօճախին առողջ յարատեւումին հիմնական գործօնները հզօրացնէր, նորեր յառաջացնէր: Երբեմն հատուածական մօտեցումները առաւել տկարացուցին հայօճախը՝ յաչաւ Լիբանանի համայնքներուն: Պակսեցաւ ներլիբանանեան համընդգրկուն ողջմիտ քաղաքականութիւնը, բայց մանաւանդ բացակայեցան հայատեւումի գաղափարախօսական պատուանդանները արդիական մշակոյթով ամրապնդելու ջանքերը:

Հայօճախին տնտեսական, բարոյահոգեբանական ոլորտներուն առընթեր, ներլիբանանեան քաղաքական եւ համարկումի կալուածներուն առումով հայկական տրամախօսութիւնը (discourse) համապատասխան հարթակի չբարձրացաւ: Չմշակուեցաւ մանաւանդ հայօճախին ազգային առաքելութեան նոր տրամախօսութիւնը, որ գաղափարախօսական պատուանդան յառաջացնէր, հունաւորում տար համարկում-հայապահպանում երկուդիին: Սերունդը անցաւ,

---

<sup>1</sup> Աննախաղէպ էր հայ երեսփոխաններու տարրալուծումը այլ խմբակցութիւններու երեսփոխանական պլոքներուն մէջ:

նորահասները տարուեցան տեղական խնդիրներուն, որոնք իրենց մեծութեամբ նսեմացուցին հայօճախը, միւս համայնքները, նոյնիսկ Լիբանանը: Այս նսեմացումէն դուրս բերող, ինչպէս նաեւ ինքնութեան տազնապեցնող երկընտրանքային այլ հարցերու համար եւս (օրինակ՝ Հայաստանի Հանրապետութիւն/Լիբանան խաչասերումը) համոզիչ տրամասացութիւն չառաջացաւ: Շեշտուեցաւ լիբանահայ խնդիրներու յստակատեսութեան պակասը թէ՛ որովհետեւ խնդիրները շատ էին, բարդ, բազմակի եւ չէին բիրեղացուած, եւ թէ՛ որովհետեւ արդէն նստուածք ունեցող գաղութի վերածուած է հայօճախը:

Տասնամեակներու ընթացքին հայօճախը յառաջացուցած էր ձեռնարկներու եւ գործունէութեանց ոլորտներ, որոնք աշխատատար են, բայց անոնց ոչ-բոլոր դրսեւորումները այսօր պահպանած են իրենց արդիւնաւետութիւնը եւ կարեւորութիւնը: Չյառաջացաւ, սակայն, այն մեքանիզմը որ պիտանիութիւն-այժմեականութիւնը կորսնցուցած, սովորութենականացած գործունէութիւնները փոխարինէր նպատակային, հրապուրիչ եւ կենսական նորերով: Լիբանահայ աւանդական ենթախումբերուն օրակարգերը եւ անոնց գործադրումի միջոցները մնացին աւանդական եւ չեն հրապուրէր լիբանահայ երիտասարդութեան մեծամասնութիւնը:

Հայօճախին մեծագոյն մարտահրաւերներէն է լիբանահայ աւանդականութեան ու նոր սերունդի արդիական կենցաղի եւ արժեքահամակարգի ճեղքին կամրջումը. անլոյծ կը մնան նորահաս սերունդի ներգրաւման սպառնալից խնդիրները:

Երիտասարդութեան մտահոգիչ հատուած մը չ'ընդգրկուիր հայկական ոլորտին, որով հայօճախին ձեռնարկներուն ունկնդիրը կը մնայ երեց սերունդը:

Հայօճախը երբեմն ակամայ ընդելուզուեցաւ Միջին Արեւելքի նորագոյն տազնապներուն, միաժամանակ խորացուց իր փոխհաղորդակցութիւնը հայկական տիեզերքին հետ, մասնաւորաբար՝ Հայաստանի Հանրապետութեան: Ան անհատական եւ ենթակայական ծիրին մէջ, սկսաւ օգտուիլ համացանցի եւ արհեստագիտական նորագոյն նուաճումներէն, սակայն չվերածեց զայն իր հայկական վերելքին սատարող, յոռետեսութիւնը լաւատեսութեամբ յաջողապէս հակակշռող գործօնին: Համացանցի հայկական ոլորտը բաւարարաչափ չթափանցեց լիբանահայ հանրային-հաստատութենական տարածք, ոչ ալ պատշաճ ռազմավարութեամբ կ'օգտագործուի ենթախումբերուն կողմէ:

Պէտք է ըսել, սակայն, որ համաշխարհայնացումին ընծայած լծակներով սփիւռքեան (անդրսահմանային) ղեկավարման ու վարման գործօնները լաւապէս կ'օգտագործուին յօգուտ անդրսահմանային հայ հաստատութիւններու, որոնց ոչ-բոլոր օրակարգերը կը զուգահեռուին հայօճախին շահերուն:

Լիբանահայ ներկայ տնտեսական տարածքի թերեւս շուրջ 40-60%ը յառաջացաւ ու ծաղկեցաւ Լիբանանեան պատերազմի վերջին հանգրուանին ու անկէ ետք: Ի տարբերութիւն լիբանահայ սեփական ձեռնարկութիւններուն, որոնք յարաբերաբար քայլ պահեցին շուկայի պահանջներուն եւ արհեստագիտականօրէն բարեշրջուեցան, լիբանահայ հանրային կառոյցներն ու հաստատութիւնները սակայն չկատարեցին նմանատիպ անհրաժեշտ բարեշրջում. վարչական գետնի վրայ լիբանահայ հանրային կառոյցներուն մէջ կարելի եղաւ (թէեւ ոչ-բաւարար) զարգացում արձանագրել, անդին՝ մտայնութեան, ըմբռնումներու, հատուածականութեան, ոչ-հայկական հանդուրժողութեան եւ աշխարհընկալումի ու ներհայկական արժեհամակարգի առումով եղած բարեփոխումները յաւելեալ քիզերու կը կարօտին: Այս բնագաւառը միայն մասամբ լուծած է արդիականացումի, առաւել մասնագիտացումի եւ արհեստագիտական մշակոյթին անցնելու հաստատութեանականութեան խնդիրները:

Լիբանահայ նիւթաբարոյական կարողականութիւնը համարժեք չ'օգտագործուիր ներհամայնքային կարիքներու համար: Հայօճախին ոչ-բոլոր անհատական թէ հաւաքական նիւթական կարողութիւնները հաշուենկատ, համակարգուած, հետեւողական, երկարաժամկետ ծրագրաւորումի վրայ հիմնուած ռազմավարութեամբ ի սպաս կը դրուին կարիքներու հոգաձութեան. թող որ առկայ կարողականութեան մէկ մասը միայն կը յատկացուի այդ նպատակին: Կայ նաեւ բարեկեցիկներու խաւ մը, որ ընդհանրապէս քիչ առնչութիւն ունի հայութեան կարիքներուն հետ:

Միսալ է, սակայն, նոր արժեհամակարգերու եւ կենցաղի հետեւող լիբանահայ երիտասարդութեան մեծամասնութիւնը, եւ կարողականութեան տէր լիբանահայերու չառնչուող խաւը «անտարբեր» որակել: Միսալը այն է որ ցարդ կարելի չէ եղած գտնել այն միջոցը, որով անոնք առնչուին հայօճախին: Միւս կողմէն, ակնկալելի է որ այս զանգուածին Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի շրջանին յառաջացած ինքնաբոլիս ոգեւորութիւնը չմարի, այլ

ձեւաւորուի ու դրսեւորուի կազմակերպուածութեամբ, յաճախակիօրէն, քան թէ՛ պարագայաբար:

Հայօճախը չկրցաւ յաջողապէս համարկել Իրաքի եւ Սուրիոյ տազնապներէն յառաջացած հայ գաղթականները, չկրցաւ օգտուիլ անոնց ժամանումէն, ոչ ալ կրցաւ - մանաւանդ իրաքահայերուն պարագային - համապատասխան օգնութիւնը փութացնել անոնց, թերեւս՝ իր անպատրաստ ըլլալուն եւ տազնապին դիմաց իր կարելիութիւններուն վտիտութեան պատճառով: Փակագիծի մէջ պէտք է յիշեցնել սակայն, որ 1974ի կիպրական տազնապին լիբանահայ օճախը դրամահաւաք կազմակերպեց եւ օգնութիւն փութացուց Հիւսիսային Կիպրոսի հայ գաղթականներուն:

Համայնքամիտութենէ անձնամիտում մը սկսած է շեշտուիլ, որ չ'օգնէր լիբանահայուն ազգային-քաղաքական զարգացումին: Հայկական խնդիրները դարձած են սեփականութիւնը առաւելաբար կուսակցութեանց եւ անոնց ենթախումբերուն, ուր անհատը հետեւող է քան՝ նախաձեռնող: Կարծես ազգային հարցերը միայն մասնակիօրէն անհատին սեփականութիւնն են այլեւս: Անհատը յաճախ ազգային հաստատութիւններուն եւ հիմնարկներուն միջոցով կ'առնչուի հայկականութեան, անոնցմէ կը սպասէ հայագործութիւն (որուն ինք պատրաստ է պարտաճանաչօրէն հետեւելու), այլապէս իր դերը չի նկատեր ատիկա, որովհետեւ անոնց վերագրած է հայագործութեան նախաձեռնութիւնը: Ընկերային-անհատական քաղաքացիական-ազգային նախաձեռնութիւնները քիչ են եւ ընդհանրապէս կը կատարուին ոչ-հայկական միջավայրերուն մէջ: Այս ոլորտին մէջ կը հոսի լիբանահայ նորարար արիւնը, որմէ քիչ կ'օգտուի հայօճախը: Եթէ համեմատաբար ըմբռնելի եւ օգտակար կարելի է նկատել լիբանահայ նորահաս սերունդի մեծ հատուածին ոչ-լիբանահայ տնտեսական կալուած ընդգրկուիլը, ապա լիբանահայ նորահաս սերունդի յատկանշական հատուածի մը ոչ-լիբանահայ կամաւոր ծառայութեան ոլորտներ ընդգրկուիլը չի նպաստեր հայօճախին հանրային ծառայութեան ոլորտին նորացումին:

Հայօճախը ցարդ չ'օգտուի իր լիբանանեան կշիռէն՝ օտար քաղաքական այցելութիւններու ընթացքին Հայոց Յեղասպանութեան թէ սփիւռքեան ու հայրենի այլեւայլ հարցերու վերաբերեալ յուշագրեր ներկայացնելով:

Հայկական նորագոյն իրականութեանց մէջ հայօճախը պատշաճօրէն չտեղաւորուեցաւ տակաւին: Թոյլ է տակաւին

պետականակիր ազգի համապատասխան դերի գիտակցութիւնը՝ պատասխանատուութիւններու եւ իրաւունքներու առումով:

Եւ անշուշտ, հայօճախը ջնջին մէկ մասը կ'օգտագործէ այն ազգային-ընկերային-տնտեսական-բարոյսահոգեբանական դրամագլուխին, զոր տասնամեակներու ընթացքին յառաջացուցած է ան յաչս Սփիւռքին եւ Լիբանանի միւս համայնքներուն: Ոչ ալ ռազմավարօրէն կը կերտէ իր յառաջացուցած աւանդին վրայ:

Միջին Արեւելքի վերջին տասնամեակներու դէպքերու լոյսին տակ Լիբանանի հայօճախը դարձաւ ապրող արեւմտահայ լեզուի եւ աւանդներու մնացորդացի զօրագոյն օրրանը: Ազգային դաստիարակութեան եւ սերունդներ թրծելու առումով հայօճախին միջավայրը կը շարունակէ տակաւին ինքնըստինքեան հայամշակումի քուրայ ըլլալ: Լիբանահայութեան գերակշիռ մասը ականջալուր է եւ այլազան տարողութեամբ ու ձեւերով ընդառաջող՝ հայկական պարագաներուն: Լիբանահայերը այսօր, որեւէ ժամանակէ աւելի՝ աշխարհագրականօրէն տարածուած են ու հայօրէն մխրճուած լիբանանեան առօրեային, կենցաղին եւ բոլոր ոլորտներուն: Այսօր, որեւէ ժամանակէ աւելի, տեղաբնիկ համայնքները դրական տրամադրուած են հայօճախին հանդէպ...: Ուստի առարկայական պայմանները կան որ ցրուած եւ համարկուած լիբանահայ բազմազանութիւնը աւելի մեծ դեր խաղայ: Դժբախտաբար, սակայն բաւարարաչափ չէ յառաջացած եւ ժողովրդայնացած նման առաքելութեան մը տրամասացութիւնը:

Ամփոփելով՝ հայօճախը, Լիբանանը, Միջին Արեւելքը, երկրագունդը այլազանօրէն մտած են անցումային շրջան մը: Երկրագունդի քաղաքական իշխանութեան համակարգի վերաձեւում տեղի կ'ունենայ. ոչ միայն ուժային յարաբերութիւնները կը փոխուին, այլեւ արհեստագիտական նորագոյն նուաճումներուն բերմամբ ընկերատնտեսա-մշակութային ու կենցաղային յարաբերութիւններու համակարգը կը շրջուի: Արժէհամակարգային յեղաշրջումներ կը կատարուին:

Այս իրադարձութիւնները անհամեմատ մեծ էին ոչ միայն հայօճախէն, այլեւ Լիբանանէն ու Միջին Արեւելքէն, որով Լիբանանի բաղկացուցիչ համայնքներէն իւրաքանչիւրը վերածուեցաւ անուժ ականատեսներու. ոմանք մասնակցութիւն բերին ծաւալող ռազմաքաղաքական վերիվայրումներուն, դարձան գործիք, ուրիշներ կամայ-ակամայ համախմբուեցան, ինչպէս՝ քրիստոնէայ համայնքները (ներառեալ հայութիւնը), երագելով դառնալ վերաձեւման լիբանանեան

փոքր դերակատարներ: Քրիստնեյ ճակատը, սակայն եւ Միջին Արեւելքի ոչ-իսլամ փոքրամասնութիւնները ակամայ կրողները եղան այս շարունակուող 'անցումին' եւ մեծապէս տուժեցին անկէ: Վերջին տասնամեակի Մ. Արեւելքի մեծագոյն փոփոխութիւններէն կարելի է համարել փոքրամասնութիւններու նուագում-առաւել անշքացումը՝ քաղաքական-զինուորական-ընկերային-ժողովրդագրական-տնտեսական-մշակութային-արհեստակցական բոլոր բոլոր ոլորտներուն մէջ: Փոքրամասնութեանց եւ քրիստոնէական անշքացումը բարոյսահոգեբանական մեծ ընկճախտ պատճառած կը թուի ըլլալ շրջանի փոքրամասնութիւններուն, ի միջի այլոց նաեւ հայութեան: Դժբախտաբար, սակայն, հայկական տիեզերքին մէջ արձանագրուած դրական քայլերը, նուաճումները, չափազանց անբաւարար են սպեղանի դառնալու, ամոքելու եւ կորով ներշնչելու Միջին Արեւելքի հայութեան, հակառակ որ անոր շրջանի հայութիւնը յարաբերաբար նուազ կը տառապի քան գաղթականութեան ցուպը ձեռք առած տեղաբնիկ գաղթականները:

Խաւարին մէջ իսկ կարելի է լոյս երագել, լոյսին տեսիլքը ունենալ:

Իսկ հայկական տիեզերքին միայն կարգ մը երեսակները մութ են: Անդին կան լուսաւոր շերտեր: Պարտինք լուսաւոր այդ գօտիները համատեղել, դարձնել ծիածան, վերածել դրամագլուխի ու հաւատքով, պայծառատեսութեամբ կերտել անոնց վրայ:

# ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻԻՐՆԵՐ<sup>1</sup>

## Հայերեն Մամուլի Յօդուածներ Եւ Ուսումնասիրութիւններ

- Ազգային Իշխանութեանց Ուսումնական Խորհուրդ, «Ազգային Վարժարաններ, Թիւեր, Ծրագիրներ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1981:
- Պարոյր Աղպաշեան, «Ամանորեան Հաշուեյարդար», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1982:
- Պարոյր Աղպաշեան, «Ճերմակով Ու Սեւով Պարուրուած Լիբանանահայ Գաղութը», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1988:
- Պարոյր Աղպաշեան, «Յանուն Լիբանանահայ Գաղութի Պահպանման Ու Գոյատեւման», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1986:
- Գեորգ Աճեմեան, «Որպէսզի Չմեռնի Երազը», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1999:
- Անհեղինակ, «Լիբանանի Ականուած Յոյսերու Տարին», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1986, էջ 36:
- Անստորագիր, «Համագգայինի 1985 Տարին», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1986:
- Շողիկ Աշըգեան, «Լիբանանահայ Գաղութի Կազմաւորման Առաջին Քայլերուն Հետքերով», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1998:
- Շողիկ Աշըգեան, «Հայկական Պահանջատիրութիւնը Հեռանկարային Առումով», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2001:
- Շողիկ Աշըգեան, «80Ամեակ Մը Եռագոյնի Հաւատարմութեամբ», *Ազդակ*, 28 Մայիս 1998:
- Արա Արծրունի, «Սփիւռքահայը Եւ Հայրենիքը», *Ազդակ Բացառիկ*, 2 Յունուար 1995:
- Սիլվա Աւագեան, «Արարատ Եկաւ, Յաղթեց, Հիացուց Եւ Իր Հետ Տարաւ Բոլորին Սէրը», *Արարատ Բացառիկ*, 1 Յունուար 1998:
- Վիզէն Աւագեան, «Մարտահրաւերներու Ընդդէմ», *Ազդակ*, 24 Ապրիլ 2002:
- Յակոբ Բագրատունի, «Ժամանակակից Հայկական Ահաբեկչութիւնը», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1981:
- Յակոբ Բագրատունի, «Ժողովուրդին Հետ Ժողովուրդին Համար», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1991:

---

<sup>1</sup> Արաբերէն աղբիւրները տրուած են լատինատառ:

- Յակոբ Բագրատունի, «1990 Արցախի Պոռթկում, Հայաստանի Ինքնիշխանությունն Եւ Հայ Դաշնակցության Վերընձիւղում», *Ազդակ*, 1 Յունուար 1991:
- Յակոբ Բագրատունի, «Հայկական Ահաբեկչությունն Ու Հակահայ Արշարը», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1984:
- Զօրի Բալայեան, «Հայրենիքը Կենսաբանական Յեղասպանութեան Վտանգի Տակ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1981.
- Շահան Գանտահարեան, «Տասնամեայ Հաշուեկշիռ (1983-1993) Յետ-Լիզպոնեան Ժամանակահատուած», *Ազդակ*, 1 Յունուար 1994:
- Գարեգին Բ. Կաթողիկոս Սարգիսեան, «Տարի Մը Յատկանշուած Հակաթուրք Ահաբեկչութեամբ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1982:
- Կարօ Գեորգեան, *Ամէնուն Տարեցոյցը, Բ. Տարի*, Պէյրութ, Հայ Կաթողիկէ Տպարան, 1955:
- Միսաք Գույումճեան, «Հ.Բ.Ը.Միությունը Սուրիոյ Եւ Լիբանանի Մէջ», *Սուրիահայ Տարեգիրք, Ա. Տարի*, Պէյրութ, Տպ. Ազդակ, 1929:
- Հմայեակ Գրանեան, «Հայ Որբությունը», *Յուշամատեն Մեծ Եղեռնի*, իմբ. Գերսամ Ահարոնեան եւ Ն. Թօփալեան, Պէյրութ, Տպ. Աստլաս, 1965:
- Շանթ Եագուպեան, «Պետական Թէ Ազգային Քաղաքականություն», *Ազդակ*, 1 Յունուար 1996:
- Ս. Երուանդեան, «Հայրենիք-Սփիւռք Յարաբերությունները 1999ին» *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 2000:
- Սօնա Զէյթլեան, «Միջնաբերդը Կանգուն Պահելու Համար», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1980:
- Վազգէն Էթիեմեզեան, «Ծանօթանանք Արտասահմանեան Մեր Կառոյցներուն» *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1983:
- Մելքոն Էպլիդաթեան, «Ամենայն Հայոց Կաթողիկոսին Ընտրութեան Առիթով», *Ազդակ Բացառիկ*, 2 Յունուար 1995:
- Մելքոն Էպլիդաթեան, «Հարկը Զօրէնս Լուծէ՞», *Ազդակ*, 1 Յունուար 1994:
- Յովիկ Էօրտէքեան, «ՌԱԿը Հայաստանի Հանրապետութեան Մէջ (1991-1996)», *Զարթօնք Բացառիկ*, 1997:
- Սուշեղ Իշխան, «Յաղթանակը Տոկացողին Է», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1987:
- Արմէն Իւրնէշլեան, «Փորձ-Ակնարկ Հայ Կուսակցութեանց Վրայ», *Զարթօնք Բացառիկ*, 1997:
- Լուտեր, «Մարդ Մը» *Ազդակ*, 22 Մեպտեմբեր 1934:

- Խմբագրական, «Անժամանցելի Պատգամը», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1983:
- Խմբագրական, «Անկլինադարձները Կը Կերտուին Կամքով», *Ազդակ Բացառիկ*, 2 Յունուար 1995:
- Խմբագրական, «Արդար Քաղաքականություն», *Չարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1986:
- Խմբագրական, «Արցախեան Պատգամ. Ինքնամսխումը Ներելի Չէ», *Ազդակ*, 1 Յունուար 1994:
- Խմբագրական, «Գաղափարական Պայքարի Դարաշրջանը», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 2000:
- Խմբագրական, «Դէպի Նոր Հանգրուաններ», *Չարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1985:
- Խմբագրական, «70Ամեակի Հանգրուանէն Անդին 95Ամեայ Ուխտին Հաւատարմութեամբ» *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1986:
- Խմբագրական, «2002ի Հայ Կեանքի Թղթածրարը», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 2003:
- Խմբագրական, «Իմաստութեամբ Եւ Մասամբ Նորին», *Չարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1982:
- Խմբագրական, «Հայուն Երագին Մարմնաւորումը Յենարան Ու Մէկնակէտ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1993:
- Խմբագրական, «Հաշուետուութիւն», *Չարթօնք*, 1 Յունուար 1989:
- Խմբագրական, «Ճանաչում Եւ Հատուցում», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2001:
- Խմբագրական, «Ճշմարտութեան Տարին», *Ազդակ*, 2 Յունուար 1989:
- Խմբագրական, «Մաքառումի Եւ Յոյսի Տարի», *Չարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1988:
- Խմբագրական, «Որպէսզի Երագները Արդարօրէն Իրականանան», *Ազդակ*, 1 Յունուար 1996:
- Խմբագրական, «88Ամեայ Աննահանջ Պահանջատիրութիւն», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2003:
- Խմբագրական, «Պատերազմի Ու Խաղաղութեան Լուսանցքներուն Վրայ», *Չարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1983:
- Խմբագրական, «Վերապրումի Եւ Յառաջդիմութեան Տարի», *Չարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1981:
- Խմբագրական, «Տագնապին Դիմագրաւումը», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1988:
- Խմբագրական, «Տեւականը», *Ազդակ Բացառիկ*, 28 Մայիս 1998:

- Խմբագրական, «Ցեղասպանությունը Քաղաքական Խաղաքարտ Չէ»,  
*Ազդակ*, 24 Ապրիլ 2002:
- Խմբագրական, «Փորձություն Եւ Հաւատքի Վերահաստատման  
Տարին», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1987:
- Խմբագրական, «Օրհնաբեր Քաղաքականութեան Սպասումով»,  
*Արարատ Բացառիկ*, 1 Յունուար 1998:
- Ռ. Կիրինեան, «Միջազգային Մամուլի Տարին Հայկական  
Ահաբեկչութեան Մասին», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1984:
- Հարցազրոյց, «Անկախ Հայաստանի Կառուցումը Համահայկական  
Դրօշով Ազգային Միացեալ Կառավարութեամբ», *Ազդակ Բացառիկ*, 1  
Յունուար 1993:
- Սովսէս Հերկելեան, «Վանտալական Ոտնահետքեր Սրբաքանդակի  
Վրայ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1983:
- Հոչակագիր, *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 2000:
- Բոպերթ Ճեպէճեան, «Տարադէպ Շփոթ», *Զարթօնք Բացառիկ*, 1  
Յունուար 1998:
- Հուրիկ Ճերէճեան, «Ակնարկ Լիբանանի Ուսումնական Նոր Ծրագրին  
Վրայ», *Արարատ Բացառիկ*, 1 Յունուար 1998:
- Եղիկ Ճերէճեան, «ՄԴՀնչակեան Կուսակցութիւնը Եւ Ղարաբաղի  
Հարցը», *Արարատ Բացառիկ*, 1 Յունուար 2004:
- Սարգիս Մահսերէճեան, «Քաղաքականացման Չիհնցող Պատգամ  
Մը», *Ազդակ*, 24 Ապրիլ 2002:
- Ասպետ Մանճիկեան, «1915-1921. Հայութեան Դաժան Գոյամարտը»,  
*Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2001:
- Ասպետ Մանճիկեան, «Եղեռնի Ոգեկոչումներուն Հոլովոյթը  
Լիբանանահայ Կեանքին Մէջ», *Ազդակ*, 24 Ապրիլ 2002:
- Սեդա Մարկոսեան-Խտրշեան, «Հայ Քաղաքացիական Ընկերութիւնը»,  
*Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 2005:
- Սեդա Մարկոսեան-Խտրշեան, «Լիբանանի Պատերազմին Թողած  
Ընկերային Հետքերը Սեղմ Տողերով», *Ազդակ Բացառիկ*, 2 Յունուար  
1995:
- Յակոբ Միքայէլեան, «Մտորումներ 21րդ Դարու Սեմին», *Զարթօնք  
Բացառիկ* 1 Յունուար 1998:
- Մկրտիչ Մկրտիչեան, «Համախումբ Կազմակերպումի Հրամայականը»,  
*Ազդակ*, 1 Յունուար 1994:
- Մկրտիչ Մկրտիչեան, «Հայ Դատը Բազմաթիւ Երեսներ Ունի», *Ազդակ*,  
24 Ապրիլ 2002:

- Զաւէն Մարրլեան, «Զարթօնք Օրաթերթի Հիմնադրութիւնը Եւ Անոր Սկզբնական Տարիները Համաշխարհային Բ. Պատերազմին», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1998:
- Զաւէն Մարրլեան, «Հայկական Հարցի Հոլովոյթը, 1994-2003», *Արարատ Բացառիկ*, 1 Յունուար 2004:
- Ժագ Յակոբեան, «Որպէսզի Միշտ Վառ Մնայ Պահանջատիրութեան Հուրը», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2003:
- Յայտարարութիւն, *Ազդակ*, 2 Յունուար 1989:
- Ժիրայր Նայիրի, «Երկու Տարեկից Հպարտառիթ Եւ Տխրանուշ», *Նայիրի Բացառիկ*, 1 Յունուար 2005:
- Հայկ Նազգաշեան, «Ինչ Կրցանք Եւ Ինչ Չկրցանք Իրագործել», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1986:
- Հայկ Նազգաշեան, «Վ. Պետրոսեանի 'Կրակէ Շապիկ' Գրքին Յարուցած Աղմուկին Առթիւ», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1988:
- Հայկ Նազգաշեան, «Պառակտումը Եւ Իր Հետեւանքները», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1983:
- Շահանդուխտ, «Լիբանանահայ Վերականգնող Մեր Գաղութին Սասին Հակիրճ Ակնարկ», *Ազդակ*, 1 Յունուար 1994:
- Շահանդուխտ, «Պուրճ Համուտէն Մինչեւ Երկիրն Հայոց», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1981:
- Պետրոս Շեմմէսեան, «Յեղասպանութեան 90 Ամեակ Եւ 90 Առ Հարիւր Յեղասպանութիւն», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2004:
- Յ. Պալեան, «Հայերը Լիբանանի Մէջ», *Սուրիահայ Տարեգիրք, Ա. Տարի*, Պէյրութ, Տպ. Ազդակ, 1929:
- Յակոբ Պալեան, «Ժամադրութիւնը», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2004:
- Երուանդ Պապայեան, «Անընկճելի Լիբանանը», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1993:
- Յ. Պարագեան, «Հայ Դատի Հետապնդումը Հայապահպանման Ազդակ», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2004:
- Աշոտ Պետրոսեան, «Հայաստան. Վերասլացք Համազգային Ճգնաժամ», *Ազդակ*, 1 Յունուար 1994:
- Ն. Պերպէրեան, «Պատնէշի Վրայ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1985:
- Հայր Եփրեմ Պօղոսեան, «Ֆրանցօ Նասրի Փաշա Բ. Կուսակալ Լիբանանի (1868-1873)», *Հանդէս Ամսօրեայ*, Հտր. 64, թիւ 1-3, 1950:
- Կարին Սաղորճեան, «Զէնքը Յաղթեց, Դիւանագիտութիւնը՝ Տակաւին», *Ազդակ Բացառիկ*, 2 Յունուար 1995:
- Արա Սանճեան, «Լիբանան», Հայ Սփիւռք Հանրագիտարան, Հայկական Հանրագիտարանի Հրատ., Երեւան, 2003:

- Արամ Սեփերձեան, «Ժամն է Զգաստութեան», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1995:
- Պէպօ Սիմոնեան, «Հայ Գրողը Եւ Ազգային Մտածողութիւնը», *Նայիրի Բացառիկ*, 1 Յունուար 2005:
- Վրէժ Արմէն, «90 Տարի Ետք Մեր Ճակատագրին Դէմ Յանդիման», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 2005:
- Տեղեկագիր, «Հայասպանութեան Մասին Բանաձեւ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1998:
- Տեղեկագիր, «Հայրենիքին Եւ Ազգին Դէմ Ոճիրը», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 2000:
- Գասպար Տէրտէրեան, «Անցումային Այս Յարափոփոխ Հանգրուանի Նոր Երկրէւեռացումին Շփոթն Ու Տագնապը», *Զարթօնք Բացառիկ*, 1 Յունուար 1996:
- Գասպար Տէրտէրեան, «Արցախի Ինքնորոշման Խաղաղ Լուծումը Կրնայ Գալ Միայն Իրաւական Հիմքի Վրայ», *Զարթօնք*, 1 Յունուար 1998:
- Զաւէն Տիգրանեան, «1997. Միջազգային Բեմին Վրայ Լիբանանի Վերահաստատման Տարին», *Արարատ Բացառիկ*, 1 Յունուար 1998:
- Բարկէն Փափագեան, «Քալել Անընկճելի Կամքով», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1983:
- Կարօ Փոլատեան, «Շահինք Այս Ճակատամարտն Ալ», *Ազդակ Բացառիկ*, 1 Յունուար 1980:
- Միհրան Քիրսոզլեան, «Հին Պայքարին Նոր Մարտահրաւերը», *Ազդակ Բացառիկ*, 24 Ապրիլ 2004:

### **Օտարալեզու Մամուլի Յօդուածներ Եւ Ուսումնասիրութիւններ**

- Nadim A'adra, "Iqtisad Al Nisyan WalFawda AlMunazzama", *AnNahar*, 22 September 2003.
- AlArman fi Lubnan/Les Armeniens Au Liban, *AlMadina*, 2<sup>nd</sup> Year, issue No. 14, 24 April 1974.
- AlMaarad*, October 14, 1923.
- Hiam AlQusayfi, "Daam AlJemayel LiHilu Risala Ila AlMuarada WalA'ila: 'AlAmru Li' Intikhabiyyan WaSiyasiyyan Fi Baabda Baad AlMatn", *AnNahar*, 26 August 2003.
- "AlTashnaq Yutalib Fi Zikra Ta'sisihi BiTas'hih AlTamsil AlArmani FilHukuma", *AnNahar*, 18 December 2002.
- AnNahar*, 7 January 2003.
- Announcement, "AMAA Relief for Lebanon", *AIM*, April 1996.

- Annual Report*, Jinishian Memorial Program, 1981.
- Sima Aprahamian, "A Multitude of Overlapping Identities: A Lebanese Armenian Community in the Beka'a Valley of Lebanon", *The Armenian Review*, vol. 43, Spring 1990.
- Bashir Ardidi, "Jumhuriyyat AlFasad... Kayfa Nunkizuhu", *AnNahar*, 9 September 2003.
- Aram Arkun, "Hunchakians", *AIM*, March 1991.
- Armenian Survey, "An Interview with President Ter Petrossian", *AIM*, January-February 1997.
- Armenian Survey, "Meeting the First Year's Challenges: Karekin I Rethinks, Reconstructs, Reeducates", *AIM*, May/June 1996.
- Armenian Survey, "Old Dreams New Prospects: The Armenia Fund Forges Ahead", *AIM*, April 1996.
- Tony Halpin, "The Courtship of 3.5 Million Diasporans", *AIM*, July 1998.
- Tony Halpin, "The Search for Common Ground: Armenia and Diaspora Meet and Make Progress", *AIM*, June 2002.
- Hratch Bedoyan, "The Social, Political and Religious Structure of the Armenian Community in Lebanon", *The Armenian Review*, Vol. 32, June 1979.
- Vicken Berberian, "The War Inside the New Lebanon", *AIM*, June 1993.
- Vicken Berberian, "Medicine for the Masses: An Armenian Health Care Center in Lebanon Has Become an Oasis for the Down and Out", *AIM*, October 1993.
- Aida Boudjikianian, "Industrie et Mutations Socio-economique d'une Communaute: L'Exemple Armenien au Liban," in *Industrialisation et Changements Sociaux dans l'Orient Arabe*, ed. A. Bourgey, Centre d'Etudes et de Recherches sur le Moyen-Orient Contemporain, Beirut, Presse Universitaire de Lyon, 1982.
- Megerditch Bouldoukian, "Armenian Business in Lebanon", *The Armenian Review*, Vol. 32, June 1979.
- Agop Der Karapetian and Levon Melikian, "Assimilation of Armenians in Lebanon", *Armenian Review*, Vol. 27, 1974.
- Hrair Deukmejian, "The Armenians: History, Consciousness and the Middle Eastern Dispersion", *Ararat Quarterly*, Vol. XIX, # 3, issue 75, Summer 1978.
- Carla Edde, "Beyrouth Face a l'Etablissement des Refugies Armeniens Pendant les Annees 1920: Les Limites de l'Hospitalite" in Kevorkian, R., L. Nordikian et V. Tachjian (eds.), *Les Armeniens 1917-1939, La Quete d'un Refuge*, St. Joseph University Press, Beirut, 2006.
- Aline Farah, "AlJumhuriyya AlSaniya: Fashal Zarih Fi Bina' AlDawla WaTakris A'mali LiMabda' 'Nisf AlSiyada'", *AnNahar*, 24 December 2003.
- Eliza Galfayan, "Hye Fidelity: Hollywood's Armenian Quarter", *AIM*, April 2002.
- Gregory Geokjian, "Diaspora and Denial; The Holocaust and the 'Question' of the Armenian Genocide", *Diaspora*, Vol. 7, # 2, Spring 1998.

- David Gordon, *The Republic of Lebanon: Nation in Jeopardy*, Westview Press, Boulder, Colorado, 1983.
- Tony Halpin, "A Second Chance: Armenia-Diaspora Conference Looks to Make Up for Lost Time", *AIM*, May 2002.
- Tony Halpin, "The Courtship of 3.5 Million Diasporans", *AIM*, July 1998.
- Tony Halpin, "The Lausanne Controversy. The Treaty of Lausanne is Nothing to Celebrate Say Armenians, Greeks and Turks", *AIM*, July 1998.
- Tony Halpin, "The Face of Discord", *AIM*, November 1992.
- Tony Halpin, "The Search for Common Ground: Armenia and Diaspora Meet and Make Progress", *AIM*, June 2002.
- Tony Halpin & Zara Chatinian, "Repats in Armenia: Diasporans at Home Abroad", *AIM*, May 2002.
- Michel Hallak, "AlMuhasasa WalMahsubiyya A'iqaq Amama Istikmal Mashruu Marakiz Tajmi' AlHalib", *AnNahar*, 11 January 2004.
- Theodor Hanf, "The Skeptical Nation: Opinions and Attitudes Twelve Years after the End of the War", in Theodor Hanf and Nawaf Salam (eds.), *Lebanon in Limbo: Postwar Society and State in an Uncertain Regional Environment*, Baden-Baden, Nomos Verlagsgesellschaft, 2003.
- William Harris, "An Anschluss Brought Down by Errors and Hubris", *The Daily Star*, 22 March 2005.
- Salpi Haroutinian-Ghazarian, "An Armenian Face on Universal Issues: An Interview with the Armenian Assembly's Ross Vartian", *AIM*, February 2000.
- Salpi Haroutinian-Ghazarian, "Brave New World: Armenians in Transition", *AIM*, May 1992.
- Salpi Haroutinian Ghazarian, "Comrades in Arms" *AIM*, May-June 1997.
- Salpi Haroutinian-Ghazarian, "He Came He Saw He Conquered: Catholicos Karekin I's Visit to North America", *AIM*, February 1996.
- Salpi Haroutinian-Ghazarian "So Near and Yet So Distant", *AIM*, February 1992.
- Majdoline Hatoum, "Next Cabinet Meeting Already in Jeopardy: Sectarian Demands over Appointments and Siniora's Plans for a New Ambassador to the US may Hinder Necessary Work", *The Daily Star*, 4 August 2005.
- Hala Homsy, "Hadara FilTajaddod AlLubnani Musqitan Awraq AlTin A'n A'riy AlMashhad AlSiyasi", *AnNahar*, 20 October 2005.
- Ishkhan Jinbashian, "Poles Apart: Vahe Oshagan on the Habitat, Imagery and Inner Reaches of the Diaspora", *AIM*, July 1991.
- Ishkhan Jinbashian, "Weird World: Father Haroutioun Bezdikian on the Psychology and Transformation of the Ghetto", *AIM*, July 1992.
- Armineh Johannes, "Attached to the Land. Anjar Recalls its Roots and Fights to Retain Them", *AIM*, June 2002.
- Mathew Karanian, "Century of Genocide", *AIM*, January/February 2001.

- Hilal Khashan, "The Political Values of Lebanese Armenian College Students", *Armenian Review*, Vol. 44, #4/176, Winter 1991.
- Kristen Kidd, "A Decade of Giving: Will the Diaspora Assistance to Armenia's Orphans Continue?" *AIM*, February 1999.
- Kristen Kidd & Hratch Tchilingirian, "Armenians by Choice", *AIM*, August 1998.
- Minas Kojaian, "Caught in Crossfire: Yet Struggling to Stay", *AIM*, September 1990.
- Raffy Kourouian, "In the Land of the Pharaohs. The Centuries-old Armenian Community in Egypt", *AIM*, April 1999.
- Dickran Kuymjian, "Two Studies of the Armenian Community of Lebanon and a Special Introduction", *The Armenian Review*, Vol. 32, June 1979.
- Andre Levy, "Diasporas Through Anthropological Lenses: Contexts of Postmodernity", *Diaspora*, Vol. 9, Spring # 1, 2000.
- Gerard Libaridian, "The Diaspora is not What it Used to be", *AIM*, January 1991.
- L'Orient*, May 7, 1929.
- Zaven Messerlian, "Armenian Education in Lebanon", *Ararat Quarterly*, Vol. XIX, # 3, #75, Summer 1978.
- Zaven Messerlian, "Armenian Participation in the Lebanese Legislative Elections during the French Mandate, 1934-1943", *Haigazian Armenological Review*, Vol. 21, 2001.
- Nicola Migliorino, "Le (re)-etablissement des Institutions Armeniens au Liban et en Syrie: les Refugies et l'Etat" in Kevorkian, R., L. Nordikian et V. Tachjian (eds.), *Les Armeniens 1917- 1939, La Quete d'un Refuge*, St. Joseph University Press, Beirut, 2006.
- Gaidz Minassian, "Des Elections au Suffrage Universel, Huit Bonnes Raisons", *France Arménie*, No 213, July/August 2001.
- John Munro, "Introduction", *Ararat Quarterly*, Vol. XIX # 3, # 75, Summer 1978.
- Nichola Nassif, "Riasat AlMajlis LilMarra AlOula Istihqaq Shii Sarf", *AnNahar*, 24 June 2005.
- No Author, "Akthariyat La Tara Siyasiyyan Lubnaniyyan Amthal Wa La Tajid Beyn AlBarizin Zai'man", *AnNahar*, 16 August 2002.
- No Author, 'Draft Decree to Limit Public Holidays', *The Daily Star*, Lebanon Edition, 7 September 2005:
- Vahe Oshagan, "Literature of the Armenians in Lebanon", *Ararat Quarterly*, Vol. XIX # 3, # 75, Summer 1978.
- Razmig Panossian, "Between Ambivalence and Intrusion: Politics and Identity in Armenia-Diaspora Relations", *Diaspora*, Vol. 7, # 2, Fall 1998.
- Susan Pattie, "At Home in Diaspora: Armenians in America", *Diaspora*, Vol. 3, #2, Fall 1994.

- William Safran, "Comparing Diasporas: A Review Essay", *Diaspora*, Vol. 8, # 3, Winter 1999.
- Serge Samonianitz, "Soviet Armenian Immigrants Carve Path to Success", *AIM*, September 1990.
- Eliz Sanassarian, "State Dominance and Communal Perseverance: The Armenian Diaspora in the Islamic Republic of Iran, 1979-1989" *Diaspora*, Vol. 4, # 3, Winter 1995.
- Nikola Scahahgeldian, "Ethnicity and Political Development in the Lebanese-Armenian Community, 1925-1975", *Armenian Review*, Vol. 36, Spring 1983.
- Nikola Scahgaldian, "The Political Integration of an Immigrant Community into a Composite Society: The Armenians in Lebanon, 1920-1974" (Columbia University Ph.D. thesis, 1979).
- Manal Shaaya, "Ay Sigha LilDawla AlLubnaniyya Fil Marhala AlJadida", *AnNahar*, 8 August 2005.
- Raffi Shouboukian, "Back to School: Caught Between Rising Tuition Costs and Armenianism, Parents Face a Difficult Choice", *AIM*, September 1990.
- Ralph Setian, "The Armenian Theater in Lebanon", *Ararat Quarterly*, Vol. XIX, No 3, # 75, Summer 1978.
- Ralph Setian, "For the Record", *Ararat Quarterly*, Vol. XIX, No 3, # 75, Summer 1978.
- Jivan Tabibian, "The Risk of Democratization: Reforming Diaspora Institutions will Require Freeing them from each other's Clutches, and Insuring their Autonomy", *AIM*, August-September 1999.
- Vahe Tachjian, "Du Rapatriement en Cilicie au Nouvel Exode Vers la Syrie et le Liban." in Kevorkian, R., L. Nordikian et V. Tachjian (eds.), *Les Armeniens 1917-1939, La Quete d'un Refuge*, St. Joseph University Press, Beirut: 2006a.
- Vahe Tachjian, "Des Camps de Refugies aux Quartiers Urbains: Processus et Enjeux," in Kevorkian, R., L. Nordikian et V. Tachjian (eds.), *Les Armeniens 1917-1939, La Quete d'un Refuge*, St. Joseph University Press, Beirut, 2006b.
- Vahe Tachjian, "Orphelinats Armeniens du Liban, de Syrie et de Palestine", in Kevorkian, R., L. Nordikian et V. Tachjian (eds.), *Les Armeniens 1917-1939, La Quete d'un Refuge*, St. Joseph University Press, Beirut, 2006c.
- Hratch Tchilingirian, "Aram I on Faith and Homeland", *AIM*, April 1998.
- Hratch Tchilingirian, "Big Player: Joe Baroutjian Reaches New Height in Lebanon's Music Industry", *AIM*, October 1999.
- Hratch Tchilingirian, "Crisis Without Borders", *AIM*, July 1999.
- Hratch Tchilingirian, "Integration: The Point of No Return: Cabinet Minister Arthur Nazarian Discusses Lebanon and the Armenian Community", *AIM*, December 1999.
- Hratch Tchilingirian, "In the Land of Cedars", *AIM*, February 2000.
- Hratch Tchilingirian, "Master of Grand Theater", *AIM*, June 1999.
- Hratch Tchilingirian, "When Small Is Big", *AIM*, January/February 2001.

- “The Evangelicals in Armenia: On the Road to Pluralism”, *AIM*, January 2000.
- Zaven Vartan, “Cilicia Opens its Doors: The New Four-story Structure in Antelias, Lebanon, Houses the Treasures of the See of Cilicia”, *AIM*, July 1998.
- Samer Wehbe, *The Daily Star*, Lebanon Edition, 13 October 2003.
- David Zenian, “Lebanon in Transition: A Reality Check”, *AGBU News*, Vol. 8, No. 3, Sept. 1998.

### Հայերէն Գիրքեր

- Ալպոմ Յուշամատեան, Նուիրուած՝ Հ.Բ.Ը.Միութեան Լիբանանի Վերջերաններու Եւ Բարերարներու, 1947-1967*, խմբ. Ներսէս Շիրինեան, Յակոբ Ղազարեան, Ասատուր Մակարեան, Զաւէն Մսրրլեան, Պէյրուօ, Տպ. Ատլաս, 1969:
- Ոսկեբերան Արզումանեան, *Ծաղկաքաղ, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ*, 2006:
- Կարլէն Դալլաքեան, *Յուշապատում (Դէմքեր, Իրողութիւններ, Ստորումներ)*, Երեւան, 1998:
- Կարլէն Դալլաքեան, *Ռամկավար Ազատական Կուսակցութեան Պատմութիւն (1921-1940) Գիրք Առաջին*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1999:
- Ժիրայր Դանիլեան, *Լիբանանահայ Տպագրութիւնը Պատերազմի Տարիներուն. 1975-1984*, Պէյրուօ, 1986:
- Ֆիլիբ Զաքարեան, *Վերջին Որբերուն Հսկումը*, Պէյրուօ, Համազգային Վահէ Սէթեան Տպարան, 1974:
- Մելքոն Էպլիղաթեան, *Գաղթակայանէն Խորհրդարան, Հտր. 1*, Հալէպ, Կիլիկիա Հրատ., 1998:
- Մելքոն Էպլիղաթեան, *Գաղթակայանէն Խորհրդարան, Հտր. 2*, Հալէպ, Կիլիկիա Հրատ., 2005:
- Թղթակցութիւն Սահակ Ա. Եւ Բարգէն Բ. Կաթողիկոսներու*, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արխիւներ, թիւ 1, [կազմ. Գրիգոր Շահինեան], Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1999:
- Յովհաննէս Թովուզեան, *Հայերի Մասնակցութիւնը Միւրիայի Եւ Լիբանանի Ազգային-Ազատագրական Եւ Դեմոկրատական Շարժումներին*, Երեւան, Հայկ. ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, 1968:
- Լիբանանահայութեան Ղեկավարի Տիպարներէն՝ Յարութիւն Կուժունի*, խմբ. Պէպօ Սիոնեան, Պէյրուօ, Տպ. Շիրակ, 2002:

- Հայ Դատի Նուիրեալը. Ֆրիտիոֆ Նանսեն, Փաստաթղթերի Ժողովածու (1920-1930), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2005:
- Զաքար Մկրեան, Վկայութիւն Եւ Պատգամ, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան Տպարան, 2006:
- Ղազար Զարրզ, Մերձաւոր Արեւելքը. Սուրիա, Լիբանան, Պաղեստին, Անդր-Յորդանան: Բնական, Քաղաքական, Տնտեսական Ընդարձակ Մասերով, Պէյրութ, Տպ. Ազդակ, 1939:
- Լեւոն Զորմիսեան, Կուսակցութիւնները, Պէյրութ, Տպ. Մշակ, 1965:
- Լեւոն Զորմիսեան, Համապատկեր Արեւմտահայոց Մէկ Դարու Պատմութեան, Ա. Հատոր, 1850-1878, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1972:
- Սուրիահայ Տարեցոյց, Բ. Տարի, Մ. Աճեմեան, Մ. Միսեռեան, Ե. Ոսկերիչեան (խմբ.), Հալէպ-Սուրիա, Տպ. Արաքս, 1925:
- Սիսակ Վարժապետեան, Հայերը Լիբանանի Մէջ, Ա. Հատոր, Հանրագիտարան Լիբանանահայ Գաղութի, Բ. Տիպ., Պէյրութ, Տպ. Համազգային, 1982:
- Սիսակ Վարժապետեան, Հայերը Լիբանանի Մէջ, Բ. Հատոր, 1920-1980 Շրջան, Պէյրութ, Տպ. Սեւան, 1981:
- Սիսակ Վարժապետեան, Հայերը Լիբանանի Մէջ, Գ. Հատոր, 1920-1980 Շրջան, Պէյրութ, Տպ. Սեւան, 1981:
- Թորգոմ Վեհապետեան, Լիբանանի Հայ Գաղութը (Ներկայ Իր Տագնապէն Առաջ), Հրատ. Հովիւեան Մատենաշարի, 1982:
- Հրաչ Տասնապետեան, Հայկական Հարցը, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան Տպարան, 1977:
- Վարդան Սրբ. Տեմիրճեան, Գաւազանագիրք Լիբանանի Եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց, Հտր. 1, Պէյրութ, Տպ. Ալթափրէս, 1980:
- Յարութիւն Քիրքճեան, Փորձ Տարա-գրութեան Մասին (*Essai sur l'Exil*), Collection "Diaspora Armenienne" # No. 1, Paris, Haratch Press, 1978:

### Օտարալեզու Գիրքեր

- Bashir Al Bilani, *Qawanin AlAhwal AlShakhsiyya Fi Lubnan*, 5<sup>th</sup> ed., Beirut, Dar El E'lm LilMalayin Press, 1997.
- Betts, *Christians in the Arab East*, Athens, Lycabettus Press, 1978.
- Marius Deeb, *The Lebanese Civil War*, New York, Praeger, 1980.
- Jean Claude Gaudin (ed.), *Les Chrtetiens d'Orient En France*, Paris, Le Sarment, Fayard, 1997.
- David Gordon, *The Republic of Lebanon: Nation in Jeopardy*, Boulder, Colorado, Westview Press, 1983.

- Theodor Hanf, *Coexistence in Wartime Lebanon: Decline of a State and Rise of a Nation*, London, I.B. Tauris & Co Ltd., 1993.
- William Harris, *Faces of Lebanon: Sects, Wars, and Global Extensions*, Princeton, Markus Wiener Publishers, 1997.
- Albert Hourani, *Syria and Lebanon, A Political Essay*, London, Oxford University Press, 1946.
- Michael Hudson, *The Precarious Republic: Modernization in Lebanon*, New York, Random House, 1968.
- Michael Johnson, *All Honourable Men: The Social Origins of War in Lebanon*, Centre for Lebanese Studies in association with I.B.Tauris Publishers, London, New York, 2001.
- Farid ElKhazen, *The Breakdown of the State in Lebanon, 1967-1976*, London, New York, I.B. Tauris, 2000.
- Stephen Longrigg, *Syria and Lebanon under French Mandate*, 2<sup>nd</sup> imp., Oxford University Press, 1968.
- E.P. Maccallum, *The Nationalist Crusade in Syria*, New York, 1928.
- Sandra Mackey, *Lebanon: Death of a Nation*, New York, Chicago, Congdon & Weed, Inc, 1989.
- Jonathan Randall, *Going all the Way: Christian Warlords, Israeli Adventurers and the War in Lebanon*, New York, The Viking Press, 1983.
- David McDowall, *Lebanon: A Conflict of Minorities*, Minority Rights Group Report, 1983.
- Joseph Mouwannes, *Les Elements Structuraux de la Personnalite Libanaise, Essai Anthropologique*, Ins. of Scientific Studies, Sin el-Fil, Lebanon, 1973.
- Tabitha Petran, *Syria*, London, Ernest Benn Limited, 1972.
- Jonathan Randall, *Going all the Way: Christian Warlords, Israeli Adventurers and the War in Lebanon*, New York, The Viking Press, 1983.
- Kamal Salibi, *The Modern History of Lebanon*, 3<sup>rd</sup> impression, Worcester & London, The Trinity Press, Weidenfeld and Nicolson, 1968.
- Anahit Ter Minasian, *Histoires Croisees. Diaspora. Armenie, Transcaucasie 1890-1990*, Marseille, Editions Parentheses, 1997.
- Yves Ternon, *La Cause Annenienne*, Paris, Editions du Seuil, 1983.
- Meir Zamir, *The Formation of Modern Lebanon*, Ithaca and London, Cornell University Press, 1988.
- Meir Zamir, *Lebanon's Quest: The Road to Statehood. 1926-1939*, London, I.B.Tauris & Co. Ltd., 2000.
- Nicola A. Ziadeh, *Syria and Lebanon*, London, Ernest Benn Limited, 1957.
- Jinshian Report, *A Survey of Living and Social Needs of Armenians in Lebanon – 2002*, Beirut 2004.
- Fridtjof Nansen, *Armenia and the Near East*, (reprint), New York, Da Capo Press, 1976.

## Կողքի Լուսանկարներու Բացատրութիւն

Նախահայկական Պուրճ Համուտը, պէրութահայ գաղթականական վրանաքաղաք, լիբանահայ գաղթակայանի դրուագ, Ղազիրի որբանոց, 1947ի ներգաղթ՝ Պէրութի քարափէն, Այնճար 1950ականներուն, Պետութեան կողմէ գաղթականութեան նպաստից համար կնքուած դրոշմաթուղթ, Հայրս իր խանութին մէջ, 1894ին Պէրութ հրատարկուած գիրքի կողք, Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքին մէջ կառուցուած Եղեռնի Յուշարձան, Արմինիա Պողոտայ վերանուանուած նախկին Մար Մխայէլ հայաբնակ պողոտայի ցուցանակ, երախտիքի արձան, *Ձարթօնք-Ազդակ-Արարատ* միացեալ թիւ՝ Յեղասպանութեան հարիւրամեակին, Լեռնալիբանանի առաջին կառավարիչ Տաւուտ Պաշա, Հայ Կաթողիկէ Զմմատու Վանք, Պապպէքի 1965ի Միջազգային Փառատօնին մասնակցած խումբին ձայնասկաւառակի կողք, Հայկազեան Համալսարանի Մուկար Շէնք, ՀԲԸՄ Պէրութի Մասնաճիւղի 1910ի կնիք, Պէրութի Հայ Առաքելական Համայնքի Առաջնորդարանի 1851ի կնիք, Պէրութի Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդարանի 1909ի փարաւոր, Պէրութի Ամերիկեան Համալսարանի հայ ուսանողութեան 1921-22ի թատերախումբ, ԱՖԷՏի 25ամեակին նուիրուած գրքոյկ, ՔԱՀԼի վերանորոգման նուիրուած գրքոյկ, Հայոց Յեղասպանութեան 1929ին կառուցուած յուշարձան՝ Ֆրըն Շպպէքի Հայոց գերզմանատան մէջ, *տունդարձի* խորհրդանշան, նշանաւոր արաբական հացի հայակերտ փուռը:

## Հեղինակը

Ծնած է Պեյրուֆ: Աւարտած է ՀԲԸՄիութեան Յովակիմեան-Մանուկեան վարժարանը: 1983ին Մագիստրոս Արուեստից (ՄԱ) վկայականով աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Բաժինը: 1988ին ՄԱ վկայականով աւարտած է Պեյրուֆի Ամերիկեան Համալսարանի Քաղաքական Գիտութիւններու բաժինը: 2002ին Գիտական Հետազոտութեան եւ Վերլուծութեան ՄԱ վկայական ստացած է Էպլըրտինի Համալսարանէն: 2011ին պաշտպանած է դոկտորականը՝ Սուռնգի Համալսարանի Քաղ. Գիտ. բաժնին մէջ: 1983-89՝ եղած է *Ջարթօնքի*, 1991-96՝ *Շիրակի* խմբագրակազմի անդամ: 1983-1993՝ դասաւանդած է Յովակիմեան, Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարաններու եւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ: Պատասխանատու Քարտուղարն է *Հայկազեան Հայագիտական Հանդէսին* (1993): Անդամ է Երեւանի Պետական Համալսարանի *Հայագիտութեան Հարցեր* Հանդէսի խմբագրակազմին: Տնօրէնն է Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին (2011), միաժամանակ լիբանանայ պատմութիւն եւ հայ ընկերային-քաղաքական միտքի պատմութիւն կը դասաւանդէ Հայկազեան Համալսարանին մէջ:

Խմբագրած է Լիւսի Ղուկասեան-Եագուպեանի *Ողբերգ Ջեյթունի 1914-1922* (1987), Օննիկ Սիրմէլեանի *Կեանքիս Գուպարը Ջութակիս Հետ* (1988), Խաչիկ Քարուկեանի *Տիտր Յուշեր Անցեալէն* (1989), Հրանդ Գեորգեանի *Կէս Դար Երածշտա-Մանկավարժական Ծառայութիւն* (1937-1987) (1990), Գերսամ Ահարոնեանի *Հատընտիր Խմբագրականներու* (1996), *Յուշամատեան Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն Վարժարան* (1995), Փրոֆ. Խաչեր Գալուստեան *Մարդն Ու Դաստիարակը* (2005), Յակոբ Սերոբեանի *Եղեռնի Յուշերս* (2005), Մեսրոպ Քէնտիրճեանի *Ժամանակին Անճարի Մէջ ՄԱԼԴ Մը Կար՝ «Ընկրլըզման»ը. Անդրանիկ Քէնտիրճեան (1921-1977)* (2013), նոյնի *Ծաղկած Խնձորենիներ* (2015), Մինաս Թէճիրեանի *Անունովդ Ապրիս (Ֆլայի Պատմութիւն)* (2015) հատորները: Փրոֆ. Եուրի Աւետիսեանի հետ խմբագրած է *Սփիւռքագիտութիւն Տարեգիրք. Տեսութեան Եւ Պատմութեան Հարցեր* (2012) եւ *Հայկական ինքնութեան Խնդիրները 21-րդ Դարում* (2013) հատորները: Կազմած եւ խմբագրած է *Հաճնոյ Հերոսամարտի 90Ամեակի Գիտաժողովի Նիւթեր Եւ Վաւերաթողութեր Ու Փաստաթողութեր* (2013), *Հայկական Անդրասահմանային Տարածականութիւնը Եւ Արդի Հաղորդակցական Միջոցները, Գիտաժողովի Նիւթեր, (15-17 Մայիս 2013)* (2014), *Հարիւրամեակ Հայոց Յեղասպանութեան. Հետեւանքներ Եւ Յառաջադրանքներ, Գիտաժողովի Նիւթեր (31 Յունուար-1 Փետրուար 2015)/Armenian Genocide Centennial: Addressing the Implications. Proceedings of the Conference (January 31-February 1, 2015)* (2015) գիրքերը: Հեղինակն է *Պատմութիւն ՌԱԿ Լիբանանի Շրջանակի, 1922-1937* (1993) եւ *Վահան Պետէլեան. Երածիշտ-Մանկավարժը* (2004) հատորներուն: Արմէն Իւրնէշլեանի հետ կազմած է *Լիբանանահայ Գիրքը 1894-2012, Մատենագտական Ցանկ* հատորը (2013):



Մեկենաս                      Հայաստանի Հանրապետության  
   Մփիւոքի Նախարարութիւն  
Տպագրութիւն                Գրիգոր Անտոնեան  
Տպագրութեան յանձնուած՝ 8 Հոկտ. 2015  
Տպաքանակ                    500  
Հեղինակի Հասցէ            [adakessian@haigazian.edu.lb](mailto:adakessian@haigazian.edu.lb)  
   Antranik Dakessian  
   c/o Haigazian University,  
   Armenian Diaspora Research Center  
   PoBox 11-1748  
   Riad ElSolh 1107 2090  
   Beirut, Lebanon